

**ՎԱՍՆ
ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ**

3-4 / 2006

Բուն Հայոց 4498 ամի



**FOR THE SAKE OF
JUSTICE**

3-4 / 2006

Core Armenian 4498

(58-59)



Գլխավոր խմբագիր
ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼԶԱՏՅԱՆ

Գիտական խմբագրական խորհուրդ

ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայական
գիտությունների դոկտոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՆՈՒԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՌԴ սոցիալական և մանկավարժական գիտությունների
ակադեմիայի թղթակից անդամ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ՄԵԼՍ ՍԱՆԹՈՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՐԻԿ ԹԵՌՅԱՆ

Քաղաքական գիտությունների դոկտոր

Խմբագիրներ
ՍՈՖԻԱ ԲԱԲԱՅԱՆ
ՍԹԻՎ ԲԼՈՒՄ

Համակարգչային ձևավորողներ
ԱՐՄԵՆ ՕՍԻՊՈՎ
ՆԱՐԻՆԵ ԱԶԱՐՅԱՆ

Editor-in-Chief
DAVID GYULZATYAN

Scientific Editorial Board

RUBEN AVAGYAN

Doctor of Law, Professor

SEN AREVSHATYAN

Academician of the RA National Academy of Sciences,
Doctor of Philosophy

HOVHANNES HOVSEPYAN

Doctor of Law, Professor

MANUK MKRTCHYAN

GEVORK POGHOSYAN

Doctor of Philosophy

MELS SANTOYAN

Doctor of Philology, Professor

GARIK KERYAN

Doctor of Politology

Editors
SOFIA BABAYAN
STEVE BLOOM

Designer
ARMEN OSIPOV

«ՎԱՍՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ» հանդեսն ընդգրկված է ատենախոսությունների
արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ցուցակում:

FOR THE SAKE OF JUSTICE is included in the list of reviews appropriate for theses results
publication of THE RA HIGH QUALIFICATION COMMISSION.

Журнал "ВАСН АРДАРУТЕАН" ("Во имя справедливости") включен в список допущенных
ВЫСШЕЙ АТТЕСТАЦИОННОЙ КОМИССИЕЙ РА для публикации результатов
диссертационных работ.

ՀԱՍՑԵՆ՝ ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., 2
Հեռ. (+374 322) 2-29-67, Գեղ./Ֆաքս (+374 322) 4-47-81
Էլ. փոստ vasn@acrpc.am
URL <http://www.acrpc.am>

ADDRESS: 1 Shirakatsi Lane, Building 2, Vanadzor, RA
Tel. (+374 322) 2-29-67, Tel./Fax (+374 322) 4-47-81
E-mail: vasn@acrpc.am
URL: <http://www.acrpc.am>

ՀԻՄՆԱԴՐՎԵԼ Է 1989թ.
FOUNDED IN 1989

Գրանցված է ՀՀ Արդարադատության
նախարարությունում
Գրանցման վկայական՝ թիվ 1016

Ստորագրված է տպագրության 15.12.2006
Ծավալը՝ 8.5 տպագր. մամուլ, տպաքանակը՝ 200

ԱՅՍ ՀԱՄԱՐՆԵՐՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱԽԱԴԵՊ ՀԱՂԹԱՆԱԿ	4
ՀՍԻԿ նախագահ Գ Մանուկյանի ելույթը սահմանադրական դատարանում	14
ԻՎԱՆՅԱՆ Ա. «Էլեկտրոնային Հայաստանը»՝ որպես կենսունակ քաղաքակրթական համակարգի հաստատման անցումային տերմին	16
АРУТЮНЯН Б. Культура коррупционного поведения: миф или реальность?	20
ԱԼԱԳՈՒԼՅԱՆ Ք. Մասնավոր հեռարձակումը կարգավորող մարմնի անկախության երաշխյաքները ՀՀ-ում	26

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԿԻՂՆԵՐՈՒՄ

ԳՅՈՒԼԶԱՂՅԱՆ Դ. Շաղախյուսական շարույթի մեկնությունների լուսնությունից	30
ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆ Ն. Գ. Լևոնյանը՝ գեղագիտության մի քանի հարցերի մասին	40
ԿԱԹՈՒՆՅԱՆ Ա. Ֆրանսիական հոգեբանության պատմության ուսումնասիրությունները Հ. Մ. Թուրունջյանի գիտական ժառանգության մեջ.....	45
ՄԱԿ-ի էջ	50

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ Մ. ՀԱՄԱՍՏԵՂ. ԱՂԹԱՐԱՆ (Ստեղծագործության 50-ամյա տարելիցի առթիվ)	54
--	----

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ե. Վարդան Մամիկոնյանի եվ Վասակ Սյունեցու կերպարակերտման ընդհանուր սկզբունքները Եղիշեի և Փարպեցու գործերում	64
ԲԱԿՈՒՆՑ Ս. Հակոբ Ասատուրյան. կենսապատում	73
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Վ. Մարդը՝ կյանքի սուբյեկտ: Հայրեր և որդիներ	81

ԳԻՏԱԿԱՆ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ

ՔՈԶԱՐՅԱՆ Մ. Անգլերենի և հայերենի բաղաձայն ինչույթների շարութաբանական առանձնահատկությունների ուսումնասիրության որոշ հայեցակետեր.....	85
АРУТЮНЯН Б. Типологический анализ коррупции в образовательном учреждении	91

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՂԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆ Ն. Արվեստը և գեղարվեստական ստեղծագործական գործունեությունը դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում.....	95
ԳՐԻՈՐՅԱՆ Ն. Ստորակարգությունների վերլուծության մեթոդի օգտագործումը գիտելիքների գնահատման համակարգում	102

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ա. Թումանյանը և Հայրենակցական միությունների միությունը	106
ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Մ. Բրիտանահայ համայնքի դերը հայ-բրիտանական հարաբերություններում 1991-2001 թթ.	120
ՀԱՓԱՐՅԱՆ Ս. Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.)	130

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՀԱՆՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ՔԱՂ. Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ՔԱՂ. Հ. ԴԱՎԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ «ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 11 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

4 հոկտեմբերի 2006 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝ դիմող քաղա-

քացիներ Մ. Քոչարյանի և Հ. Դավթյանի, դիմողների ներկայացուցիչներ Գ. Մանուկյանի և Ա. Պապիկյանի, պատասխանող՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռ. Պետրոսյանի, գործով հրավիրվածներ՝ Հա-

յաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Վարդանյանի, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նախագահ Վ. Խաչիկյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 և 69 հոդվածների, դմբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղ. Մ. Քոչարյանի և քաղ. Հ. Դավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ են հանդիսացել քաղաքացիներ Մանուշակ Քոչարյանի և Հրանուշ Դավթյանի դիմումները Սահմանադրական դատարան, որոնց հիման վրա Սահմանադրական դատարանի որոշմամբ գործերը միավորվել են և քննվել դատարանի նույն նիստում:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, կողմերի և վկայի բացատրությունները, հրավիրվածների պարզաբանումները, հետազոտելով «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը

ՊԱՐԶԵՑ.

1. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 24-ին, ստորագրվել է ՀՀ Նախագահի կողմից 2003թ. հոկտեմբերի 8-ին: Վիճարկվող 11-րդ հոդվածը, համաձայն նշված օրենքի անցումային դրույթների (հ. 17), ուժի մեջ է մտել 2004թ. հունիսի 1-ից:

Օրենքի 11 հոդվածը սահմանում է.

«1. Սոցիալական քարտի համարը կի-

րառվում է քաղաքացիների անհատական տվյալները նշակելիս՝

1) քաղաքացուն աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտ վճարելու, սոցիալական ապահովության և ապահովագրության պետական ու ոչ պետական ծրագրերով նախատեսված կենսաթոշակ, նպաստ, հատուցում նշանակելու և վճարելու ժամանակ.

2) հարկեր, տուրքեր, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, ինչպես նաև պարտադիր այլ վճարներ վճարելու ժամանակ.

3) կազմակերպությունների կողմից այն տեկատվական բազաները վարելու ժամանակ, որտեղից սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված գործառնություններն իրականացնելու համար օրենքով սահմանված դեպքերում տեկատվություն է տրամադրվում պետական կառավարման մարմիններին.

4) քաղաքացու կողմից բանկային հաշիվ բացելու ժամանակ.

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային ենթակայության կազմակերպությունների թղթային ու ինքնաշխատ տեկատվական բազաները վարելու ժամանակ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործառնությունների հաշվառման ու հաշվետվական փաստաթղթերը՝ սոցիալական քարտ չունեցող անձանց մասով, համարվում են անվավեր, եթե դրանցում նշված չեն սոցիալական քարտերի համարները:

3. Սոցիալական քարտի և սոցիալական քարտի համարի կիրառման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2006թ. մայիսի 23-ին ՀՀ Ազգային ժողովն օրենք է ընդունել ««Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», որի հոդված 2-ով «Սոցիալական քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածը

լրացվել է հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «4. Սոցիալական քարտը հոգևոր խնդիրներին չի առնչվում և մարդու խղճի ու կրոնական համոզմունքների դեմ չի կարող օգտագործվել»:

II. Սահմանադրական դատարան դիմող քաղաքացիները կենսաթոշակառու են, չեն ստացել սոցիալական քարտ, քանի որ գտնում են, որ սոցիալական քարտ ստանալը հակասում է իրենց կրոնական համոզմունքներին: Սոցիալական քարտ չունենալու պատճառով ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Շենգավիթի տարածքային կենտրոնի կողմից կասեցվել է նրանց կենսաթոշակի վճարումը: Դիմողները քաղաքացիական հայց են ներկայացրել դատարան՝ իրենց կենսաթոշակի վճարումն ապահովելու համար: Նրանց հայցը 12.01.2006թ. Երևան քաղաքի Շենգավիթի առաջին ատյանի դատարանը բավարարել է: 2006թ. մարտի 22-ին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը վճռել է «Մ. Քոչարյանի և Յ. Դավթյանի հայցն ընդդեմ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Շենգավիթի տարածքային կենտրոնի՝ կենսաթոշակի վճարման պահանջի մասին, մերժել»: ՀՀ վճռաբեկ դատարանը 2006թ. մայիսի 19-ին որոշել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.03.2006թ. վճիռը թողնել անփոփոխ: Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանները, մասնավորապես, իրենց մոտեցումները հիմնավորելիս հիմք են ընդունել «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի պահանջները:

Ըստ դիմողների՝ օրենքի 11 հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 5 հոդվածի 2-րդ մասին, 6 հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, քանի որ խախտում է դրանցում ամրագրված սահմանադրական կարգի հիմունքները, ինչպես նաև Սահմանադրության 26 հոդվածի 1-ին մասին, 27 հոդվածի 1-ին մասին, 37 և 42 հոդվածներին, քանի որ խախտում է դրանցում ամրագրված իրավունքները:

Վիճարկելով օրենքի 11 հոդվածի սահմանադրականության հարցը, իրականում դիմող կողմն իր եզրափակիչ խոսքում առաջ քաշեց օրենքի 11 հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի սահմանադրականության խնդիրը: Ընդ որում, օրենքի 11 հոդվածի 4-րդ մասի դրույթները դիմողների նկատմամբ չեն կիրառվել ընդհանուր իրավասության դատարանների վերջնական դատական ակտով, քանի որ այդ նորմը լրացվել է վերջնական դատական ակտն ընդունելուց հետո:

III. Պատասխանող կողմը գտնում է, որ սոցիալական ապահովության քարտերի համակարգի նպատակը ոչ թե մարդու խղճին և կրոնական համոզմունքներին «դեմ գնալն է», այլ մարդու նույնականացումը, նրան վերաբերող տվյալները մեկ տևում կենտրոնացնելը՝ նպատակ, որը, իր կարծիքով, չի կարող դիտվել հակասահմանադրական: Հերքելով օրենքի 11 հոդվածի առնչությունը Սահմանադրության 3, 5, 6, 27 և 42 հոդվածների հետ, պատասխանող կողմը գտնում է, որ այն առնչվում է Սահմանադրության 26 հոդվածին, որով ամրագրվում է մտքի, խղճի և կրոնի ազատությունը, 31 հոդվածին, որով պաշտպանվում է սեփականության իրավունքը և 37 հոդվածին, որն ամրագրում է սոցիալական ապահովության իրավունքը՝ այն կախման մեջ չդնելով սոցիալական քարտից կամ որևէ այլ փաստաթղթից: Ըստ պատասխանողի՝ այն հանգամանքը, որ կրոնական համոզմունքների պատճառով սոցիալական քարտ չստացած քաղաքացիները չեն ստանում աշխատավարձ, կենսաթոշակ և նպաստ, հուշում է, որ օրենքում առկա է սահմանադրականության խնդիր: Ավելին, ըստ պատասխանող կողմի ներկայացուցչի՝ իրենք նույնպես հանգել են այն եզրակացությանը, որ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասը և 4-րդ մասը հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26, 31 և 37 հոդվածներին, քանի որ ոտնահարվել են մարդկանց սահմանադրական իրավունքները, սոցիալական քարտերի համակարգի արմատավորման խնդիրը չի կարող լուծվել հարկադրանքի

միջոցով: Պատասխանող կողմը փաստեց նաև, որ օրենքում կան որոշ ներքին հակասություններ:

IV. Գործում առկա նյութերի վերլուծությունը վկայում է, որ սոցիալական ապահովության քարտ չստանալու համար տարբեր քաղաքացիներ ազատվել են աշխատանքից, նրանց չեն վճարվել նպաստ, աշխատավարձ, միանվագ դրամական օգնություն, գրկվել են ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում իրենց ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից, արգելափակվել է նրանց կողմից բանկային գործարքների կատարումը: Իսկ 2006թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, համաձայն ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի տվյալների, միայն հիմնադրամի համակարգում հաշվառված 530246 կենսաթոշակառուներից կասեցվել է 1317-ին կենսաթոշակի վճարումը՝ սոցիալական քարտ չունենալու պատճառով:

V. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի և 68 հոդվածի 7-րդ մասի պահանջներից ելնելով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարեց քննության առնել «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի սահմանադրականությունը՝ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում ամրագրված հիմնարար սկզբունքների, ինչպես նաև այնպիսի սահմանադրական իրավունքների երաշխավորման համատեքստում, որպիսիք են սեփականության (հհ. 8, 31), աշխատանքի և վարձատրման (հ. 32, մասեր 1-ին և 2-րդ), սոցիալական ապահովության (հ. 37), օրենքով չսահմանված պարտականությունից ազատ լինելու (հ. 42) իրավունքները: Դրանք այն իրավունքներն են, որոնց առնչվում է քննության առարկա խնդիրը, և որոնք չեն կարող սահմանափակվել ոչ տվյալ հոդվածով և ոչ էլ Սահմանադրության 43 հոդվածով նախատեսված հիմքերով: Սահմանադրության 44 հոդվածը թույլ է տալիս թվարկված իրա-

վունքների (բացի Սահմանադրության 42 հոդվածում ամրագրվածից) սահմանափակումը միայն ժամանակավորապես՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ «արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում»:

Միաժամանակ, այն հանգամանքը, որ օրենքի կիրառման ընթացքում դիմող քաղաքացիների խնդիրն առաջացել է իրենց կրոնական համոզմունքների հետևանքով, անհրաժեշտ է դարձնում դիտարկել օրենքի վիճարկվող նորմերի առնչությունները Սահմանադրության 14.1. հոդվածի (խտրակամության արգելք՝ նաև հայացքների ու կրոնի հիմքով), 26 հոդվածի (մտքի, խղճի և կրոնի ազատություն), 27 հոդվածի (համոզմունքը փոխելու հարկադրանքի արգելք) նորմերի հետ:

VI. Պարզելու համար, թե որքանով է օրենքի վիճարկվող հոդվածն ապահովում մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ իրավունքները, անհրաժեշտ է դիտարկել օրենքի իրավակարգավորման առարկան՝ իր ամբողջության մեջ: Տվյալ օրենքով Հայաստանի Հանրապետությունում ստեղծվում է տեղակատվական համակարգերում անհատական տվյալների մշակման ընթացքում քաղաքացու նույնականացման նոր համակարգ: Նպատակ է դրվում օրենսդրությամբ սահմանված կարգով կանոնակարգել ու բարելավել տեղակատվության փոխանակման գործընթացները, ապահովել քաղաքացու անհատական տվյալների զաղտնիությունը: Գլխավոր խնդիրը տվյալ պարագայում այն է, թե որքանով է օրենքում հաշվի առնված, մի կողմից՝ պետության ու հանրային շահերի, մյուս կողմից՝ մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի հավասարակշռությունը՝ չստեղծելով իրավական անհստակություն կամ օրենսդրական ներքին հակասություններ:

Գործի քննությունը նախ վկայեց, որ օրենքը գերծ չէ որոշ ներքին հակասություն-

ներից, որոնց առկայությունը հավաստեց նաև պատասխանող կողմը: Վեճի առարկայի տեսանկյունից էական է «իրավունք» և «պարտականություն» հասկացությունների ներքին շփոթի բացառումը, որն առկա է օրենքի 11 հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 13 հոդվածում: Վերջինիս 1-ին մասում նշված է, որ «քաղաքացին իրավունք ունի՝ 1) ստանալ սոցիալական քարտ», իսկ 2-րդ մասի 2-րդ կետում որ «քաղաքացին պարտավոր է [...] իր սոցիալական քարտը ներկայացնել այն մարմիններին, որոնց դա անհրաժեշտ է սույն օրենքի 11-րդ հոդվածի պահանջները կատարելու համար»: Օրենքի 11 հոդվածի 1-ին մասում թվարկվում են ոլորտները, որոնցում օգտագործվելու են քարտերը: 13 հոդվածի 1-ին մասի համատեքստում դա նշանակում է, որ նշված ոլորտներում քարտն օգտագործվելու է միայն այն քաղաքացիների մասով, որոնք օգտվել են սույն օրենքով իրենց ընձեռնված իրավունքից և ստացել են սոցիալական քարտ: Մինչդեռ նույն 11 հոդվածի 2-րդ մասի ուժով քարտի կիրառումը 1-ին մասով թվարկված ոլորտներում դառնում է համընդհանուր պարտադրանք, անկախ նրանից՝ օգտվել է քաղաքացին 1-ին մասով սահմանված իր իրավունքից, թե ոչ:

Երկրորդ՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից օրենքի 11 հոդվածի դրույթներին տրված մեկնաբանություններով հանդերձ, հակասություն է առաջացել «Սոցիալական քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի միջև, քանի որ վերջինս սպառնիչ սահմանել է կենսաթոշակի վճարումը կասեցնելու միայն երկու հիմք՝ «կենսաթոշակառուի կողմից վեց ամիս անընդմեջ անձամբ կենսաթոշակ չստանալու դեպքում» և «հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում»: Ընդ որում, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ավելի վաղ է ուժի մեջ մտել (10.04.2003թ.): «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 31.05.2002թ.) 24 հոդվածի 3-րդ մասի պա-

հանջն է, որ «Մինչև մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը»: Միաժամանակ, նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ «Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը»: Մինչդեռ իրավակիրառական, այդ թվում՝ դատական, պրակտիկան անտեսել է այս նորմերի պահանջները:

VII. 1. Սոցիալական քարտի առկայությունը դարձնելով պարտադիր պայման օրենքի 11 հոդվածում թվարկված բոլոր գործառնություններում, ներառյալ կենսապահովման այնպիսի միջոցներ, որպիսիք են աշխատավարձը, կենսաթոշակը, նպաստը, հատուցումը, դրամական փոխանցման ստացումը, օրենքը մի շարք քաղաքացիների դրել է երկրնտրանքի առջև. կամ զրկվել իրենց սոցիալական իրավունքների իրականացումից, կամ համոզմունք ունենալու և դրան հավատարիմ մնալու իրավունքից: Երկու դեպքում էլ դա առնչվում է մարդու արժանապատվությանը:

Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Սահմանադրության 3 հոդվածի 1-ին մասում նշված է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ և ունի որոշա-

կի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում ե՛լ պետական, ե՛լ համարային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել: Սրանից էլ բխում է Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմը. «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Հետևաբար, քննության առարկա օրենքի 11-րդ հոդվածից բխող իրավիճակը, որով քաղաքացիների որոշ կատեգորիաներ զրկվում են Սահմանադրությամբ չսահմանափակվող ճանաչված իրենց առանձին հիմնարար իրավունքների իրականացման հնարավորությունից, չի ապահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև և չի բխում Սահմանադրության 3 հոդվածի պահանջներից:

2. Օրենքի 11 հոդվածի 2-րդ մասով սոցիալական քարտի բացակայությունը հիմք է դառնում, մասնավորապես, սահմանափակելու Սահմանադրության 37 հոդվածով ամրագրված սոցիալական ապահովության իրավունքի, ինչպես նաև Սահմանադրության 32 հոդվածի 2-րդ մասով ամրագրված աշխատանքի վարձատրության իրավունքի իրականացումը: Կենսաթոշակը, ինչպես նաև աշխատավարձը՝ քաղաքացու վաստակած միջոցներ են և նրա սեփականությունը: Մասնավորապես, դիմողները կենսաթոշակի են անցել 1991 և 1994 թվականներին և մինչև 2005թ. հունվար ստացել են իրենց կենսաթոշակը, որից հետո դրանց վճարումը կասեցվել է:

Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է՝ նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ Բուրդովն ընդդեմ Ռու-

սաստանի գործը): Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում դիտարկել օրենքի վիճարկվող դրույթները նաև Սահմանադրության 8 և 31 հոդվածների պահանջներից ելնելով, որոնցից առաջինը հռչակում է սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, իսկ երկրորդն ամրագրում է. «Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»: ՀՀ օրենքներում չկա որևէ նորմ, որով նախատեսված լինի սոցիալական քարտերի բացակայությունը որպես սեփականությունից զրկելու հիմք: Մասնավորապես, այն բացակայում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 60 հոդվածի 1-ին մասում, որտեղ, ինչպես նշվեց, սահմանվում են կենսաթոշակ վճարելու կասեցնելու հիմքերը, ինչպես նաև 2-րդ մասում, որը վերաբերում է կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հիմքերին:

Բացի դրանից, «Սոցիալական ապահովության քարտերի մասին» օրենքով սահմանելով սոցիալական քարտի պարտադիր լինելը՝ հատուցում նշանակելու և վճարելու ժամանակ, օրենքը հնարավորություն է ստեղծում, օրինակ, հասարակության և պետության կարիքների համար սեփականությունն օտարելիս խուսափել քաղաքացուն փոխհատուցման վճարումից, որը, ըստ Սահմանադրության 31 հոդվածի՝ պարտադիր է և պետք է լինի «նախնական և համարժեք»: Հետևաբար, «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի դրույթները վեճի առարկայի շրջանակներում չեն ապահովում Սահմանադրության 8 և 31 հոդվածների պահանջների իրագործումը:

3. Ըստ դիմողների՝ օրենքի 11 հոդվածը հակասում է նաև Սահմանադրության 42 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին: Սահմանադրության այս հոդվածի 1-ին մասը շեշտում է Սահմանադրությամբ չարձանագրված այլ իրավունքների առկայությունը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող հոդ-

վածը որևէ առնչություն չունի Սահմանադրության 42 հոդվածի 1-ին մասի հետ, բայց անմիջականորեն առնչվում է 2-րդ մասին, որն արգելում է քաղաքացուն վերագրել օրենքով չնախատեսված որևէ պարտականություն:

Սահմանադրության 42 հոդվածի հետ օրենքը համադրելիս՝ կարևորվում է նաև այդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ «Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»: Կատարված աշխատանքի վարձատրությունից զրկելը, նախկինում սոցիալական ապահովության պարտադիր վճարների կատարումով վաստակած կենսաթոշակի վճարման կասեցումը, ինչպես նաև մինչ օրենքի ընդունումը կայացած աշխատանքային պայմանագրերով չնախատեսված նոր պայման ավելացնելու պարտադրանքը նշանակում է՝ հակառակ սահմանադրական այս պահանջին, հետադարձ ուժ տալ օրենքին: Օրենքի հետադարձ գործողությունն առավել ցայտուն է այն բազմաթիվ դեպքերում, երբ աշխատավարձի կամ թոշակի վճարումների ուշացման հետևանքով քաղաքացին զրկվել է օրենքի ուժի մեջ մտնելուն նախորդող տարվա կենսաթոշակից կամ աշխատավարձից:

4. Նկատի ունենալով, որ օրենքի 11 հոդվածի հատկապես 2-րդ մասի գործողության հետևանքով նյութական դժվարին վիճակում հայտնվածների զգալի մասը թոշակառուներ են, այդ նորմերը խոչընդոտում են Սահմանադրության 48 հոդվածի 12-րդ կետի պահանջի կատարումը, որով սոցիալական պետության հիմնական խնդիրներից է հռչակվել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը:

VIII. Քանի որ օրենքի 11 հոդվածն անդրադառնում է նաև նպաստի ինստիտուտին, որի ձևերից մեկն է երեխայի համար նախատեսված նպաստը, իսկ օրենքի 7 հոդվածը նախատեսում է սոցիալական քարտի անհրաժեշտությունը նաև այս դեպքում, 11 հոդվածի հետ համակարգային կապի մեջ պետք է դիտել նաև օրենքի 7 հոդվածը:

Այստեղ թվարկվում են տվյալներն ու փաստաթղթերը, որոնք ներկայացվելու են քարտ ստանալու համար: Ի թիվս դրանց, 7 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը նախատեսում է ծննդյան վկայականներ՝ 16 տարին չլրացած քաղաքացիների համար: Երեխան ոչ աշխատանքային հարաբերությունների սուբյեկտ է (համեմայնդեպս, մինչև որոշակի տարիքը), ոչ թոշակառու, ոչ հարկատու: Օրենքի այս դրույթի և 11 հոդվածի 2-րդ մասի ուժով, ծնողի համոզմունքի հետևանքով իրեն հասանելիք նպաստից զրկվում է երեխան:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, որին մասնակից է նաև Հայաստանի Հանրապետությունը, 3 հոդվածում նշում է. «1. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի լավագույն ապահովմանը: 2. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ նկատի ունենալով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները»:

Երեխաների նպաստին անմիջապես վերաբերող դրույթ ՀՀ Սահմանադրությունը չի պարունակում, և այդ իրավունքը պետք է դիտարկել Սահմանադրության 37 հոդվածի համատեքստում, որում նշված է ընդհանրապես սոցիալական ապահովության իրավունքը՝ բացի հոդվածում թվարկվածից, նաև «օրենքով նախատեսված այլ դեպքերում», որոնց շրջանակում էլ գտնվում է երեխայի նպաստի իրավունքը: Այն պետք է դիտարկել նաև Սահմանադրության 34 հոդ-

վածի համատեքստում, որում նշված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի [...] իրավունք», ինչպես նաև Սահմանադրության 48 հոդվածի 1-ին կետի առնչությամբ, որով պետության հիմնական խնդիր են հռչակվում ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանությունն ու հովանավորումը:

Երեխայի նպաստը դնելով սոցիալական քարտի հետ կախման մեջ, օրենքի 11 հոդվածի վիճարկվող դրույթները՝ երեխաների նպաստի մասով, խոչընդոտում են Սահմանադրության նշյալ հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացումը, իսկ չհամապատասխանելով միջազգային իրավունքի նշված նորմերին և Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին՝ անտեսում են նաև Սահմանադրության 3 հոդվածի պահանջը:

IX. Բոլոր նշված սահմանադրական խնդիրներն իրավակիրառական պրակտիկայում հիմնականում ծագել են քաղաքացիների կրոնական համոզմունքների հետևանքով: Սահմանադրական դատարանի խնդիրը չէ պարզել այդ համոզմունքների դավանաբանական էությունը, սակայն օրենքի կիրառման առաջին իսկ պահից ծագած այս խնդիրները մղել են եւ օրենսդիրն, եւ գործադիր իշխանությանը տվյալ անձանց համար գտնելու այլընտրանքային լուծումներ: Մասնավորապես, օրենսդիրը 2006թ. ընդունել է «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որում օրենքի 11-րդ հոդվածը լրացվել է 4-րդ մասով. «Սոցիալական քարտը հոգևոր խնդիրներին չի առնչվում և մարդու խղճի ու կրոնական համոզմունքների դեմ չի կարող օգտագործվել»: Այն փաստորեն պարունակում է երկու դրույթ: Առաջինը՝ որ օրենքը հոգևոր խնդիրներին չի առնչվում: Նման նորմը գործնականում զուրկ է իրավական բովանդակությունից: Երկրորդ դրույթը՝ «կրոնական համոզմունքների դեմ» քարտի օգտագործման արգելքը, վերացական

բնույթ է կրում և չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 3-րդ մասի այն պահանջին, որ «Նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն»: Օրենքի 11 հոդվածի նման լրացումը գործնականում տվյալ հոդվածի գոյություն ունեցող նորմերի իրավական բնույթի ու բովանդակության վրա որևէ ազդեցություն չի ունեցել:

Կառավարությունն իր հերթին 2005թ. հուլիսի 14-ի N 990-Ն որոշմամբ սահմանել է. «Կրոնական խնդիրներ ունեցող քաղաքացիներին իրենց դիմումների հիման վրա հատկացվում են առանց գծիակվոր պայմանաձևի ու առանց Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության խորհրդանիշի սոցիալական քարտեր»: Այս որոշումը նույնպես չի նպաստել հիմնախնդրի վերջնական կարգավորմանը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ օրենքի 11 հոդվածի վիճարկվող դրույթները, մասնավորապես՝ 2-րդ մասը, վերաբերում են ոչ միայն սոցիալական քարտից կրոնական դրդապատճառներով հրաժարվածներին, այլ իրավունքների իրականացման սահմանափակումներ են նախատեսում բոլոր անձանց համար, ովքեր, անկախ դրդապատճառից, սոցիալական քարտ չունեն: Այս առումով խնդիրը չպետք է դիտարկվի զուտ կրոնական և այլ համոզմունքների տեսանկյունից, այլ՝ անխտիր բոլոր մարդկանց իրավունքների սահմանափակման սահմանադրորեն թույլատրելի սահմանների տեսանկյունից:

X. Քննության առարկայի առնչությամբ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը, դատաքննության ընթացքում բերված առանձին փաստարկներն ու պարզաբանումները վկայեցին, որ անհրաժեշտ ընթերցում գոյություն չունի սահմանադրական այնպիսի առանցքային նորմ-

սկզբունքների առնչությամբ, ինչպիսիք են «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» (հ. 3, մաս 3-րդ) կամ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն» (հ. 6, մաս 1-ին): Բացի դրանից, ցանկացած նորմատիվ իրավական ակտ պետք է ապահովի և երաշխավորի Սահմանադրության 3 հոդվածի պահանջն առ այն, որ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան», ինչպես նաև 43 հոդվածի երկրորդ մասի պահանջը, համաձայն որի՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Քննության առարկայի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ հիշյալ նորմերի պահանջները երաշխավորելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ սահմանադրորեն տարբեր իրավունքների սահմանափակման առանձնահատկություններն ու բնույթը: Որքան էլ որ այլոց իրավունքների երաշխավորումն է դառնում անհատի հասարակական վարքագծի կանոնակարգման սահմանը, միևնույն է, Սահմանադրությունը, ինչպես նշվեց, չի նախատեսում որոշակի իրավունքների սահմանափակում: Իսկ այդ իրավունքների ապահովման կարգը չի կարող դրանց իրականացման արգելանք դառնալ, այլ պետք է երաշխավորի այն: Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է

իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չգրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):

«Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթների՝ այս տեսանկյունից վերլուծությունը վկայում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրականում առկա է ոչ թե իրավունքների համաչափ սահմանափակման, այլ սահմանադրորեն սահմանափակման ոչ ենթակա (խուսք չի վերաբերում ռազմական կամ արտակարգ իրավիճակներին) առանձին իրավունքների արգելափակման իրողությունը: Նման վիճակն առաջացել է, թերևս, նաև օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի անհստակ ձևակերպումից: Այն սահմանում է, որ «Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործառնությունների հաշվառման ու հաշվետվական փաստաթղթերը՝ սոցիալական քարտ չունեցող անձանց մասով, համարվում են անվավեր, եթե դրանցում նշված չեն սոցիալական քարտերի համարները»: Խնդիրը լուծված չէ այն դեպքում, երբ անձն ունի սոցիալական քարտ, սակայն համարը նշված չէ: Օրենքի 11 հոդվածի 2-րդ մասում «սոցիալական քարտ չունեցող անձանց մասով» դրույթի առկայությունը վկայում է, որ ի սկզբանե այս նորմը ոչ թե համապարտադիր իրավակարգավորիչ բնույթ ունի, այլ վերաբերել է անձանց որոշակի խմբի՝ նախատեսելով նրանց առանձին իրավունքների իրականացման արգելափակում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 1-ին մասով, 63 և 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՈՐՈՇԵՑ.

1. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթների՝ այս տեսանկյունից վերլուծությունը վկայում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրականում առկա է ոչ թե իրավունքների համաչափ սահմանափակման, այլ սահմանադրորեն սահմանափակման ոչ ենթակա (խուսք չի վերաբերում ռազմական կամ արտակարգ իրավիճակներին) առանձին իրավունքների արգելափակման իրողությունը: Նման վիճակն առաջացել է, թերևս, նաև օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի անհստակ ձևակերպումից: Այն սահմանում է, որ «Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործառնությունների հաշվառման ու հաշվետվական փաստաթղթերը՝ սոցիալական քարտ չունեցող անձանց մասով, համարվում են անվավեր, եթե դրանցում նշված չեն սոցիալական քարտերի համարները»: Խնդիրը լուծված չէ այն դեպքում, երբ անձն ունի սոցիալական քարտ, սակայն համարը նշված չէ: Օրենքի 11 հոդվածի 2-րդ մասում «սոցիալական քարտ չունեցող անձանց մասով» դրույթի առկայությունը վկայում է, որ ի սկզբանե այս նորմը ոչ թե համապարտադիր իրավակարգավորիչ բնույթ ունի, այլ վերաբերել է անձանց որոշակի խմբի՝ նախատեսելով նրանց առանձին իրավունքների իրականացման արգելափակում:

տերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ ՀՀ Սահմանադրության 31, 32 (2-րդ մաս) և 37 հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին, 2-րդ մասեր), 42, 43 և 48 (կետ 12) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերը կամ

դրանց համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 11-րդ մասի և 68 հոդվածի 12-րդ մասի համաձայն սույն որոշումը տարածել դրա ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՅՈՂ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4 հոկտեմբերի 2006 թվականի
ՍԴՈ-649

ՀՍԻԿ Նախագահ Գ. Մանուկյանի շնորհակալական նամակը ՀՀ ՍԴ Նախագահ Գ. Հարությունյանին

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ
պարոն Գագիկ Հարությունյանին

Մեծարգո՝ պարոն Հարությունյան

Թույլ տվեք հազարավոր քաղաքացիների և ՀՍԻԿ նախագահության անունից մեր երախտագիտությունը հայտնել ՀՀ Սահմանադրական դատարանի բոլոր անդամներին և անձամբ Ձեզ Սանուշակ Քոչարյանի և Հրանուշ Դավթյանի անհատական գործերով 2006թ. հոկտեմբերի 4-ին կայացրած պատմական որոշման առթիվ:

Մարդիկ ցնծության և ուրախության մեջ են. մենք բազմաթիվ շնորհակալական նամակներ և զանգեր ենք ստանում:

Ձեր որոշումը հայրենական արդարադատության վաղուց սպասված հաղթանակ է՝ ընդդեմ բռնության և անիրավության: Այն արթնացրեց քաղաքացիների հույսն ու հավատը՝ հանուն իրենց մարդկային Աստվածատուր իրավունքների պաշտպանության:

Խնդրում ենք մեր շնորհակալությունը փոխանցել Սահմանադրական դատարանի բոլոր անդամներին, ինչպես նաև աշխատակազմին:

Հարգանք՝
Գ. Մանուկյան
2006 թ. դեկտեմբերի 9

ՀՍԻԿ նախագահի Գևորգ Մանուկյանի եզրափակիչ ելույթը ՀՀ Սահմանադրական դատարանում

Հարգելի՛ Բարձր դատարան,
«Ամենախիստ օրենքը մեծագույն անարդարություն է», - հռչակում է լատինական իրավական դարձվածքը: ՍԱԶՄ օրենքը և նրա 11-րդ հոդվածը հենց մեծագույն անարդարություն են, քանզի հակասում են Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների վերաբերյալ Սահմանադրության 2-րդ գլխին, ընդհանրապես արդարության հայեցակարգին և ծանր հետևանքներ են ունեցել: Մինչդեռ իրավունքը, օրենքը պետք է արդարության ու ճշմարտության արտացոլումը լինեն: Իրավունքի և օրենքի նկատմամբ ոտնձգությունը ամենամեծ չարիքն է, որ կարելի է պատճառել երկրին ու ժողովրդին:

Պարզված հանգամանքներ.

1. Զննության ընթացքում բացահայտվեց ՍԱԶՄ օրենքի անհամապատասխանությունը ոչ միայն դիմումներում նշված ՀՀ Սահմանադրության թվով յոթ՝ 3, 5 (2-րդ մաս), 6 (1-2-րդ մասեր), 26 (1-ին մաս), 27 (1-ին մաս), 37, 42 (1-2-րդ մասեր) հոդվածներին, այլև նաև 15-րդ, 31-րդ, 43-րդ և 44-րդ հոդվածներին և նույնիսկ օրենքի անվանմանը և նրա 5-րդ հոդվածով սահմանված նպատակներին, քանզի նպատակները համապատասխանում են այդ չարաբաստիկ օրենքի սկզբնական անվանմանը՝ «Օրենք անհատական ծածկագրերի մասին», որը չորս անգամ փոփոխվեց՝ փորձելով սքողել, քողարկել նրա իրական էությունը: Օրենքի թերություններն արմատական, հիմնային են:

2. Հազարավոր մարդիկ, օգտվելով իրենց մարդկային անկապտելի՝ Սահմանադրությամբ ամրագրված սեփական կարծիքն ու համոզմունքն ունենալու իրավունքից, 20 ամիս շարունակ մերժել են իրենց հրամցվող սոցիալական քարտերը՝ նույնիսկ ենթարկվելով զրկանքների, թերսման ու փաստացի սովամահության: Պետությանն արգելված է սահմանափակել այդ իրավունքները: Այդպիսի սահմանափակում պետությունը կարող է կիրառել միայն, «...*եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար*» (ՀՀ Սահմանադրություն, հոդ. 43): Ավանհայտ

է, որ սոցիալական քարտերից հրաժարվող քաղաքացիները նման վտանգներ չեն ներկայացնում:

3. Այս օրենքը կիրառվեց համատարած բռնություններով ու մարդկային իրավունքների խախտումներով: Անշուշտ, ցանկացած օրենք պետք է նախատեսի նաև հարկադրանքի կիրառում այն խախտվելու դեպքում: Սովորաբար հարկադրանքի կիրառման անհրաժեշտություն հազվադեպ է ծագում: Բայց ՍԱԶՄ օրենքի դեպքում ոչ թե հարկադրանք, այլ **համատարած բռնություններ** են կիրառվել և ամբողջ երկրում: Սա այն դեպքերից է, երբ որոշ մարդիկ կարծում են, թե իրենք իրավունք ունեն որոշելու այլոց, անգամ ամբողջ ժողովրդի փոխարեն: Անօրինակաւորությունն ու իրավախախտումները եղել են այս օրենքի կիրառման սկզբունք և մեթոդ: Հարգարժան նախարարը գոհունակությամբ հայտարարեց, որ 2 միլիոն 550 հազար մարդ սոցիալական քարտ է վերցրել: Թույլ տվեք հայտարարել, որ դա իրականությանը չի համապատասխանում, քանզի նրանց մեծ մասը ոչ թե վերցրել, այլ բռնի համարակալվել է: Համատարած բռնությունների մասին վկայում են բազմաթիվ մոտ հարյուր հազար ստորագրություններ, Ազգային ժողովի ընտրյալ 33 պատգամավորների ստորագրություններով դիմումը՝ ուղղված Սահմանադրական դատարանին, բազմաթիվ ցույցերը, բողոքները ամբողջ երկրով մեկ, բազմաթիվ նամակներ, խնդրագրերը՝ ուղղված բոլոր ատյաններին, վկա Անահիտ Թադևոսյանի ցուցմունքները: Կարևոր է հիշատակել նաև Մարդու իրավունքների առաջին պաշտպանի պաշտոնական գրությունը ՀՀ նախագահին սոցիալական քարտերի մասին օրենքի հակասահմանադրականության վերաբերյալ, թեև այդ նամակին ընթացք չի տրվել:

4. Սոցալ նախարար Աղվան Վարդանյանին ուղղված իմ հարցի ժամանակ Դուք ինձ մեղադրեցիք հավատաքննություն կատարելու համար, մինչդեռ պարոն նախարարն իր պատասխաններով հոգևոր քարոզչի դեր էր ստանձնել՝ փորձելով համոզել, որ հոգևոր հարցերը ևս կարելի է կարգավորել օրենքներով, ինչն էլ հենց կատարում են այդ հակասահմանադրական օրենքով: Ես պետք է ասեմ, որ դա, մեղմ ասած, անպարկեշտ վերաբերմունք է Սուրբ Գրքի նկատմամբ:

5. Անհիմն է ոմանց կողմից սոցքարտի

և անձնագրի կամ այլ վկայականի միջև գուցահեռներ տանելը: Օրենքի 4-րդ հոդվածը պարզորոշ նշում է՝ «քարտի համարը եզակի է և փոփոխման ենթակա չէ»: ուրեմն այն կորցնելու դեպքում անձին տրվելու է նույն համարի քարտ, այսինքն՝ քարտը փոփոխական է, համարը՝ ոչ: Ոչ անձնագրի և ոչ էլ որևէ այլ վկայականի համարը եզակի չէ: Անձը և թիվը անփոփոխ են: Եզակի է անձը, եզակի է համարը, և քարտը՝ սոսկ միջոց, գործիք է օրենքի 5-րդ հոդվածով անթաքույց սահմանված նպատակի՝ համարի ու անձի նույնականացման համար: Հետևաբար ակնհայտ է, որ դա եզակի անձի անփոփոխ համարն է, որի միջոցով նույնականացվում է տվյալ անձը՝ եզակի անհատը, իր համարին:

Համակարգը ներդնողները նաև նախատեսել են ՀՀ քաղաքացու անձնագրի երրորդ էջում անձնագրի համարից գատ **միայն** անգլերենով հատուկ անձի համարի նշում, և համապատասխան տող է նախատեսված՝ անձի համարը հետագայում լրացնելու համար:

6. Ի լրումն այս ամենի՝ ՍԱԶՄ օրենքը ուղղակիորեն հակասում է ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մաս կազմող մի ամբողջ շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» հոդված 18-ին, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի» հոդված 9-ին, «Վերանայված եվրոպական սոցիալական հրովարտակի» 4-րդ, 12-րդ հոդվածներին, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» սկզբունքներին:

7. Ես պետք է ուրախությամբ և գոհունակությամբ նշեմ պատասխանողի՝ ՀՀ Ազգային ժողովի պետաիրավական հանձնաժողովի նախագահ պարոն Ռաֆիկ Պետրոսյանի ազնիվ ու անկեղծ դիրքորոշումը քննարկվող հարցում և ընդունումը, որ, իրոք, սոցիալական քարտերի մասին օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Հարգելի՛ Բարձր դատարան,

Մեզ մեծապես մտահոգում է, որ Սահմանադրությունը՝ որպես անմիջականորեն գործող փաստաթուղթ, գործադիր մարմինները և դատարանները չեն կիրառում: Նրանք գերադասում են գործադիրի, իրենց անմիջական ղեկավարի ենթաօրենսդրական, թեկուզ հակասահմանադրական հրամանները, հրահանգներն ու

արձանագրությունները, քան երկրի հիմնական օրենքը, քանի որ անմիջական ղեկավարը կարող է պաշտոնանկ անել, իսկ Հիմնական օրենքը՝ ոչ: Այսպիսի իրավիճակը ահագանգ է և անհանգստացնում է շարքային քաղաքացուն, քանի որ նրա իրավունքները վտանգված են դրանով:

ՍԱԶՄ օրենքի 11-րդ հոդվածի կիրառությունն ամեն օր նոր չարիքներ է պատճառում քաղաքացիներին:

Դիմող քաղաքացիների ա-նունից մենք խնդրում ենք՝

1. Սոցիալական քարտերի մասին ՀՀ օրենքի հոդված 11-ի 2-րդ և 4-րդ կետերը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

2. ՍԱԶՄ օրենքի հակասահմանադրական 11-րդ հոդվածի կիրառմանն ուղղված՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ», «Աշխատանքային», «Մաքսային», «Քաղաքացիական դատավարության մասին» օրենսգրքերում, հարկային, բանկային օրենսդրությունների մեջ, «Զբաղվածության մասին» և այլ օրենքներում ու համապատասխան ենթաօրենսդրական ակտերում կատարված բոլոր փոփոխությունները ճանաչել անվավեր՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 9-րդ կետի:

Մենք նաև ակնկալում ենք որ, իրավասու մարմինները կպարտավորվեն՝

3. Անհապաղ վճարել կասեցված աշխատավարձերը, կենսաթոշակները, փոխհատուցման գումարները, նպաստները:

4. Քարտերի վերադարձման հնարավորություն նախատեսել այն բոլոր քաղաքացիների համար, ովքեր պարտադրված են վերցրել դրանք:

5. Մահացած անձանց կենսաթոշակները և թաղման նպաստները վճարել նրանց հարազատներին:

6. Վերադարձնել սոցքարտ չունենալու պատճառով գործատուներից գանձված տուգանքները:

7. Բարձրացնել քաղաքացիներին և հանրապետությանը պատճառած վնասների համար մեղավոր պաշտոնյաներին պատասխանատվության կանչելու հարցը:

Շնորհակալություն ուշադրության համար:

Թող Աստված առաջնորդի ձեզ՝ արդարացի և ճշմարիտ որոշում կայացնելու համար:

Գևորգ Մանուկյան
2006 թ. հոկտեմբերի 3

ԱՂԱՍԻ ԻՎԱՆՅԱՆ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ»՝
ՈՐՊԵՍ
ԿԵՆՏՐՈՆԱԿ ԲԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՏԵՐՄԻՆ

*Մենք ապրում ենք մի դարաշրջանում,
երբ ճշմարտություն չեն սիրում և չեն փնտրում:
Ճշմարտությունը օրեցօր փոխարինվում է
օգտակարությամբ և ամենագործության կամքով...
Ն. Բերդյայև*

Երրորդ հազարամյակի նախաշեմին մարդկությունը հայտնվել է բարդ ու վտանգավոր իրավիճակում, որից, բնականաբար, դուրս չէ վերջին երկու տասնամյակների ցնցումներից հետո ներքին ու արտաքին պահվածքը դեռ չբյուրեղացրած հայ հասարակությունը: Այն, ինչին վերջին ժամանակներս սովորել ենք անվանել «մարտահրավերներ մարդկությանը», մեզ համար կրկնակի սաստկացված է նաև «հայ սոցիումի» նոր հարացույցի փնտրտուքի պատճառով, փնտրտուք, որն ուղեկցվում է աշխարհաքաղաքական, լեզվամշակութային, սահմանադրական և բարոյահոգեբանական ձևափոխություններով ու քննություններով: Հայ հանրությանը պատել է գերտերությունների կողմից որևէ թեմփլեթ-մոնոլոգ՝ ասենք Բրազիլիայի կամ Եստոնիայի, պատճենահանվելու (copy-paste) վախը: Բայց նաև զրկված ենք մեր ժամանակներում հանուն զարգացման, ստեղծված համամարդկային արժեքների, այդ թվում՝ նաև հասարակական-կառուցվածքային արժեքների վրա աչք փակելու հնարավորությունից: Եվ ահա այս ծայրահեղ իրողությունների համաշարուն հայ լեզվական մի շերտ համալրված է «Էլեկտրոնային Հայաստանով», որն ամենայն հավանականությամբ կոչված է ամփոփելու հայ տեղեկատվական հասարակության նկարագիրը: «Էլեկտրոնային Հայաստանը նոր ժամանակների հայ սոցիումի չբյուրեղացած կամ դիմամիկ կեցությունն է» – ժամանակավոր ձևակերպումը կոչված է որոշակիացնելու գաղափարի արժեքաճանաչման (աքսիոլոգիական) հարթակը և բանականացնելու նրա կիրառական հայեցակետերը: Այն ենթադրում է հանրաբանությունը (սոցիոլոգիան) որպես մեթոդաբանություն ընտրելու կանխորոշվածությունը, բայց չի լուծում գաղափարի չափավորության

խնդիրը. այն է՝ արդյո՞ք բավարար հիմքեր կան առանձնացնելու համար «Էլեկտրոնային Հայաստանը» որպես առանձին սոցիումի տեսակ, թե՞ դա սոսկ համընդհանուր իրազեկ հասարակության տարածքային թեքում է (ֆլուկտուացիա): Ընտրության մեկ այլ տարբերակ կարող է լինել «ճշմարտությունը չափվում է արդյունքի օգտակարությամբ» ձևակերպմամբ հարթակը, որը տվյալ պարագայում կարելի է անվանել գործորոշություն (տեխնոպրագմատիզմ): Գործորոշների (տեխնոպրագմատիկոսների) տեսանկյունից հանրաբանական (սոցիոլոգիական) որևէ նախաձեռնություն արդի հանրաբաններ (սոցիոլոգներ) Դ. Բելլի, Ս. Կաստելի, Ա. Թոյնբի, Ս. Հանթինգթոնի, Ա. Տուրենի, Ֆ. Ֆուկույամայի և այլոց աշխատանքների հայերեն հերթական մշակումն է՝ անորոշ կամ անհասկանալի գործնական արդյունքով: Մյուս կողմից, հայտնի են գործողությունների ինքնապատկության և սոցիալական լարվածության աճի փաստն արհամարելու համար գործորոշներին ուղղված հանրաբանների մեղադրանքները:

Տեղեկատվական տեխնոլոգիաները սոցիալական գործոն դիտարկելու առաջին փորձերը կատարվել են դեռ 1950 թ. կիբեռնետիկայի հիմնադիր Նորբերտ Վիների կողմից¹, երբ նոր էին տարածում ստացել առաջին հաշվողական մեքենաները: Նա է նաև առաջին անգամ նկատել հասարակության կողմից այդ տեխնոլոգիաները որպես պաշտամունքի առարկա դարձնելու վտանգը, որից այսօր զերծ չի մնացել հայ հանրությունը, և որն ընկած է հայ գործորոշության գաղափարախոսության հիմքում²:

Մեթոդաբանական հակասությունը կարճատեսությունից հեռատեսությունում առանցքի վրա է, և դժվար չէ նկատել, որ գործորոշների «արդյուն-

քի օգտակարությունը» բանական է միայն կարճ ժամանակահատվածում, որը համարժեք է նրանց գործողությունների ինքնամատակարարմանը: Մարդկությանը և մասնավորապես հայ հանրությանը նետված մարտահրավերների վերլուծությունը ակնհայտ է դարձնում սոցիոլոգիական հարթակի առավել կենսունակությունը, որը հիմք է տալիս «Էլեկտրոնային Հայաստանը» ընկալելու իբրև հայ հանրության կողմից իրացվող իրազեկային հասարակարգ, որը լուրջ հանրաբանական հետազոտությունների առարկա է արդեն կես դար: Այդ հետազոտություններն էլ միարժեք չեն. արդեն շրջանառության մեջ են դրված ժամանակակից աշխարհը նկարագրող մոտեցումներ՝ պոստմոդեռնիզմ, տեղեկատվական հասարակության տեսություն, պոստիմդուստրիալիզմ և այլն: Դրանք այս կամ այն շեշտադրումներով ներկայացնում են մարդկության զարգացման ժամանակակից տեսությունը: Հայ հետազոտողներն ու պետական-քաղաքական գործիչները նախընտրում են օգտագործել «տեղեկատվական հասարակություն» տերմինը⁴, բայց խնդիրը ոչ միայն նախընտրելիությունն է, այլ նաև շեշտադրումը: Համաձայնելով գործողության հետ, որ վերոհիշյալ երեք մոտեցումների զուտ շարադրանքի օգտակարությունը մեծ չէ, պետք է նորից շեշտել, որ միայն գործնական քայլերը չեն կարող օգտակար լինել, եթե դրանք հիմնավորված չեն տեսական հարթակում: Այդ առումով իրենց զգալ է տալիս արդիական մի տեսության բացակայությունը, որը կարելի է անվանել «Էլեկտրոնային Հայաստանի տեսություն», որը կոչված պետք է լինի որոշելու գիտատեխնիկական սրընթաց զարգացման գործընթացներում հայ հանրության ճշմարիտ պահվածքը և որը պետք է տա «Էլեկտրոնային Հայաստանի» որպես հայ հանրության զարգացման մի բարձրագույն աստիճանի քաղաքականության դիրքը: Հիմնվելով հանրաբանության ժամանակակից նվաճումների վրա՝ անհրաժեշտ է ունենալ հայ սոցիումի նկարագրման և զարգացման իրատեսական համակարգ, որը հիմք հանդիսանա որոշակի ծրագրերի կառուցման և իրականացման համար: Համակարգն արդեն առաջադրել է իր խնդիրները. դրանցից առաջնայինը՝ «հայ հանրություն» հասկացության ներկա և «ցանկալի» պատկերների նկարագրի խնդիրն է, որն իր հերթին ենթադրում է թե՛ ժողովրդագրական, թե՛ տնտեսական և թե՛ հանրա-մշակութային ու քաղաքական վեկտորների հստակեցում: Պակաս կարևոր չէ փոխակերպական միջոցի՝ սոցիալական գործուն, բայց վերջին տարիներին կտրուկ թուլացած՝ «տանող խմբի» վերականգնման խնդիրը. առանց

որի հասարակական զարգացումն անհնարին է: Մեկ այլ խնդիր է սոցիալական զարգացման խնդրի ընդհանրացումը, որը ենթադրում է սոցիումի և բնության, անհատի և սոցիումի հարաբերությունների սահմանումն ու զարգացումը: Եվ, վերջապես, հիմնարարը քաղաքակրթական համակարգի ընտրության խնդիրն է, որը պարզապես հնարավոր չէ լուծել, եթե մանրամասնորեն ուսումնասիրված չեն ազդեցիկ քաղաքակրթական համակարգերի շփումներն ու զարգացման միտումները հատկապես մեր հանրության ու մեր տարածքի կոորդինատներում⁴: Պետք է փաստել, որ «Էլեկտրոնային Հայաստան» տերմինի ընկալումը՝ որպես սոցիալական երևույթ, ունի աճման միտում, բայց «Էլեկտրոնային Հայաստանի տեսություն» զարգացումը՝ որպես հանրաբանական համակարգ, ժամանակի ընթացքում կկրի այնպիսի ընդհարացումներ և կընդգրկի հասարակական-քաղաքական այնպիսի հարցեր, որ ի հայտ կգա այդ տերմինի համարժեքության խնդիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Լ. Նազարյան*, Էլեկտրոնային Հայաստան. Երազը իրականություն դարձնելու ճանապարհին, Ապրիլ 3, 2006 թ.
2. ՀՀ Նախագահի 20 հուլիսի 2002 թ. ՆՅ-896 հրամանագիրը:
3. ՀՀ Վարչապետի 3 սեպտեմբերի 1999 թ. թիվ 544 որոշումը:
4. «Հայաստանի Հանրապետության պետական տեղեկատվական միասնական համակարգի ստեղծման և նրա ներդրման կազմակերպական միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության 1999 թ. 16 մարտի թիվ 152 որոշումը:
5. Стругацк Д.ж. Бездеиствие демократии во Всемирном банке
6. Погосян Г. А. Армянское общество в трансформации, Ереван, 2003
7. Հ. Բալայան «Տեսարաններ և նշաններ Երևանի փողոցներում»
8. ICT Master Strategy for Republic of Armenia
9. Տ. Սարգսյան, Հայկական քաղաքակրթությունը որպես բեկումնային նախագիծ
10. Тоунби А. Постмужение истории.

⁴ Winer N. The Human Use of Human Beings: Cybernetics and Society. – Boston: Houghton Mifflin, 1950.

² Դա հաստատվում է շրջանառվող համաշարուն «Էլեկտրոնային Հայաստանի» ընկալման տեսակավորման արդյունքներով: **Խուճք առաջին՝ սիրողական-իռացիոնալ:** Օրինակը «Էլեկտրոնային Հայաստան. երազը իրականություն դարձնելու ճանապարհին» վերնագրով հրապարակման հեղինակն է [1], որի առաջին պարբերությունն է. «Արդեն տասը տարի «արդարություն» և «Ժողովրդավարություն» բառերը նորից ու նորից վերածակերպվում և վերախմբագրվում են տասնյակ ծրագրերում, որոնք կոչված են Հայաստանում իրականություն դարձնելու էլեկտրոնային կառավարության վառ երազը...»: Պարզապես հնարավոր չէ անտարբերություն ցուցաբերել «Էլեկտրոնային հայաստան» և «Էլեկտրոնային կառավարություն» հասկացությունների նույնացման փաստի նկատմամբ, քանի որ նույնացված են երկու տարբեր արժեքամական հարթակներում գտնվող հասկացություններ: **Խուճք երկրորդ՝ ձևական-իռացիոնալ:** Օրինակը «Էլեկտրոնային Հայաստան» կոչումով հիմնադրամն է, որը լայնածավալ գործնական աշխատանքներ է ծավալել Վեր կայքերի, ինչպես նաև Հայաստանի էլեկտրոնային պատրաստվածության հաշվետվություններին հարիր թվախադրերի դաշտում... և ոչ մի հանրաբանական հիմնարար աշխատանք: **Խուճք երրորդ՝ իշխանական-իռացիոնալ:** Օրինակները տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդն [2] ու ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովն են [3], որոնք, քողարկվելով «պոֆեսիոնալիզմի» պահվածքում, պաշտոնական որևէ փաստաթղթում չեն օգտագործում «Էլեկտրոնային Հայաստան» արտահայտությունը՝ դրանով արդարացնելով հանրաբանական հիմնարար աշխատանքների բնագավառում իրենց անգործությունը: Այս տիպավորության մեջ են տեղավորվում նաև հենց ինքը՝ Հայաստանի Կառավարությունը, որը հետևողական չէ նույնիսկ իր իսկ ծնած ծրագրերի կատարմանը [4], և զանազան միջազգային կազմակերպությունները, որոնց կողմից իրականացվող էլեկտրոնային զարգացման ծրագրերը շատ դեպքերում ավելի ու ավելի են մեծացնում սոցիալական ներքին էնտրոպիան: Տպավորություն է ստեղծվում, որ նույն միջազգային կազմակերպություններն ու իշխանություններն իմունիտետ ունեն սեփական գործողությունների վերաբերյալ ոչ այնքան հաճելի, բայց օբյեկտիվ վերլուծությունների նկատմամբ, ինչպիսին է Ստիգլիցի քննադատությունը

նր[5], և կարող են անտեսել կամ լավագույն դեպքում դիվանագիտորեն շրջանցել այդ վերլուծությունները՝ իրենց ռազմավարության տապալման փաստը ընդունելու համար չունենալով բավարար համարձակություն: Սոցիալական կողմնորոշվածությունից խույս տալու լավագույն օրինակ է Հայաստանի ՏՀՏ գլխավոր ռազմավարությունը, որտեղ որպես երկու հիմնական նպատակներ նշված են «Ստեղծել կենսունակ և դինամիկ ՏՀՏ ոլորտ, որը կխթանի աճը Հայաստանի տնտեսության այլ ճյուղերում» և «Հայաստանի համար նպաստավոր դիրք ապահովել համաշխարհային տեղեկատվական տնտեսության մեջ» [8]: **Խուճք չորրորդ՝ գիտակցող-իռացիոնալ:** Օրինակները անհատներ են. Հ. Բայադյանի «Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում» աշխատանքում հատուկ նշանակություն է տրված տեղեկատվական հասարակության կառուցման սոցիալական խնդիրներին: Նույն ակնարկն արված է Գ. Չուբասյանի «Էլեկտրոնային զարգացումը և Հայաստանը» աշխատանքում: Ծավալուն, զուտ հանրաբանական աշխատանք է արված նաև Գ. Պողոսյանի կողմից [6]: Նշված աշխատանքները հաշվառված չեն ոչ մի միջազգային կազմակերպության ու կառավարության ռազմավարական կամ մարտավարական ծրագրերում, անտեսված են որոշում ընդունող մարմինների կողմից:

³ Ընդհանուր առմամբ «տեղեկատվական հասարակություն» տերմինի օգտագործումը պետական ծրագրերում ձևական-հրապարակահաճ բնույթ ունի, քանի որ հենց այդ նույն ծրագրերը խախտում են սոցիալական հավասարակշռությունը, որը հակասում է տեղեկատվական հասարակության հիմնարար սկզբունքներին: Հ. Բայադյանը նկատում է. «Ցուցանակներ ետևում, ուրեմն, ավելի շատ ելքեր են, անցքեր դեպի ուր-որ, այլ ոչ թե կապուղիներ: Այսինքն Ինտերնետն առայժմ ավելի սոցիալական մարմնի պառակտվածությունը և հաղորդակցական կարողությունների պակասությունն է ի ցույց դնում, քան հաստատում մարդկանց կամրջող-կապակցող, համայնքներ ծնող-պահպանող միջոցի առասպելը: Ինչ խոսք, հաղորդակցության ամենաարդիական ցանցն անգամ չի կարող կապել մարդկանց, երբ այսչափ հոստուն է սոցիալական մարմինը, հարափոփոխ և մասնատված, իսկ մշակութային գիտակցության «խորհրդային հպատակությունը», որ տևում է առանց նշանակալի կորուստների,

դեռևս կապակցող մշակութային նոր հեռանկարների հույսեր չի ներշնչում» [7]: Սոցիալական ճեղքվածքի պատճառներից մեկը «էլիտար» բնակարանաշինարարությունն է, որի դերը շուկայական հարաբերությունների զարգացման գործում լինելով զգալի, այնուամենայնիվ խորացնում է մաս տեղեկատվական հասանելիության ճեղքվածքը: Իշխանության դերը ոչ թե այդ գործընթացի հովանավորչությունը, այլ նրա ստեղծած սոցիալական ճեղքվածքի ու լարվածության, այդ թվում մաս տեղեկատվական հասանելիության ճեղքվածքի խորացման «մեղմումն» է:

⁴ Տ. Սարգսյանը հետևյալ հարցադրումներն է անում. «Արդյո՞ք Հայաստանն ու հայ ժողովուրդը հանդիսանում են ուրույն (լուկա) քաղաքակրթության կրող: Հատկապես ո՞ր երկրի կամ մշակույթների հետ է առավել փոխառնչվել հայությունը (դրական և բացասական առումներով): Արևմտյան ո՞ր արժեքներն են համահունչ մեր ազգային նկարագրին, որո՞նք են հակասում՝ վտանգելով մեր ազգային անվտանգությունը: Կարո՞ղ է արդյոք, Հայաստանը, պահպանելով իր ինքնությունը, չինտեգրվել առավել խոշոր քաղաքակրթական համակարգերին և սոսկ քաղաքակրթությունների երկխոսություն վարել [9]: Նա իրավացիորեն նկատում է, որ առաջադրված հարցերի պատասխանները խիստ կախված են «քաղաքակրթություն» հասկացության սահմանումից, և քննության է առնում այդ սահմանումների մի

քանի ընդունված տարբերակների դեպքում առաջադրված հարցերի հավանական լուծումներ:

Ուրույն, տեղայնացված քաղաքակրթություն ունենալու հասարակական պահանջն ու ցանկությունը, որը կարողանա երկխոսությունների ներդաշնակ մրցակցության մեջ մտնել ներկայիս հաստատված քաղաքակրթությունների հետ, դեռ բավարար չէ: Երբեք որևէ անկախ քաղաքակրթություն չի համադրվել որևէ մահազոհով: Ինչպես նշում է Ա. Թոյնբին «...հեշտ է նկատել, որ ոչ հին և ոչ էլ նոր ժամանակներում (III հզ. Մ.թ.ա - II հզ. Մ.թ) չի ծագել ոչ մի՝ հարազատորեն անկախ նոր քաղաքակրթություն» [10]: Քաղաքակրթությունները ծագում են պատմական անհրաժեշտությունից ու պայմաններից: Բայց պատմական պայմանների կենտրոնացումը պասիվ հասարակարգի շուրջ՝ քաղաքակրթության ծագման համար բավարար չէ, ավելին՝ ոչ գործուն (պասսիվ) հասարակարգին պատմական պայմաններ չեն մատուցվում: որ քննության նյութ է հենց այդ պատմական պայմանների համակարգի ուսումնասիրությունն ընդհանրապես, որն էլ կփխտի կամ կհաստատի մրանց գոյությունը հայ հանրության համար:

ELECTRONIC ARMENIA AS A TRANSITIONAL TERM OF ESTABLISHMENT OF VIABLE CIVILIZED SYSTEM

AGHASI IVANYAN

Summary

The work is a deep analysis of the perception of the term “Electronic Armenia” in the light of modernity, progress perspective, obstacles and sociological findings detecting all these.

Б. Арутюнян

*Возможно, я поступаю не правильно, но
делаю это в соответствии с традициями.
Мистер Джунс¹*

Данная статья представляет собой ряд теоретических обобщений в основе которых лежат социологические исследования проведенные в течении последних трех лет, целью которых является попытка верификации гипотезы о существовании культуры коррупции. Такая постановка вопроса обусловлена тем, что в настоящий момент коррупционные отношения являются для армянского общества значимым социальным феноменом расцениваемым негативно, а исследования этого феномена проводятся в рамках юриспруденции или экономики. Аналогичная ситуация характерна для большого числа стран, о чем свидетельствуют аннотированные списки литературы по проблематике коррупции [Сатаров 2002, Johnston 2005]. Одновременно социологии отводится достаточно скромное место — всего лишь средство для диагностики коррупции [Сатаров 2004, стр. 70]. Интересно, что в конце шестидесятых годов были заложены основы для специфического, действительного социологического подхода, к изучению коррупции, который был подавлен экономическими подходами, казавшимися более перспективными из за больших возможностей формализации [Alatas 1968].

В рамках вышеуказанных подходов, коррупционное поведение рассматривается с позиций нравственного оценивания, а акцент ставится либо на сам факт криминального события, либо на дополнительные издержки и возможности получения дополнительной прибыли [Тимофеев, 2000; Голик 2005; Ռոմկ-Ալեքսան, 2004; Հովսեփյան, 2003].

Анализ регуляторов социального поведения

КУЛЬТУРА КОРРУПЦИОННОГО ПОВЕДЕНИЯ: МИФ ИЛИ РЕАЛЬНОСТЬ?

акторов остается вне поля исследовательского интереса. В то же время, социальный опыт подсказывает, что фактическое поведение акторов не произвольно, а подчинено особому рода неписанным правилам и нормам. Логично предположить, что эти правила не автономны, а взаимосвязаны, основаны на определенных ценностях и стереотипных ролевых ожиданиях и т.д.


Прежде чем мы обратимся к результатам исследования, считаем целесообразным в нескольких словах описать методологию и механизм проверки валидности полученных результатов, так как это позволит судить о значимости полученных результатов.

В качестве поля для сбора эмпирического материала были избраны учреждения высшего образования. В качестве метода сбора информации индивидуальное глубинное интервью и метод фокус-групп.

К результатам и процессу исследования были выдвинуты общие требования для проверки валидности качественных исследований [Киблицкая 2003, 69-78; Kvale 1996, 227-250]. Кроме этого результаты исследования были представлены на суд экспертов и специалистов из различных научных областей, заинтересованных данной проблематикой.²

С точки зрения поиска опровержений либо подтверждений выдвинутой гипотезы, первично определение основных понятий — “коррупция” и “культура коррупционного поведения”. Принимая во внимание огромное количество определений первого понятия, мы не претендуем на создание новых дефиниций однако частично преобразуем и подчеркнем важные моменты.

Под коррупцией мы будем понимать следующую модель взаимодействий носящих характер обмена, которая родилась на стыке социологии и институциональной экономики



(см. схема 1).

Существует принципал, который на основе одного из возможных видов контрактов (контракт может иметь форму нотариально заверенного документа либо культурно обусловленного ролевого ожидания и т.д.) передает агенту ресурс, который необходим для достижения целей принципала. Агент, нарушая условия контракта присваивает либо трансформирует ресурс являющийся собственностью принципала в определенную форму капитала (социальный, человеческий, экономический и т.д.), который получает со стороны клиента либо его представителя.

Данное определение адекватно объясняет логически возможные варианты развития отношений между Принципалом, Агентом и Клиентом. Если представить, что клиент является агентом т.е. рассматривается наиболее редуцированная схема отношений, когда агент просто присваивает ресурс, то имеет место то, что в юриспруденции называется “злоупотреблением служебного положения”, “присвоение/расхищение собственности” и т.д. Подобная схема редко представляет интерес для исследователей коррупции, хотя однозначно квалифицируется как таковая [Резолюция Ген. Ассамблеи ООН, 1979; Մանվարյան 2. 2004, 12; Մանվարյան 2005, 42-47].

Определение коррупции объясняет так же экзогенную и эндогенную коррупцию – формальную классификацию обменных отношений, основанных на позиции клиентов относительно системы.

Демонстрация на схеме связей между Агентом и Клиентом в виде двунаправленных стрелок дает возможность увидеть восходящую и нисходящую коррупцию в зависимости от статуса Агента и Клиента.

Для нашего исследования интерес представляют все проявления коррупции, кроме монокоррупции (случая редукции Клиент = Агент).

Попытки определить, что есть культура имеет историю нескольких десятилетий.

Наиболее удачная из них по нашему мнению является классификация Кребера, который в своем анализе выделил 5 типов определения культуры [Kroeber 1952]:

1. Дескриптивные определения, когда стремятся описать все или некоторые аспекты человеческой жизни и деятельности.
2. Исторические определения, которые делают акцент на ассимиляции традиции прошлых времен.
3. Нормативные определения делают акцент на правилах, которые руководят деятельностью группы людей. В отличие от дескриптивных и исторических дефиниций, которые подразумевают явное выражение культурной жизни, нормативные определения требуют, чтобы мы всмотрелись в ту деятельность, которую мы можем наблюдать и попытались открыть, что за ней стоит.
4. Психологические определения подчеркивают множественность психологических аспектов, включающих такие понятия как приспособление, разрешение проблем, обучение, привычки. Например, культура позволяет группе приспосабливаться к своим постоянным (повторяющимся) проблемам, культура усваивается и результатом этого процесс является установление в данной группе определенных привычек. Это определение является более широким и включает на имплицитные (например, приспособление) и наблюдаемые (например, привычки) культурные феномены.
5. Структурные определения подчеркивают модель или организацию культуры. Этот взгляд связан с первой (дескриптивной) категорией в том, что делает акцент на целостности, тотальности картины.

Редуцируя таксономию до двух категорий, вполне возможно рассматривать “культуру” в качестве механизма социальной интеграции и регуляции, либо в качестве особой социальной сферы, включающей, прежде всего, социальный контекст мира искусств. В данной статье мы будем придерживаться первой трактовки термина и пользоваться наследием М. Вебера и других теоретиков, разделяющих данное

понимание культуры, однако считаем необходимым затронуть проблему регуляторной функции культуры.

Культура есть информационный бассейн, а индивидуум — активный пловец.
Джером Баркоу³

Культура в наиболее общем социологическом определении есть не что иное, как набор регуляторов поведения, символов, через которые они передаются и осуществляются.

Нам кажется необходимым подчеркнуть, что говоря о регуляции мы не собираемся оперировать понятием “правила”, которым должны соответствовать действия субъектов, а понятием габитуса — регулируемая диспозиция, порождающая регулируемые и регулярные условия вне всякого обращения к правилам. Когда мы применяем совершенно эксплицитные и однозначные правила, наподобие тех, которые используются в математике, кажется, что понимание правила в некотором роде определено заранее, раз и навсегда и должно осуществляться в каждом случае.

В результате замены понятий мы, с одной стороны избегаем тотальности, отсутствия свободы от возможных моделей поведения, с другой, поведение агента, являясь продуктом габитуса, отнюдь не угрожает спонтанности его действия, если только последнее не является результатом внешнего принуждения, а диспозиции, которая заключена в самом агенте. Но в той мере, в какой осуществление свободы включает размышление, большая часть наших действий, особенно тех, которые проистекают из габитуса, — действия просто спонтанные, а не собственно свободные, хотя они явно не являются вынужденными. Понятие габитуса позволяет объяснить то, как субъект практики может быть детерминированным и в то же время действующим. Понятие габитуса действительно необходимо для адекватного понимания регулярностей определенного типа, которые строго не детерминированы, но заключают в себе элемент изменчивости, пластичности и неопределенности и подразумевают адаптации, инновации и всякого рода исключения, регулярностей, характеризующих область практики, практического разума и практического чувства [Социоанализ Пьера Бурдьё 2001, 96].

Таким образом, фокус нашего исследования будет нацелен не на структуры, которые будут регулировать действия субъекта⁴, а на практики и представления, которые

приспособлены для достижения определенных результатов⁵.

Результаты исследования показали, что коррупционное поведение — это элемент повседневной жизни, т.е. не является чем-то непривычным, далеким и находящимся вне обычного порядка. Формы коррупционного поведения знакомы даже тем, кто на практике никогда не прибегал к ним. Человек как «нефиксированное животное» т.е. не находящееся под тотальным давлением инстинктов и генетической программы, в соответствии со своей природой создает свой мир. В процессе привыкания и освоения человек преобразует навыки в знания и умения, которые многократно воспроизводятся. Особенно четко это проявляется в течении первого семестра первого курса, когда, выражаясь словами М. Вебера, происходит “оповседневнивание”. “Обживание” нового пространства учебного заведения происходит при помощи специальных “сталкеров” — старшекурсников, родных и близких сверстников которые уже проходили этот путь, либо происходит применение накопленного в иных сферах знания. Весь этот процесс происходит, прежде всего, путем интернализации определенных выражений языка и моделей поведения. Здесь знания и навыки приобретают надежность, которая никогда невосполнима полностью посредством искусственных методов. Это воплощение никоим образом не связано с чистым применением правил или даже с механической дрессировкой, но оно само есть вид опыта. В конечном счете, оповседневнивание затрагивает все сферы. Кроме того они институционализируются (детально все примеры рассмотрены в отчете по исследованию, который доступен на сайте КЦИР — Б.А.), так как лишь в институализации принимают форму, способную продолжительно существовать и сохранять традиции.

Здесь удалось выявить целый ряд различий, которые, однако, не конструируют новое. Отклонение от правил и образование новых форм все же укладывается в рамки определенных смыслов, ведь когда именно новое и оригинальное более не улавливается интегративным общим порядком или регулятивным основополагающим принципом, тогда оно принимает форму отклонения. Тоже можно сказать о процессе, в котором однозначное приобретает дополнительные значения, становится многозначным, а также об эвристической силе метафор, которая

противодействует языковому употреблению и основывает новые отношения в необычных выражениях. Следует отметить также и искажающее воздействие шутки, которая может перехитрить “внутреннего цензора”, который соотносит ситуацию с интернализированными ценностями.

Выделенные практики не дискретны и их последовательность структурирована. Описывать структуры можно через определенные константы логического построения диалогов, обоснований и т.д. и переменные, наличие которых зависит от статусов, пола и возраста включенных в коррупционные отношения.

Существуют определенные, имеющие собственную логику правила обмена — реципрокность [Арутюнян, 2006].

У всех агентов, которые потенциально могут быть вовлечены в коррупционные отношения, существуют определенные представления, согласно, которым все агенты разделяются, на “своих”-“иных”-“чужих”, на основании ценностей, конечных целей и т.д.

Исходя из формата, диктуемого жанром, не будем более детализировать результаты исследования, однако отметим, что коррупционные отношения как фрагмент обыденной, рутинной жизни состоят из регулярностей определенного типа, которые строго не детерминированы, но включают в себе элемент изменчивости, пластичности и неопределенности и подразумевают адаптации, инновации и всякого рода исключения регулярностей, характеризующих область практики, практического разума и практического чувства.

Подводя итоги, можно, во-первых, утверждать о подтверждении проверяемой гипотезы, во-вторых, считать перспективным разработку нового подхода к исследованию коррупции⁶.

* Статья подготовлена в рамках гранта номер C05-7107 предоставленного Кавказским Центром Исследовательских Ресурсов - программой Фонда Евразия финансируемой Корпорацией Карнеги

¹ Бернард Шоу “Охваченные страстью” Перевод Е. Лопыревой Полн. собр. пьес в 6-и т. Т.4 - Л.: Искусство, 1980.

² Обсуждение имело место 02.04.06 в Кавказском Центре Исследовательских Ресурсов — Армения.

³ Barkow, Jerome H. Evolutionary Psychological Anthropology. в Handbook of Psychological Anthropology. Philip K. Bock (ed.) Westport, Connecticut-London;

Greenwood Press, 1994

⁴ в данном случае мы используем понятие “субъект” как антоним понятия “агент” в той мере в какой, “субъект” является марионеткой управляемой структурами, не имеющего собственной активности, в то время как “агент” осуществляет набор практик, при выборе которых он ориентируется на цель, но не руководствуется ею сознательно.

⁵ Понятие “габитус” недействительно вне соотносительности с экспериментальной ситуацией, в которой осуществляется измерение. Это означает, что любые свойства габитуса (любая из образующих его практических схем) существуют или имеют значение для социологии исключительно в связи с конкретными средствами измерения в конкретном эксперименте. Более подробно см. Шматко Н. “Габитус” в место “Сознания”: теория и эксперимент. “Социология: 4М”, 2000 №12

⁶ Анализ литературы по теме позволяет выделить два подхода к коррупции в рамках социологии. Первый подход восходит к структурному функционализму Т. Парсонса и Р. Мертон. В его рамках коррупция — это временное состояние, дисфункция в культуре, понимаемой как система ценностей, норм и установок, разделяемых членами сообщества. Она становится возможной в ситуации аномии, негативного отношения или равнодушия значительной части сообщества к социальным нормам, порождаемой конфликтом между элементами системы ценностей. В частности, аномия возникает тогда, когда в обществе превозносятся символы успеха (например, материального), якобы общие для всего населения в целом, в то время как действующие нормы и правила ограничивают или полностью устраняют доступ к легальным средствам достижения этих ценностей для значительной части населения [Мертон 1966, 299-313]. С этой точки зрения, пропаганда предприимчивости, предпринимательского поведения среди госслужащих при снижении контроля за их деятельностью в начале 1990-х гг. и отсутствии законодательного подкрепления для многих сделок между администрациями и бизнесом привела к тому, что нарушаемые при этом правила стали не без оснований рассматриваться как “несовершенные и устаревшие”, т. е. как правила, соблюдение которых не является моральным долгом.

К этому же подходу, в частности, можно отнести теорию несовместимых норм, предложенную для объяснения коррупции У. Рэйсманом [Reisman, 1979; Жилина 1998, 53.] С точки зрения последнего, в обществе создаются системы мифов, содержащие слишком идеалистические нормы, поэтому агенты разрабатывают собственные операционные нормы, которыми и руководствуются. Эти нормы могут отклоняться от заложенных в системе пропагандируемых мифов, превращаясь в преступную “коррупцию” или в естественное “сотрудничество

бизнеса и власти” в зависимости от выбранного угла зрения. Колебания в частоте актов коррупции У. Рэйсман объясняет тем, что ожидаемая от коррупционных сделок выгода зависит от числа участвующих в них индивидов, и мы должны с ним согласиться — в том смысле, что моральные издержки сделки близки к нулю, если в качестве третьей стороны в ней участвует все общество (фигура Другого, легитимирующая или осуждающая поведение сторон), а сама она вписана в систему распределения дополнительных доходов внутри государственного учреждения. Легитимация коррупционных сетей происходит за счет признания существующих норм несовершенными или несправедливыми. В рамках второго подхода коррупция трактуется не как временное, болезненное состояние, а как явление, постоянно воспроизводимое культурной традицией, опирающееся на постоянные, устойчивые черты национальной культуры. Этот взгляд стал возможен в 1970-е гг. благодаря открытию сначала в странах третьего мира, а затем и в государствах Запада неформальной экономики, тесно связанной с местными обычаями и ценностями (исследования К. Харта). В своих попытках выявить влияние культуры на уровень коррупции исследователи стали прибегать к тем измерениям культуры, которые были разработаны в рамках кросс-культурной психологии такими учеными, как Г. Хофстед, Г. Триандис, Э. Холл, С. Шварц и другие. Например, Й. Андвиг высказал предположение о том, что на уровень коррупции с республиках бывшего СССР влияли присущие им культурные различия: поведение, связанное с риском у грузин, традиция делать подарки в среднеазиатских республиках [Arunthanes 1994, 46-47.]. Согласно Э. Холлу, который ввел понятие “контекстность” в научный оборот [Hall 1987.], в высококонтекстных культурах значительная часть коммуникации протекает на невербальном уровне, а успех в переговорах зависит в большей степени от дружеских отношений и доверия сторон друг к другу, чем от положений, явно сформулированных в контракте. Наоборот, в низкоконтекстных культурах люди не склонны давать займы и не любят быть кому-то обязанными, в бизнесе они опираются на формальные отношения, законы и четко сформулированные положения контракта, отдавая предпочтение краткосрочным сделкам (культуры США, Германии и Швейцарии). Высококонтекстными являются культуры японцев, арабов и средиземноморцев (в том числе и армян — Б. А.), с точки зрения которых дарение подарков — необходимое условие надежных деловых отношений. Другим культурным фактором коррупции является религия. При помощи статистических методов ряду исследователей удалось установить связь между иерархичностью преобладающей в стране религии и уровнем коррупции. Анализ 33 стран, при котором контролировались прочие характеристики, показал, что страны с высокоиерархическими религиозными системами (католичество, православие, ислам) более подвержены коррупции, чем страны с менее иерархическими религиями (протестантизм) [La Porta 1997, 337].

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Հովսեփյան Ա. «Հայաստանը սոցիալ-փիլիսոփայական ակնարկներում», Եր.: «Դե-ֆակտո», 2003.
2. Սահակյան Զ. «Կոռուպցիայի ընկալումը և ռիսկերը բարձրագույն ուսումնական հաստատություններում», Եր.: ՄԱԶԾ տպագրություն, 2004.
3. Ռոուֆ-Ալեթրան Ա. «Կաշառվածությունը և պետությունը. պատճառներ, հետևանքներ և բարեփոխում», Եր.: «Գիտանք», 2004.
4. Մանուկյան Ա. «Կոռուպցիան և անցումային շրջանի սոցիալական դինամիկան», Եր.: «Լուսակն», 2005.
5. Alatas S. H. “The sociology of Corruption” Singapor, Times Books International, 1968.
6. Arunthanes W. “Cross-cultural Business Gift Giving. A New Conceptualization and Theoretical Framework” // International Marketing Review. 1994. Vol. 11. № 4.
7. Hall E.T. “Hidden Differences Doing Business with the Japanese”. Anchor Press-Doubleday, N.Y., 1987.
8. Johnston M. “Merged corruption bibliography”, 2005. по <http://www.fsa.ulaval.ca/personnel/vernag/EH/F/ethique/corrupt.biblio.html>
9. Kroeber A. “Culture: a Critical Review of Concepts and Difinitions” // Papers peabody Mus., 1952, 47, N 1.
10. Kvale S. “InterViews: An Introdcction to Qualitative Researc Interviewing”. London, Sage 1996.
11. La Porta R. “Trust in Large Organizations” // The American Eco-nomic Review. Papers and Proceedings. 1997 (CXXXVII). № 2.
12. Reisman W. “Folded lies: bribery, crusades and reforms”, N-Y. “The Free Press”, 1979.
13. Арутюнян Б. “Коррупционное поведение в свете концепций К. Поланыи” 2006
14. Голик Ю. “Коррупция как механизм социальной деградации” С-Пб.: “Юридический центр Пресс”, 2005.
15. Жилина И. “Экономика коррупции” // Экономические и социальные проблемы России. Вып. II. Социально-экономические проблемы коррупции. М.: ИНИОН, 1998.
16. Киблицкая М. “Методология и дизайн исследования в стиле кейс-стади”, М.: “Издательство МУБУ”, 2003.
17. Мертон Р. “Социальная структура и аномия” // Социология преступности. М., 1966.
18. Резолюция 34/169 34-й сессии Генеральной Ассамблеи ООН “Кодекс поведения должностных лиц по поддержанию правопорядка”, 1979.
19. Сатаров Г. “Антикоррупционная политика”, М.: “РА СПАСС”, 2004.
20. Сатаров Г. “Библиография материалов по коррупции”, 2002. по <http://www.anti-corr.ru/library.htm>
21. Социоанализ Пьера Бурдьё //Альманах Российско-французского центра социологии и философии Института социологии Российской Академии наук//. (М.: Институт экспериментальной социологии, С-Пб.: Алетеия, 2001.
22. Тимофеев Л. “Институциональная коррупция: очерки теории” М.: “Издательский центр РГГУ”, 2000.
23. Шоу Б. “Охваченные страстью” Перевод Е. Лопыревой Полн. собр. пьес в 6-и т. Т.4 - Л.: Искусство, 1980.

ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԻ ՄՇԱԿՈՆՅՈՒՄ. ԱՌԱՍՊԵՆ, ԹԵ՞ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԳՐԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ամփոփում

Հոդվածը նվիրված է կոռուպցիոն վարքի մշակույթ երևույթի գոյության վարկածի ստուգմանը: Տեսական մտքի հակիրճ ակնարկում ցույց են տրվում կոռուպցիա և մշակույթ հասկացությունների սահմանումների հնարավորությունները, որոնք թույլ են տալիս հետազոտական նյութի վերլուծության ժամանակ առանձնացնել փոխազդեցության հատուկ ոլորտ և դրանում առկա որոշակի կայուն տարրեր: Տարրերը, կազմելով ճկուն և միաժամանակ կոռ. համակարգ, վերարտադրվում են առօրեական վարքի շրջանակներում: դա, անկասկած, կարելի է դիտարկել իբրև հատուկ ոլորտի կանոնակարգ՝ մշակույթ: Այսպիսով, հոդվածը ամփոփվում է վարկածի ընդունմամբ, և կոռուպցիոն մշակույթի հետագա ուսումնասիրությունը համարվում է հեռանկարային:

CULTURE OF CORRUPTION CONDUCT: A MYTH OR A REALITY? BAGRAT HARUTYUNYAN

Summary

The article is devoted to checking the hypothesis of existence of corruption conduct culture phenomenon. In the brief review of the theoretical mind the possibilities of definitions of corruption and culture concepts are shown, which allow to separate a special sphere of interaction and certain stable elements during the analysis of the research material. The elements forming a flexible and at the same time a solid system are reproduced within the framework of the daily conduct that can certainly be viewed as regulations of a special sphere - a culture. Thus the article is summed up by the acceptance of the hypothesis, and a further research of the corruption culture is considered perspective.

ՔՐԻՍՏԻՆԵ ԱԼԱԳՈՒԷՅԱՆ

ԵՊՀ մամուլի տեսության ու
պատմության ամբիոնի ասպիրանտ

ՄԱՍՆԱՎՈՐ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ

ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ

ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հեռարձակման մասնավոր ոլորտի զարգացմամբ հասարակությանն առաջարկվեցին ռադիո և հեռուստատեսային հաղորդումների նոր ծառայություններ՝ ավանդական հերցային հաճախականությամբ, արբանյակային և մալուխային (կաբելային) հեռարձակմամբ: Եթերի ազատականացման ու մասնավորեցման այս քայլը դիտողներին ու ունկնդիրներին նորությունների ու հաղորդումների ավելի մեծ ընտրության հնարավորություն տվեց:

Սրանից բխող երկրորդ քայլը հաղորդակցության ազատության սկզբունքի և պետական, կառավարական, նաեւ հասարակական շրջանակների միջև հարաբերությունների կարգավորումն էր: «Կարգավորում» տերմինը ընդգրկում մեկնաբանություն ունի: Այն բխում է անգլասաքսոնական իրավունքից: Կանոնակարգման գաղափարն առաջինը ծագել է Մեծ Բրիտանիայում 20-րդ դարի 50-ականներին, երբ հիմնադրվեցին մասնավոր առաջին լրատվամիջոցները: Եվրոպական տեսաբանները բացատրում են, որ այն չի նշանակում սոսկ լրատվամիջոցների կարգ ու կանոն հաստատող հրահանգներ ու օրենսդրական ակտեր, այլ հեռարձակման ոլորտում հավասարակշռության հաստատում¹: Հենց այս անհրաժեշտությունն էլ հեռարձակման ոլորտը կանոնակարգող մարմնի ստեղծման պահանջ առաջացրեց: Ըստ էության՝ այդ մարմինը պետք է կարողանա՝

1. ղեկավարել ու կառավարել հերցային հաճախականությունների տիրույթը, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով հաճախականություն տրամադրել հեռուստա-

ռադիոընկերություններին,

2. հետևել, որ հաճախականություն տնօրինողները կատարեն օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները. ապահովեն տեղեկատվության, բազմակարծության սկզբունքները, հասարակական կարգուկանոնը, հաղորդումների պատշաճ որակը,

3. միջնորդ լինել մի կողմից՝ ունկնդիրների, հեռուսադիտողների և հեռարձակողների, մյուս կողմից՝ վերջինների և պետական իշխանությունների միջև,

4. հետևել, որ հեռարձակողների միջև գերակայի առողջ մրցակցությունը, և պահպանվեն հակակենտրոնացման կանոնները:

Հարց է առաջանում. ո՞վ է լիազորված ձևավորել այս մարմինը: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ 2000/23 հանձնարարականը պարտավորեցնում է անդամ երկրներին հեռարձակող մասնավոր լրատվամիջոցների կարգավորման գործառույթի իրականացումը վերապահել կառավարությունից, խորհրդարանից միանգամայն անկախ մարմնի, որը ծառայի միմիայն հասարակության շահերին²: Չէ՞ որ որոշումներ կայացնելու և ընտրություն կատարելու օրինականությունն ու անաչառությունը կախված են նրանց անկախության աստիճանից: Անկախ լինելու երաշխիքները վերաբերում են ոչ միայն կարգավորման մարմնի կարգավիճակին, այլև դրանց անդամակազմին: Հետեւաբար այն պետք ձևավորվի այնպես, որ բացառվի ցանկացած ճնշում քաղաքական ու տնտեսական ուժերի կողմից:

ՀՀ-ում մասնավոր հեռուստառադիոըն-

կերությունների գործունեությունը կարգավորում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը: Այն ստեղծվել է 2000 թ, երբ ՀՀ-ում ընդունվեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը: Հանձնաժողովը կազմված է 9 անդամից, որոնց նշանակում էր հանրապետության նախագահը: Հեռարձակման կարգավորման մարմնի միանձնյա նշանակումը ենթադրում էր ուղղակիորեն ներազդել հանձնաժողովի գործունեության վրա, խոչընդոտել նրա, հետևաբար նաեւ լրատվամիջոցների ազատությանը: Մինչդեռ ՀՀ Սահմանադրական դատարանի 2001 թ հունվարի որոշման մեջ ասվում է «Նման հանձնաժողովի ստեղծումը նպատակ է հետապնդում ոչ միայն սահմանափակել տվյալ ոլորտի նկատմամբ կառավարչական ներազդեցության հնարավորությունները և պետության կառավարման գործառույթը փոխարինել կարգավորման գործառույթով, այլև օրենքով երաշխավորել համակարգի գործունեության անկախությունն ու դրա սուբյեկտների հավասար իրավական պաշտպանվածությունը»³:

Նախ տեղական օրենսդրությունը եվրոպականին համապատասխանեցնելու եվրոպայի խորհրդի պահանջը, ապա նաև՝ ՀՀ լրագրողական կազմակերպությունների ճնշումը ստիպեցին, որ նախ փոխվի հեռարձակման մասնավոր ոլորտը կարգավորող ազգային հանձնաժողովի անդամակազմի նշանակման ձևը, և սրանով անկախության պայմանները սահմանվեն երկրի գլխավոր օրենքով: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 83.2 հոդվածը ամրագրում է. «Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, մյուս կեսը նշանակում է հանրապետության նախագահը՝ վեց տարի ժամկե-

տով: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»⁴:

Անկախ կարգավորող մարմին հասկացությունը վերաբերում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին: Փաստորեն գլխավոր օրենքը սահմանում է նախ՝ նրա անկախ լինելու, ապա նաև՝ կարգավորման գործառույթ իրականացնելու անհրաժեշտությունը (ընդգծումը՝ հեղինակի): Միաժամանակ, առաջին անգամ ՀՀ օրենսդրության մեջ ընդգծվում է այն գաղափարը, որ իրավական կարգավորման մարմինների, այս դեպքում՝ ազգային հանձնաժողովի անդամների նշանակմանը մասնակցում է Ազգային ժողովը: Լրագրողական 7 կազմակերպություններ, այդ թվում՝ ՀՀ ժուռնալիստների միությունն ու Երևանի մամուլի ակումբը, կարգավորող մարմնի ձևավորման գործում օրենսդրի մասնակցության անհրաժեշտությունը բացատրում են այն հանգամանքով, որ այն ներկայացնում է հասարակության տարբեր շերտերի շահերը⁵:

Հեռուստառադիոընկերությունները առայժմ չեն կարող գործնականում գնահատել այս դրույթի անհրաժեշտությունը: Այդուհանդերձ «Կենտրոն» հեռուստաընկերության «Էպիկենտրոն» լրատվական ծառայության ղեկավար

Արթուր Ազարյանը նկատում է, որ այն ընդունելի միջոց է «օրենսդրական խտրումներից խուսափելու առումով: Այս դեպքում միայն կարելի է խոսել լրատվամիջոցների ազատ մրցակցության եւ այլակարծության ապահովման մասին»⁶:

«Շանթ» հեռուստաընկերության նախագահ Արթուր Եզեկյանը հարցնում է. «Ի՞նչ է փոխվելու, եթե հանձնաժողովի անդամներին նշանակի ոչ թե նախագահը, այլ մեկ ուրիշը»: Նրա կարծիքով՝ հանգամանքների դասավորությունն այնպիսին է, որ պարտադիր չէ՝ պետությունը ճնշում գործադրի լրատվամիջոցների վրա: Եթե գործը հասնի

նրան, որ լրատվամիջոցն ընդունի այնպիսի դիրք, որ բացարձակ անկախ է, ապա նրան կանգնեցնելու հազարավոր միջոցներ կգտնվեն, այդ թվում՝ նաև զրկում լիցենզիայից»⁷:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովում հավատացած են, որ հանձնաժողովի նշանակման առաջարկվող ձևը հեռարձակումը կարգավորող մարմնի անկախության ապահովման լավագույն տարբերակը չէ: ՀՌԱՀ նախագահի տեղակալ Շամիրամ Աղաբեկյանը նշում է, որ «խորհրդարանում ներկայացված կուսակցությունները կարող են հանձնաժողովի անդամներին նշանակելու իրենց իրավունքը օգտագործել քարոզարշավի նպատակով: Չի բացառվում, որ խորհրդարանական քաղաքական ուժերը ցանկություն ունենան իրենց ազդեցության ոլորտում պահել դրանք՝ «եթերային վերնակը» ձգելով իրենց կողմը»:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն նախընտրելի է համարում հեռարձակումը կարգավորող մարմինների անդամակազմում չընդգրկել խորհրդարանականների կամ կառավարության անդամների: Թիվ 2000/23 հանձնարարականի նշյալ դրույթը երաշխավորում է կարգավորման մարմնի ազատությունը արտաքին ճնշումներից ու քաղաքական ազդեցությունից⁸: Իսկ Ազգային ժողովի մասնակցությունը հեռարձակման մասնավոր ոլորտը կարգավորող մարմնի ձևավորմանը, ենթադրում է քաղաքացիական հնարավորինս լայն շերտերի մասնակցություն այս գործընթացին: Հետևաբար ազգային հանձնաժողովի անդամները պետք է լինեն հեռարձակման դաշտը ներկայացնող, իրազեկ, քաղաքական ու տնտեսական շահերից անկախ եւ հասարակությանը հայտնի մարդիկ:

Այս առումով Ազգային ժողովի մասնակցությունը երաշխավորող սահմանադրական դրույթը բավարար չէ նշված նպատակի իրագործման համար:

Նախ ԱԺ-ն կարող է նշանակել հանձնաժողովի անդամների միայն 50 տոկոսին: Մյուս կեսին նշանակելու է նախագահը: Մինչդեռ լրագրողական կազմակերպությունները պահանջում էին սահմանել այնպիսի կարգ, համաձայն որի՝ կարգավորող մարմնի անդամներին ներկայացնի ԱԺ-ն, նշանակի նախագահը:

Մյուս կողմից, պարզ չէ, թե ինչ հիմունքով են նշանակվելու նրանք և ինչ ընթացակարգով: Չի բացառվում, որ նախագահի ու խորհրդարանի նշանակումները կատարվեն տարբեր կերպ: Նախագահի նշանակման պարագայում կա նախադեպ: Վերջինս հայտարարում է մրցույթ, որին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները, որից հետո իր ընտրությամբ նա նշանակումներ է կատարում:

Հարցն այժմ այն է, թե ինչպե՞ս է ԱՀ անդամներին նշանակելու Ազգային ժողովը:

Հեռարձակման կարգավորման մարմինների կազմավորման եվրոպական փորձը ցույց է տալիս, որ այդ գործընթացում կարելի է տալիս, որ այդ գործընթացում կարելի է քաղաքացիական նախաձեռնության դերը: Այսինքն՝ «քաղաքացիական հասարակական առաջատար կազմակերպություններին հնարավորություն է տրվում ներկայացնել իրենց թեկնածուներին, որոնց էլ պաշտոնապես կարող է նշանակել թե՛ նախագահը, թե՛ խորհրդարանը»¹⁰: Այս դեպքում ինչպես նախագահը, այնպես էլ խորհրդարանը զերծ կմնան կամայական գործելակերպից:

Լրագրողական կազմակերպությունները մտադիր են քաղաքացիական նախաձեռնությամբ նշանակելու անհրաժեշտությունը առաջ քաշել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու ժամանակ: Նրանք հույս ունեն, որ այն կընդունվի խորհրդարանի կողմից:

Ազգային հանձնաժողովի հարցում նախագահի եւ խորհրդարանի միջև հավասարակշռության հաստատումն առաջին չի կարող լինել լիակատար: Հակառակ եվրոպա-

յի խորհրդի պահանջին՝ ՀՀ Սահմանադրության նախագծի անցումային դրույթներում նշված է, որ հեռարձակումը կարգավորող անկախ մարմնի անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև «Հեռուստատեսության ու ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Հանձնաժողովի անդամների լիազորությունների ժամկետը լրանալու կամ վաղաժամ դադարեցնելու դեպքում թափուր տեղերը լրացվում են հաջորդաբար Ազգային ժողովի ու հանրապետության նախագահի կողմից¹¹:

Սա նշանակում է, որ սահմանադրության այդ դրույթն ամբողջությամբ կիրականացվի միայն վեց տարի հետո: Մինչ այդ հանձնաժողովականների մի մասը նշանակված կլինի հին, մյուսը՝ նոր կարգով:

Իսկ սա դեռ կարող է կամայական նոր գործելակերպի պատճառ դառնալ:

Բացի այդ՝ փաստ է, որ խորհրդարանի խմբակցային մեծամասնությունը նախագահանել է: Հետևաբար ինչպես լրատվամիջոցները, այնպես էլ լրագրողական կազմակերպությունները մտավախություն ունեն, որ հեռարձակման մասնավոր ոլորտը կարգավորող Ազգային հանձնաժողովի անդամակազմի նշանակման ձեւի փոփոխությունը կարող է առայժմ ոչինչ չփոխել դրա գործունեության մեջ¹²:

Այդուհանդերձ, ՀՀ-ում Եվրոպային միավորվելու ձգտումները, միջազգային չափանիշներին համապատասխան ազգային ու ազգամիջյան խնդիրների ներկայացումը ստիպում են հայաստանյան մամուլին, եթե ոչ ամբողջությամբ, ապա մասնակիորեն վե-

րափոխել սեփական դիմագիծը: Հետևաբար հեռարձակման մասնավոր ոլորտի կարգավորման մարմնի եւ մասնավոր լրատվամիջոցների անկախության ապահովման միջոցների լիարժեք կիրառումը դառնում է անխուսափելի: Միայն թե այն պահանջում է ոչ միայն վարչական բարեփոխումներ, այլև հասարակության ու պետության լրատվամիջոցների դերի առավել խորքային գիտակցում: Միայն այս դեպքում լրատվամիջոցները կկարողանան պաշտպանել հասարակության շահերն ու պահպանել հարգանքը սահմանադրական սկզբունքների նկատմամբ:

¹ Peter K. Pringle, Michael F. Starr, William E. McCavitt. Electronic Media Management 3-rd edition. Boston- London, 1996. p 249

² Հեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի անկախության և գործառնությունների մասին հանձնարարական (2000) 23, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, 2000 թ., դեկտեմբեր:

³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի որոշում, 2001 թ., հունվարի 11:

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.2:

⁵ www.vpc.am

⁶ Հատված հարցազրույցից, 2005 թ., նոյեմբեր:

⁷ Հատված հարցազրույցից, 2005 թ., օգոստոս:

⁸ Հատված հարցազրույցից, 2005 թ., նոյեմբեր:

⁹ Տե՛ս հեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի անկախության և գործառնությունների մասին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ 2000/23 հանձնարարականը մեկնաբանող հուշագիրը:

¹⁰ Հատված հարցազրույցից, 2005 թ., նոյեմբեր:

¹¹ ՀՀ Սահմանադրություն, Անցումային դրույթներ:

¹² Հատված հարցազրույցից, 2005 թ., նոյեմբեր:

INDEPENDENCE GUARANTEES OF PRIVATE LAUNCHING REGULATING BODY IN RA

KHRISTINE ALAGULYAN

Summary

Surely there are corresponding guarantees in the aforementioned field which, however, need to be improved.

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՎԻՂՆԵՐՈՒՄ

ՊԱՎԻԹ ԳՅՈՒԼՋԱՂՅԱՆ

Բ. գ. թ., կրթության միջազգային
ակադեմիայի հայոց լեզվի ամբիոնի վարիչ

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՇԱՐՈՒՅԹԻ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Լեզվաբանության պատմությանը հայտ-
նի է շարույթի գնահատման երկու հիմ-
նական չափանիշ՝ հնչական և շարա-
հյուսական: Ստորև ներկայացնում ենք ար-
տասահմանյան և հայ մի քանի հեղինակ-
ների՝ շարույթի երկուլորտ բնույթը վեր հա-
նող՝ մեր կարծիքով առավել հետաքրքիր
տեսակետները:

Միարժեք չեն ո՛չ Սոսյուրի, ո՛չ էլ Բոդուե-
նի՝ իրարից անկախ գրեթե միաժամանակ
շարույթին տված գնահատականները: Ինչ-
պես կտեսնենք քիչ հետո, առաջինի անմի-
արժեքությունը պայմանավորված է նրա-
նով, որ փաստորեն անտեսված են լեզվա-
գոյամակարդակի ու լեզվական միավորի
սահմանները: Այս անտեսումն էլ հենց հիմք
է տվել հակասական տեսակետների առա-
ջացման ոչ միայն տարբեր լեզվաբանների,
այլև նույն իսկ հետազոտողի՝ հայացքնե-
րում: Նշենք անպայման, որ հիշյալ հակա-
սությունը վերացված է հայ լեզվաբանների
վերջին շրջանի ուսումնասիրություններում:
Բոդուենի բնորոշման հակասությունը կապ-
վում է շարույթի՝ իբրև շարահյուսական մի-
ավորի սահմանների անորոշությամբ:

Ի. Ա. Բոդուեն դե Կուրտենեն չունի շարույ-
թին վերաբերող ամբողջական ուսում-
նասիրություն. հարցին առնչվող նրա ժլատ
ակնարկները ցրված-սփռված են տարբեր
հետազոտությունների էջերին¹:

Բոդուենը «ձևաբանությունը» գործածում
է լայն և նեղ առումներով. լայն առումով
ձևաբանությունը «լեզվակառուցումը» կամ
«լեզվակազմությունը» է՝ ամենաընդգրկուն
իմաստով, այսինքն՝ ոչ միայն քերականու-
թյան մի բաժինն է կամ բառակազմությունը
(Worterbau, Wortermorphologie), այլև «շա-
րահյուսությունը կամ նախադասության

կառուցումը (Satzbau, Satzmorphologie)»]:
Հիշենք, որ մեզանում ձևաբանության այդ-
պիսի լայն ըմբռնում է ունեցել Գր. Ղափան-
ցյանը²: Ձևաբանության (նեղ իմաստով)
պարզագույն միավորները ձևույթներն են,
շարահյուսության պարզագույն միավորնե-
րը՝ շարույթները՝ շարահյուսորեն անտրոհե-
լի բառերը: Ուշագրավ է, որ Բոդուենը,
առաջիններից մեկը ներմուծած լինելով շա-
րույթի ըմբռնումը, սկզբից ևեթ զգուշացնում
է (լայն առումով) ձևաբանական միավոր-
ների՝ շարույթի ու ձևույթի՝ սահմանային
պատահական զուգահեռության մասին.
«Հնարավոր են ձևույթների հնչընկալողա-
կան կազմի՝ շարույթի հնչընկալողական
կազմի հետ համընկնման մասնավոր դեպ-
քեր: Այդ մասնավոր դեպքերն ավել կամ
պակաս չափով հանդիպում են բոլոր լե-
զուներում»³: Բոդուենը կարևոր է համարում
ընդգծել, որ ձևույթներն ու շարույթները
չպիտի դիտել որպես գիտական պատ-
րանքներ կամ հնարավոր բաներ. դրանք
հոգեկան միավորներ են, բնական ու
կենդանի միավորներ, որոնք «չսառեցված
միօրինակությամբ» ապրում են մշտական
կերպարանափոխություն [անդ]:

Գիտնականը լեզվական միավորների մա-
կարդակային ստորակարգությունը հետև-
յալ հաջորդականությամբ է սանդղավորում.
նախադասությունը՝ որպես ամբողջություն,
տրոհվում է շարույթների, այսինքն՝ շա-
րույթները նախադասության բաղկացուցիչ
մասերն են. ձևույթները շարույթների բաղ-
կացուցիչ մասերն են. առաջինները շարա-
կազմում (=շարույթի կազմում) են գտնվում.
հնչույթները ձևույթների բաղադրիչներն են:
Ասույթը տարրալուծվում է իմաստակիր
բառերի կամ այլևս անբաժանելի շա-

րահյուսական միավորների՝ շարույթների. «Սակայն այդ միավորներն անբաժանելի են միայն շարահյուսական տեսանկյունով....: Առանձին շարույթները՝ շարահյուսական առանձին միավորները՝ որպես ձևաբանական ինքնաբավ ամբողջություններ, կարող են հետագայում կամ անտարրալուծելի լինել, կամ տարրալուծվել ձևաբանական ավելի փոքր մասերի»⁴: Շարույթներն իմաստակիր բառեր են և օժտված են (նեղ առումով) ձևաբանական տրոհելիությամբ. շարահյուսորեն անտրոհելի միավորներ են. ա) մի քանի բառերի անփոփոխելի կապակցություններ են, բ) բառեր են: Շարույթը բառ է՝ որպես ձևաբանական տարր՝ (լայն առումով) ձևաբանական ավելի բարդ ամբողջության՝ ասույթի կամ նախադասության կազմում:

Շարույթի վերաբերյալ բողոքենյան քննության՝ մինչև հիմա ներկայացված շարադրանքից ակնհայտ է լեզվական այս միավորի և նախադասության անդամի սահմանների նույնականությունը. թե՛ նախադասության անդամները, թե՛ շարույթները (Բողոքենի՝ վերը տված ձևակերպումների համաձայն) բառեր են կամ, շարահյուսական մակարդակում, բառերի անտրոհելի կապակցություններ: Սակայն նույն լեզվաբանի մի ուսումնասիրության մեջ հանդիպում ենք կենտ մի սահմանման, որի համաձայն՝ շարույթները նախադասության և ավելի մեծ միավորների մասերն են⁵: Ինչ խոսք, սկզբունքորեն ընդունելի ըմբռնում է. շարույթներ են թե՛ բառերը՝ իբրև նախադասության բաղադրիչներ, և որպես այդպիսիք՝ նաև բառակապակցությունները, թե՛ բարդ նախադասություն բաղադրող պարզ նախադասությունները, գուցե նաև նախադասություններն առհասարակ (և՛ պարզ, և՛ բարդ)՝ «ավելի մեծ միավորների» կազմում: Իսկ այդպիսի մոտեցման դեպքում առավել հետևողական չէ՞ արդյոք Սոսյուրը, որի համար, նշվածներից բացի, շարույթներ են նաև բառերի կամ բառաձևերի բաղադրիչները՝ ձևույթները. տեսնենք:

Ֆերդինանդ դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը»⁶ նախակարապետը դարձավ լեզվաբանական մի ողջ

ուղղության, որ հայտնի է կառուցվածքաբանություն կամ կառուցվածքային լեզվաբանություն անունով: Շատ հասկացություններ է վերցրել այս ուղղությունը հիշյալ գրքից. դրանցից են զուգորդային (հետագայում՝ հարացուցային) և ֆրանսերեն syntagmatique հարաբերությունները: Զուգորդայնության (հարացուցայնության) համեմատությամբ syntagmatique-ը ներկայացված է որպես գծայնություն, «որը բացառում է երկու տարրերի միաժամանակյա արտասանության հնարավորությունը»⁷: Այս բնորոշմամբ ունենք լեզվական երկու գոյամակարդակ՝ զուգորդային (=հարացուցային), որը հարաբերվող անդամները միավորում է հուշաբանական շարքով՝ զորութենապես, և շարակարգային, որի երկու կամ ավելի անդամները հավասարապես գոյություն ունեն առկա հաջորդականության մեջ [անդ, այսինքն՝ այս ըմբռնմամբ՝ ֆրանսերեն syntagme-ը հայերեն շարակարգն է, syntagmatique-ը՝ շարակարգայնությունը: Բայց պարզվում է ահա, որ syntagme են վեր/ընթերցել, ընդդեմ/բոլորի, մարդկային/կյանք, եթե լավ եղանակ լինի/մենք կգնանք զբոսնելու՝ «տևականություն դրսևորող կապակցությունները», որոնց բաղադրիչները, ինչպես երևում է, գտնվում են լրացում-լրացյալ հարաբերության մեջ:

Նշենք սակայն, որ՝ 1) բնավ պարտադիր չէ, որ միևնույն կապակցության բաղադրիչները հարահաջորդեն, այսինքն՝ իրարամետ միավորների «գիծը» կարող է խաթարվել կամ, այլ կերպ, գծայնությունն ընդմիջարկվել այլ միավորներով. 2) լրացում-լրացյալ հարաբերությունը լեզվական միավորի՝ իրողությունն է հաստատում, ուստի այն՝ իբրև այդպիսին, հարաբերակցելի չէ լեզվական գոյամակարդակի, տվյալ դեպքում՝ զուգորդայնության (հարացուցայնության) հետ. 3) այս ամենից հետևում է, որ Սոսյուրի՝ այդկերպ (լրացում-լրացյալ) ձևակերպած syntagme-ը համապատասխանում է հայերեն «շարույթին», մինչդեռ նույն բառի գծային սահմանումը՝ «շարակարգին», որը, սակայն, իր հերթին կարիք ուներ երկատման. այս երկատման

սաղմերն առկա են Լյուսիեն Տենիերի ուսումնասիրության մեջ⁸, իսկ լեզվական գոյամակարդակների սպառնալից նկարագրությունը տվել է վերջին շրջանի հայ լեզվաբանությունը, որին կանդորադառնանք աշխատանքիս հետագա էջերում:

Շարույթի սոսյուրյան ըմբռնումը տարածվում է բաղադրյալ բառերի, նախադասության բաղադրիչների, ամբողջական նախադասությունների վրա: Լեզվաբանը քննության համար կարևոր է համարում ոչ միայն շարույթի անդամների միջև գոյություն ունեցող հարաբերությունը, այլև այն հարաբերությունը, որով ամբողջը կապվում է իր մասերին: Ամբողջի ու մասերի արժեքները որոշելի են փոխադարձաբար, սրա համար էլ մասերի հարաբերությունն ամբողջին կարևոր է նույնքան, որքան և ամբողջի մասերի միջև ու նրանց հետ ունեցած հարաբերությունը⁹: Լեզուն այնպես է կառուցված, որ նրանում միշտ առկա են խոշոր միավորներ՝ կազմված առավել մանրերից: Սակայն լեզվի մեջ կան նաև արտաշարության միավորներ. դրանք նախադասություններին համարժեք բառեր են («այո», «ոչ», «շնորհակալություն» ևն): Տվյալ միավորը շարույթ է համարվում այնքանով միայն, որքանով նրա շուրջը գտնվում են բոլոր մյուս թվարկելի (զուգորդային) ձևերը: Մեր հիշողությունն ամբարում է բոլոր տիպերի շարույթները. դրանք կիրառելու անհարժեշտությունն զգալիս անդրադառնում ենք զուգորդային խմբերին՝ ապահովելու համար անհրաժեշտ կապակցության ընտրությունը [անդ]: Քանի որ շարույթի տիպական դրսևորումը համարվում է նախադասությունը, իսկ վերջինս, Սոսյուրի կարծիքով, պատկանում է խոսքին, ապա չի¹⁰ բխում սրանից, թե շարույթը ևս խոսքային ոլորտին է վերաբերում: Ինքը՝ Սոսյուրը, բացասական պատասխան է տալիս այս հարցին: «Խոսքի բնորոշ հատկությունը տարրերի համակցման ազատությունն է. հետևաբար հարկ է պարզել՝ բոլոր շարույթներն են միաչափորեն ազատ» [անդ]: Սոսյուրը լեզվին է վերագրում շարույթի բոլոր այն տիպերը, որոնք կառուցված են հատուկ կանոններով:

Կայուն կապակցությունները (նախադասություն, բառակապակցություն), որոնք կազմված են հաստատուն, միակերպ կաղապարներով, նրա կարծիքով պատկանում են լեզվին, քանի որ պահպանվում են նույն խոսողի հիշողության մեջ:

Կարևոր ենք համարում նշել հետևյալը. բոլոր շարույթները և՛ լեզվի, և՛ խոսքի միավոր են. լեզվում կան արտահայտելի (արտահայտման պատրաստ) հնչյուններ (հրնչույթներ), կան բառեր (բառաձևեր) և այդ բառերի (բառաձևերի) միացման ընդհանրական կաղապարներ՝ լեզվական շարույթներ. վերջիններիս ամեն մի բանավոր կամ գրավոր դրսևորումը խոսքային շարույթ է: Այս երևույթը, որոշ պայմանականությամբ, բաղդատելի է հանրահաշիվ-թվաբանություն հարաբերակցության հետ. հանրահաշիվական բանաձևն ընդհանրական է թվաբանական համապատասխան բոլոր գործողությունների նկատմամբ:

Սոսյուրի կարծիքով՝ ոչ բոլոր syntagmatique երևույթներն են պարփակվում շարահյուսության ներսում, մինչդեռ շարահյուսական բոլոր իրակությունները syntagmatique են: Դժվար է պարզել՝ խոսքն այստեղ շարակարգայնությամբ (իմա՝ գծայնությամբ), թե՞ շարույթի մասին է. երկու դեպքում էլ, սակայն, հարցին միակողմանի մոտեցում է ցուցաբերվում, որով էլ այն վիճարկելի է թե՛ մեկ, թե՛ մյուս պարագայում:

Թեև, ինչպես նշեցինք, Սոսյուրի «Դասընթացում» չկան հստակ եզրագծեր շարույթի ու շարակարգի, հետևաբար և՛ լեզվական միավորի ու գոյասանդղակի միջև, որի անքննադատ ընդունելությունն էլ իր կնիքն է դրել հետագա լեզվաբանների աշխատությունների ճնշող մեծամասնության վրա, այնուամենայնիվ պարզորոշ է մի բան. Բոդուենի համեմատությամբ սոսյուրյան շարույթն առավել համապարփակ հասկացություն է, որ ընդգրկում է բաղադրյալ բառից մինչև (ներառյալ) բարդ նախադասությունն ընկած բոլորակը:

Բավականին տարողունակ և ծավալուն են Ֆ. դը Սոսյուրի աշակերտ Շառլ Բալլիի՝ շարույթի ու շարութաբանության առանձնահատկությունները վեր հանող դիտար-

կումները, որոնք ներկայացված են նրա «Ընդհանուր և ֆրանսիական լեզվաբանություն»¹⁰ աշխատության մեջ:

Ըստ Շ. Բալլիի՝ տրամաբանորեն ամեն մի ասույթ երկանդամանի է՝ բաղկացած այն անդամից, ինչի մասին խոսում են, և նրանից, «ինչ այդ մասին ասում են»¹¹. Երկրորդը առիթն է կամ ստորոգյալը՝ լայն իմաստով, իսկ առիթի պատճառ հանդիսացող անդամը ենթահիմքն (թեման) է կամ ենթական՝ լայն առումով [անդ]: Առիթի ու ենթահիմքի քերականական կապակցությունն իրականանում է «լինել» հանգույցով. երկրորդն առաջինի «կացավայրն» է, և հանգույցը «տեղայնացնում է» ստորոգյալը ենթականի մեջ [անդ]: Բալլին, համեմատելով «երկիրը պտտվում է» և «երկիրը կլոր է» կապակցությունները, արձանագրում է այն իրողությունը, թե ավելի ենք համոզվում, որ հանգույցն անբաժանելի է առիթից. այն առիթի հետ ձևավորում է մասնակի շարույթ, որտեղ առաջինը (հանգույցը) խաղում է որոշյալի, իսկ առիթը՝ որոշչի դեր: «Յենց սրա շնորհիվ էլ առիթն ամբողջովին ենթահիմքի որոշիչն է» [անդ, 114-115]: Որոշիչը նշանակելով A, առիթը՝ Z, հանգույցը՝ A տառով Բալլին ասույթի բանաձևը ներկայացնում է A x cZ տեսքով, որն էլ բերում է AZ տեսքի այն ենթադրելի պայմանով, որ ցանկացած Z ներառում է իր հանգույցը: «Նշանների ցանկացած միացումն արություն, որ համապատասխանում է AZ բանաձևին, կոչվում է շարույթ» [անդ, 115], ուստի շարույթ է թե՛ նախադասությունը, թե՛ նշանների որևէ խումբ, որը հնարավոր կլինի փոխակերպել նախադասության [անդ]: Նպատակահարմարության համար վերջին բանաձևն էլ փոխարինվում է t'(կամ t'')-ով, որտեղ t -ն որոշյալն է (լայն առումով), t'-ն՝ որոշիչը (նույնպես լայն առումով), որոնք (ինչպես և A ենթահիմքն ու Z առիթը) գտնվում են փոխկախյալության, փոխլրացականության ու փոխպայմանավորվածության հարաբերության մեջ, ըստ որում՝ խոսքում փոխլրացականությունը բացարձակ դրսևորում ունի, մինչդեռ լեզվում (հուշաբանական (մենտոնիկ) տեսակետից), բացի նշվածից,

գոյություն ունեն մակերդմանի լրացականության դեպքեր. այսպես՝ ածականը պարտադիր լրացնում է գոյականին, իսկ վերջինս ոչ միշտ է ածական ստանում [անդ]: Շարույթի բաղադրիչների միակողմանի ու փոխադարձ պայմանավորվածությունը, ենթադրելի ու զրո նշանը, նույն բաղադրիչների քողարկյալ (իմպլիցիտ) ու արտարկյալ (էքսպլիցիտ) դրսևորումներն ու զեղչումը, տարանջատումն ու շրջուն շարադասությամբ հանդես գալը, որոնց լիարյուն նկարագրությունը տրված է գրքի երկրորդ բաժնում [անդ], այլ բան չեն, քան լեզվախոսքային արժեքայնության (վալենտականության) իրողության վկայություններ: Միակողմանի պայմանավորվածություն կարող է դրսևորել կամ նշանակիչը, կամ նշանակյալը [անդ]: Այսպիսով՝ «... Յուրաքանչյուր շարույթ փոխկախյալության քերականական հարաբերության արդյունք է՝ հաստատված երկու բառային նշանների միջև, որոնք պատկանում են երկու իրարալրաց կարգերի» [անդ, 116]: Շարույթի բաղադրիչները համադաս լինել չեն կարող, իսկ եթե մեկ նախադասության մեջ կան երկու կամ ավելի համադաս անդամներ, ապա դրանք միասին շարույթի մի բաղադրիչ են համարվում [անդ]: Բալլիի այս դրույթը վերապահությամբ պիտի ընդունել. սրան կանդորադառնա՞նք մեր աշխատանքի II գլխում: Շարույթը կարող է լինել քողարկյալ այն դեպքում, երբ անդամներից մեկը կամ երկուսը «... պարտադիր վերականգնվում է արտարկյալ (բացահայտ) շարույթի հետ զուգորդման ուղիով» [անդ, 48-56, 150-157]:

Նայած այն բանին՝ հարցին մոտենում ենք դատողակա՞ն, թե՞ հուշաբանական ու զուգորդային տեսակետից, շարույթը կարող է բաղադրել լիակատար ասույթ կամ ասույթի մի հատված: Դատողայնորեն լիակատար շարույթը նախադասություն (ասույթ) է, մասնակի շարույթը՝ նախադասության մի մասը: Նախադասության ցանկացած անդամ կարող է շարութավորվել իրեն լրացնող անդամի հավելումով, որն առաջին անդամի քերականական իմաստի մեջ որևէ փոփոխություն չի մտցնում: Զուգորդայ-

նորեն լիակատար շարույթն այն է, ինչը մտովի կարելի է հանգեցնել ենթակայի հետ դիմավոր բայ բովանդակող նախադասության. «Կարմիր խնձոր (= որը կարմիր է): = Այն կարմիր է» [անդ, 118-119]: Այստեղից Բալլին բխեցնում է, որ «հնդեվրոպական լեզուներում ցանկացած քերականական հարաբերություն բայական է: Ողջ քերականությունը պարփակված է բայի մեջ և հակառակը՝ ամեն մի բայ ինչ-որ բան է արտահայտում կամ բովանդակում քերականությունից, որովհետև այն հանգույց է կամ հանգույց է պարունակում» [անդ, 120]:

Շարույթի հետ կապված՝ լեզվաբանը քննում է նաև, այսպես կոչված, գործառական փոխադրության (ֆունկցիոնալ տրանսպոզիցիա) երևույթը՝ երկու դրսևորմամբ [անդ], որոնցից մեկը համապատասխանում է ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված փոխակերպման, մյուսը՝ փոխանցման հասկացությանը: Բերենք Բալլիի քննած օրինակներից մեկը. «մոլորակ» գոյականը «-ային» վերջածանցի օգնությամբ դառնում է ածական «մոլորակային». այն նշանը («մոլորակ»), որը ենթակա է փոխադրման, կոչվում է փոխադրելի, նոր կարգ արտահայտող նշանը («-ային»)՝ փոխադրիչ կամ կարգային նշան. վերջապես՝ փոխադրիչի միջոցով «կերպափոխված» փոխադրելին («մոլորակային»)՝ փոխադրյալ [անդ]: Ցանկացած փոխադրյալ նշան շարույթ է, որի որոշիչը փոխադրելին է, որոշյալը՝ փոխադրիչը. փոխադրյալ նշանը պատճառաբանված է. խնդրառությունը միշտ փոխադրում է ենթադրում. ցանկացած փոխադրիչ, բացի կարգային գոյականներից, որոնք չեն կարող լրացնել մեկ այլ նշանի, կապակցիչ նշան է, իսկ կապակցիչը՝ փոխադրիչ նշան [անդ]: Վերջածանցները փոխադրիչներ են, որոնք որոշիչը կապում են որոշյալին (հմտ. «քար» և «քարե ճանապարհ», «սպիտակ» և «սպիտակել» («մազերը սպիտակել են»)): Գոյականակերտ վերջածանցները կապակցիչ չեն, քանի որ հանդես են գալիս որպես լրացյալ շարույթներ [անդ]: Պետք է ասել, սակայն, որ այս վերջին դրույթը վիճարկելի է. նախ՝ լրացյալ լինելը դեռևս կապակցիչ չլինելու

փաստարկ չէ, ապա՝ լրացման դեր կատարող գոյականակերտ ածանցներ ևս կան (հմտ. «տնակ = փոքր տուն (-ակ = փոքր)», ռուս. «домик, маленький дом» ևն): Բալլին շաղկապական կիրառություն ունեցող հարաբերական դերանունը կապակցիչ է համարում, իսկ նույն դերանունը՝ գոյականական կիրառությամբ՝ ոչ. հմտ. «Կպատժեն բոլոր այն մարդկանց, ովքեր խախտում են օրենքը» և «Ո՞վ է հաղթում». սակայն լեզվաբանը ով-ը կապակցիչ չի համարում նաև հետևյալ օրինակում. «Նա, ով թագավորում է երկնքում....» [անդ, 140]: Ի տարբերություն հարաբերական դերանունների՝ շաղկապները միշտ կապակցիչ դեր ունեն: Գործառապես նախդիրներն ու շաղկապները և՛ նույնանում են, և՛ տարբերվում: Նույնական են այնքանով, որ երկուսն էլ փոխադրիչներ են, հետևաբար և՛ կապակցիչներ, սակայն առաջիններն առնչվում են առարկաներին, երկրորդները՝ գործընթացներին (թեկուզ և առարկայնացված, բայց՝ գործընթացներին), այսինքն՝ նախադասություններին [անդ]:

Բալլին ընդգծում է, որ կամայական նշանը տեսականորեն թվային սահմանափակություն չունեցող շարույթներից է բաղկացած («ծառ» = առարկա, որն ունի տերևներ, ճյուղեր, արմատ, որը մեծ է թփից, որը ստվեր է գցում....), իսկ քերականորեն կատարյալ՝ պատճառաբանված նշանը բաղկացած պետք է լինի մեկ շարույթից: Լիակատար կերպով պատճառաբանված նշանի էությունն այն է, որ նա հենակետ է ունենում մեկ պարտադիր ներքին զուգորդում, իսկ լիակատար կերպով կամայական կամ ազատ նշանի էությունն այն է, որ նա երկրորդային արտաքին զուգորդումների օգնությամբ մտացի կապվում է բոլոր մյուս նշաններին [անդ]:

Բալլին խոսում է նաև կեղծ շարույթների մասին. դրանք են անքակտելի բառակապակցությունները, որոնք տարրալուծվելիս կարող են իմաստազերծվել՝ ընդհուպ մինչև անհեթեթության աստիճան, ինչպես նաև՝ հիմքի ու երկրորդական ձևայինների միացությունները [անդ]: Լինում են և զեղչված շարույթներ. այն դեպքում է տեղի ունենում

շարույթի կամ նրա որևէ բաղադրիչի զեղչում, երբ խոսքի ռադիոլուծությունից պարզ է ասելիքի բովանդակությունը [անդ]: Կցական բաղադրություններն այլ բան չեն, եթե ոչ անկենդան շարույթներ. կցականությունը բառագանձի հարստացման գործոն է՝ ի տես քերականության նվազայնացման [անդ]:

Շարահասական առումով միևնույն շարույթի ներսում կարող է լինել առաջատվության և հետատվության բախում. ըստ Բալլիի հետազոտության՝ երևույթը, չափավոր լինելով ֆրանսերենում, ծայրահեղության է հասնում գերմաներենում [անդ]:

Ո՞րն է իր նախորդների համեմատ Բալլիի՝ շարույթի ուսմունք բերած նորությունը: Շնորհիվ այս լեզվաբանի՝

1) լուրջ գիտական հիմքերի վրա դրվեց լեզվական հնարավոր կամ ենթադրելի և խոսքային կամ իրական - դրսևորված շարույթների սահմանազատումն ու առաջինի՝ խոսքում ունենալիք հնարավոր դրսևորումները կամ անհնարիությունը բացահայտելը,

2) սրանով պայմանավորված՝ փաստորեն նոր հուն մտավ դարասկզբին Ժ. Դամուրենտի ու Էդ. Պիշոնի՝ լեզվաբանություն ներմուծած արժույթայնության ուսմունքը [անդ],

3) առաջին անգամ շարույթը քննվեց գործառական փոխադրության լույսի տակ՝ նրա բաղադրիչների՝ փոխադրելի-փոխադրիչ-փոխադրյալ նշանային հարաբերակցությամբ,

4) կարևորվեց շարույթի՝ իբրև նշանային դրսևորման, լեզվական ու արտալեզվական ոլորտների դիտարկումը,

5) առանձնակի կարևորություն տրվեց ցանկացած քերականական հարաբերության ներսում ստորոգական էության բացահայտմանը և, սրանով պայմանավորված, արտարկյալ ու քողարկյալ շարույթների ճանաչմանը:

Այս ամենը մեզ իրավունք է տալիս շեշտելու, որ Շառլ Բալլիի շարութաբանությունը, ունենալով մի տեսակ ներքին լարվածություն, ուժաբանական (դինամիկ) ուսմունք է:

Շարույթի առեղծվածը լուծելիս ինքնա-

տիպ մոտեցումներ է հանդես բերել արդի հայ լեզվաբանությունը:

Գ. Ջահուկյանը շարույթի հարցին առաջին անգամ անդրադարձել է 60-ականների սկզբին՝ համաշխարհային լեզվաբանական մտքի պատմական ընթացքը գնահատելիս՝ Կարցևսկու, Շչեքբայի, Վինոգրադովի և այլոց՝ քննվող նյութին վերաբերող համապատասխան դիտողություններով¹²: Ըստ լեզվաբանի «ժամանակակից հայերենի տեսության հիմունքների»¹³ լինելով երկուլորտ (=երկալանային) միավորներ՝ շարույթներն արտահայտության ոլորտում ունեն իրենց համապատասխան դրսևորումները՝ հնչատակտերը: Դրանք (շարույթները) նախադասության այն հատվածներն են, որոնք բաղկացած են մեկ բառից, բառախմբից կամ բառակապակցությունից և հանդես են գալիս որպես որոշակի դադարներով ու հնչերանգով առանձնացվող միավորներ [անդ]: Հետագա ուսումնասիրությամբ Գ. Ջահուկյանը շարույթի գնահատման հարցում բացառում է նրա հնչերանգային ուղղագիծ պայմանավորվածությունն «...այն ընդհանուր սկզբունքով..., ըստ որի՝ չկա իմաստակիր միավորների և նրանց համապատասխանող հնչական միավորների սահմանների բացարձակ համընկում»¹⁴: Ի դեպ, սա հիմնավոր մոտեցում է, այլապես անբացատրելի էր մնում շարույթը երկուլորտ միավոր համարելու իրողությունը:

Ըստ իր մշակած համընդհանուր լեզվաբանական տեսության՝ Գ. Ջահուկյանը տարբերակում է կառուցվածքային չորս մակարդակ՝ դրանց համար առանձնացնելով երկուական (ըստ ութ ենթամակարդակների՝ մեկական) միավոր (հետագայում, պահպանելով մակարդակների թիվը, դրանք կառուցվածքային այլ բովանդակությամբ է օժտում հեղինակը, որի քննությունը մեր նպատակներից դուրս է, մանավանդ որ շարութաբանական տեսակետից մակարդակաբանական առանձնահատկությունները պահպանված են): Համապատասխանաբար, մակարդակների ուսումնասիրության համար առանձնացվում է լեզվաբանական չորս բաժին՝ մակարդակային միավորների ուսումնասիր-

ման զույգ ենթաբաժիններով. համաձայն այդ դասակարգման՝ շարույթի համար նշվում է շարութային մակարդակը՝ ենթաշարութային ու լիաշարութային ենթամակարդակներով, շարույթ միավորը՝ ենթաշարույթ ու լիաշարույթ տարբերակումներով, շարութաբանություն բաժինը՝ ենթաշարույթի ու լիաշարույթի ուսմունքներով: Գ. Ջահուկյանի շարույթը երկուորտ (երկպլանային) միավոր է, որ կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի լիմաստ (լիանշանակ) բառից, ըստ որում՝ դերանունն ինքնին շարույթ կարող է լինել, քանի որ ինքնին իրադրացված է.... և առանց փոխակերպման լիմաստ բառ լրացումներ չի ունենում: Անդամների լրակազմը նկատի ունենալով՝ տարբերակվում են լիաշարույթներ ու ենթաշարույթներ, փոխկաղապարային պայմանավորվածությունը հաշվի առնելով՝ համասեռ (առաջնային) և տարասեռ (երկրորդային) շարույթներ ու գերշարույթներ, ըստ գերադաս անդամի խոսքամասային պատկանելության՝ գոյականական, ածականական և այլ շարույթներ. խոսվում է նաև բուն և միջանկյալ շարույթների մասին. առաջինները գոյական լրացյալով շարույթներն են, երկրորդները՝ այսպես կոչված «հավաստիության» պարագաները: Առանձնացվում է վեց համասեռ շարույթ՝ գոյականական, բայական, ածականական, թվականական, մակբայական, դերանվանական. վերջին համասեռ կաղապարը, ինչպես նշեցինք, հեղինակի հանդգամբ արտահայտվում է միայն մեկ բառով: Ավելացնենք նաև, որ լեզվաբանը չի ընդունում ստորոգական շարույթի ըմբռնումը¹⁵:

Ստորոգական հարաբերության առնչությամբ նշելով, թե էական է ինչպես աջակողմյան կաղապարի անդամների թվարկումը, այնպես էլ նրանց փոխկաղապարումը ձախակողմյան մասի, հեղինակն իրազեկ է պահում, որ գոյականական իմաստի բացահայտման ժամանակ իբրև ենթակա կարող է հանդես գալ գոյականը կամ նրա ծավալված տիպը՝ գոյականական շարույթը, որին նա տալիս է «գոյակ» ընդհանուր անվանումը: Մակարդակների ու

միավորների հարաբերակցությունը ցույց է տալիս, որ տվյալ միավորի գործառույթը որոշելի է մակարդակային ավելի բարձր միավորի մեջ նրա գրաված տեղով. բառի համար այդպիսի միավոր է շարույթը, որը, հեղինակի ըմբռնումով, տվյալ դեպքում գոյականական կամ բուն շարույթն է. պայմանականորեն նախադասությունն էլ շարույթ կամ շարույթների համակցություն է համարվում, որը «....բնորոշվում է ստորոգմամբ՝ իրադրացման հատուկ տեսակով» [անդ]: Այսպիսի քննությամբ, փաստորեն, շարույթը դիտվում է լրացյալ գոյականի ու նրա լրացումների բաղկացություն. հասկանալի է, որ այդ լրացումներն էլ կարող են իրենց լրացումներն ունենալ և նրանց հետ միասին բաղադրել ենթաշարույթ. այս ամենը նկատի առնելով, այլև մակածականների ու մակթվականների փոխարեն «մակբայ» ընդհանուր անվանումը գործածելով, գոյականի անմիջական լրացումն էլ «ածական» ընդհանուր անունով կոչելով՝ հեղինակը տալիս է գոյականական շարույթի ընդհանուր կաղապարային բանաձևը, այն է՝ ((մ)ա)գ: Նշելով, որ շարույթը գիտակցության փաստի, նախադասությունն էլ մտածողության փաստի լեզվական արտահայտություն է (և քանի որ գիտակցությունն ու մտածողությունը փոխպայմանավորված են, ապա բնական է այն եզրակացությունը, որ շարույթն ու նախադասությունն էլ պիտի պայմանավորված լինեն մեկը մյուսով), լեզվաբանը իր իսկ մշակած փոխկաղապարային գործառնության (=օպերացիայի) առկայությունն է մատնանշում այդ միավորների միջև՝ ընդ որում ընդգծելով, որ այն փոխադարձելի է, այսինքն՝ շարույթը փոխկաղապարվել կարող է նախադասության, վերջինս էլ՝ շարույթի [անդ]:

Կարևոր ենք համարում լեզվաբանի՝ շարույթին վերաբերող գիտական գնահատումներից առանձնացնել հետևյալները. ա) պայմանավորված հեղինակի մշակած համընդհանուր լեզվաբանական տեսությամբ և այդ տեսության մեջ իրացված համընդհանուր լեզվական կաղապարով՝ շարույթի ուսմունքը ներկայանում է

ընթերցողին բոլորովին այլ ու միանգամայն նոր երանգներով՝ հնարավորություն տալով լեզվական այդ միավորը քննել մյուս միավորների հետ հարաբերակցման լույսի տակ. բ) հիշյալ կաղապարի և տեսության համընդհանուր բնույթը ենթադրել է տալիս, որ այն կիրառելի է բոլոր լեզուների նկատմամբ. գ) առաջին անգամ շարույթի քննության ընթացքում գործի է դրվում իր իսկ՝ հեղինակի մշակած փոխկաղապարման մեթոդը, համապատասխանաբար առանձնացվում են համասեռ կամ առաջնային և տարասեռ կամ երկրորդային շարույթներն ու գերշարույթները. դ) փոխկաղապարումը, լինելով ուսումնասիրության ուժաբանական եղանակ, հնարավորություն է տալիս մակարդակային փոխափանցելիության. այսինքն՝ լեզվաբանը, նշելով, որ ստորոգական կառույցները շարույթ չեն, շնորհիվ ՀԼՏ-ի շարժունության (կինեմատիկի), որով փոխկաղապարային փոխադարձելիություն են հանդես բերում շարույթն ու նախադասությունը, համաբանական նկատառումներով վերջինս նույնպես շարույթ կամ շարույթների միացություն է համարում պայմանականորեն:

Այս ամենի շնորհիվ շարութաբանական ուսմունքը պրպտումների լայն հեռանկար է խոստանում հետազոտողին: Մի նկատում ունենք միայն. եթե հնչաշարույթն ուսումնասիրողների մեծ մասի հայացքներում հնչաբանական ու շարահյուսական սահմանների շփոթ կար, ապա Ջահուկյանի՝ հատկապես վերջին դիտարկումներում¹⁶ ասես խախտված են շարույթի շարահյուսական ու զուտ իմաստային հարաչափերը, այլ կերպ՝ երկրորդ շարույթի և իմաստաշարույթի սահմանները:

Շարույթի ու սրա բաղադրիչների փոխադարձ հարաբերությունների հարցը դուրս չի եղել նաև Էդ. Աթայանի ուշադրության ոլորտից՝ կապված շարահյուսական նվազագույն միավորի (ՇՆՄ) ու շարահյուսական նվազագույն կառույցի (ՇՆԿ) հարաբերակցության, ապա լեզվական գոյաձևերի ու շարույթի՝ դրանցից մեկում ներունակ-դրսևորելի, մյուսում՝ դրսևորվող և երրորդում՝ դրսևորված միավորի փոխհարա-

բերության հետ: Քննության առնելով ՇՆՄ-ների համակցման հարցը՝ Աթայանը նշում է, որ ո թվով համակցվող միավորների առկայության դեպքում դրանց շնորհիվ ձևավորված շարահյուսական նվազագույն միացությունների քանակը հավասար է (n-1)-ի¹⁷: Համակցությունները նույնպես կարող են դիտվել իբրև շարահյուսական միավորներ և վերջիններիս նման հարաբերվել համադասությամբ կամ ստորադասությամբ [անդ]: Շարահյուսական նվազագույն միավորը, նշում է լեզվաբանը, «ատոմն» է, իսկ շարահյուսական նվազագույն կառույցը՝ «մոլեկուլը»: առաջինը այն տարրն է, որի բացահայտումով սպառվում է ասույթի շարահյուսական վերլուծությունը, կամ էլ, հարցին հարակցական քերականության տեսանկյունով մոտենալու դեպքում, այդ տարրը՝ «ատոմը», ասույթի համադրման ելակետն է [անդ]: Ստորադաս նախադասությունները, դերբայական և այլ կարգի դարձվածները լեզվաբանն անվանում է ՇՆՄ-ի ընդլայնված համարժեքներ [անդ]: ՇՆՄ-ն կամ միայն լիմաստ բառի, կամ էլ լիմաստ ու թերիմաստ բառերի բաղկացություն է, «կարող է ձևավորվել շարահյուսական ու վերլուծական տարբեր միջոցներով, նյութական կամ գրոյական ցուցիչներով, համաշարուն կամ համաշարից դուրս» [անդ, 151-152]: Կարգային իմաստով ՇՆՄ-ները դասակարգվում են առարկա, գործընթաց, առարկայի հատկանիշ, գործընթացի հատկանիշ խմբերի, շարահյուսական գործառույթների (արժութայնության) տեսանկյունով՝ կառավարող և կառավարվող խմբերի: ՇՆԿ-ն շարահյուսական երկանդամ կապակցությունն է: Այս կառույցները համադասորեն հարաբերվելիս կապակցություն չեն ձևավորում: Աթայանը համադասությունը Բալլիի պես գրոյական միացություն է համարում: Լեզվաբանը փնջային է կոչում այն խումբը, որը բաղկացած է երկու կամ ավելի երկանդամ խմբերից՝ ընդհանուր կենտրոնական տարրով: Հեղինակը նախադասության անդամ է համարում ամբողջ նախադասության հետ անմիջականորեն հարաբերակցվող տարրը: Ուշագրավ է հատկապես շարահյուսական

խմբերի համակցման ժամանակ հեղինակի նկատած օրինաչափությունը, որն այլ բան չէ, քան գերշարույթի գոյացումն արձանագրող խորքային վերլուծությունը. դրանք՝ այդ խմբերը, չեն կապակցվում միմյանց՝ որպես ամբողջը՝ ամբողջին. «Ունենալով ինչ-որ ընդհանուր տարր՝ նրանք փոխներթափանցում են մեկը մյուսի մեջ» [անդ, 219]: Խըմբերի միացման օրենքները նույնն են, ինչ-որ «տարրերից պարզագույն խմբեր ձևավորող օրենքները» [անդ]. համակցությունն իրականանում է, քանի որ միևնույն անդամը միաժամանակ պատկանում է երկու տարբեր խմբերի, ընդ որում՝ «.... փնջային կառուցվածքում այն համարվում է երկու երկանդամ խմբերի կենտրոնը» [անդ, 220]: Համակցման՝ արժույթային իրացումների աթայանական դիտողություններին կանդրադառնալով առանձին:

Վերը նշվեց, որ էդ. Աթայանը շարույթին անդրադարձել է նաև լեզվագոյածների առնչությամբ: Սոսյուրյան գույգ լեզվագոյածի (գուգորդային ու շարակարգային) հարաբերակցությունը, ինչպես նկատեցինք, արդեն Տենիերին անբավարար էր թվում: Թեև այդ գուգությունը չի խախտում Գ. Ջահուկյանը, բայց նրան էլ անբավարար է թվում մեքենայնորեն հարացույցը՝ լեզվին և շարակարգը խոսքին հատկացնելու մոտեցումը¹⁸ ըստ նրա՝ շարակարգային կաղապարը վերագրվում է լեզվին, քանի որ այն «ցույց է տալիս միավորների հաջորդման՝ տվյալ լեզվում հաստատված և նորմավորված կարգը խոսքին վերաբերում են կաղապարի կոնկրետ խոսքային իրացումները» [անդ, 110-113]:

Աթայանը հիմնովին վերասանդղավորում է այդ գոյաստիճանները՝ ստեղծելով ոչ միայն թափանցիկ «շինություն», այլև պատճառակցված ու առավել տեսանելի դարձնող՝ հայերեն գտնված եզրութակարգ, այն է՝ 1) լեզվական համակարգ՝ լեզվական տարրերի հարացուցային կարգավորում, 2) լեզվախոսքային շարակարգ՝ նույն տարրերի կարգավորումն ըստ լեզվակառույցների իրական գործառական բաշխման, 3) խոսքային գծակարգ՝ նույն տարրերի կարգավորումն ըստ խոսքաշթայի հաջորդա-

կանության¹⁹: Այս եռաստիճան համակարգը ցարդ հայտնի երկաստիճանի նկատմամբ այն անգնահատելի առավելությունն ունի, որ քողագերծում է թերևս ամենակարևոր՝ անտեսանելին տեսանելի դարձնող անցումային պահերը, որոնք, ինչպես նշում է հեղինակը, երկուսն են՝ ա) համակարգից շարակարգ անցումը, բ) շարակարգից գծակարգ անցումը, «երբ «հնչյունավորում» և «շթայակցում» ենք նախորդ փուլում ստացված իմաստային-գործառական շարույթները, ասելիքի ներքին իմաստային ամբողջությունը մաս-մաս շարադասում արտաքին աշխարհի ինչ-որ ժամանակահատվածում» [անդ, 42]:

Էդ. Աթայանի լեզվիմաստասիրական հայացքների ամբողջությունից դատելով՝ պիտի եզրակացնել, որ ընդգրկունության առումով նրա շարույթը համեզր է Բալլիի շարույթի սահմաններին, որովհետև, ինչպես ինքն է գրում, լեզվական ու արտալեզվական ոլորտները ներհյուսված են միմյանց այնպես, որ առաջինի և՛ հայեցակերպային, և՛ ըստ բաղադրիչների տրոհումը հնարավոր է միայն արտալեզվականի համապատասխան տրոհումների պայմանավորվածությամբ²⁰. «Առարկաներն աշխարհի «բառերն» են, նրանց կապերը՝ աշխարհի «շարահյուսությունը», որոնց գունատ պատճենում են միայն լեզվի բառապաշարն ու շարահյուսությունը»²¹:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

¹ Бодуэн де Куртене, Избранные труды по общему языкознанию, том 1, Москва, 1963.

² Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, 1939, էջը 143-308:

³ Անդ, էջ 183:

⁴ Անդ, էջ 255:

⁵ Անդ, էջ 291:

⁶ Фердинанд де Соссюр, Труды по языкознанию, Москва, 1977.

⁷ Անդ, էջ 155:

⁸ Л. Теньер, Основы структурного синтаксиса, Москва, 1988.

⁹ Անդ, 156-160:

¹⁰ III. Балли, Общая лингвистика и вопросы французского языка, Москва, 1955.

¹¹ Անդ, էջ 114:

¹² Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, 2-րդ հատոր, Եր., 1962 էջք 235, 487-488, 525-526:

¹³ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջք 353-354:

¹⁴ Գ. Ջահուկյան, Շարույթը որպես լեզվական միավոր, // ԶԼԳԴ, 1990, հմ. 2:

¹⁵ Անդ, ինչպես նաև՝ նույնի «Համընդհանուր լեզվաբանական տեսությունը և նախադասության անդամների ուսմունքը», // ԲԵՅ, 1989, հմ. 1, «Универсальная теория языка (пролегомены к субстанциональной лингвистике)», Москва, 1999, էջք 156-173:

¹⁶ Г. Джаукян, Универсальная теория языка (пролегомены к субстанциональной лингвистике), Москва, 1999.

¹⁷ Э. Атаян, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968, էջ 125:

¹⁸ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 101:

¹⁹ Էդ. Աթայան, Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը, // ԲԵՅ, 1988, հմ. 2:

²⁰ Էդ. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., 1981, էջ 136:

²¹ Էդ. Աթայան, Նշանը սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների համակարգում, // ԲԵՅ, 1988, հմ.2:

ՀԱՊԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

ԲԵՅ - «Բանբեր Երևանի համալսարանի» (հանդես)

ԶԼԳԴ - «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» (հանդես)

HISTORY OF COMMENTS ON SYNTACTIC SYNTAGMA

DAVIT GYULZATYAN

Summary

Two main criteria of syntagma evaluation are known in the history of linguistics: phonetic and syntactic. The work presents the viewpoints of several foreign and Armenian linguists: Boduen de Kurtene, F. de Sosyur, Charles Balli, G. Jahoukian, Ed. Atayan, which are given corresponding marks.

1 908 թ. մարտին Թիֆլիսում, Գարեգին Լևոնյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ լույս տեսավ «Գեղարվեստ գրական-գեղարվեստական» երաժշտական պատկերազարդ հանդեսի առաջին գիրքը: Հանդեսի առաջին իսկ գիրքն աչքի էր ընկնում նյութերի հարստությամբ ու բազմազանությամբ, որոնք տեղավորված էին հետևյալ հիմնական» այնուհետև գրեթե չփոփոխվող բաժիններում: «Գեղարվեստի տեսականը» «Գեղարվեստի պատմականը» «Գեղարվեստի դրականը» «Գեղարվեստն ընտանիքում և դպրոցում» «Մատենախոսական-քննականը» Գեղարվեստական մամականի:

«Գեղարվեստի» առաջին բաժնում՝ Էսթետիկական խնդիրներն ընդհանուր վերնագրի տակ, Գ. Լևոնյանը հանդես եկավ մի շարք հոդվածներով, որոնցից առաջինը տալիս էր էսթետիկայի արմատի, գեղարվեստի առանցքի՝ գեղեցկության գաղափարը: Նախ նա պարզում էր գեղեցիկի բնույթի հարցը. գեղեցիկը բնության մեջ գոյություն ունի՞ մարդուց անկախ, ինչպես լույսը, ջերմությունը, օդը և այլն:

Զժխտելով գեղեցիկի գոյությունը բնության մեջ՝ Լևոնյանը չի հաստատում ինքնին գեղեցիկի գաղափարը, այն հիմնավորում է օբյեկտի և սուբյեկտի որոշակի փոխհարաբերությամբ:

Ուրվագծելով գեղեցիկի պատմությունը

սկսած Պլատոնից՝ գեղեցիկի տարբեր մեկնաբանությունները Լևոնյանը բաժանում է երեք խմբի..

ա) *Գեղեցկություն* վերացական. երկնային, աստվածային, պլատոնական. կարող է արտահայտվել բանաստեղծության և երաժշտության միջոցով միայն:

բ) *Գեղեցկություն* գաղափարական. երևակայական, ցանկալի:

գ) *Գեղեցկություն* իրական. գեղեցիկը բնության մեջ, ստույգ գեղեցիկը, մարդու գեղեցկությունը:

Գաղափարական և իրական գեղեցկությունը նյութ է տալիս նկարչությանը, քանդակագործությանը, ճարտարապետությանը, թատրոնին:

«Երկրայինի» և «երկնայինի» իդեալականի և իրականի գեղագիտական մեկնաբանությունը Լևոնյանը նախ բնորոշում է գեղեցիկը՝ կրկնելով Կանտին. գեղեցիկ է այն, որը առաջ է բերում մեր մեջ անշահ հաճույք: Եվ ընդունում է սա որպես պատրաստի հեմասույթ՝ հենվելով սոսկ արտաքին տպավորության վրա, չմտնելով Կանտի գեղագիտության էության մեջ, չգբաղվելով նրա փիլիսոփայական համակարգում տեսական և գործնական փիլիսոփայության, իմացաբանության և վարքականոնի էթիկայի միջև գեղագիտության ու աստվածաբանության գրաված տեղի խնդրով: Ավելին, դժվար չէ նկատել, որ նա շեղվում էր Կանտի սահմա-

նումից, որի համաձայն բարձր իմացական կարողությունները երեքն են. հասկացողություն (der Verstand), դատելու կարողություն (der Urteilstkraft), բանականություն (die Vernunft): Ոգու կարողությունները համապատասխանաբար հանգեցվում են իմացական կարողության, հաճույքի ու տհաճության զգացումի և ցանկության կարողության: Գեղագիտության բնագավառը իմացական միջին դատելու կարողությունն է՝ ըստ Կանտի, և, որ ավելի կարևոր է, դատելու ոչ թե բնորոշ կարողությունը (երբ դատելու կարողությունը տրված ընդհանուր սկզբունքից, օրենքից անցնում է մասնավորին), այլ դատելու անդրադարձ (ռեֆլեկտիվ) կարողությունը (երբ տրված է միայն մասնավորը, որի համար ընդհանուրը դեռ պիտի գտնել):

Լևոնյանը, ելնելով Կանտի «անշահի հաճույքի» սկզբունքից, կանգ է առնում «աշխարհային կոնկրետ» գեղեցկության վրա՝ ընդգծելով, որ գեղեցիկ կարող ենք համարել այն, ինչ տեսողության ու լսողության զգայարանների միջոցով դառնում է հասկացողության սեփականությունը: Կանտը նշում էր. «Գեղեցիկ է այն, ինչ արդեն դուր է գալիս սոսկ դատողությանը (և ո՞րքան թե զգացական ընկալումով, ո՞րքան ըմբռնման միջոցով)»:

Այսպիսով՝ ընդունելով Կանտի բնորոշման մի մասը, որն է՝ գեղեցիկ է այն, ինչ դուր է գալիս, հաճելի է առանց որևէ շահագրգռության և շեշտելով այդ բնորոշման կանտյան հիմնավորումը՝ որևէ առարկայի գեղեցկությունը մենք կարող ենք ըմբռնել այն ժամանակ, երբ հասկանում ենք այդ առարկան (մինչդեռ Կանտի համար գեղեցիկը կապ չունի ո՛չ հասողության, ո՛չ բանականության

հետ, այլ դատելու կարողության, ուստի «անշահի հաճույքի» սկզբունքն ինքյան այստեղ բացառում էր գեղեցիկը հասողությամբ գնահատելու, հասկանալու պահը), Լևոնյանը անցնում է ճաշակի մեկնաբանությանը. եթե «.... մի բան հասկանում ենք, ասում ենք գեղեցիկ է»: Իսկ ի՞նչն է նպաստում հասկանալուն ինքնին. ճաշակը, պատասխանում է նա: ճաշակը յուրատեսակ միջնորդ դեր է կատարում գեղեցիկի և հասկացողության միջև: Գեղեցիկը չի ընկալվի, եթե չլինի ճաշակը: Այսքան կարևոր դեր կատարելով՝ ճաշակը, ըստ Լևոնյանի, ոչ բնածին է, ժառանգական, ոչ ըմդունակություն է, ոչ գիտություն, որ կարելի լիներ սովորել, ճաշակը կարելի է միայն դաստիարակել: Սակայն ճաշակը միշտ բազմազան է, մինչև իսկ հասարակական, ուստի անհատական բնույթ ունենալով՝ չի հասնում երբեք մի որոշ նորմայի ու որոշ սահմանի, որպեսզի լիապես հասկանալի լինի և ընդունելի՝ բոլորին: ճաշակների բազմազանությունը պայմանավորված է սեռի, ցեղի, միջավայրի, կրթության ու դաստիարակության, տրամադրության սեռական և, առհասարակ, սոցիալական այլևայլ երևույթների ազդեցության տարբերություններով: Ամեն մեկն իր մեջ իր ներքին աշխարհն ունի, «իր տեսողությունը»: Առանձին-առանձին քննելով ճաշակը որոշող գործոնները՝ նա կանգ է առնում նաև տրամադրության վրա. «Տրամադրությունը հոգեբանական երևույթ է և ճաշակի համար լուրջ կարևորություն ունի, այս խնդրի վրա առանձնապես կանգ են առնում վերոհիշյալ գիտնականները: Յեղիշու, Բրյուկե, Վունդտ առաջ են բերում հոգեբանական – ֆիզիոլոգիական պատճառներ և մարդու ուղեղի, նյարդային համակարգության մեջ

կատարվող ներքին պատճառներով են բացատրում երևույթը...

Հելմհոլցը, օրինակ, իր երկար տարիների մանրակրկիտ ուսումնասիրությամբ գտել է, որ հնչյունական երեւումներից և նրանց թվական հարաբերություններից է կախված ամբողջապես ամեն մի շնչավոր ինդիվիդուալի այս կամ այն ձայնը, ինչ չափով ընդունելու տրամադրությունը: Ո՞ր ձայներն են և ո՞ր գույները, որ դուր են գալիս մեզ, փայփայում մեր զգայարանները: Փաստորեն ճաշակի հարցում ամեն ինչ որոշվում է անհատի հարաբերական, մշակված կարողություններով: Առանց անհատականորեն զարգացած ճաշակի հնարավոր չէ ընկալել գեղեցիկը: Ճաշակի անհատական բնույթն այնուամենայնիվ հնարավորություն տալի՞ս է գտնել համընդհանուրը ճաշակների բազմազանության մեջ:

Ճաշակը լիովին անհատական երևույթ համարելով հանդերձ Լևոնյանն առաջարկում է ճաշակի նորմի, տարբեր ճաշակների բազմազանության մեջ մի որոշ սահմանի իր ըմբռնումը՝ այսպիսով յուրովի փորձելով լուծել ճաշակի անհատական ու համընդհանուր բնույթի կանտյան նշանավոր ներհակությունը (անտիոնոմիան):

Դրույթ. ճաշակի դատողությունները չեն հենվում հասկացությունների վրա, հակառակ դեպքում կարելի կլիներ վիճել դրա մասին (իրականացնել ապացույցների միջոցով):

Հակադրույթ. ճաշակի դատողությունները հենվում են հասկացությունների վրա, հակառակ դեպքում չնայած նրանց տարբերությանը, հնարավոր չէր լինի դրանց մասին վիճել անգամ (տվյալ դատողության հետ մյուսների անհրաժեշտ համաձայնու-

թյան հավակնությունն ունենալ):

Գեղեցիկը և ճաշակը անհատի մշակված կարողությամբ չափվելով՝ հասկացողության մեջ և նրա միջոցով ձեռք են բերում ընդհանրական օրինաչափ նշանակություն ու փոխադրվում սոցիալական չափանիշների ասպարեզ. «Ազգերը, ժողովուրդները, գրում է Լևոնյանը, իրենց խմբակցական կյանքի մեջ իրենց մոտավորակի միակերպ ճաշակով ստեղծել են ոճը, ստիլը, ոճը արդեն հայտնի դարձած ու դարերով քաղաքացիություն ձեռք բերած ուրույն ճաշակի ամրապնդված ձևն է»: Այս կարևոր հարցի վրա, սակայն, նա այլևս կանգ չի առնում. ոճի ու ճաշակի առաջացրած հարաբերության էությունը դեռ չպարզած՝ շարունակում է քննել ճաշակն առանձին՝ իբրև զուտ անհատական երևույթ: Ճաշակը, ինչպես բխում է նրա մեկնաբանությունից, մարդուն հատուկ չէ, քանզի այն բնածին չէ, հատուկ չէ գիտակցությանը: Այն կարելի է միայն կրթել, բայց այն չի տեղավորվում նաև բանականության ոլորտում, քանզի այն «գիտություն չէ» և չի հիմնավորվում «ապացույցների միջոցով», չի հենվում հասկացությունների վրա, այլապես կկորցներ իր բազմազանությունը որպես անհատական էություն: Ճաշակի անատոմիան, այսպիսով, փաստորեն շատ հեռու է մնում արմատական լուծում ստանալուց: Ճաշակի բնորոշումները, նորմայի և ընդհանրական չափանիշի տակ չտեղավորվելով, բարդացնում են նաև գեղեցիկի մեկնաբանությունը:

Ըստ Լևոնյանի՝ ճաշակը, ինչպես բխում է նրա մեկնաբանությունից, մարդուն հատուկ չէ a priori, քանզի այն բնածին չէ, ի յառաջագունէն հատուկ չէ գիտակցությանը: Ըստ Լևոնյանի՝ գեղեցիկ է այն, ինչ մենք հասկա-

նում ենք: Իսկ հասկանալու համար անհրաժեշտ է ունենալ զարգացած ճաշակ: Այսպիսի վճռական դեր ստանալով գեղեցիկի գնահատման մեջ՝ ճաշակը չի հասնում նորմայի աստիճանի և իր հերթին նորից լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն է զգում:

Ի՞նչ անել, ուրեմն, ինչպե՞ս քննել գեղարվեստական գործերը, երբ որոշ նորմա, որոշ սահման չկա ճաշակի զարգացողության. հարցնում է նա և անմիջապես ավելացնում. պետք է հասկանալ. ահա՛ ճաշակի գլխավոր պահանջը: Սակայն սա, որքան կտրուկ, նույնքան վերացական պատասխան է, և պատահական չէ, որ Լևոնյանի գեղագիտական հետախուզումների երկու հիմնական խնդիր՝ գեղեցիկը և ճաշակը, միանում են մի կետում հասկացողության օգնությամբ. մեկը բացատրվում է մյուսով և պատվելով վերադառնում միևնույն տեղը:

Գեղագիտական երկի գնահատության էական մոմենտներից մեկը, ըստ տեսաբանի, որոշվում է գեղեցիկի, ճաշակի և օգտակարության հարաբերությամբ, հոգեկանը պիտի գերակշռի. նյութականի և օգտակարության հարցը գեղագիտության մեջ պիտի «ջուրը ձգել»: Նա էսթետիկան բաժանում է էթիկայից, գեղեցիկը՝ օգտակարից և բարուց: Օգտակարը միշտ էլ «զորեղ ազդեցություն է ունեցել ճաշակի խնդրում», գեղեցիկը հաճախ ընկալվել է օգտակարի հետ կապակցված, ինչպես և ոչ գեղեցիկը՝ անօգտակարի: Այն առարկան, որ գեղեցիկ է և համապատասխանում է բարձր ճաշակի պահանջներին, պարտադիր չէ, որ միշտ էլ օգտակար և բարի լինի: Ճաշակի լիակատար դրսևորմանը մեծամասամբ կանխում է շահը, օգտակարը՝ խանգարելով «անշահ

հավանության ազատ աճումին ու բարգավաճումին»: Մինչդեռ նյութական կյանքի համար արժեքե չունեցող գեղեցիկը վրիպում է օգտապաշտի ուշադրությունից:

Գեղագիտական դատողությունը, ըստ Կանտի, «անշահ է», որովհետև անջատված է օբյեկտից, անտարբեր է սուբյեկտից դուրս եղած առարկայի նկատմամբ: Մինչդեռ Լևոնյանը գեղեցիկը ձգտում է ուղղակիորեն անջատել օգտակարից և ոչ թե առարկայից: Գեղեցիկի գաղափարը Լևոնյանը հիմնավորում է օբյեկտի և սուբյեկտի որոշակի հարաբերությամբ: Բայց տվյալ դեպքում օբյեկտն արդյոք «անշահ հաճույքի» առաջացման մեջ կատարու՞մ է վճռական դեր: Այս հարաբերության մեջ օբյեկտի դերը երկրորդական է. գեղեցիկը Լևոնյանը գտնում է հատկապես սուբյեկտի մեջ՝ վճռականը թողնելով անհատական ճաշակի քմահաճույքին: Պետք է նշել միայն, որ ճաշակն անմիջականորեն կապելով ոչ միայն էսթետիկական, այլև սոցիալական ու իմացական այլևայլ ազդեցությունների հետ՝ Լևոնյանն այնուամենայնիվ գեղոցիկի արժևորման մեջ չի հանգում միակողմանի, «մաքուր» գեղագիտական դատողության անջատմանը: Եվ պատահական չէ, որ ճաշակը չանջատելով սոցիալական երևույթների ազդեցությունից՝ անհրաժեշտ էր համարում ճաշակի էվոլյուցիայի ուսումնասիրությունը՝ գեղարվեստների պատմության ուսումնասիրությանը զուգընթաց. մի բան, որը նա չի փորձում իրագործել: Ըստ երևույթին՝ այն պահանջում էր դեռևս որոշ «նախապատրաստական շրջան»՝ հատկապես հայ գեղարվեստի պատմության մեջ ճաշակի էվոլյուցիան ուսումնասիրելու համար:

Ճաշակի անհատական և համընդհանուր

բնույթի հակասությունը Լևոնյանը այնպես էլ չվճռեց, թեև փորձեց որոշակի սահման դնել ճաշակի՝ որպես զուտ սուբյեկտիվ կարողության, և ոճի՝ որպես ճաշակի հասարակական համընդհանուր արտահայտության միջև:

Անվճռելի մնաց ոչ միայն ճաշակի անհատական ու հասարակական բնույթի հակասությունը, այլև հայեցողականի ու գործնականի, սուբյեկտիվի ու օբյեկտիվի, զգացականի ու բանականի, անմիջականության ու պատմական փորձի հաջողությունների շրջանակը:

Գեղագիտական ճաշակի ուսումնասիրության ընթացքում գեղագետը նշում էր այս հակասությունները՝ մերթ փորձելով հաշտեցնել (անմիջականություն և պատմական փորձ), մերթ ընդունելով մեկը և մերժելով մյուսը (զգայական ընկալում և բանականություն), մերթ թողնելով զուգահեռ, իրարից ասես անկախ վիճակում (հայեցո-

ղական ու գործնականը): Այսպիսով՝ ոչ միայն ճաշակի էությունն էր անբավարար լուսաբանվում, այլև բարդ, ճշմարիտ և իրական գեղեցիկը երկատվում էր՝ հիմնականում ամփոփվելով սուբյեկտի մտահայեցության սահմաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *В. Л. Шеллинг*, Философия искусства, М., 1966.
2. *А. П. Валицкая*, О природе эстетического знания, М., 1987.
3. *Г. П. Григорьева*, Образы мира в культуре, М., 1987.
4. *А. А. Балян, Л. С. Нерсисян*, Теория эстетического мышления, Ереван, «Манкаварж», 1990.
5. *Յ. Խաչիկյան*, Եսթետիկայի հարցեր, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1972:
6. *Լ. Խ. Քարայան*, Հասարակություն, բարոյականություն, իրավունք., Երևան, 1986:
7. *Լ. Ս. Ներսիսյան*, Գեղագիտականի և բարոյականի միասնությունը. «Հոգեբանությունը և կյանքը», «Ձանգակ - 97», Երևան, 2001:

G. LEVONYAN ABOUT ESTETICS SOME QUESTIONS

N. GYULBANGYAN

Summary

Levonyan according from Kant's "Independence pleasure" was stopping "Peremptory world" on the beauty. Underlining that beauty can be computed with the help of what kind of sight and hearing of feeling will become advantage.

Г. ЛЕВОНЯН: ПРО НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЭСТЕТИКИ

Н. ГЮЛБАНГЯН

Резюме

Левонян, руководствуясь принципом Канта "безпретенциозным удовольствием" останавливает свое внимание на "всемирной конкретной красоте", подчеркивая, что красивым может считаться, то, что посредством зрительного и слухового восприятия превращается собственностью сознания и понимания.

ԱՐԱՔՍՅԱ ԿԱԹՈՒՆՅԱՆ

»Ուրարտու« համալսարանի դասախոս

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԾԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Հ. Մ. ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երևանի պետական համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովսեփ Մովսեսի Թութունջյանը գիտական լայն շրջաններում հայտնի է որպես հոգեբանության տեսության և պատմության խորիմաց մասնագետ: Լինելով բազմակողմանիորեն օժտված անձնավորություն՝ նրա գիտական ժառանգության «առյուծի» բաժինը կազմում են հոգեբանության պատմությանը նվիրված ուսումնասիրությունները:

60-ական թվականների սկզբում Հովսեփ Թութունջյանը սկսում և 1967թվականի հոկտեմբերին Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան համալսարանում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն «Ֆրանսիական գիտական հոգեբանության պատմությունից» վերնագով: Ժամանակակիցների վկայությամբ այն վերածվում է բուռն գիտական քննարկման:

Խորհրդային հոգեբանական պատմագրությունը այդ ժամանակահատվածում հարուստ չէր լուրջ ուսումնասիրություններով: Մի շարք մեծագրություններով հանդես էին եկել Բ. Անանևը, հոդվածներով՝ Բ. Տեպլովը և Ա. Պետրովսկին, որոնք հիմնականում նվիրված էին խորհրդային հոգեբանության պատմությանը: Մինչդեռ արտասահմանյան հոգեբանության պատմությանը նվիրված ուսումնասիրությունները համարյա բացակայում էին: Սակայն ցավը ոչ այնքան դրանց թվաքանակի քիչ

լինելն էր, որքան այդ աշխատանքներում առկա մակերեսայնությունը, այս կամ այն դպրոցների և նրանց ներկայացուցիչների հայացքների և փաստերի սոսկական արձանագրումը: Սրա հետևանքով շատ հաճախ փիլիսոփայության պատմության և հոգեբանության պատմության միջև տարբերություն աննշան էր: Դեռ այն ժամանակ խորհրդային հոգեբանները զգում էին այդ բացը գիտության մեջ, ուստի պատահական չէ, որ Հ.Մ. Թութունջյանի հետազոտությունը ընդունեցին մեծ ոգևորությամբ:

Արխիվային նյութերի և մամականու ուսումնասիրությունը նոր լույս է սփռում թե՛ խորհրդային գիտության մեջ տիրապետող տրամադրության, թե՛ Հ.Թութունջյանի ստեղծագործության ընթացքի վրա: Գիտական մեծ արժեք է ներկայացնում հոգեբանության պատմության հարցերին նվիրված մամակագրությունը Բ. Անանևի հետ: Քննելով ֆրանսիական պատմագրության խնդիրները՝ Բ. Անանևը այլ հարցերի հետ մեկտեղ հեղինակի ուշադրությունը բևեռում է խորհրդային հոգեբանության մեջ իշխող այն մոտեցման վրա, /հատկապես ընդգծում է Բ.Տեպլովի դիրքորոշումը/, որը հոգեբանական դպրոցները բաժանում է առաջադիմականի և հետադիմականի՝ մոռանալով, որ «.....նրանցից ոչ բոլորն են հարստացրել գիտությունը հայտնագործություններով»: Երկու խոշոր գիտնականների քննարկումներից պարզ է դառնում Հ.Թութունջյանի գիտական պրա-

տունների տրամաբանությունը:

Աշխատանքի ներածական մասում հեղինակը հիմնավորում է իր ընտրությունը: Տարբեր երկրների հոգեբանական մտքի համեմատական վերլուծությունից պարզ է դարձել, որ եթե ռուսական հոգեբանական միտքը համարվում է համաշխարհային հոգեբանության պատմության ամենամշակված բաժինը, ապա ֆրանսիական հոգեբանության պատմությունը ամենաքիչ ուսումնասիրվածներից է: Մինչդեռ Յ.Թուրոնջյանի համոզմամբ ֆրանսիական հոգեբանության ներդրումը համաշխարհային հոգեբանության մեջ անգնահատելի է:

Քննելով 20-րդ դարի ֆրանսիական հոգեբանության վեջին 60-50 տարիների հոգեբանության անցած ճանապարհը՝ Թուրոնջյանը նպատակ է ունեցել՝

- ա) վեր հանել հոգեբանության ընդհանուր ֆոնդում նրա ներդրման կոնկրետ հոգեբանական արժեքը,
- բ) իդեալիզմից և տարերային մատերիալիզմից դեպի դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի անցման փիլիսոփայական նշանակությունը:

Աշխատանքը բարձր գնահատվեց առաջին հերթին այն պատճառով, որ հեղինակը քննարկվող խնդրի առնչությամբ առաջարկում է սեփական հայեցակարգ (կոնցեպցիա): Դա առաջին հերթին դրսևորվում է գիտնականի՝ ֆրանսիական հոգեբանական դպրոցի պատմության փաստերի նկատմամբ շատ բարեխիղճ և հարգալից վերաբերմունքի, ինչպես նաև համաշխարհային հոգեբանության մեջ ֆրանսիական դպրոցի տեղի և դերի գիտական հիմնավորումներում:

Յ. Մ. Թուրոնջյանը իր աշխատանքի հիմնական նպատակը համարում է ֆրանսիական գիտական հոգեբանական դպրոցի հարուստ և մյուսներից տարբեր բովանդակության բացահայտումը: «Ամեն մի հեղինակի հոգեբանական ստեղծագործու-

թյան գիտական գնահատականի, հայացքների ծագման և զարգացման համար կիրառվել է պատմականության սկզբունքը», - ատենախոսության ներածությունում գրում է հեղինակը (4;7):

Նրա համոզմամբ հոգեբանությանը պատմությունը իր զարգացման ընթացքում մեծապես պայմանավորված է սոցիալական և արտադրական հարաբերությունների պատճառականությամբ: Սակայն գիտնականը նշում է, որ ցանկացած հոգեբանական տեսության զարգացում որոշվում է հոգեբանության ընդհանուր զարգացման մակարդակով և տրամաբանությամբ: Ուստի պատմականության սկզբունքի կիրառումը պահանջում է գնահատել ուսումնասիրվող թե՛ մատերիալիստ, թե՛ իդեալիստ հոգեբանների աշխարհայացքները իրենց ձևավորման և զարգացման ընթացքում: Մի կողմ թողնելով ձևակերպումների գաղափարախոսական կողմը՝ կարող ենք փաստել, որ գիտնականի այս պնդումը ոչ միայն համարձակ քայլ էր, այլև բացահայտում է հետազոտողի ճկունությունը և ստեղծագործական մոտեցումը պատմական մյուսի նկատմամբ:

Հակադրելով միմյանց հիմնախնդիրների մատերիալիստական և իդեալիստական սկզբունքները՝ հեղինակը ընդգծում է դրանց անհամատեղելիությունը և անհամաձայնությունը: Սակայն դրանք միայն տեսության հիման վրա արված ենթադրություններ չեն: Հեղինակը իր եզրահանգումները հիմնավորում է այս կամ այն դպրոցի փորձարարական ուսումնասիրությունների գիտականության մակարդակից ելնելով, որը երաշխավորում է ուսումնասիրության օբյեկտիվությունը:

Գիտական խորաթափանցությամբ մաճիշտ է ընտրել իր ուսումնասիրության ժամանակաշրջանը, երբ հրապարակ իջան ֆրանսիական գիտության ամենավառ անհատականությունները իրենց հետաքր-

քիր, հաճախ հակասական նորություններով:

Նա քննադատական ուսումնասիրության է ենթարկում ֆրանսիական հոգեբանության 3 հիմնական ուղղությունները՝ Ա. Պյերոնի, Յ. Վալլոնի, Ի. Մեյերսոնի դպրոցները, որոնք զարգացել են 20-րդ դարի վերջին 40 տարիներին: Եթե առաջին երկու դպրոցները սկսեցին զուգահեռաբար զարգանալ 20-ական թվականներից, ապա վերջինը՝ 20-րդ դարի 40-ական թվականներից: Գիտնականը ցույց է տալիս, որ այս երեք դպրոցները փորձել են հոգեբանության տեսության և պրակտիկայի հարցերը լուծել տարբեր մեթոդներով և տեսական տարբեր դիրքերից՝ Ա Պյերոնը՝ փորձարարական, Յ. Վալլոնը՝ ժազուլմաբանական և պատմական, իսկ Ի. Մեյերսոնը՝ պատմական և համեմատական մեթոդներով:

Աշխատանքը հետաքրքիր է իր շարադրման ձևով: Նա բնութագրում և շարադրում է ֆրանսիացի հոգեբանների գաղափարները իրենց պատմական զարգացման ընթացքում, համեմատում է դրանք, վեր է հանում դրանցում առկա ուժեղ և թույլ կողմերը, այդ հեղինակների փորձարարական հետազոտությունների արդյունքների և տեսական ընդհանրացումների անհամաձայնությունը: Համապատասխան օրինակներով նա ցույց է տալիս հիշյալ հեղինակների փորձարարական ներդրման նշանակությունը համաշխարհային հոգեբանության և խորհրդային հոգեբանության հետագա զարգացման վրա, ինչպես նաև խորհրդային դպրոցի ազդեցությունը ֆրանսիական մատերիալիստական մտքի ձևավորման գործում:

Ատենախոսության մեջ բացակայում են անհիմն ենթադրությունները, կանխակալ մոտեցումները, զգացվում է, որ հեղինակը իր յուրաքանչյուր դատողությունը պլանավորել և վերլուծել է:

Շարադրման ընթացքում նա հաճախ է օգտագործում քրեստոմատիայի և գիտական ռեֆերատի ձևը, որի շնորհիվ ընթերցողը հաղորդակից է դառնում հոգեբանական հայացքների և որոնումների բարդ աշխարհին: Պետք է նկատել, որ Թուրունջյանի եզրահանգումները ևս հետաքրքիր են և ունեն որոշակի կառուցվածք: Նոր գաղափարների ստեղծման հարցում նա ընդունում է ժառանգորդության սկզբունքը, այսինքն՝ յուրաքանչյուր նոր գաղափար ձևավորվում է հին գաղափարների ստեղծագործ վերամշակման հիման վրա: Ժառանգորդության այս սկզբունքը նա դիտարկում է թե՛ ֆրանսիական հոգեբանության, թե՛ համընդհանուր հոգեբանության մեջ: Այսպիսի մոտեցումը խոսում է հեղինակի լայն մտահորիզոնի, համաշխարհային հոգեբանական գիտության պատմության խորաթափանց իմացության մասին: Լեզուների՝ ֆրանսերենի, անգլերենի, իտալերենի, ռուսերենի իմացությունը հնարավորություն է ընձեռել գիտնականին աշխատել հիշյալ հեղինակների բնագրերով, որը ինքնին գնահատելի է գիտության համար: Հսկայական աշխատանք է կատարվել նաև քննվող ժամանակաշրջանի, հոգեբանների կենսագրական տվյալների հավաքման համար:

Ա. Պյերոնին նա ներկայացնում է որպես հոգեբանության մեջ սուբյեկտիվիզմի և մետաֆիզիկայի թշնամու, որպես տարերային մատերիալիստի, տաղանդավոր փորձարարի, որը ձգտում էր բացահայտել հոգեբանական երևույթների ֆիզիոլոգիական հիմքերը, բարձր էր գնահատում պավլովյան ուսմունքի նշանակությունը հոգեբանության համար: Հեղինակը շեշտում է Ա. Պյերոնի թույլ կողմը, նրա էմպիրիզմը:

Ատենախոսության ամենամեծ մասը նվիրված է իր ժամանակի ամենահայտնի մատերիալիստին, հոգեբանին և փիլիսոփային՝ Յ. Վալլոնին:

Ջարմանակի չէ, որ գիտնականը հան-

գամանորեն է անդրադառնում Հ. Վալլոնի հայացքներին, քանի որ վերջինս հոգեբանության մեջ դիալեկտիկական մատերիալիզմի դրույթների կիրառման կողմնակիցն էր / ուստի շատ ցանկալի խորհրդային գիտության համար/: Սակայն դա չի խանգարում գիտնականին անկողմնակալ գնահատական տալ Հ.Վալլոնի տեսությանը: Թուրունջյանը բնութագրում է նրա գործունեության ամենատարբեր կողմերը, նրա հայացքների զարգացումը, մեթոդաբանական նրա դիրքորոշումը: Պետք է ասել, որ Թուրունջյանի գիտական հետաքրքրությունը այնքան մեծ էր Վալլոնի նկատմամբ, որ նա խորացնելով իր ուսումնասիրությունները, 1966 թվականին հրապարակեց «Հ. Վալլոնի հոգեբանական հայացքները» արժեքավոր աշխատանքը ռուսերեն, որը այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը:

Ռուսական իրականության մեջ հետաքրքրությունը Հ. Վալլոնի անձի և գործի նկատմամբ շատ մեծ է եղել: Նրա մասին հոդվածներով հանդես են եկել Լ. Վիգոտսկին, Ա. Լեոնտևը, Մ. Յարոշևսկին, Ա. Անցիֆերովան: Ա. Վալլոնի հայացքները հետաքրքիր ձևով ներկայացրել են նաև նրա աշակերտները՝ Ռ. Ջազոն, Մ.Բերժերոնը: Դրիդային ականավոր հոգեբան Լ.Վիգոտսկին դեռևս 1932թ. , երբ նոր էին ձևավորվում խորհրդային հոգեբանության հիմնական դրույթները, վերլուծելով երեխայի խոսքի զարգացման առանձնահատկությունները, քննադատեց Ժ.Պիաժենին՝ հենվելով և վկայակոչելով Հ. Վալլոնի ուսումնասիրությունները: (7;121)

Սակայն Թուրունջյանի բերած նորությունն այն է, որ գիտնականը ոչ թե սահմանափակվեց Հ. Վալլոնի հայացքների վերլուծությամբ, այլ ներկայացրեց Վալլոնի հոգեբանական հայացքների համրագումարը՝ որպես հայեցակարգ:

Պայմանականորեն բաժանելով Վալլոնի գիտական ուղին երեք շրջանների՝

գիտնականը բացահայտում է Հ.Վալլոնի ստեղծագործական ճանապարհը, նրա տրամաբանական անցումը իդեալիզմից մատերիալիզմին:

Հ. Թուրունջյանը ցույց է տալիս, որ ավելի քան քառասուն տարի իր հոդվածներում և դասախոսություններում, մենագրություններում և զեկույցներում Հ.Վալլոնը ուղղակիորեն կամ անուղղակիորեն զբաղվել է գիտակցության և միջավայրի, ուղեղի և հոգեկանի, ինքնագիտակցության, գիտակցականի և անգիտակցականի փոխհարաբերությունների, ցեղասերման (ֆիլոգենեզի) և գոյասերման (օնտոգենեզի) հիմնահարցերով:

Հ.Թուրունջյանը հարկ է համարում ընդգծել, որ Վալլոնի գիտական անցած ուղու բաժանումը փուլերի խիստ պայմանական է, այն իրականում շատ միասնական է, փոխկապակցված, և դրանց տարբերությունները նա տեսնում է տեսական ուսումնասիրություններում՝ դիալեկտիկական մատերիալիզմի գիտակցման մեջ:

Հարկ է նշել, որ Ա. Վալլոնի հոգեբանական հայացքները ուսումնասիրելը հեշտ գործ չէ: Եվ ձեռնամուխ լինել նման գործի կարող էր հոգեբանական գիտությանը և փիլիսոփայությանը խորագետ մարդը և նվիրյալը: «Հ. Վալլոնի հոգեբանական հայացքները» գրքի հրատարակումից հետո խորհրդային գիտնական Ա. Անցիֆերովան գրեց. «Ա.Վալլոնի գիտական գործունեության և կյանքի մասին այս առաջին մենագրությունը լուրջ և խորագիտակ ուսումնասիրություն է»/6;170/: Շարունակելով միտքը նա նշում է, որ աշխատանքը արժեքավոր է, քանի որ Վալլոնի տեսությունը ներկայացված է ֆրանսիական հոգեբանության զարգացման համատեքստում, տարբեր տեսությունների և հայացքների համայնապատկերի վրա:

Հ. Թուրունջյանը ինքնատիպ է ներկայացնում Ի. Մեյերսոնի պատմական հոգեբանությունը: Հեղինակը հանգամանալից

նկարագրում և վերլուծում է նրա հոգեբանական հայացքները, հետաքրքիր փորձերը՝ պատմականության կիրառումը մարդու հոգեկանի ուսումնասիրության ընթացքում:

Աշխատանքի եզրափակիչ գլխում Հ. Թութունյանը ամփոփում է իր ուսումնասիրության արդյունքները, ներկայացնում է Ֆրանսիական հոգեբանության ձեռքբերումները վերջին 50 տարիների ընթացքում, նրա հաջողությունները հոգեբանականության (հոգեֆիզիոլոգիայի), ծագումնաբանական, մանկան, փորձարարական հոգեբանության ասպարեզներում՝ դրանցով ընդգծելով այն հսկայական ծառայությունը, որ մատուցել է Ֆրանսիական հոգեբանական դպրոցը համաշխարհային հոգեբանությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թութունյան Հ. Ս., Հոգեբանական էություններ, Երևան, 1991թ.:
2. Թութունյան Հ. Ս., Երեխայի հոգեբանության հարցեր, Երևան, 1980թ.:
3. Тутунджян О. М., Психологическая концепция А. Валлона, Ереван, 1960г.
4. Тутунджян О. М., Автореферат диссертации (Из истории научной психологии во Франции), Москва, 1967г.
5. Ананьев Б. Г., Основные задачи советской психологии, Москва, 1950г.
6. Анцыферова А. Е., Исследование научного творчества А. Валлона, Вопросы психологии, ж., Москва, 1967г. к.3:
7. Выготский Л. С., Развитие высших психических функций, Москва, 1960г.

ANALYSES OF THE HISTORY OF FRENCH PSYCHOLOGY WITHIN H. TUTUNJYAN'S SCIENTIFIC HERITAGE

ARAKSYA KATUNYAN

Summary

In the soviet times the valuable detection of the French psychological thought is connected with H. Tutunjyan's name. Even today his research in this field hasn't lost its modernity.

ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՎ ՈՉ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵՆԱՆԵՐԸ ՄԱԿ-ՈՒՄ

Disabled and Able-bodied Kids in UN

Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ, որն ամեն տարի նշվում է դեկտեմբերի 3-ին, «Փյունիկ» հաշմանդամների միությունը ՄԱԿ-ի ճեմասրահում կազմակերպեց ցուցահանդես, որտեղ ցուցադրվեցին հաշմանդամ երեխաների և երիտասարդների ձեռքի աշխատանքները: Այս միջոցառման նպատակն էր հասարակության ուշադրությունը կենտրոնացնել հաշմանդամների և նրանց խնդիրների վրա, միավորել հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաներին:

Բացման արարողությունը տեղի ունեցավ երկուշաբթի օրը՝ դեկտեմբերի 4-ին, որի ժամանակ ներկաներին ողջունեցին «Փյունիկ» հաշմանդամների միության նախագահ Հակոբ Աբրահամյանը և ՄԱԿ ՀՏՎ ներկայացուցիչ Վալերի Տկաչուկը: Նրանք ընդգծեցին հաշմանդամների կարիքներին և հնարավոր ընդունակություններին ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Հաշմանդամներին հասարակության լիարժեք և օգտակար անդամ կարող է դարձնել միայն մարդասիրական մոտեցումը:

Ցուցահանդեսի բացումից հետո ՄԱԿ-ի

հանդիսությունների սրահում տեղի ունեցավ 14-16 տարեկան հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաների հանդիպում: «Փյունիկ»-ի կամավորները ներկայացրին հաշմանդամների խնդիրները: Ցուցադրեցին մի տեսաֆիլմ իրենց կազմակերպության մասին: Ոչ հաշմանդամ աշակերտները ձինիշյան հիշատակի հիմնադրամի դպրոցական ցանցից էին, որի հետ աշխատանքը կոորդինացվում է «Երիտասարդական նվաճումներ» ՈԿԿ-ի կամավորների կողմից: Երեխաները հաղորդակցվեցին «Երիտասարդական նվաճումներ» ՈԿԿ-ի հոգեբանի օգնությամբ:

Հանդիպման վերջում բոլոր մասնակից երեխաները ՀՏՎ-ի, ՄԱԶԾ-ի, ՄԱՄՀ-ի և ՄԱԿ-ի կողմից նվերներ ստացան: Եվ քանի որ դեկտեմբերի 5-ը ՄԱԿ-ի «Կամավորների միջազգային օրն է, «Փյունիկ»-ի և «Երիտասարդական նվաճումներ»-ի կամավորները նույնպես ստացան ՄԱԿ-ի նյութերի փաթեթներ: Այս միջոցառումը կամավորների արդյունավետ աշխատանքի լավ օրինակ էր, որը պատշաճորեն նշվեց և գնահատվեց ՀՏՎ-ի կողմից:

4/12/06

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Foreword of the Secretary-General on the Occasion of the International Human Rights Day

Չբավորությունը պատմություն դարձնելու քարոզարշավը մեր ժամանակի կարևոր բարոյական մարտահրավեր է: Մարդու իրավունքների համընդհանուր կիրառումը կարող է լուսավորել ուղին այդ նպա-

տակի համար:

Մարդու հիմնական իրավունքները՝ պատշաճ կենսամակարդակը, սննդի, առողջապահության, կրթության և պատշաճ աշխատանքի հնարավորությունը կամ խտրականությունից

զերծ լինելը, հենց այն իրավունքներն են, որոնք անհրաժեշտ են աշխարհի ամենաչքավորներին:

Մինչդեռ իրենց թույլ հասարակական կարգավիճակի հետևանքով նրանք ամենաքիչն են ընդունակ ձեռք բերել կամ պաշտպանել այսպիսի «համընդհանուր» իրավունքներ: Սրա հետևանքով մարդու իրավունքները վտանգվում են միշտ և ամենուր, ուր տղամարդը, կինը կամ երեխան գոյատևում են ծայրահեղ չքավորության մեջ:

Եթե մենք ուզում ենք լրջորեն վերաբերվել մարդու իրավունքներին, ապա պետք է ցույց տանք, որ մենք լուրջ մոտեցում ունենք գրկանքների խնդրին: Ինչպես առաջարկված է այս տարվա Մարդու իրավունքների միջազգային օրվա արարողակարգով, մենք պետք է արձագանքենք չքավորության դեմ պայքարի կոչին որպես «պարտավորություն, այլ ոչ թե բարեգործություն»:

Մեզանից յուրաքանչյուրը պետք է հասկանա, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մեջ ամրագրված իրավունքները այս աշխարհի այն միլիոնավոր մարդկանց համար, որոնց հետապնդում են հիվանդությունն ու սովը, չնչին արժեք կունենան այնքան ժամանակ, մինչև արդյունավետ լուծում չունենան: Մենք բոլորս պետք է գիտակցենք, որ այնտեղ, ուր ամբողջ ընտանիքը գոյատևում է օրական մեկ դոլարից պակաս գումարով, կամ երեխաները դեռևս նահանում են կենսապահովման միջոցների պակասից, Հռչակագիրը, լավագույն դեպքում, դատարկ խոսք է:

Չքավորությունը մարդու իրավունքների տեսանկյունից դիտելը բարձրացնում է գործե-

լու մեր բարոյական հրամայականը: Բայց այն բերում է նաև այլ օգուտներ: Երբ մարդու իրավունքների նորմաներն ընդգծում են անհատական արտոնությունները, իրավունքի վրա հիմնված մոտեցումը կարող է օգնել հզորացնելու և ապահովելու չքավորներին: Այն կարող է օգնել քաղաքացիներին? Բոլոր մակարդակներում ձեռք բերելու այն գիտելիքները և կարգավիճակը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց համար կենսական նշանակություն ունեցող որոշումներին մասնակցելու համար: Այն կարող է ուշադրությունը կենտրոնացնել ամբողջական և կայուն զարգացման գործընթացների վրա, որոնք երկարաժամկետ առաջընթացի հույս են ներշնչում: Եվ այն մեզ հնարավորություն կտա գնահատել մեր հաջողությունները ոչ միայն եկամուտների մակարդակով, այլև այն ազատությամբ, որով մարդիկ կարող են լիարժեք և հաճելի կյանք վարել:

Այսօր զարգացումը, անվտանգությունը և մարդու իրավունքները միահյուսված են. նրանցից ոչ մեկը չի կարող շատ հեռու գնալ առանց մյուս երկուսի: Անշուշտ, որևէ մեկը, ով համոզիչ կերպով խոսում է մարդու իրավունքների մասին, բայց ոչինչ չի անում մարդու անվտանգության և զարգացման համար, կամ հակառակը, կասկածի տակ է դնում և՛ իր վստահելիությունը, և՛ իր գործը: Ըստ այդմ, եկեք միաձայն խոսենք այս երեք խնդիրների մասին և աշխատենք վստահեցնել, որ կարիքից, վախից զերծ լինելը և արժանապատվորեն ապրելու ազատությունը իրական իմաստ ունեն այն մարդկանց համար, որոնք խիստ կարիքավոր են:

10/12/06

II

Ձ ԻԱՀ-ով վարակման առաջին դեպքից սկսած՝ 25 տարվա ընթացքում ՁԻԱՀ-ը փոխել է աշխարհը: Այն խլել է 25 մլն. մարդու կյանք և վարակել ավելի քան 40 միլիոնի: ՁԻԱՀ-ը դարձել է 19-59 տարեկան և՛ կանանց, և՛ տղամարդկանց

մահվան հիմնական պատճառն աշխարհում: Մարդկային զարգացման պատմության մեջ այն բացառիկ մեծության վնաս է պատճառել: Այլ կերպ ասած՝ այն դարձել է մեր սերնդի գերխնդիրը: Շատ երկար ժամանակ աշխարհն անտեսեց այն:

Բայց անցած 10 տարիների ընթացքում վերաբերմունքը փոխվել է: Աշխարհն սկսել է, ինչպես հարկն է, լրջորեն պայքարել ՁԻԱՅ-ի դեմ:

Ֆինանսական միջոցներ են տրամադրվում, ինչպես երբևէ, հակավիրուսային բուժումը հասանելի է մարդկանց, ինչպես երբևէ, իսկ որոշ երկրների հաջողվում է պայքարել ՁԻԱՅ-ի տարածման դեմ, ինչպես երբևէ: Հիմա, երբ վարակվածության թիվը շարունակում է աճել, մեզ, ինչպես երբևէ, անհրաժեշտ է միավորել քաղաքական կամքը:

Մեկ տասնամյակ առաջ ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի համատեղ ծրագրի ստեղծումը, որը միավորեց Միավորված ազգերի կազմակերպության ընտանիքի տարբեր տարածքների ուժերն ու միջոցները, շրջադարձային կետ էր ՁԻԱՅ-ի նկատմամբ աշխարհի վերաբերմունքի առումով: Իսկ 5 տարի առաջ ՄԱԿ-ի բոլոր անդամ-պետությունները հասան մի նոր ելակետի՝ ընդունելով Պարտավորությունների հռչակագիրը, որը ներառում է համաճարակի դեմ պայքարի որոշակի, հեռահար և վերջնաժամկետ սահմանված խնդիրներ:

Այդ նույն տարին ես՝ որպես Գլխավոր քարտուղար, երբ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ը վերցրի իմ անձնական գերակայության տակ, կոչ արեցի ստեղծել մի «պայքարի ֆոնդ»՝ տարեկան լրացուցիչ 7-10 միլիարդ դոլարով: Այսօր ես շատ հպարտ եմ, որ ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի համաշխարհային ֆոնդի ղեկավարն եմ, որն ավելի քան 3 միլիարդ դոլար է հատկացրել ծրագրերի իրականացման համար ամբողջ աշխարհում:

Վերջերս նշանակալի լրացուցիչ ներդրում ունեցանք երկկողմանի դրամատուներին, ազգային գանձապետարաններին, քաղաքացիական հասարակությունին և այլ աղբյուրներին: Ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների տարեկան ներդրումները ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համար կազմում են

ավելի քան 8 միլիարդ դոլար: Իհարկե, ավելին է անհրաժեշտ: Մինչև 2010 թ. ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համար անհրաժեշտ գումարը կգերազանցի տարեկան 20 միլիարդ դոլարը: Բայց մենք զոնե սկսել ենք աղբյուրներ գտնել և ռազմավարություններ մշակել տեղերում:

Քանի որ ներկայումս պայքարը սկսել է զգալիորեն աշխուժանալ, խաղաղույթներն այժմ ավելի բարձր են, քան երբևէ: Մենք չենք կարող թույլ տալ, որ ձեռք բերած հաջողությունները բաց թողնվեն, մենք չենք կարող վտանգի տակ դնել այդքան մարդկանց հերոսական ջանքերը: Հիմա մեր գերխնդիրն է իրականացնել բոլոր խոստումները, որ տրվել են՝ ներառյալ Հազարամյակի զարգացման խնդիրը, որը համաձայնեցված է աշխարհի բոլոր կառավարությունների հետ՝ դադարեցնել, հետո նվազեցնել ՄԻԱՎ-ի տարածումը մինչև 2015թ.: Բոլոր բնագավառների ղեկավարները պետք է հասկանան, որ ՁԻԱՅ-ի տարածման կանխումը նաև նախապայմանն է՝ հասնելու այն մնացյալ նպատակներից շատերին, որոնք միասին կազմում են 21-րդ դարում ավելի լավ երկիր կառուցելու միջազգային հանրության կողմից ընդունած նախագիծը:

Ղեկավարները պետք է պատասխանատվություն վերցնեն իրենց վրա և հաշվետու լինեն մեզ՝ բոլորիս:

Պատասխանատվությունը՝ ՁԻԱՅ-ի այս համաշխարհային օրվա թեման, պահանջում է, որ յուրաքանչյուր նախագահ և վարչապետ, պատգամավոր և քաղաքական գործիչ որոշում կայացնի և հայտարարի. «Ես եմ պատասխանատու ՁԻԱՅ-ի դեմ պայքարի համար»: Նրանցից պահանջվում է հզորացնել բոլոր խոցելի խմբերի պաշտպանությունը, լինեն նրանք ՄԻԱՎ վարակակիրներ, երիտասարդներ, մարմնավաճառներ, թմրանյութ սրսկվողներ թե համասեռամուլներ: Նրանցից պահանջվում է աշխատել՝ ձեռք ձեռքի տված քաղաքացիական հասարակության խմբերի հետ, որոնք

կարևոր դեր ունեն այդ պայքարում: Նրանցից պահանջվում է աշխատել հանուն իրական, դրական փոփոխությունների, որոնք կանանց ու աղջիկներին ավելի մեծ ուժ և վստահություն կտան, կկարգավորեն կանանց և տղամարդկանց հարաբերությունները բոլոր մակարդակներում:

Բայց պատասխանատվությունը վերաբերում է ոչ միայն նրանց, որոնք ղեկավար դիրք ունեն: Այն վերաբերում է նաև բոլորիս: Գործարարության ղեկավարներից պահանջվում է կանխել ՄԻԱՎ-ի տարածումն աշխատավայրում և ավելի լայն համայնքում, հոգ տանել վարակակիրների և նրանց ընտանիքների մասին: Առողջապահության ոլորտի աշխատակիցներից, համայնքապետերից և կրոնական խմբերից պահանջվում է լսել և խնամել նրանց՝ առանց նրանց դատապարտելու: Հայրերից, ամուսիններից, որդիներից և եղբայրներից պահանջվում է պաշտպանել և ամրապնդել կանանց իրավունքները: Ուսուցիչներից պահանջվում է ուղղություն տալ աղջիկների երազանքներին

որին ու սպասումներին: Տղամարդկանցից պահանջվում է օգնել վստահանալու, որ մյուս տղամարդիկ հանձնառու են իրենց պարտականությունները և հասկանում, որ լինել իսկական տղամարդ նշանակում է պաշտպանել մյուսներին: Եվ մեզանից յուրաքանչյուրից պահանջվում է օգնել՝ ստվերից դուրս բերելու ՁԻԱՀ-ը և տարածելու այն ուղերձը, որ լռությունը հավասար է մահվան:

Շուտով ես թողնելու եմ Գլխավոր քարտուղարի պաշտոնը: Բայց քանի դեռ ուժ ունեմ, շարունակելու եմ տարածել այս ուղերձը: Ահա թե ինչու ՁԻԱՀ-ի համաշխարհային օրը միշտ էլ կարևոր կլինի ինձ համար: Եկեք այսօր՝ ՁԻԱՀ-ի համաշխարհային օրը, երդվենք կատարել խոստումը. ոչ միայն այսօր, այս տարի կամ հաջորդ տարի, այլև ամեն օր, մինչև որ հաղթահարվի համաճարակը:

Քոֆի Անան
12/01/06

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՄԱՍՏԵՂ. ԱՂՕԹԱՐԱՆ
(ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱ
ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ)

Համաստեղի «Աղօթարանը» մարդու հիացմունքն է, ուրախության ճիչը, որ կա, ապրում է Աստծու արարած աշխարհում, վայելում է բնությունն ամենաբազմազան հրաշքներով: «Կը հաւատամ, որ կաս, Տէ՛ր» (211)¹, հայտարարում է Համաստեղը՝ այդ հավատի հաստատումը փնտրելով ամենուր և ամեն ինչում՝ ծաղիկներից մինչև աստղեր, մահկանացուի կյանքի առանձին պահերից մինչև հավիտենականություն: Աստված անբաժան է մարդուց, որի կյանքն Աստծու արարած աշխարհին է. «Իմ մարմնի, իմ հոգիի, իմ տենչանքներում մէջ Դուն ինքդ կաս, Տէ՛ր, ու մենք իրարմով լրացած՝ միաւորած ենք մարդկայինն ու աստուածայինը» (211): Մարդու մարմինը Տիրոջ խնկարկման յուրատեսակ տաճար է, իսկ Աստծու հետ միավորված մարդը, ըստ էության, իր մտահայեցողական ընթացքի մէջ ծավալվում է տիեզերքով մեկ. «Միայն Քեզմով, Տէ՛ր, Քեզմով է որ կը դառնամ լրիւ ու կատարեալ ու զիս հոն է որ կառաջնորդես» (211):

Տիրոջը ճանաչող մարդը չի վախենում ոչնչից. «Իմ կեանքը աւելի իրական է ու աւելի ճշմարիտ: Ճշմարիտ, Յիսուսի մարմնին պէս, որ բաժնուեցաւ որպէս նկանակ: Իրական, նոյնպէս Յիսուսի արիւնին պէս, որ մատուցուեցաւ որպէս զինի» (213): Համաստեղն աշխարհը, բնությունը, մարմնականն ու նրանից եկող, նրանով ընկալվող հաճույքը չի ընկալում որպէս գայթակղություն: Ճիշտ է, գայթակղությունն ամենուր է, քանզի անհամար են երկրային բարիքները, որոնց խայծով, ինչպէս բնորոշում է Դանթեի պոեմի հերոսը, չարը որսում է առաքինու-

թյան օրինակներին չհետևող, սպասվող պատժի մասին մոռացած մարդուն: «Վա՛յ աշխարքիս՝ գայթակղութիւնների համար, որովհետեւ պէտք է, որ գայթակղութիւնները գան, սակայն վայ այն մարդին, որի ձեռովը կը գայ գայթակղութիւնը», կարդում ենք Ավետարանում (Ավետարան ըստ Մատթէոսի, ԺԸ:7):

Մարդը երբեք մենակ չէ: Նա մենակ չէ անգամ ... Տիրոջը ուրանալու պահին. Տերը նրան երբեք չի լքում: Բարության ու աստվածային ներողամտության ոգին սովորեցնում է ներել նույնիսկ թշնամիներին: Երազները մարդու հողեղեն մարմնի մէջ ապրում են ճիշտ այնպէս, ինչպէս ցորենի հատիկը հողի մէջ՝ «զիտակ իմ երանութեան եւ անզիտակ իմ վախճանին» (214):

Մահկանացուի կյանքը հավիտենականության մասն է, իսկ «Յաւիտենականութիւնը այնքան իրական է, որքան երգը թռչունին եւ գոյնը ծաղիկին: Այնքան իրական, որքան ջերմութիւնը կնոջ մը աչքերուն եւ տրտում գեղեցկութիւնը թիթեռնիկի թւերուն: Այնքան իրական, որքան լռութիւնը» (218): Այլ խոսքով, երբ մարդն ապրում է աստվածային բարության օրենքներով, «օրհասի վերջին շունչին մէջ» անգամ մենակ չէ և կարող է զգալ Տիրոջ հավերժական շունչը: Համաստեղը կյանքն ու մահը ընկալում է անխզելի ամբողջության մէջ ու չի վախենում վախճանից. նա լավ է հիշում Ավետարանի խոսքը. «Որովհետեւ մեզանից ոչ ով ինքն իրան համար չէ ապրում, եւ ոչ ով ինքն իրան համար չէ մեռնում: Որովհետեւ եթէ ապրենք Տիրոջ ենք ապրում, եւ եթէ մեռնենք՝ Տիրոջն ենք մեռնում. ուրեմն թէ ապ-

րենք եւ թէ մեռնենք՝ Տիրոջն ենք: Վասնզի նոյն իսկ նորա համար էլ Քրիստոսը մեռաւ եւ կենդանացաւ՝ որ մեռելների եւ կենդանիների վերայ տիրէ» (Թուղթ Պողոսի առ Հռովմայեցի ԺԴ: 7-9):

Գրողը մարդու առաջ բացում է տիեզերքի անսահմանությունն ու նրա հոգին, սիրտն ու միտքն ուղղում դեպի երկինք, որտեղ չկա մահ ու թույն, վիշտ ու ցավ: Տեղին է հիշել Դանթեի պոեմից «Քավարան»ի տողերը.

...Ինչպես նա, ով ունենում է վարանում,
Բայց լինելով ճշմարտությանն իրազեկ,
Նորից է իր արիությունն ստանում...²:

Մարդն այդ դեպքում չի կորցնում հույսը, երկրային կյանքի նպատակը, որ իտալացի բանաստեղծը ձևակերպել է այսպես.

Դուք չգիտե՞ք, որ մենք որդեր ենք նսեն,
Ծնված թիթեռն այն դառնալու թևավոր,
Որ թռչում է դեպի ատյանը վսեն:

(«Քավարան», Ժ, 124-126):

«Աղօթարան»ում անմոռանալի է մուրացկանի խորհրդանշական պատմությունը (Աղոթք Դ): Խնջույքի հավաքված մարդիկ լրացնում են երջանկության երազ-պատկերը: Բայց դժբախտաբար իրական կյանքում կան անապաստան, աղքատ ու լքված մարդիկ: Աստվածաշունչը մարդուն սովորեցնում է տիեզերական բարության օրենքը, բայց... «Այն ժամանակ կ'ասե ձախ կողմիններին էլ. ինձանից դէն գնացէք, ով անիծեալներ, յաւիտենական կրակի մէջ, որ պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակների համար: Որովհետեւ ես սովեցի, եւ դուք չ'տուիք ինձ ուտել, ծարաւեցի, եւ ինձ չ'խմեցրիք: Օտար էի՝ եւ ինձ չ'հագցիք, հիւանդ եւ բանտի մէջ՝ եւ ինձ չ'այցելեցիք: Այն ժամանակ նորանք էլ կ'պատասխանեն եւ կ'ասեն. Տէ՛ր, քեզ ե՞րբ տեսանք սոված, կամ ծարաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ, եւ քեզ ծառայուհամարն չ'արհմբ: Այն ժամանակ կ'պատասխանէ նորանց եւ կ'ասէ. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ որովհետեւ այս փոքրներից մէկին չ'ա-

րիք, ինձ էլ չ'արիք», - ասում է Ավետարանը (Ավետարան ըստ Մատթեոսի, ԻԵ: 41-45):

Հյուրերին հնարավոր տիաճություններից հեռու պահելու համար պոեմի քնարական հերոսը փակեց դուռը: Հավատավոր մարդու համար սա մեղքերի մեղքն է: Մուրացիկը չի դժգոհում: Նրա «ծանր դէմքը», «ծերացած ձեռքերը, որ կարծես մաշած էին» Ավետարանի էջերը թերթելուց, դարձան խղճի խայթ ու ստիպեցին փնտրել, գտնել մուրացկանին: Բայց արդեն ուշ էր. «հրեշտակները կարծես երկինք տարեր էին զայն ու ձիւնը գոցեր էր անոր ոտքերուն հետքերը» (215):

Սա իրականությունն է՝ հեքիաթի պես անիրական է, և հեքիաթ՝ տեսանելիության չափ իրական է ու հասկանալի: Մի բառով՝ միջ, որ ծնվում է կյանքից ու վերադառնալով կյանք՝ իմաստավորում այն: Ինչքան անհիմն է հեքիաթն առանց կյանքի, նույնքան անբովանդակ է կյանքն առանց հեքիաթի: Պահի տպավորությունը, դռան թակոցը բազմիցս կրկնվում են: Մեղքի, հանցանքի, կորուստի ցավն անբուժելի է, բայց պահն անվերադարձ է: «Իրաւունք արեք աղքատին եւ որբին. արդարացրէք խեղճին եւ աղքատին: Փրկեցէք աղքատին եւ խեղճին. ազատեցէք ամբարիշտների ձեռքիցը» (Սաղմոս 2Բ: 3-4),- այս կանոնը քաջ գիտի ամեն մի քրիստոնյա: Գիտի նաև «Աղօթարանի» քնարական հերոսը: Համոզված կարելի է ասել՝ մուրացկանի կերպարանքով Տերն էր այցի եկել ու մերժվել: Այլ խոսքով, հերոսը (ակամա) մերժել է Աստծուն: Ողջ ունեցածն աղքատներին, զրկվածներին բաժանելն անօգուտ է. հավաքվածների մեջ չկա այն մուրացկանը: Թափվող ձյան հետ ամեն գիշեր կրկնվում է դռան թակոցը....

Առօրյա հոգսերի, ամենօրյա տագնապների մեջ մարդը երբեմն մոռանում է երկնքի հետ իրեն կապող մտերմությունը և ստիպված է ողբալ, որ, «մարդոց մոլուցքին մէջ» ընկնելով, դարձել է «դազադակիրն գեղեցիկ բաներուն եւ պատերազմի դաշտը քշու-

եցայ՝ սպաննելու կատաղութիւնով ու դիւային քրքիջով» (216): Մարդը խախտել է երազների դաշնությունը «երկաթի աղմուկներով, շոգեկառքերու երկաթեղէն արշաւանքներով եւ սաւառնակներու մոլեգին կռիւներով» (216): զվում է մարդուն Արարչին կապող մտերմությունը, և նա հայտնվում է նյութական աշխարհում՝ առանց հոգու և հոգևորի, առանց երազի: Դ. Թումանյանի պես Համաստեղն էլ համոզված է, որ աշխարհում ամենադժվարը Մարդ լինելն է: Մարդ, որն անտեսանելի թելերով կապված է երկնքին, շնչում է «միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր»:

Մարդն իրենից դուրս է փնտրում իսկական խաղաղությունը, երանությունը, երջանկությունը: Փնտրում է և չի գտնում, չի կարող գտնել. առանց Աստծու մարդը ենթակա է ատելության ու կրքի հողմերին, իսկ սերը պարզապէս չի ապրում այդ պայմաններում: Չկա սեր, չկա նաև Աստված, ուրեմն՝ չկան երազ ու հավատ, այլ խոսքով, կա գոյություն, բայց չկա Կյանք: Մարդն իրեն զրկել է խաղաղությունից, «կապույտին, աստղերու մասին» մտածելու, խաղաղության մեջ Տիրոջ ոտնաձայնը լսելու երջանկությունից: Իսկական խաղաղության մեջ միավորվում են մարդու երազն ու իրականությունը, ոգու անհասանելի թռիչքներն ու երկնքի անսահմանությունը, բնության հավերժությունն ու աստվածային սերը: Ստեղծագործելու, արարման պահերին մարդը հասնում է երկնքին, բայց երկրի վրա նրան Աստծուց բաժանող գայթակղություններն անհամար են:

Երազները չեն կարող ապրել հաշվի, հաշվենկատության միջավայրում ու «ընդմիշտ իրենց բոյները լքող աղանձներուն պէս» հեռանում են: Գոյանում է երկու բևեռ. մեկը՝ ստեղծագործելիս մարդն աստվածային ոլորտում է, մյուսը՝ մարդու դատողությունները ստիպում են իմաստավորել իր նյութական գոյությունը: Ծնվում է աղոթքը. «Տո՛ւր ինձ խաղաղութիւնն իրական, որ

լսեմ ոսկեջրուած մեղուին ձայնը ծաղիկի բաժակին շուրջ: Տո՛ւր ինձ լուսնկոտ գիշերներու լռութիւնը, որ լսեմ հասունցած խնձորին իյնալը կանանչին վրայ ցօղաւոր: Տո՛ւր ինձ խաղաղութիւնը, Տէ՛ր, ուր խղունջն իր փոքրիկ եղջիրները կերկարէ եւ անանուխի բոյրով թաց հողին վրայ դանդաղ կը շարժի, արեւաժամացոյցի մը իմացականութեամբ, օրացոյցը հողին, լուսնի խաւարումին, հունձքի առատութեան եւ երաժշտութեան: Այդ խաղաղութեան մէջ միայն պիտի կարենամ զգալ Քու շունչը, զգալ Քու մտերմութիւնը, Տէ՛ր» (217):

Ստեղծագործությունը մարդուն հավիտենականությանը կապող, երկնայինի հետ նրա անխախտ կապը հաստատող ու սրբագործող ուժն է: Արարման հրաշքը ապացուցում է, որ մարդն իր մեջ կրում է տիեզերական բարությունը: Գրողը չար մարդկանց անվանում է հիվանդներ, որոնց «մեջ պակաս է կեանքին գեղեցկութիւնը ըմբռնելու իմաստութիւնը, մանաւանդ իմաստութիւնը զգայարանքներուն» (219): Համաստեղի կրոնագգացողության կենտրոնական դեմքը մարդն է, որն իր զգայարաններով շոշափում, զգում, ընկալում է Աստծուն, երկրպագում նրան՝ որպէս հավերժական բարություն, որի մի մասն է ինքը: Մարդու աստվածային էությունն օգնում է շունչ, կենդանություն փնտրել, գտնել ամենուր և ամեն ինչում՝ որպէս տիեզերքի արարման, աստվածային ծագման ապացույց:

Գր. Նարեկացին ներկայացնում է Աստծուն ձգտող, բայց նախաստեղծ մեղքը հաղթահարելու ապարդյուն ձգտումից տառապող, մաքրվելու, Արարչի տիեզերական մաքրությանը հասնելու հույսը փայփայող մարդուն՝ ծնկաչոք ու մեղանչող, բոցեղեն աղոթքով երկինք հասնող ու աղոթքում անվերջ թվարկվող մեղքերի բեռով երկրին կառչած:

Իսկ մեղանք իմոց յանցանացս՝ անհամարք,

Ձորս անհնար է առնուլ ի միտ ...³:

Նարեկացու ընդվզումն իր դեմ է, իրեն Արարչից բաժանող կենսական մեղքի դեմ: Ողբերգական է հոգով երկինք տենչացող, բայց մեղավոր, հողին կառչած մարդու հոգեվիճակը:

Վայ անձինս մեղաւորի,

Ձի զարարիչն իմ բարկացուցի...(Բան է Գ 54-55, էջ 273):

Հոգով ու մարմնով երկատված մարդու գոյության գերխնդիրը հոգևոր արժեքների պահպանումն է՝ Աստծու ու աստվածայինի պատկերով, և նրա երկրային գոյությունը դառնում է իսկական փորձություն: Նարեկացու աղոթքը մարդու հոգևոր ինքնակատարելագործման փորձ է՝ հավերժական և ամեն մեկի կյանքով կրկնվող: Աշխարհը, որը շրջապատում է Նարեկացուն, հրաշք է ու հրաշալի, բայց նաև զայթակղիչ ու զայթակղող, ուրեմն՝ ինչ-որ չափով մերժելի: Արարչի արարած աշխարհն է դա, որից ծնվող մեղքերից ազատվելու միջոցով միայն կարելի է անաղարտ պահել հոգին ու չզրկվել Աստծուն միանալու հնարավորության երջանկությունից: Այս ամենով հանդերձ՝ Նարեկացու համար անփոփոխ է մի սկզբունք:

... Բնութեամբ բարիդ՝ ընդ ի բնէ չարիս...(Բան Զ Դ 38-39, էջ 267):

Համաստեղը Նարեկացու պես կատարյալ ներդաշնակությունը փնտրում ու գտնում է միայն Աստծու մեջ: Նրա համար էլ «գերագոյն իմացութիւնը, բարձրագոյն բարոյականութիւնը՝ աստուածամանութիւնը, բարձրագոյն նպատակը՝ հոգու փրկութիւնն»⁴ է: Իր հանճարեղ նախորդի պես նա հայացքն ուղղում է «մարդուն՝ աստծո համար, աստծուն՝ մարդու համար»⁵: Նա չի վախենում աշխարհից ու չի խոսում մեղքի մասին. առաջնայինը վայելքն է՝ որպես աստվածային շնորհ, որ տրված է մարդուն: Ձգայարանները ոչ միայն աշխարհընկալման ու ինքնաճանաչման, այլև Աստծու փառաբանության միջոց են:

«Աղօթարանում» Համաստեղը շեշտում է

մարդու զգայարանների աստվածատուր էությունը. աստվածային այդ շնորհը մարդուն զատում է անկենդան բնությունից՝ միավորելով Աստծուն՝ որպես գոյության փաստն արձանագրելու, զգալու եզակի ունակություն: Ձգայարաններ ասելով՝ գրողը նկատի ունի նաև դրանցով աշխարհը, որպես Աստծու գոյության ապացույց, ընկալելու ունակությունը: Հոգևորի և մարմնականի միասնության օրենքով անբաժան են Աստված ու մարդ, երկինք ու երկիր, զգացմունք ու զգայարան: «Չ'գիտէ՞ք որ դուք Աստուծոյ տաճար էք եւ Աստուծոյ Հոգին բնակուած է ձեզանում: Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականէ, նորան էլ Աստուած կ'ապականէ. որովհետեւ Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք էք», - ասում է Ավետարանը (Թուղթ Պողոսի առ Կորնթացիս Ա, Գ:16-17): Մարդկային զգայարանների գովքը Տիրոջ փառաբանությունն է. ինքնագիտակցող մահկանացուի միջոցով հաստատվում է Տիրոջ գոյությունը: Մարդը զգայարաններով կառուցում է իր հոգու բնակարանը, ուր բնակվում է Արարիչը:

Աներկբա է Համաստեղի հավատը, բայց հասկանալի է նաև ամեն ինչ իր զգայարաններով, սրտի ճանաչողությամբ ընկալելու ձգտումը: Նա աղոթում է «Կտոր մը լոյս» աղաչելու համար՝ համոզված, որ «գիս կը լսես, ինչպէս կը լսես աղօթքը նոճիներուն» (219): «Սէրը գոյութեան տենչ է, ըլլալու կիրք ու խորհուրդ մարմնի» (236), - գրում է նա՝ փառաբանելով կնոջը, որ շունչ ու հոգի է ներշնչում մարմնին, որն առանց կնոջ «պիտի մնար նուագարան մը միայն առանց երաժշտութեան»: Սիրո շնորհիվ մարդը դառնում է «անանձնական, ինչպէս Աստուած ինքն է տարածուած», ու հոգին դառնում է բարի, չարը «կանաչ գոյն սողուններու նման» թաքնվում է հեռու խորշերում՝ սպասելով այն օրվան, երբ «Աստուած վերջալոյսի շողերուն պէս հեռանայ ու հոգւոյն մէջ նորէն տիրէ խաւար ու պարտեզի ծաղիկներուն տեղ նորէն բուսնի տատասկ» (237):

Սերը միավորում է Մարդուն Արարչի հետ, դառնում սերմնացանի աղոթք, ստեղծագործություն, ծաղկի գույն ու թուփանք. «Սերը մեր մարմնին մեջ կը կատարէ մեծագույն ստեղծագործութիւնը, հոգին, որ Աստուծոյ տիրապետութեան սահմանին մէջ կ'իյնայ, այդ հոգին մէջ Աստուած ինքզինք է որ կը տեսնէ:

Սերը միայն անձնական երբեք սեր չէ, շատ է կարճատեւ եւ մահկանացու» (238):

Սերը մահկանացուին օգնում է անցնել հավիտենականության սահմանը, ուր Աստված է: Դարեր առաջ Դանթեն իր նշանավոր պոեմն ավարտել է այսպես՝

...Սերն, որ շարժում է արևն ու այլ աստղեր:

(Դրախտ, ԼԳ, 145):

«Աղօթարանի» հեղինակը պատրաստ է ստորագրել այդ բառերի տակ:

Տիեզերքի և իր գոյության գաղտնիքները պեղող մարդը կամաց-կամաց հայտնաբերում է հոգու՝ օվկիանոսի պես անեզր լռությունը, որ «աստուածային սահմաններում մէջ է» (224): «Ամեն մէկ ստեղծագործութիւն նուաճում մըն է լռութեան ու երկնքին» (225), և մարդն ստեղծագործելու պահին հաստատում է գոյության իր իրավունքը: Մարդու հոգում ապրում է տիեզերագաց մեծ լռություն, որից նա առանձին ակնթարթներ է իմաստավորում: Անկատար մարդն ի գորու չէ լսելու, ըմբռնելու իր «հոգեկան լռութեան, հաղորդակցելու համար Քեզի հետ, Տէր» (224):

«Մենք կը տեսնենք հարսի մը պէս պճնուած ծառը միայն, որուն արմատը հողին մէջ է եւ լռութեան: Ու մենք չենք զգար ցաւը պտկումին ու կտտանքը՝ հողին:

Ծովաճալի մը թռիչքէն աւելի չէ, երբ բանաստեղծը ճախրանքը կունենա լռութիւնը նուաճելու, մօտենալու, նմանելու արշալոյսին, որ կը բացուի անսահման լռութիւնով ու կը տարածուի բոլորին, բոլորին վրայ օրհնութեան մը պէս եւ որուն ծիսական գոյներուն մէջ կայ, Տէր, Քու իմաստութիւնը չա-

փական» (224),- Համաստեղն այսպէս է ներկայացնում մարդու՝ աշխարհը գիտակցելու ջանքերը:

Հավատավոր մարդու համար մահն էլ է հաստատում Տիրոջ գոյությունը. մարդը «մարմնի ու զգայարանքներուն տաճար» է, ուր ապրում է Տերը: Հրաժեշտի պահին ավերակ կդառնա մարդու՝ «իր հոգին, իր զգայարանքներուն ճարտարապետութիւնով» կառուցված տաճարը. «Ես կը տխրիմ, Տէր, երբ գանկի մը ահաւոր պարապութեան մասին կը մտածեմ, կը մտածեմ աւերակին եւ ոչինչին ...

Բայց ինչո՞ւ այդ տխրութիւնը, Տէր: Չէ՞ որ Դուն, նման ահաւոր ոչինչէն ստեղծեցիր այսքան գեղեցկութիւն ու կեանքն ըրիր այսքան գեղեցիկ...» (220):

Կյանքի հավերժական հոլովույթի մէջ չկա վերջ ու վախճանի տխրություն, քանի որ մարդն անբաժան է արարչից: Եթե տիեզերքում գոյություն ունեցող ամեն ինչ Տիրոջից է և իմաստավորվում է նրա գոյությամբ, ուրեմն՝ զգայարանների միջոցով ստացված հույզերը, գիտելիքները, դրանցից ծնված մտքերը՝ անկախ դրանց բազմազանությունից, Աստուծոյ գոյության փաստարկ են՝ դրանով իսկ գոյության իրավունք ունեցող: Հույզերը շատ բազմազան են, գիտելիքները հաճախ կտրուկ են մարդուն Աստուծոյ, միտքը թակում է տիեզերքի գաղտնիքների դռները, բայց ամենակարևորն այդ հույզերի, գիտելիքների արմատն է, որից ծնվում և որին հանգում են դրանք: Սա Համաստեղի աշխարհընկալման, հավատի հիմքն է: Կյանքն առաջին հերթին վայելքի, ուրախության ակունք է, և Համաստեղը չի վախենում «վերջաւոր լինելուց», որովհետև չի երկյուղում «գոյութիւն ունենալուց»:

Երբ մարդը իրենից դուրս փնտրեց Տիրոջը, աշխարհը նրան ներկայացավ կորուստի, ցավի, ցանքած աղբյուրի, տոչորող արևի տեսքով: Անվերջ ու անպտուղ են մարդու՝ իրենից դուրս Աստուծոյ որոնումները. «Անոնք Քեզ փնտռեցին եւ չգտան, Տէր,

որովհետեւ իրենց մարմնէն ու զգայարաններէն դուրս փնտռեցին իրենց Աստուածը ու մարմինը ձգեցին մեղքերու մէջ անօգնական: Անոնք, իրենց հոգիներէն ու երազներէն պարպուած, աղօթեցին, տոչորեցան, ցամքեցան աղբիւրի մը պէս ու պուտ մը ջուր աղերսեցին: Անոնք մարեցին արեւն իրենց մարմինէն ու կտոր մը շող աղերսեցին:

Անոնք չտեսան արեւը, որ իրենց մարմին մէջ էր. իրենց հոգիին մէջ էր պարտեզը գեղեցիկ ու կարկաչը ջուրերուն:

Ու անոնք միշտ Քեզ փնտռեցին, Տէր...» (221):

Աստծու և բնության, կենդանի էակների կապը ներդաշնակ է ու գեղեցիկ, գոյավորված է հակասությամբ. ծաղիկներն ու միջատները, թռչուններն ու «երկու բաժակ միւռն լեցուն» աչքերով եղնիկներն անտեսանելի կապերով կապված են Տիրոջը, վայելում են նրա մշտական հոգատարությունն ու ապավինում են նրա գթասրտությանը: Մարդը հաճախ խախտում է այդ ներդաշնակությունը: Որսորդի սպանած եղնիկի աչքերում «ներողամիտ շողումներ կային, որ կը խօսէին կարծես.

- Դուն պիտի չսպաննէիր, եթէ, եթէ գիտնայիր թէ ինչքան գեղեցիկ է նաեւ եղնիկի մը կեանքը» (223):

«Աղօթարանի» հեղինակն անհատապաշտ չէ, բայց հանրությունից դուրս է այնքանով, որքանով հնարավոր է խոսել մարդկության անունից, երբ խոսքը մարդու ներաշխարհի մասին է: Նա չի պարտադրում իր ճանաչած կանոններն ու սկզբունքները, պարզապէս ներկայացնում է սեփական կենսափորձով ձեռք բերածը, որ երբեմն հակասական է, իրարամերժ, բայց միշտ անկեղծ է ու հուզիչ: Միայն սեփական անձը սիրելու իմաստության շնորհիվ կարելի է ըմբռնել Տիրոջը: «Տո՛ւր ինձ, Տէ՛ր, իմաստութիւնը, որ սիրեմ իմ անձը: Երբ իմ անձը սիրելու կատարելութիւնն ունենամ, այն ատեն պիտի սիրեմ իմ դրացին ու հեռաւո-

րը: Անոնք միայն վիշտ կը պատճառեն եւ վերք կու տան, երբ իմաստութիւնը չունին իրենց անձը ըմբռնելու: Եթէ ես կը կսկծամ իմ եղունգի ցաւին համար եւ անքուն գիշերներ կանցնեմ, ինչպէ՞ս կրնամ ցաւ ու վերք պատճառել իմ նմանին:

Տո՛ւր ինձ իմաստութիւնը, Տէ՛ր, որ մտերմանամ իմ եսին հետ, սիրեմ իմ անձը:

Այն ատեն ոչ միայն պիտի կրնամ ըմբռնել իմ դրացին եւ հեռաւորը, այլ պիտի կրնամ ըմբռնել Քեզ, Տէ՛ր» (226), - Համաստեղն այսպէս է սահմանում ինքնաճանաչողությունը:

Հավատից անբաժան է կասկածը, իսկ Աստծու՝ հողեղեն մարդու համար սահմանած աստվածային վարքի չափանիշները դժվար իրագործելի են: Սաղմոսերգու Դավթի օրինակով Համաստեղը խնդրում է. «Եւ դատաստանի մի մտիր քո ծառայի հետ. որովհետեւ ոչ մէկ կենդանի չի արդարանալ քո առաջին» (Սաղմոս, 734 Գ 2):

Մարմնական ցանկություններն ու հոգսաշատ կենցաղը զորեղ են ու զորավոր, և մարդը հաճախ ստիպված է ապրել մարմնի ու իրականության օրենքներով: Քիչ-քիչ կերպարանք է առնում նաև երկմտանքը, որ հանճարեղ Պ.Դուրյանը ձևակերպել է այսպէս.

Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ ...»:

Ինչքան բնական է մարդ արարածի գրեթե բնածին հավատն առ Արարիչ, նույնքան էլ հիմնավորված է մարմնեղեն արարածի երկմտանքը, որ ծնվելուն պէս հերքվում է, ավելի ճիշտ, ինքնաժխտվում, քանզի «Տէրը լսում է, երբոր կանչում են նորան» (Ավետարան, 642, Դ 3): Անգամ մահն է ժխտվում, «որովհետեւ մահի մէջ քեզ յիշել չ'կայ. գերեզմանումը ո՞վ կ'փառաւորէ քեզ» (Ավետարան, 643, Զ, 5):

Կա հույսը, որ Աստված մարդուն կփրկի մեղքերից, անգամ նրա ծածուկ սխալներից, քանզի «զօրաւոր է նորա գութը իրենից վախեցողների վերայ» (Սաղմոս, 69:11): Մարդու հույսը, հավատը հենվում են Աստծու

հայրական գթասրտության, արդարության վրա. «Որովհետեւ նա գիտե մեր կազմուածքը, յիշում է, որ հող ենք մենք» (Սաղմոս, 69:14): Աստծու ստեղծագործությունը կատարեալ է. «Ու դուն բաժնուած ես, Տէ՛ր, այդ բոլորին մէջ, բաժնուած ես բարի ու արեւոտ ժպիտի մը պէս, բաժնուած ես նոր ծածած արտին վրայ մաղուող բարակ անձրեւի մը պէս: Ահա թէ ինչու, այնքան կատարեալ է Քու ստեղծագործութիւնը, Տէ՛ր, ու մենք միայն Քու շունչը կը զգանք առանց կերպարանքդ տեսնելու» (229): Աստծուն որոնող մարդն անցավ հազարավոր ճամփաներ, բայց նրան գտավ իր հոգու մէջ. «Մենք Քու ոտքերուն դրոշմները մեր հոգիներուն մէջ փնտռեցինք: Հոն է որ մենք կը լսենք սրինգի երաժշտութիւնը պանին» (229):

Երկրորդ է, Համաստեղի կրոնագագաղույթունն առաջին հայացքից շփման եզրեր ունի պանթեիզմի հետ, բայց նա չի նույնացնում Աստված ու բնություն, այլ փորձում է աստվածային էության առանձին տարրեր տեսնել, ճանաչել կենդանի ու անկենդան բնության մէջ՝ որպէս Աստծու գոյության հաստատում, ապացույց: Պակաս կարևոր նշանակություն չունի մի այլ հանգամանք ևս. Համաստեղի՝ բնության գովքի, բնապատկերների ու բնանկարի գույների անբաժան մասն է հայրենի բնաշխարհի կարոտը: «Աղօթարանի» բնությունն իրական է՝ մարդկային բիրտ օրենքներից վեր գործող աստվածային կամքով վերագրած (թող որ առայժմ միայն երագում), կարոտով շաղախված: Մարդու համար էականը Աստծու արարած աշխարհն ու բնությունն են, իսկ Համաստեղի հոգու խորքում ծխում էր կորցրած բնաշխարհի ու Հայաստան երկրի Կարոտը: Երկիր, որի դռները փակ էին գրողի առջև:

Մարդն այնքան իմաստուն պիտի լինի, որ իր «կեանքի ծաղկոտ ու տատասկոտ ճամբաներուն վրայ» զգա Աստծու գոյությունն իր կողքին: Այնինչ. «Ան ինձի հետ քալեց հազար հազար ճամբաներէն, իմ ձեռ-

քէն բռնած ու ես չիմացայ» (229): Հին ու իմաստուն մի գրույց լրացնում է այս պատկերը. մարդը երկնքից նայում է իր կյանքի ուղուն, տեսնում լայն ճանապարհներին իրեն ուղեկցող Աստծու ոտնահետքերը, իսկ նեղ կածաններում՝ միայն մեկի: Ու նա Արարչին մեղադրում է, որ դժվար պահերին իրեն լքել է, այնինչ իրականում Աստված մարդուն այդ նեղ կածաններով տարել էր գրկած:

Հավիտենականի խնդրությամբ ապրելու միակ միջոցը ինքնաճանաչումն է, որ Համաստեղը ձևակերպում է այսպէս. «Աստուած բաժնուած է թէ՛ անշունչին եւ թէ՛ շնչաւորին մէջ:

Աստուած բաժնուած է նաեւ իմ մէջ» (229-230):

Եթե մարդը հասկանա իր «հոգիին բարբառը», արժանի կլինի Աստծու հետ խոսելու պատվին: Սա այն գերխնդիրն է, որին մարդկությունը հետամուտ է վաղնջական անցյալից: Աշխարհը բացատրելու համար մարդն առաջին հերթին պետք է իրեն ճանաչի, իսկ ինքնաճանաչողության ճանապարհն անցնում է իր նմանին ճանաչելու բավիղներով: Անհատի սերն առ Աստված դրսևորվում է առաջին հերթին որպէս սեր մարդու նկատմամբ: Անվերջանալի է մարդու ինքնաճանաչողության, այլ խոսքով, կատարյալի ձգտումը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ Աստծուն իր ներսում բացահայտելու եղանակ: Ինքնաճանաչողության ճամփան անխուսափելիորեն տանում է դեպի երկինք, օգնում երկրի վրա ապրել տիրոջ, արարողի, մի բառով՝ մարդու լիարժեք կյանքով: Ինքնաճանաչողության ճամփան բաժանում է մարդկանց. «Երկշտին համար ապրիլը ճամբայ մըն է միայն տատասկոտ, որ զինք գերեզման կը տանի, իսկ անվախին համար կեանքը այն ճամբան է, ուր Աստծոյ ոտքին հետքերը կան ու զինք կատարելութեան կառաջնորդէ» (232): Վախկոտի համար կյանքում վայելք, ուրախություն չկա. նրան երբեք չի լքում մահվան սարսափը:

«Երկնչողը անկատար է» (231), - գրում է Համաստեղը և մեկնաբանում. «Երկչոտին Աստուածը դաժան ու շանթահար Եհովան է, որովհետեւ երկչոտը թէ՛ ստրուկ է եւ թէ՛ բռնակալ: Բռնակալը աւելի երկչոտ է: Ան աւելի շատ ստրուկէն կը վախճայ» (233): Համաստեղն առանձնացնում է Եհովա և Քրիստոս. առաջինը վրիժառու է, բարկացկոտ, երկրորդը՝ համակ մարդասիրություն, ներողամտություն: Քրիստոնեության մեջ գրողը փառաբանում է համատիեզերական բարությունը, մարդուն երկնքի հետ կապող արարման ոգին:

Մարդու ազատությունը ծնվում է հոգու և հոգևոր աշխարհի անսահմանությունից: Հավատը չի հանդուրժում ոչ մի հարկադրանք, որովհետև հոգևոր ազատությունը ծագում է Սիրուց: «Աստուած ողջերուն հետ է միայն, որովհետեւ Ան կեանք է ու սէր» (233), - սա է անվախ (այլ խոսքով՝ հավատալի) մարդու հավատի ակունքը:

«Եղիր կատարեալ, ինչպէս ինքը Աստուածն է, ու քալէ իմաստուն ժպիտով կեանքի ամայի ճամբաներէն: Այդ ճամբաները քեզ Աստծոյ կը տանին:

Երանի՜ անոր, որ չի երկնչիր...» (233), - ահա մարդու կյանքի նպատակը:

Աստված մարդու հոգում վառեց մանկան ժպիտից, կնոջ մարմնից, արևից, աստղերից, խղճից ու արցունքից ծնված շողմ իմաստության: Մարդն ազատագրվեց չարից, նրա երազները ներկվեցին ծիածանի, ծաղիկների, թիթեռների ու արևի գույներով: Մարդը լսեց հրեշտակների թևաբախումները: Համաստեղն այդ թևաբախումը իր հոգու, տան ու ճամփաների վրա լսելու շնորհն է աղերսում, որ չենթարկվի մինչև գերեզման եղկելի գոյություն քարշ տալու, ատելությանը, դիվային քրքիջներ լսելով ապրելու հարկադրանքին: Երանելի է նա, ով գիտակցում ու վայելում է իր գոյությունը երկրի վրա՝ որպես «այնքան իրական եւ այնքան կատարեալ» Աստծու կերպարանը:

Գոյության անմեկնելի գաղտնիքներից է

Սերը, որ «Աստծոյ շունչն է» մարդու մեջ: Սիրուց, որ արարման, ստեղծագործության հրաշքի գաղտնիքն է, սկսվում է հավերժությունը, քանզի միայն սիրով կարելի է հասկանալ ուրիշի վիշտն ու կարիքը, միայն սիրո միջոցով կարելի է կարեկցել, օգնել, ամոքել, սրբել արցունքները: Ինչպես կատարյալ է մայր դարձած կինը, որի գովերգումը բանաստեղծումի՝ հնուց ի վեր հուկովող թեմաներից է, նույնքան կատարյալ է սիրող մարդը, և ողբալի է աստվածային այդ շնորհից զրկվածի գոյավիճակը:

Ի վերջո, մարդու գրույցն Աստծու հետ ավարտվում է կատարյալ ներդաշնակությամբ. «Չեմ ըսեր, կամքդ թող ըլլայ, Տէր, որովհետեւ դուն իմ մէջ կամք ես ու իմացականութիւն: Դուն իմ մէջ ներդաշնակութիւն ես, Տէր:

Իմ գոյութեան մէջ է, Տէր, որ կամբողջանայ քու կերպարանքը ու իմ հաւատքին մէջ՝ քու յաւիտեանականութիւնը...

Ամէն» (242):

Համաստեղի աղոթագրքում պատկերները կենդանի են, բառը բույր ու համ ունի, շարժումը՝ սկիզբ ու ընթացք, կյանքն ու մահը փոխիմաստավորված և անբաժանելի են՝ որպես սկիզբ ու վերջ հարատև, հավերժական արարման, որի առանձին մի շրջանն է մարդու գոյությունը երկրի վրա: Տիեզերական սիրո համայնապատկերի վրա բարձրանում է «այնքան գեղեցիկ ու աստվածային» կյանքի համար աղոթող Մարդը, որի համար «պարտութիւնը մեր երազներուն» սքանչելի բնանկարին «ծել եւ խորհուրդ» հավելող գերեզմանոցի է նման:

«Աղօթարանի» քնարական հերոսը Համաստեղի գյուղի բնակիչներից մեկի՝ քաղաքակիրթ աշխարհում ապրող սերնդի մարդկանցից է, որը պեղում է պապերից ժառանգած հավատի արմատները: «Աղօթարանի» գործողությունները (եթե փորձենք քնարական պոեմում գործողություններ գտնել) կատարվում են գյուղում, որը գրողի առաջին գրքում անուն չունի (ավելի

Ճիշտ՝ հավաքական անուն ունի՝ Գյուղ), «Սպիտակ ձիաւորը» վեպում Բերդակ կամ Վարդաձոր է կոչվում, իսկ «Այծետոմար» երգիծական պոեմում՝ Չոր: Համաստեղի հերոսն ապրում է (ավելի ճիշտ, գոյատևում) քաղաքում, բայց անհաղորդ է այդ միջավայրին, չի ուզում ու չի կարող ապրել նրա օրենքներով: Մի խոսքով, գյուղացի է արմատներով, կյանքն իմաստավորող երազից, հողից է քաղում կենսահյուսեր ու շնորհակալ է երկնքին, խոնարհվում է նրա առաջ՝ հաստատելով մարդու արարող տեսակի գոյության իրավունքը:

Համաստեղի Ես-ը անբաժանելի է Աստվածային լրիվությունից և Աստծու մեջ, այսինքն ինքն իր մեջ գտնում է կատարելությունը, լրիվությունը: Սա է հավատավոր մարդու՝ անվերջավորի մեջ իր վերջավոր գոյությունը հաստատելու ձևը, այդ գոյության երկյուղը հաղթահարելու միջոցը: Չկա երկյուղ, քանզի կա Աստված՝ մարդու անմահության, անվերջության ու ազատ ոգու մարմնավորումը: Կա Աստված, և չքանում են չարը, մահը, մեղքն ու հանցանքը. տիեզերքն ապրում ու շնչում է աստվածային սիրով: Համաստեղի պոեմում Աստված որոշարկված չէ, որովհետև իրական աշխարհի և մարդու ներաշխարհի զուգորդումն է, իսկ այդ աշխարհները բազմազան են, գունագեղ, նույնիսկ երբեմն իրարամերձ, որպես միասնականության՝ իրար լրացնող, իրարով պայմանավորված մասեր: Եվ եթե աստվածաբանությունը երբեմն բնորոշում են որպես մարդաբանություն, ուրեմն՝ գրողի աղոթքները և մարդուն ներկայացնելու փորձերը կարելի է դիտարկել որպես մարդու աստվածային էությանն ուղղված հուզառատ խոսք և Աստծու մարդկային էությունը ներկայացնելու փորձ: Ստացվում է այն տպավորությունը, թե «Աղօթարանում» «անորոշ և հակասական է Աստծու գոյության կերպարը և գոյությունն իսկ»⁷:

«Աղօթարանի» ստեղծագործական ակունքների մեջ կարևոր տեղ ունի նաև Հա-

մաստեղի տարիքը: Ինչպես ապացուցում են գրողի գրականությունն ու նամակագրությունը, նա գրական առաջին քայլերից փորձում էր հասկանալ երկինք-երկիր հոգևոր կապը՝ երբեք չբավարարվելով գտած պատասխանով: «Աղօթարանն» այդ անհանգիստ որոնումների ամփոփման ինքնատիպ ու հետաքրքիր փորձն է՝ արժեքավոր ոչ միայն որպես գրական փաստ, այլև գեղարվեստական, իմաստասիրական, ազգային հոգեբանությանն առնչվող մի շարք խնդիրների արծարծմամբ: Համաստեղը ներկայացնում է Հայի աշխարհը: Նա համոզված է՝ քրիստոնեությունն իր մարդասիրական էությամբ վաղուց է դարձել մեր ժողովրդի հոգևոր աշխարհի, մշակույթի հենքը:

«Աղօթարանը» Համաստեղի հոգու կենսագրությունն է՝ օրագրի անկեղծությամբ, անմիջականությամբ գրված: Նա մարդու առաջ բացում է երկինք տանող դռները ու համոզված է՝ աշխարհն Աստծու պատկերը կրող Մարդուն արժանի դարձնելու միակ ճանապարհը դա է: Մարդու՝ երկնքի հետ կապը խզված չէ, իսկ մարդկությունն ունի հայի ու հայ ժողովրդի՝ երկնքին անմնացորդ նվիրվածության օրինակը: Ուրեմն՝ ամեն ինչ դեռ կարելի է փոխել:

Քաղաքակրթության, տեխնիկայի վերջին նվաճումներով հարուստ ու հպարտ Արևմուտքը խորհրդանշում է հոգուց, հոգևորից հեռու կեցությունը՝ նյութական բարիքներով, ոգու բացակայությամբ: Այս ոգին ունի նաև հայի ազգային ավանդույթներով պայմանավորված գոյակցության յուրահատկությունը օտար աշխարհում: Հոգեկան երկվության այս պահը Հ.Թումանյանը ձևակերպել է այսպես.

Արևմուտքի ստրուկները մեքենայի ու ոսկու...

Դեպ Արևելքն աստվածային հայրենիքը իմ հոգու...

Համաստեղի կրոնազգացողության մեջ չկա մեղք, քրիստոնեության՝ նրա ներկա-

յացրած տարբերակում չկա դժոխքի վախ ու սարսափ:

Բոլոր հանելուկների լուծումը մեկն է՝ մահը:

Համաստեղը լուծումներ չի փնտրում, պարզապես ներկայացնում է մարդուն դեպի Մարդը (որ նույնն է, թե դեպի Աստված) տանող ճանապարհը՝ կրկին հավաստելով Մարդու՝ երկնային ծագումը: Ամենօրյա վազքի ու փնտրտուքի պայմաններում մարդը ժամանակ չունի «որևէ բան իմանալու համար», բայց «Ամենագլխավորն այն է, որ հասարակ աչքերով չես տեսնի»: Տեսնելու համար աչքեր չեն պետք. «Հարկավոր է սրտով փնտրել»⁸, - պնդում է գրքերից մեկի հերոսը:

«Աղօթարանը» Համաստեղի միակ ստեղծագործությունն է, որ արժանացել է «պաշտոնական մարմինների» ուշադրությանը՝ «Ամահիտ» գրական մրցանակի: Ս. Վրացյանը՝ այդ մրցանակի հանձնախմբի նախագահը, 1958թ. մայիսի 27-ին «Համագային» հայ մշակութային ընկերության անունից շնորհավորել է գրողին⁹, իսկ ավելի ուշ՝ 1959 թ. մայիսի 20-ին, գրել է «Էջմիածին» ամսագրում տպագրված գրախոսականի մասին. «Ինձ ուրախացնողը այն չէ միայն, որ ընդհանրապես շատ ճիշտ և համակրական գնահատութիւն է տրւած - Համաստեղի վերաբերմամբ երևանցիները այդ տեղեկութիւնները ունին- ինձ ուրախութիւն պատճառողը աւելի երևոյթն է. ուրեմն, այժմ Հայաստանում նման գրութիւններ կարող են լոյս տեսնել...»:

Հավելենք՝ «Էջմիածին» հանդեսում տպագրված գրախոսականը Համաստեղի կենդանության օրոք Խորհրդային Հայաստանում նրա ստեղծագործությանն անդրադառնալու եզակի փորձ է:

¹ Համաստեղ, Աղօթարան, 1957, Բեյրութ: Ստեղծագործությունը հարատարակել ենք «Համաստեղ. Սոռազված էջեր» գրքի Գ հատորում, Երևան, 2005: Մեջբերումները կատարվում են վերջին հրատարակությունից, էջերը նշվում են փակագծերում:

² Ալիգիերի Դանթե, Աստվածային կատակերգություն, Երևան, 1969, էջ 237: Ստեղծագործությունից հաջորդ մեջբերումները նշվում են բնագրում:

³ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան (աշխատասիրությամբ Պ. աչատրյանի և Ա. Ղազինյանի), Երևան, 1985, էջ 267: Նարեկից հաջորդ մեջբերումները նշվում են բնագրում:

⁴ Ա. Ղազինեան, Գրիգոր Նարեկացի. Բանաստեղծական արուեստը, Ամթիլիաս, 1995, էջ 83:

⁵ Նույն տեղում:

⁶ Պ. Դուրյան, Երկերի ժողովածու երկու հատորով, հատոր 1, Երևան, 1971, էջ 60:

⁷ «Էջմիածին», 1959, համար 3:

⁸ Ամնուան դը Սենտ Էքզյուպերի, Փոքրիկ իշխանը, Երևան, 1985, էջ 69:

⁹ Գրականության և արվեստի թանգարան, Համաստեղի ֆոնդ, համար 234:

HAMASTEGH: PRAYERBOOK

DOCTOR MARGARIT KHACHATRYAN

Summary

Hamastegh's "Prayerbook" is an original work both by genre and structure to the findings of which the research is dedicated.

ԵՎԱ ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

Քանադական գիտությունների թեկնածու

ՎԱՐԴԱՆ ՄԱՍԻԿՈՆՅԱՆԻ ԵՎ ՎԱՍԱԿ ՍՅՈՒՆԵՑՈՒ ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՂԻՇԵԻ ԵՎ ՓԱՐՊԵՑՈՒ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ եղել են անհատներ, որոնց անունն ու կատարած գործերը դարեր շարունակ հնչել են մարդկանց շուրթերից, փառաբանվել կամ նգովվել են սերունդների կողմից: Այդպիսի մշտափոփոխ անուններից են Վարդան Մամիկոնյանն ու Վասակ Սյունին, որոնց հոգեբանությունն ու արարքները մշտապես եղել են պատմաբանների ու գրականագետների ուսումնասիրության կենտրոնում:

Համազասպ Մամիկոնյանի որդի Վարդան Մամիկոնյանի անունը մեծագույն սիրով ու հարգանքով են հիշատակում մեր պատմագիրները, քանի որ նա՝ Սահակ Պարթևի թոռը, լինելով մեծ հայրենասեր և քաջահմուտ զորավար, ոչ մի վտանգի առաջ չի կանգնել և համարձակ գնացել է մարտիրոսվելու՝ դրանով իսկ հայոց պատմության ու պատմագեղարվեստական գրականության մեջ դառնալով ինքնատիպ բնավորություն և սրբացված կերպար: Իսկ ահա Վասակ Սյունին իր հակասականությամբ արժանացել է տարաբնույթ գնահատականների ու մեկնաբանությունների: Պատմաբաններից ոմանք նրան անվանել են մեծ դիվանագետ, հզոր քաղաքական գործիչ, խելացի ու խոհուն այր, որը քաղաքական հարցերը փորձում է լուծել խաղաղ միջոցներով, դիվանագիտորեն: Ոմանք, սակայն, գտնում են, որ Վասակ Սյունին արժանի է միայն դատապարտման, և պետք չէ նրան ինչ-ինչ արժանիքներ վերագրել: Բոլոր դեպքերում մատենագրության մեջ Վասակը ներկայացվել է ամենամռայլ գույներով և պահպանելով հանդերձ իր պատմականությունը՝ դարձել

է ինքնին հետաքրքիր և հատուկ ուշադրության արժանի մի կերպար:

Հինգերորդ դարի հայ պատմագրության մեջ Վարդան Մամիկոնյանն ու Վասակ Սյունին հանդես են գալիս հիմնականում Եղիշեի ու Ղազար Փարպեցու (երկրորդ դրվագ) երկերում, որոնց նմանությունը բանասիրության մեջ տարակարծությունների առիթ է տվել: Որոշ գրականագետներ (Ն. Ակինյան, Ն. Ադոնց, Բ. Կյուլեսեյան, Ռ. Թոմսոն և ուրիշներ) Եղիշեին համարել են վեցերորդ կամ յոթերորդ դարի պատմիչ: Սակայն գրականագետների ստվար մասը մերժում է այս կարծիքը՝ միանշանակ ընդունելով Եղիշեի՝ հինգերորդ դարի պատմիչ լինելը և Փարպեցու Պատմության հետ ուղղակիորեն որևէ առնչություն չունենալը, ընդհակառակը, Աբեղյանը գրում է. «Եթե մեջտեղում եղած լինեք արդեն Փարպեցու Պատմությունը, ապա այլևս կարիք չէր ունենալ Դավիթ երեց Մամիկոնյանը Եղիշեից խնդրելու գրել «Վասն Հայոց պատերազմին» (թեկուզ հետը նաև «Վասն Վարդանայ»): Ղազարի Պատմությունը բավարարություն կտար նրան և՛ պատմական, և՛ կրոնական տեսակետներով, այլև Մամիկոնյան Վարդանի գովաբանության նկատմամբ...»¹: Հետաքրքիր դիտարկում է անում նաև Մ. Ավդալբեգյանը. «Ղազարի Վասակը երբեք նյութ չէր կարող տալ դավաճանությունը մարմնավորող Եղիշեի Վասակի համար, մինչդեռ հակառակը՝ ազգուրաց դավաճանը կարող էր պատճառաբանվել, ինչպես որ է՝ Փարպեցու Պատմության մեջ: Վերլուծական մտքի արգասիք փարպեցիական Վասակը քաղաքական գործիչ էր իր նկրտումներով,

բայց ոչ սոսկ ազգուրաց դավաճան»²:

Մեր համոզմամբ ևս Փարպեցին ծանոթ է եղել Եղիշեի Պատմությանը. այն որոշակիորեն նրա համար ծառայել է իբրև սկզբնաղբյուր, որը և հանգեցրել է որոշակի նմանությունների: Ինչևէ, երկու պատմիչներն էլ այս կերպարներից յուրաքանչյուրի համար նախապես գծել են կաղապարներ՝ լավի և վատի, իդեալականի ու վատթարի, որն արդեն իսկ նախանշում է, որ նրանցից մեկը պիտի լավ գործեր կատարի, մյուսը՝ դատապարտման արժանի: Այս կաղապարները երբեմն խանգարում են հերոսների զուտ մարդկային անհատականության, բնավորության գծերի առավել լիարժեք բացահայտմանն ու դրսևորմանը:

Վարդանի կերպարի բացահայտումը Փարպեցին սկսում է Հազկերտի ուղարկած հայտնի նամակի պատմությունից, որտեղ Հազկերտի պահանջներին տրվում է մերժողական պատասխան: Ապա հայոց նախարարներին պատմիչը ներկայացնում է պարսից արքունիքում, ուր կատաղած Հազկերտի սպառնալից խոսքերին Վարդանը տալիս է արժանապատիվ պատասխան. «Թող թե օրէնս, զոր ընկալայ և ուսայ ի բերանոյ Աստուծոյ՝ վաճառել ընդ երկիւղի մարդոյ և սնտոի փառաց. քա՛ւ լիցի: Իմ պատասխանիք այդ են, յորում ցանկամ մեռանել, քան թէ կալ ուրացութեամբ առանց Աստուծոյ»³: Վարդանի այս խոսքերը բնութագրական են: Նա որքան էլ հաստատուն ու անվարան է իր տեսակետներում, նույնքան նրբանկատ ու հարգալից է մարդկանց նկատմամբ: Լինելով հայոց զորքի սպարապետ՝ որևէ մեկին չի պարտադրում իր սկզբունքները՝ թողնելով յուրաքանչյուրին ազատ մտածել և ինքնուրույն որոշումներ կայացնել: Վարդանը պատրաստ է իր ֆիզիկական ուժն ու զորությունը ծառայեցնել օտարի համար, բայց վաճառել հոգին՝ երբեք. սա է նրա հավատամքը: Այդ է պատճառը, որ Վիրքից, Աղվանքից ու Հայքից ժամանած բազմա-

թիվ նախարարներից միայն Վարդանն է առանց տատանվելու, ըմբոստ ու աներկյուղ պատասխան տալիս Հազկերտին:

Բավական մեծ ջանքեր են պահանջվում հայոց, վրաց, աղվանից մեծամեծներից՝ համոզելու Վարդանին ժամանակավորապես ընդունել կեղծ հավատափոխություն, մինչև որ կհասնեն իրենց աշխարհները և հակահարված կտան պարսիկներին: Հայոց հովվապետ Սահակ Պարթևի թող՝ Վարդանը, մինչև հոգու խորքը հավատում է Քրիստոսին, աստվածավախ է ու չի ընդունում այն միտքը, որ թեկուզ ժամանակավորապես կարող է ուրանալ Արարչին: Բայց երբ նրան հիշեցնում են Սուրբ գրքի որոշ առակներ, մասնավորապես Սուրբ Պողոսի խոսքերը, Վարդանը տեղի է տալիս և որոշում հանուն եկեղեցու, հայրենիքի ու ժողովրդի արտաքուստ ուրանալ: Նա հասկանում է, որ այդ պահին կորցնում է հոգին, դառնում յուրօրինակ Հուդա, սակայն միաժամանակ ըմբռնում է, որ պարտավոր է իր անձը զոհել հանուն սուրբ ուխտի, հազարավոր քրիստոնյաների, որոնց սպասում է դաժան ու արյունոտ ճակատագիր:

Հազկերտին հրաժեշտ տալիս, ի տարբերություն մյուս նախարարների, որոնք կեղծ զովասանքի խոսքեր են շռայլում թագավորին, Վարդանը ամենայն լրջությամբ խոստանում է արյաց թագավորին, որ «ջանամ, զի թէ ցայժմ գործեալ ինչ իցէ, և ոչ արժանի անուան կամ գովութեան՝ յայսմ հետէ հնարիմ ամենայն զօրութեամբ և ուժով, օգնականութեամբն Աստուծոյ, գործել գործ այնպիսի, զոր ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ և ի կայսեր դրանն և յայլ ազգս պատմեսցի համբաւն այն մինչև ցլաւիտեան»⁴:

Վերադառնալով Հայաստան՝ Վարդանը չի կարողանում շարունակել ամոթալի խաղը. խիստ մտահոգվում է, թե ինչպես պիտի բարձրացնի գլուխը, նայի ժողովրդի, առավելապես Մամիկոնյանների աչքե-

րին: Ուղղամիտ ու սկզբունքային Վարդանն իր շուրջն է հավաքում ընտանիքի անդամներին, բացատրում իրերի դրությունը՝ խոսքը հաստատելով սուրբ մարգարեների արտահայտած մտքերով: Իրենց հավատի մեջ անհողդողդ ու աներեր Մամիկոնյանները գերադասում են թողնել աշխարհիկ վայելքներն ու փառքը, ապաստանել հունաց իշխանության ներքո, որտեղ թեկուզ օտարական ու մուրացկան, բայց կարող են ամուր մնալ իրենց հավատին ու փրկել հոգիները: Վարդանի այս վճիռը խուճապի է մատնում հայոց մարզպանին ու նախարարներին: Նրանք հասկանում են, որ առանց Վարդանի առաջնորդության ի գործ չեն որևէ բան անելու: Վասակը բանագնացներ է ուղարկում Վարդանի մոտ՝ խնդրելով վերադառնալ: Ոստովանելով իրենց անգործությունը՝ պատգամավորները Վարդանին մեղադրում են եսասիրության, իր և հարազատների անձը փրկելու համար: Սպարապետը հասկանում է, թե քամին որ կողմից է փչում. Վասակը, օգտվելով Հայոց աշխարհում տիրող խառնիճադանջ վիճակից, իր պառակտիչ գործը գլուխ բերելու նպատակով զրպարտում է Վարդանին, վերջինիս փախուստը վերագրելով «սրի երկյուղին»: Վարդանը բանագնացներին հիշեցնում է, որ պատմության քառուղիներում հայրենիքի համար օրհասական պահերին Մամիկոնյանները միշտ էլ պայքարել, հավատարմությամբ ծառայել են թագավորին ու ժողովրդին՝ անտեսելով փառք ու պատիվ: Սպարապետը քողագերծում է նաև Վասակին ու նրա համախոհներին: Գիտակցելով երկրում ստեղծված քաոսն ու անկայունությունը՝ նա մի կողմ է թողնում անձնական վիրավորանքը, վերադառնում է հայոց զորաբանակ և որոշում առժամանակ սպասել: Վարդանը մեծագույն հաճությամբ «զիեղունն արեան անձինն ի վերայ շինութեան ուխտի եկեղեցւոյ մնչէր ըմբռնել»⁵, սակայն, որպես խորաթափանց ու լրջա-

խոհ այր, հետաձգում է ապստամբությունը, կանխում շտապողականություն ու անհամբերություն ցուցաբերող Վահան Ամատունուն (վերջինս Վասակի հետ անձնական թշնամություն ուներ և շտապում էր վրեժ լուծել): Լինելով բարոյական բարձր հատկանիշներով օժտված անհատ, բարեսիրտ ու գորովագութ մարդ՝ Վարդանը ներքուստ մտահոգվում է Պարսկաստանում պատանդ պահված վրաց բղջիխ Աշուշայի և Սյունյաց Վասակ իշխանի որդիների համար ու կշռադատում է իր յուրաքանչյուր քայլը:

Վարդանի պահվածքն ու խոսքը զարմանալիորեն բացակայում են Եղիշեի գրքում: Այս «բացթողումը» թերևս կարելի է բացատրել Եղիշեի զգացմունքայնությամբ. լուռ, հոգու խորքում նա ավելի շատ բաներ է քննում, բանաստեղծում, փիլիսոփայում, ներքին կռիվ մղում անհավատների դեմ, քան արձանագրում փաստերը: Վարդանին Եղիշեի Պատմության մեջ մենք տեսնում ենք ավելի ուշ, երբ առերես ուրացած նախարարները վերադառնում են Հայաստան ու ժամանակավորապես ապաստանում Անգղ գյուղաքաղաքում: Վարդանն իր շուրջն է հավաքում հայրենանվեր մարդկանց, նախապատրաստվում պաշտպանել հայրենի կրոնն ու հավատը: Եղիշեի գործի մեջ չկան նաև Փարպեցու նշած մանրամասները Պարսկաստանից վերադառնալուց հետո, նրա հոգեկան ապրումները: Փոխարենը Եղիշեն Վարդանին ներկայացնում է ձեռնարկած գործողությունների մեջ. չնայած հայոց զորաբանակը թվով քիչ էր ու զիջում էր պարսկական լավ սպառազինված բանակին, այդուհանդերձ, Աստծո ողորմության հույսը սրտում՝ Վարդանը իր զինվորիների հետ կռվում է պարսիկների դեմ, քանդում է ատրուշաններն ու զոհասեղանները, երկրից դուրս շարտում մոզերին: Վարդանը անողորմաբար ավերում է նաև Սյունյաց երկրի շատ գավառներ, սովի ու տանջան-

քի մատնում բնակչությանն ու զորքին: Վարդանի այս դաժան քայլերը պատճառաբանված էին: Որևէ մեկից օգնություն չստանալով՝ սպարապետը հույսը դնում է միայն սեփական ժողովրդի ուժի վրա և, որպես մարտավարություն, մեծ ճակատամարտից առաջ փորձում է կոտրել ու կասեցնել թիկունքից հարվածող դավադիր սուրը: Տեսնելով ուրացող Վասակի, նրան հարող մի քանի նախարարների դավաճանական քայլերն ու երկրում ստեղծված ներքին երկպառակությունը՝ Վարդանը, այնուամենայնիվ, չի հուսահատվում, նա հասկանում է, որ ժողովրդի համար ճակատագրական պահին ինքն ուղղակի բարոյական իրավունք չունի հուսալքվելու ու թևաթափ անելու իրեն հավատացող մարդկանց: Վարդանն արտաքուստ հանգիստ, սակայն ներքին լարվածությամբ Ավարայրի ճակատամարտից առաջ խոսքով դիմում է հայոց զինվորներին՝ թափանցելով յուրաքանչյուրի հոգու ու սրտի խորքերը, հասկանալով որ հայրենիքի համար օրհասական ժամին մարտադաշտ գնացող զինվորին անհրաժեշտ է քաջալերել, թևավորել, շունչ ու հոգի հաղորդել. «Արդ աղա՛չեն զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ. մա՛նաւանդ զի բազումք ի ձե՛նջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, և գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն... Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի գթիկունս դարձուցուք... Եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք»⁶:

«Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. գթերահաւատութիւն մեք ի մէնջ մերժեցաք, ընդ նմին և երկիւղն փախիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց»⁷, - շարունակում է Եղիշեն:

Բազմաթիվ պատերազմներում թրծված սպարապետը ոչինչ է համարում իր և զո-

րագնդի բազում հաղթանակները, քաջագործությունները, փառքն ու պարգևները՝ դրանք անվանելով «մարմնոյ պարծանք»: Այս պատերազմը, ըստ Վարդանի, բոլորովին այլ է. սա սրբազան կռիվ է, կռիվ ոչ թե մարմնի, այլ հոգու փրկության: Իր ոգեշունչ խոսքից հետո էլ Վարդանը առանձին առանձին քաջալերում ու սիրտ էր տալիս զինվորներին, հոգում նրանց բոլոր կարիքները, հատվածներ կարդում Սուրբ Գրքից, քաջարի մարդկանց օրինակներով ոգեշնչում նրանց:

Եղիշեն Վարդանի (նաև Ղևոնդի) ճառից հետո միտումնավոր ներկայացնում է նաև պարսիկ զորագլխի՝ զինվորներին հղված խոսքերը: Եթե առաջինը կոչ է անում պատերազմի դաշտ գնալ՝ հոգով զորացած, ու մտածել միայն աստվածային պարգևի մասին, ապա պարսիկ զորավարը իր զինվորներին հիշեցնում է արքունիքի խոստացած առատ պարգևները: Վարդանի ու Մուշկան Նիսալավուրտի խոսքերում ուրվագծվում են ոչ միայն զուտ ազգային մտածելակերպը, այլ նաև այս երկու անհատների, մասնավորապես՝ Վարդանի հոգեբանությունը: Ոչ մի դրվագում սպարապետը այնքան ամբողջական ու լիարժեք չի բացահայտվում, որքան իր խոսքի մեջ: Այնուհետև Եղիշեն, ինչպես նաև Փարպեցին, իրենց սիրելի հերոսին ներկայացնում են Տղմուտ գետի ափին տեղի ունեցող Ավարայրի ճակատամարտում, որտեղ նա ինքնամոռաց կռվում ու մահատակվում է, ինչպես վայել է քաջին: Վարդանը գնում է դեպի գիտակցված մահ, որը Եղիշեի համոզմամբ հավասարազոր է անմահության: Սպարապետի կորուստը սգում է ոչ միայն հայ ժողովուրդը, այլև թշնամին: Արյաց հազարապետ Միհրներսեսի խոսքերում նկատելի է ոչ միայն ափսոսանք, այլ նաև հարգանք ու ակնածանք Վարդանի նկատմամբ. «...Կորուսեք ձերով կախարդութեամբ զայնպիսի քաջ այր զՎարդան, զի յօգտակարութիւն էր Արեաց տեառն. և զմեծամեծ գործոց նո-

րա յիշումն առ Արեաց աշխարհին, զոր բազում զօրագլուխք և այլ Արիք յիշեն, ընդ որս նորա կռիւ եղեալ էր, այլ և զոր իւր իսկ աստուածանման տեառն իւրովք աչօք տեսեալ էր ի Մարվիռոտ՝ զնորա քաջասրտութիւնն՝ սակաւ մարդիկ են յԱրեաց աշխարհիս, որ կարեն ասել ըստ արժանի գովութեան յայրն և ի նորա արարած»⁸:

Այսպիսով՝ և՛ Եղիշէի, և՛ Փարպեցու երկերում Վարդան Մամիկոնյանը հանդես է գալիս որպէս իդէալական կերպար, գաղափարական հերոս, ինչպէս նաև անհատականություն՝ հարուստ ներաշխարհով, բնավորության գծերով, սկզբունքներով: Իհարկէ, Փարպեցու գրքում սպարապետը ավելի գործուն, շարժուն կերպար է, որ ներկայացվում է տարբեր փոխհարաբերությունների, հոգեկան տառապանքների ու մտորումների մեջ: Փարպեցին իր գնահատատականներով ու բնութագրումներով քայլ առ քայլ բացահայտում է նրա ներաշխարհն ու էությունը: Ժամանակի հեռավորությունը, որի ընթացքում դեպքերը նստվածք էին տվել, պատմիչին թույլ են տալիս առավել մանրամասն քննել Վարդանի վարքն ու բարքը, սրբացնել նրան, այնինչ Եղիշէն, լինելով դեպքերի ականատեսն ու գտնվելով դրանց անմիջական ազդեցության ներքո, խոսում է այն գետի պէս, որի ամբարտակը միանգամից բացելուց հետո հորձանք տված ջրի հետ տանում է այն ամենը, ինչ օրեր շարունակ կուտակվել ու դարձել է ջրի անբաժան մասը: Եղիշէի գործում կերպարները բևեռացված են: Այս բևեռացումը դառնում է զգացմունքային գնահատականների հիմք: Վարդանի անվան կողքին Եղիշէն օգտագործում է «քաջ», «կորովի», «մեծ առաքինի» և այլ մակդիրներ, իսկ Վասակին շարունակ «անօրեն», «ապստամբ», «ուրացյալ» է անվանում: Հակոտնյա զգացմունքների պոռթկումը ակնբախ է, իսկ Փարպեցու գնահատական-որոշիչները ավելի զուսպ են ու ժամանակի մեջ ամրագրված: Այսպէս՝ Վասակի մասին խոսելիս, անգամ նշավակելիս պատմիչը նրան անվանում է «հայոց մարգպան», «Սյունյաց իշխան», իսկ Վարդանի դեպքում Փարպեցին շատ է օգտագործում «երևելի», «սուրբ» բառերը, որ նշանակում է, թէ Ավարայրի ճակատամարտից հետո ժամանակն ու ժողովուրդը արդեն սրբացրել էին Վարդանին:

Վարդանին հակադրվում է Վասակ Սյունին, որը բարդ ու հակասական կերպար է. նրա էությունն ու արարքները գրեթէ անհանար է ամբողջապէս հասկանալ: Ինչէն, դեռևս երիտասարդ՝ նրան հանդիպում ենք որենցուցու գործի մեջ, որտեղ պատմիչը նշում է, որ նա օժանդակում և օգնում է Մեսրոպ Մաշտոցին՝ հայոց գրերը ստեղծելու գործում: Փաստը հիշատակվում է նաև Կորյունի կողմից:

Վասակը, սակայն, իբրև ամբողջական կերպար, հանդես է գալիս Եղիշէի ու Փարպեցու գործերում, որոնցում նա արդեն Հայոց աշխարհի մարգպանն է: Իսկ այդ պաշտոնը հենց այնպէս հնարավոր չէ ստանալ, ուստի կարելի է ենթադրել, որ Վասակը, այնուամենայնիվ, աչքի է ընկել իր քաղաքական եռանդուն գործունեությամբ:

Որպէս հայոց մարգպան՝ Վասակը գլխավորում է արքունիք մեկնող հայ մախարարներին: Եղիշէն առանց մասնավորելու հիշեցնում է Հագկերտին տված նրանց պատասխանները, որոնցում երևում են մախարարների անկուտրում հավատը և ընդդիմությունը մագդեզանց կրոնին: Մինչև Անգղ գյուղաքաղաք հասնելը ընթերցողը չի էլ ենթադրում, որ Վասակ Սյունին իսկապէս ընդունել է զրադաշտական կրոնը և հետին նպատակներ ունի: Մոգպետ-Վասակ Սյունի երկխոսության ընթացքում բացահայտվում է Վասակի բուն էությունը. նա համոզում է մոգպետին վստահել ու հավատալ իրեն՝ խոստանալով գլուխ բերել երկպառակության ամոթալի գործը: Մոգպետի խոսքերից երևում է, որ

նա չի կարողանում ըմբռնել մարգպանի բռնած դիրքը, կասկածամտությամբ է վերաբերվում նրա հավատափոխությանը և հորդորում է Վասակին իրականությունը պատմել Հազկերտին ու չշարունակել բռնի հավատափոխության գործը: Այստեղ ի հայտ է գալիս Վասակի իրական դեմքը. «Սակաւիկ մի երկայնամիտ լեր և զխորհուրդս քո արգել ի բազմաց. բայց արանց՝ որոց ես ասեմ՝ նոցա յայտնեա, մինչև ես ինձ ոյժ ժողովեցից՝ զօր ի թիկունս ածելոյ, և զուխտ եկեղեցւոյդ թերևս կարացից երկփեղկել»⁹: Չար գործերը հաջորդում են իրար. նա ոմանց կաշառում է, ոմանց՝ հորդորում, ոմանց էլ ուղղակի սպառնում է, վախեցնում, ստիպում երկրպագել արեգակին: Բայց երբ սուրբ ուխտի կողմից ձերբակալվում է, Վասակը զղջման ու ապաշխարանքի խոսքերով ընկնում է հոգևորականների ոտքերը, աղաչում, խնդրում ներել իրեն: Ստանալով հայրենակիցների ներումը՝ Վասակը, սակայն, չի փոխվում, շարունակում է սկսած գործը, իր շուրջն է հավաքում հավատի մեջ անհաստատ նախարարներին, ծածուկ լուր է ուղարկում պարսիկ Սեբուխտին, ներքին հպարտությամբ ու ինքնագոհ տոնով հայտնում իր արածի մասին: Ինչպես նկատում է Եղիշեն՝ «...Առեալ աւերեալ և հրծիգ արարեալ, և զամենեցուն ձեր զընտանիս փախուցեալ մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ: Ձեռն արկեալ և ի սուրբ եկեղեցիսն, տարեալ և զսուրբ սպաս եկեղեցւոյն սեղանոյ...»¹⁰: Ի դեպ, Եղիշեի պատմությունն ընթերցելիս նկատում ենք, որ պատմիչը ավելի շատ խոսում է Վասակի, նրա գործերի ու փոխհարաբերությունների, քան իր սիրելի հերոսի՝ Վարդանի մասին: Իհարկե, սա ևս կերպավորման յուրօրինակ սկզբունք է. մանրամասն պատկերելով Վասակի մութ ու տմարդի արարքները՝ Եղիշեն ընդգծում է իր իդեալ հերոսի վեհությունը: «Եւ այսպէս շարժեաց և շփոթեաց զաշխարհն Հայոց, մինչև զբազում

եղբարս հարազատս քակեաց ի միմեանց, ոչ եթող միաբան զհայր և զորդի, և ի մեջ խաղաղութեան արար խռովութիւն»¹¹, -գրում է Եղիշեն՝ շարունակելով պատմել Վասակի ամբարիշտ գործերի մասին: Արարքները դառնում են հերոսի բացահայտման հիմնական միջոց: Նա պարսիկներին անամոթաբար սովորեցնում էր, թե ինչպես պետք է հաղթել հայերին, Միհրներսեհին հաղորդում փաստերը հայոց գործի թվաքանակի, սպառազինության, անգամ քաջության աստիճանի ու ռազմավարության մասին: Վասակի տմարդի ու դավաճան գործերը արտաքուստ ընդունվում, սակայն ներքուստ դատապարտվում էին ոչ միայն պարսիկ մեծամեծների, այլև Հազկերտի կողմից: Ի վերջո բազմաթիվ չարագործություններից հետո գալիս է հատուցման պահը: Վասակը հայ գերյալների հետ կանչվում է արքունիք, որտեղ պատռվում է դավաճանի դիմակը, մեջտեղ են բերվում նրա նողկալի գործերի փատարկ-ապացույցները, նամակ-հրամանները: Վասակի էությունը բացահայտում են նաև Ատոմ Գնունին, Մուշկան-Նիսալավուրտը, մոգերը, ինչպես նաև նրա համախոհներից շատերը, ովքեր բոլոր անհաջողությունների, դժբախտությունների, չարիքների սկզբնապատճառը համարում էին Վասակին: Նա, մի վերջին հույս փայփայելով, զուգված-զարդարված, պարսից արքայից նվեր ստացած հանդերձանքով ներկայանում է արքունիք: Եղիշեն Վասակի արտաքին փայլին հակադրում է ներքին գորշությունն ու խավարը՝ ընդգծելով այն միտքը, որ Վասակը հոգին, հայրենիքն ու ժողովրդին վաճառել է՝ փոխարենն ստանալով շքեղ հանդերձներ, փայլվիլում մարգարիտներ, սամույրից մուշտակ և այլ նվերներ: Արքունի սենեկապանը բոլորի առջև ներկացնում է Վասակին, քողազերծում նրա էությունը, կատարած գործերը, անմարդկային քայլերը՝ մատնանշելով վերջինիս արարքներից վատթարը. նա

Սյունյաց աշխարհի իշխանությանը տիրացել էր բռնի ուժով՝ նենգաբար սպանելով հարազատ հորեղբորը՝ Վաղինակին:

Վասակ Սյունու կյանքը պատմության ու պատմագրության մեջ ավարտվում է անփառունակ ու ողբերգական կործանումով: «Ձեռաւ փոր նորա, և հարան և տորեցան գոգք նորա, և քանեալ մզեցաւ թանձրամսութիւն նորա: Եռացին որդունք ընդ աչս նորա, և ի վայր տորեցին ընդ ռնգունս նորա. խցան լսելիք նորա, և ծակտեցան չարաչար շրթունք նորա. լուծան ջիւք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա: Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա»¹², - գրում է եղիշեն:

Փարպեցու Պատմության մեջ իրերի դրությունը փոքր-ինչ այլ կերպ է ներկայացված: Նա պատմում է Սյունյաց իշխանի փեսա Վարազվաղանի մասին, նշում նրա դիվային էությունը: Պատմիչը կարծում է, որ Հայոց աշխարհի կորստյան պատճառը նախ և առաջ Վարազվաղանն էր, որը, գեհեցին հանձնելով հոգին, ձգտում էր իրագործել իր նպատակները, միաժամանակ վրեժ լուծել աներոջից՝ Հայոց աշխարհի մարզպան Վասակից: Վերջինիս տեսնում ենք Պարսկաստանից վերադառնալուց հետո, երբ նախարարները նրան հայտնում են Վարդան Մամիկոնյանի՝ երկրից հեռանալու մասին լուրը: Վասակն անմիջապես ձեռնամուխ է լինում սպարապետին հետ կանչելու գործին՝ նրա մոտ ուղարկելով մի քանի նախարարների և իր մատանիով կնքված նամակները: Հարց է ծագում. եթե Վասակն իրապես ուրացել էր, այդ դեպքում ինչու՞ է հետ կանչում Վարդան Մամիկոնյանին. չէ՞ որ նա, իր նպատակներն իրականացնելու համար, կարող էր օգտագործել Վարդանի հեռանալու հանգամանքը, հեշտությամբ ի կատար ածել արքունիքի հրամանները: Այնինչ Սյունին գիտակցաբար հետ է կանչում մի մարդու, որի ու-

ժի, զորության, հեղինակության ու հնարավորությունների վրա չէր կասկածում ու հաստատ գիտեր, թե ինչ կարելի է սպասել նրանից: Ուրեմն, կարելի է ենթադրել, որ Վասակ Սյունին մինչև Վարդանի վերադարձը չէր հեռացել միաբանության ուխտից. ինչ-որ պատճառ նրան մղում է դավաճանական քայլի: Այս հարցի պատասխանները քիչ չեն, որոնցից առաջինը տալիս է հայոց սպարապետը: որից Վասակին վստահելու մասին՝ Վարդանը զգում է, որ «կամ չհաւանեալ ապստամբել իշխանն Սիւնեաց Վասակ՝ մեռանի յիւրոցն ընկերաց անարժան մահուամբ, կամ թէ հաւանեալ առ վտանգին ապստամբել՝ արգելեալ անդրէն ի դրանն որդիքն երկոքեան չարաչար կենօք վտանգեալ պատահեն մահու...»¹³:

Ուրեմն՝ Վասակը կանգնած է երկընտրանքի առաջ. զոհել կամ որդիներին, կամ հայրենիքը: Եղիշեն զարմանալիորեն լռում է Վասակի որդիների՝ Բաբիկի ու Արտներսեհի՝ Պարսից աշխարհում պատանդ մնալու փաստի մասին: Նրա և մասամբ էլ Փարպեցու կարծիքով Վասակը հետապնդում է այլ նպատակ՝ արժանանալ փառքի ու պատվի, լինել հայոց երկրի մեհիշխան: Պատմիչների այս տեսակետը ընդունում են ուսումնասիրողներից շատերը, օրինակ՝ Աշոտ Մկրտչյանը, որը համամիտ է Լեոյի կարծիքին. «Հայաստանի մարզպանից մինչև Հայաստանի թագավորությունը մի քայլ էր մնում և Վասակի պես մի բնավորություն չէր կարող արհամարհել այդ հնարավորությունը: Հայ երկիրը նոր էր կորցրել իր թագը և նրա վրա շատ շատերն էին աչք դրած, թե իրենք կլինեն հայ Արշակունիների ժառանգները... Անբնական բան չկար, որ թագավորելու տենչը մեծ էր Վասակ Սյունեցու մեջ: Նրա բնավորությունը, նրա ամբողջ անցյալը միանգամայն հասկանալի են դարձնում նրա մեջ վառված իշխանապետական ձգտումը, որի համար նա կարող էր նույնիսկ դավադրու-

թյուններ սարքել»¹⁴: Իսկ ինչպիսին է եղել նրա անցյալը: Դեռևս պատանի հասակից պատանդ է եղել Պարսկաստանում, որ նշանակում է, թե նա մեծացել է պարսիկների շրջապատում և ի տարբերություն Վարդանի՝ չէր կարող նույնպիսի ինքնամոռաց սեր ու նվիրում ունենալ քրիստոնեության նկատմամբ:

«Պատմութիւնը ցույց է տալիս, որ Վասակի դաւաճանութիւնը հետեւանք է ոչ այնքան սնափառութեան, որքան հայրենիքի անկախութեան համար սխալ ուղու ընտրութեան: Այս ճակատագրական սխալի պատճառով է, որ նա իր ժողովրդի յիշողութեան մէջ մնաց իբրեւ դաւաճանութեան խորհրդանիշ: Դիւանագիտական փուլ խաղերից զերծ Վարդանի ուղղամտութիւնը բոլոր դէպքերում քննութիւն բռնեց»¹⁵, նշում է գրականագետ Զ. Ավետիսյանը: Իսկապես, Փարպեցու գործում Վասակի քայլերը բխում են անհատական հատկանիշներից և ստեղծված իրավիճակից: Դիվանագիտական ոչ ճիշտ հաշվարկները, որդիների անորոշ ճակատագիրը, փառասիրությունն ու իշխանամոլությունը, հոգու չարությունը միախառնվելով հեռացնում են նրան և՛ հայրական հավատքից, և՛ զինակիցներից, և՛ ժողովրդից: Ուճապի մեջ ընկած Վասակը երկակի խաղ է տանում. երդվելով Սուրբ Ավետարանի վրա՝ նա միաժամանակ դավաճանում է տված երդմանը ու դառնում չարի, սատանայի գործիք: Ամեն ինչ կորցրած Վասակի համար միակ նպատակն ու առաջնդիչ ուժը դառնում է հայոց թագավոր դառնալու ձգտումը: Սին պատրանքներով տարված Վասակը, սակայն, սպասվելիք արքունական պարզկենդի փոխարեն անարգվում է ոչ միայն հայրենասեր նախարարների, այլև հենց արքունիքի մեծամեծների կողմից: Վասակն իր կյանքի վերջին տարիներին խոր դրամա է ապրում, քննում իր կատարած գործերն ու հառաչելով զանակոծում և քարկոծում է իրեն. «Մեղաւոր անձն իմ, կեսս խղ-

ճիւ և ցաւովք մտաց զսակաւաթիւ զաւուրս կենցաղոյս, և պատրաստեալ պահիս մշտնջենաւոր և անանց գեհեմին»¹⁶: Ինքնախարազանման այս խոսքերը Փարպեցու Պատմության մեջ համոզիչ են: Պատմիչը նստվածք տված դէպքերից հետո առավել ամբողջական է ներկայացնում Վասակի կերպարը: Բոլոր դէպքերում Վասակ Մամիկոնյանը թե՛ եղիշեի, թե՛ Փարպեցու գործերում միանշանակ ներկայացված է որպես դավաճան, որի կատարած ազգադավ ու հակաքրիստոնյա գործերը դարեր շարունակ ամոթով են պատել նրա անունը: Փոխարենը՝ Վարդան Մամիկոնյանը իր հայրենանվեր ու անձնուրաց գործունեությամբ հայրենասիրության իսկական դասեր է թողնում սերունդներին՝ պատմության մեջ հավերժանալով իբրև ազգային սրբացված հերոս:

Այսպիսով՝ պատմիչները այս երկու հակադիր հերոսներին ներկայացնելիս օգտագործում են կերպարակերտման մի քանի սկզբունքներ՝ բացահայտում գործողությունների զարգացման, մարդկային շփումների, տարաբնույթ փոխհարաբերությունների ընթացքում, հեղինակային գնահատական, արտաքին նկարագրություն, հերոսների ուղղակի խոսք և այլն: Այս սկզբունքներից յուրաքանչյուրը մի նոր երանգ է հաղորդում կերպարների բնավորության ու ներաշխարհի ամբողջական բացահայտմանը:

¹ Մ. Աբեղյան, Երկեր, Գ հտ., Երևան, 1968, էջ 358:

² Մ. Ավդալբեգյան, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, Երևան, 1971, էջ 266:

³ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 112:

⁴ Նույն տեղում, էջ 126:

⁵ Նույն տեղում, էջ 138:

⁶ Եղիշէ, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 204, 206:

⁷ Նույն տեղում, էջ 210:

⁸ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ

186:

⁹ *Եղիշէ*, Վասն Վարդանայ և հայոց
պատերազմին, էջ 126:

¹⁰ Նույն տեղում, էջ 158:

¹¹ Նույն տեղում, էջ 192:

¹² Նույն տեղում, էջ 280:

¹³ *Ղազար Փարպեցի*, Հայոց պատմություն, էջ
138:

¹⁴ *Ա. Մկրտչյան*, Հինգերորդ դարի հայ
դպրություն, Երևան, 1968, էջ 455:

¹⁵ *Զ. Ավետիսյան*, Մարդը և դարի
գրականության մեջ, Անթիլիաս, 1994, էջ 161:

¹⁶ *Ղազար Փարպեցի*, Հայոց պատմություն, էջ
202:

GENERAL PRINCIPLES OF CREATING IMAGES OF VARDAN MAMIKONYAN AND VASAK SYUNETSI IN THE
WORKS OF EGHISHE AND PARPETSİ

EVA MNATSAKANYAN

Summary

It is a typological research of identical and contradicting images of the Armenian sparapet (general) – V. Mamikonyan and V. Syunetsi in different works.

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության
ինստիտուտի հայցորդ

Եղեռնի թեման մեր ժողովրդի վերքերից է, անթեղված կրակ մեր ժողովրդի սրտում: Արդեն 90 տարի արմատախիլ արված ժողովրդի բեկորները դեգերում են աշխարհով մեկ՝ կարոտի հայացք գցելով դեպի հայրենի բնօրրանը: Այդ բեկորներից է նաև հանրությանը հայտնի երաժշտագետ և արձակագիր Հակոբ Ասատուրյանը, որը, ապրելով և ստեղծագործելով Ամերիկայում, իր ստեղծագործության մեջ վառ պահեց հայրենիքի պատկերը, քանի որ նույնիսկ տարիներն ի զորու չէին մեղմել այն ցավը, որը կա, ապրում է նրա հոգում:

Հակոբ Ասատուրյանը գրական ասպարեզ է մտել որպես բանաստեղծ՝ «Անդաստան» ժողովածուով (1946թ.), սակայն նրան մեծ ճանաչում բերեցին՝ «Հովակիմի թռեղները», «Հովակիմի թռեղներիցները», «Տո, լաճ տնավեր» վեպերը: Այս վեպերում հեղինակը ներկայացնում է մի քանի սերունդների պատմություն՝ 20-րդ դարի սկզբից մինչև դարի ավարտը:

«Հովակիմի թռեղները» վեպը մի գերդաստանի անցած ճանապարհի պատմություն է՝ սկսած գյուղական պարզ, առօրյա կենցաղից մինչև եղեռնի ահասարսուռ օրերը, գոյատևման կռիվն օտար աշխարհում: Հեղինակը ներկայացնում է մինչեղեռնյան գյուղը, որն ապրում էր նահապետական նիստ ու կացով, ուրախություններով ու առօրյա հոգսերով: աղաղ ու ստեղծագործ աշխատանքով, արդար քրտինքով ապրող մարդիկ աչքի են ընկնում իրենց միամիտ ու ազնիվ արարքներով: Հովակիմի թռեղն հետ ընթերցողն անցնում է գյուղով, ծանոթանում միամիտ ու ազնիվ աշխատավորներին, նրանց առօրյային:

Գյուղը գտնվում էր երկու բլուրների ստորոտին՝ երկու թաղերով՝ Վարի ու Վերի,

որոնք կարծես երկու թագուհիներ լինեին, որ միմյանցից բաժանվում էին մարգագետնով: Այդտեղով հոսում էր «խենթ ու խելառ» մի գետ, որը վարարում էր ամեն զարման և քանդում ձորամիջի պարտեզների պատերը: Գյուղի թաղերը միանում էին զույգ գերաններից կազմված մի կամրջակով, որի վրայով «քալելը առանձին արվեստ մըն էր»: Ձորակի գլխին պահակների պես կանգուն էին երկու բարդիներ, որոնք կարծես մրցում էին գյուղը շրջապատող բլուրների հետ, թե ով ավելի շատ ստվեր կգցեր գյուղի վրա: «Անպետ ծառեր էին այդ բարդիները, անպտուղ ծառեր, բայց պապենական գետնի վրա էին ու կմնային անարգել»:

Գյուղի փողոցները ծուռումուռ էին, նեղ, անկանոն, «այնքան նեղ՝ որ երբեմն բեռնավոր իշու մը անցնիլը կըլլար անհնար»: Ամբողջ գյուղում երևում էին Քել Մելքոնի շարած ծուռտիկ-մուռտիկ պատերը, որոնք մի քանի տասնյակ տարիների կյանք ունեին: Ահա այսպիսին էր Չոմախլուն՝ Հակոբ Ասատուրյանի ծննդավայրը: Նա համագյուղացիների անունից գրում է. «Մենք անհունորեն կսիրեինք մեր գյուղը: Եվ անոր յուրաքանչյուր ծերպին, յուրաքանչյուր թումբին հետ մտերմացած, արևուն ոսկի ճառագայթներն ըմպելով, ամեն կողմ կթափառեինք»:

Հովակիմի թռեղն թափառումների հետ մեր առջև քայլ առ քայլ բացվում է Չոմախլուն, որի անդորրը վրդովում էին բարբարոսները. «Տարի մը, սակայն, ձորակին հեղեղը բարձրեն անցավ: Եվ մեր գյուղի երկու արևոտ թաղերն իրեն հետ առավ տարավ: Տարավ և արաբական անապատի չորս հովերուն ցրվեց մղեղի պես:

Ու փլցուց, ավա՛ղ, հավիտենապես փլցուց, մեր միամիտ ու բարի գյուղին զույգ բարդիներն կազմված կամուրջն ալ՝ զոր շի-

նող ձեռք չեղավ:

Ու կամուրջը, նաև իմ ու հայրենի գյուղիս միջև»:

Գյուղ են ներխուժում թուրք ելուզակները, և մի ակնթարթում խաղաղ կյանքով ապրող գյուղը վերածվում է մոխրակույտի. գաղթի ճամփան են բռնում բազմաթիվ հայ ընտանիքներ: Գրողը թանձր գույներով է ներկայացնում գաղթի ճանապարհը, թե ինչպես հայ գաղթականների խումբը, կրելով բազմաթիվ տառապանքներ, մի կերպ փրկվելով սովից ու ծարավից, 426 հոգուց մնալով միայն 29 հոգի, հանգրվան է գտնում օտար ափերում՝ արաբական անապատում: Հեղինակը ներկայացնում է, որ ոչ միայն մարդկանց դեմքի կաշին էր չորացել ու դարձել արևախանձ, այլև կծկվել ու չորացել էին նաև նրանց՝ ողջ մնալու հույսերը: Ամբողջ ճանապարհին յուրաքանչյուր մեռնողի հետ մարում էր մի հույսի ծրագր: Մարդիկ կորցնում էին իրենց հույսն ու հավատը, թե երբևէ կհաջողվի կենդանի դուրս գալ այդ անեզր գերեզմանից:

«Չոմախլու գյուղը, կամաց-կամաց վերածվեր էր փոքրիկ կապոցներու, և ապրելու հույսը, կամաց-կամաց... կծկվեր էր այդ կապոցներուն հետ» (181):

Այդ ճանապարհին Հակոբ Ասատուրյանը կորցնում է հարազատներին: Կորցնում է նաև մորը...

Այսչափ, տղաս,

Դու... ողջ... մը-մաս...

Մոր վերջին բառերը:

Լինելով բազմաթիվ սարսռեցուցիչ տեսարանների վկան ու ականատեսը՝ Ասատուրյանը ոչինչ չի մոռացել, չնայած այդ օրվանից անցել է 50 տարի. նրա հոգում մըմռում է վերքը, դեռ թարմ է ցավը: Նա գրում է. «Այս գիրքը, մեր ժողովրդի քավարան են քաղված, հիսուն տարվան բեռ մը տատասկ է: Որևէ գրագետի կողմե եթե որևէ բան գրված է աչքի արցունքով ու սրտի տևական սեղմումներով, սույն էջերը ատոր խոսուն վկաներն են»:

Պատահական չէ նաև այն, որ գրողը գրիչ վերցրեց 50 տարի անց և անդրադարձավ եղեռնի թեմային: Ինչպես ինքն է ասում. «...ուզեցի արձանագրել, ապրիլ ուզող, կամ, հակառակ պարագային, գոնե հայ մեռնիլ ուզող խոնարհ հոգիներու վերջին իղծերը և հնամյա ժողովրդի մը առհավական իմաստութենեն բխող զարմանալիորեն խորունկ մտորումները»:

Ինչպես Ասատուրյանն է ասում, միայն այդ մղձավանջային օրերն ապրած և տարագրության այդ ճանապարհն անցած ճամփորդը կարող էր հասկանալ, թե ինչ է նշանակում հիսուն տարի անց նորից անդրադառնալ այդ թեմային և «հուր ու հիշատակ մխացնել»:

«Ահարոնի հորեր» հորջորջված գեհեռնում կորան ոչ միայն հայ անթաղ մեռելները, այլև թաղվեց մարդկայինը: Միայն մարդու կերպարանքով քողարկված արյունաբու հիմակները կարող էին այդպես արմատախիլ անել մի ողջ ժողովուրդ՝ խտրության չդնելով միջոցների միջև:

Այդ հորի մեջ միանում են բոլորի մարմինները՝ իրենց վերջին հանգրվանը գտնելով այդ ժահրահոտ փոսում: Թե մեծ, թե փոքր գնում էին՝ միախառնվելու միմյանց՝ չունենալով գոնե մի բուռն հող: Շատ անգամ փորողն ինքն էլ, այնքան ուժահատ լինելով, ընկնում էր փոսը՝ հոգին ավանդելով: Եվ նրանք այդ դիակները լցնում էին փոսը անլաց, անսուգ. ինչի՞ համար սգային, եթե հաջորդ թոպեին. «ողջերը ողջ էին՝ հաջորդ մեռելը Հո՛ր նետելու չափ միայն»:

Երեկոյան, երբ նույնիսկ «դամասկոսյան արևը»՝ հոգնած այդ միօրինակ ու հոգնեցուցիչ պատկերներից, գնում էր հանգչելու լեռան հետևում, գաղթականների խմբի մեջ «որսի» էին դուրս գալիս թուրք բարբարոսները, որոնք երբևէ հոգնել չունեին: Նրանք գալիս էին՝ հափշտակելու կամ ավար, կամ կին, կամ աղջիկ. «կին... կամ կապոց՝ նույնն է»:

Արաբական անապատով քառասուն տաժանելի օրեր անցկացնելուց հետո գաղթականների խումբը հասնում է Հալեպ:

Հալեալում նույնպես գաղթականների խմբին հյուրընկալություն չէր սպասում, և վաճառաշահ այդ մեծ քաղաքում նույնպես հայ գաղթականը հանգրվան չի գտնում, ինչպես նրանց «չէր ընդունած երկիրն ողջ»:

Հալեալը երեք օր է միայն հանդուրժում գաղթականների ներկայությունը՝ նրանց օթևան տալով ֆրանսիական հիվանդանոց կոչվող շենքի տանիքին: Գաղթականների առջև իր «հյուրընկալ» գիրկն է բացում ժուրֆ կայարանը, որը նույնպես անմարդաբնակ և երբևէ մարդկանց երես չտեսած հանգրվան էր:

Այդ դժոխային պայմաններում կարող էին վաճառքի հանվել և՛ մարդկային պատիվը, և՛ արժանապատվությունը, և՛ օրը ցերեկով կարող էին մորից խլել զավակին և սրախողխող անել, բայց նրանց ձեռքը բռնող չկար: Թուրք էֆենդու զոհերից մեկն է դառնում Հարությունի քույրը՝ Սրբուհին՝ տասներեքամյա աղջնակը, որի փոխարեն էֆենդին 2 ոսկի է շարտում նրա մոր կողմը:

Այդ ոճրագործների համար խրախճանք էր նույնիսկ երեխային մոր աչքի առաջ մորթելը՝ «պատճառաբանելով», թե իշուկի համար դժվար է տանել և՛ մորը, և՛ զավակին: Եթե ընդհանուր աղմուկի և իրարանցման մեջ չմիջամտեր ալիլը՝ քարավանի գլխավոր պատասխանատու առաջնորդը, ապա մայրը կզրկվեր իր միևնույն երեխայից:

Մղձավանջային այս օրերի մեջ նույնիսկ, երբ գաղթականներից շատերը կորցրել էին իրենց հույսը ապագայի նկատմամբ, միևնույն է, ցանկանում էին մեռնել՝ հայացքները դարձրած դեպի հայրենի եզերքը:

Պարոն Թովմասը, գտնվելով մահվան ճիրաններում, կնոջը խնդրում է բարձր թեթել այնպես, որ ինքը մեռնի՝ հայացքով դեպի Մասիսը:

1915 թ. Հ. Ասատուրյանն էլ, բազմաթիվ այլ տարագիրների նման ընկնելով Ամերիկա, այդ ամենակուլ միջավայրում ոչ թե ծուլվեց օտարին ու մոռացավ մայրենին, այլ դարձավ «Նոր գիրի» այն երիտասարդ-

ներից մեկը, որոնք երբեք անձնատուր չեղան և ընդհանուր այդ նահանջի մեջ երբեք ցած չդրեցին գրիչը:

Տարագիր երիտասարդներից շատերը, չդիմանալով միջավայրի պարտադրող պայմաններին, չկարողացան պահպանել իրենց ինքնուրույնությունը և ենթարկվեցին ժամանակի պահանջներին՝ մոռանալով իրենց ազգությունն ու մայրենին: Ի տարբերություն դրանց՝ Հ. Ասատուրյանը ներկայացնում է, թե հայ բեկորներից շատերն ինչպիսի հերոսական պայքար մղեցին ամերիկյան միջավայրում՝ մնալով հայ և՛ հոգով, և՛ գրչով, որոնք, իրենց հոգում վառ պահած իրենց օջախի ջերմությունը, հող էին փնտրում, որպեսզի արմատներ նետեին և չծուլվեին օտարին:

Հովակիմի թոռ Լևոնն ամուսնանում է հայ աղջկա հետ և մնում հայ, բայց նրա թոռը՝ Հայկը, որը ծնվել և մեծացել էր Ամերիկայում և խոսում էր անգլերեն, հեռացել էր իր արմատներից, ամուսնանում է օտար աղջկա հետ: Այսպիսի իրավիճակում էին գրեթե բոլոր հայ երիտասարդները, որոնք օր օրի ավելի էին զգում իրենց նահանջը և փորձում էին հող ստեղծել իրենց ոտքերի տակ, հաստատուն կանգնել այդ հողի վրա, պահպանել ազգայինը:

Բայց եղան հայեր, որոնք հեռու մնացին ամերիկյան ծուլիչ խառնարանից և շարունակեցին մնալ հայ. արմատներ գցեցին օտար հողում, նոր ուստեր արձակեցին՝ պահպանելով ազգայինը: Եվ ինչպես Ասատուրյանն է ասում. «Հիմա, կյանքիս ամենաերջանիկ օրերն են ապրում, քանզի վայրագ թշնամուն չհաջողվեց թանգարանային ցուցանմուշ դարձնել հայ ազգը, քանզի կոմիտասյան երգը չսպանվեց: Չսպանվեց և այժմ տիրակալում է հայոց լեռնաշխարհում»:

Եվ կապոցները գլխների տակ դրած, չիմանալով վաղվա իրենց օրը, «իրենց գլխուն մաղվելիք տաք կամ պաղ ջուրերում բոլորովին անգիտակ «քնած էին գաղթականները» փոթորիկեն հետո գետնին վրա

փռված թուփերու պես»:

Հեղինակը, զսպելով լացը, երկնտուն է՝ արդյոք դա է մնացել Տիգրան Մեծի հերոսական ժողովրդից...

Ասատուրյանը նկարագրում է մի ողջ ժողովրդի կործանումը, որի ցավն ավելի խորն է, քան Դամասկոս քաղաքի հիմքը: Ասատուրյանը եղեռնի հետևանքներն առավել ցայտուն դարձնելու համար նախ ներկայացնում է մինչեղեռնյան գյուղը՝ իր նիստուկացով, բարքերով, ավանդական սովորույթներով, խաղաղ առօրյայով, իսկ եղեռնից հետո՝ նաև այդ և այդպիսի բազմաթիվ գյուղերի կործանումը, եղեռնի դրոշմը հայ ժողովրդի ճակատագրի վրա:

«Լավ գյուղ էր մեր գյուղը», - գրում է Հ. Ասատուրյանը և նկարագրում անմահ բնության գրկում ծվարած աշխատանքի թագավորությունը: Գիշտ է, գյուղում կյանքը հեքիաթ չէր, դժվար էր մանավանդ պատմողի՝ Հովակիմի թոռ Հարությունի որբ մանկությունը, բայց տասնամյակներ անց ամեն ինչ, այդ թվում՝ նաև աղքատությունը, կրած զրկանքները հիշվում են անհիշաչար բարությամբ: Ընթերցողն զգում է հերոսի կարոտի՝ հոգի կրծող մորմոքը. Թ. գյուղն էլ, «արդար մանկության մը սպիտակ երազներովը պարուրված», հալվել է, դարձել դառը հիշողություն: Այդ հիշողության բեռը ծանր է, բայց օտար աշխարհում ապրելու, դիմակայելու ուժ է տալիս: Համաստեղի նման Հ. Ասատուրյանն էլ կատարված ողբերգության պատճառները փնտրում է մարդու արարող և ավարառու տեսակների՝ աշխարհի պես հին հասարակության մեջ: Հայ գյուղացին պապերից ժառանգած իմաստությամբ գիտե և թռներին է ավանդում աշխատանքի պաշտամունքը. հայ մարդը «ավագակության աչք չունի» և չի կարող հասկանալ սերնդեսերունդ «ուրիշի ցանածը հնձելուն» վարժված թուրքին: Հարությունը հիշում է, որ տատը երբեմն երազում էր, որ թոռը «քիչ մը կոտորող, թափողէ՛ն ըլլար», սակայն թոռը հեքիաթի, երգի, բնու-

թյան նվիրյալ է: Շատ հետաքրքիր է երեխայի երգով հմայված թուրք ծերունու պատմությունն արջի մասին, առավել հետաքրքիր է նրա մաղթանքը, որ մեծերը իրենցից փոքրերի «զգայուն ու ջահել կուրծքերու վրա» չդնեն ծանր քարեր, նրանց չմղեն «ամեն տանձ անհաշիվ կերպով ուտելու փորձության»: Իր թափած տանձերը ծառերի տակ ուտող քոթոթներից իր ուտելիքը փրկելու համար նրանց վրա ծանր քարեր դնող արջի և քոթոթների մասին զրույցը հասկանալի է թուրքի համար, որը հայրենիք չի կորցրել, սեփական հողի վրա չի ապրել վտարանդու նման և հարկադրված չի պաշտպանվել ավարառու ժողովրդից: Թուրքը չի կարող հասկանալ հայ մարդուն, իսկ երբ արժանում են նրա բնազդները, մոռանում է երգ, զոհի տարիք ու սեռ...

Եղեռնի ահասարսուռ դեպքերի կարճ ու խոսուն նկարագրությունը մեզ ծանոթ է Համաստեղի «Երենէ՛կ այն օրերուն» պատմվածքից: Հ. Ասատուրյանի հերոսների ճակատագիրն էլ ավելի ողբերգական է, չնայած թվում է, թե դժվար է ավելի դժբախտ մարդկանց գտնել, քան Համաստեղի՝ հող, երկիր, ապագա կորցրած Մնուշն ու Մխսին: Նրանք մշտապես վիճում էին, բայց երբ հանդիպում են պանդխտության ճանապարհին՝ տնից ու օջախից տեղահանված, փաթաթվում են, ուրախությունից լաց լինում, հիշում իրենց վեճերը և ասում. «Երենէ՛կ այն օրերուն»: Այսպիսի հերոսների մենք տեսնում ենք նաև Հ. Ասատուրյանի վեպում. հանդիպում են Նազիկն ու Եսայի դային: Նրանք երիտասարդ տարիքում սիրել էին միմյանց, սակայն ճակատագիրն այնպես էր տնօրինել նրանց բախտը, որ Նազիկի ծնողները նրան ամուսնացրել էին ուրիշի հետ՝ մերժելով որբ ու աղքատ տղայի զգացմունքը: Նրանք էլ, մահվան ճիրաններում գտնելով միմյանց, տարաբախտ ու երջանիկ զրկում են իրար և նետվում նախապես փորված գերեզմանը:

Վեպում Հ. Ասատուրյանը ներկայացնում է նաև «Անապատի կողմն աշխարհի» (ինչ-

պես վերնագրված է վեպի երկրորդ մասը):

Հիմա գյուղացիների քարավանը ծփում է անապատներով, և հույսը ծվարել է կապոցների մեջ, որոնց մեջ ամփոփված է գյուղը: Արարչագործության սևագրի նմանվող ու Աստծուց մոռացված այդ վայրերում ծավալվում է մարդկային ողբերգությունը, որ ավելի ճիշտ կլինի անմարդկային անվանել: Այդ պայմաններում ջրով, հացի պատրանքով գոյատևող մարդիկ դիմակայում են՝ անցնելով ստորացումների, մարդու առևտրի, անհամար զոհերի ցավոտ ճանապարհով, բայց անքակտելի է հողի հետ հողագործի կապը: Մահամեծ ծերունին թռանում է փոխանցում «գաղթականի հարստությունը»՝ հեռվում մնացած տան բանալին և ծննդավայրի մի բուռ հող: Հպարտ հայը գաղթի ճամփաներին տառապում է քաղցից, սակայն չի դավաճանում ինքն իրեն և չի իջնում մուրալու աստիճանի, ավելին՝ սրբորեն պահպանում է ուրիշի տան իրեն վստահված բանալին: Սա հայի ազգային նկարագիրն է, մարդու, որ ապրելու ուրիշ ձև չգիտի, չի ուզում իմանալ:

«Մարդը անասունի աստիճանին իջեցնող» կյանքը հարկադրում է փնտրել անարդարության արմատները: Մարդու և երկնքի, նրա հավատի միջև անջրպետ է ստեղծվում, թվում է՝ Աստված մոռացել է իր ստեղծած արարածներին: Գեղջուկ կնոջ համար ամեն ինչ հասկանալի է դառնում, երբ իմանում է, որ Ավետարանը հայերեն չի գրվել, այլ թարգմանվել է: Դառն ու ցավագին հիասթափության պահին անգամ փայլատակում է հույսի շողը, Աստված եթե նույնիսկ մոռացել է, հաստատ չի լքել իրեն հավատացողներին: Համառ ու անուղղելի լավատեսությանը հողագործը շարունակում է երազում տեսնել գյուղը, փորձում է ակնոցով քնել, որ ավելի հստակ տեսնի ծանոթ տեսարանները. առանց այդ երազի նա ապրել չի կարող, ավելի ճիշտ՝ ապրում է այդ երազով և այդ երազի շնորհիվ:

Ասատուրյանն իր հերոսներից մեկի՝ Երանոս Էֆենդու մտորումների միջոցով փորձում

է բացատրել կատարված ողբերգության արմատները. հոգևոր աշխարհի օրենքներով ապրող հայի համար այս աշխարհը պարզապես ապականված է: Այդ աշխարհի օրենքներն են հակադրում հայուհուն գենքի դիմելու՝ չնայած նա ապրել է և գերադասում է ապրել հոգևոր հացով, որ սկսվում է հայոց այբուբենից ու հասնում երկինք:

Գրողը չի իդեալականացնում իր հերոսներին. վեպում պատկերված են նաև մարդկային նկարագիրը կորցրած հայեր, բայց դրանք միայն իրենց «ես-»ով աշխարհը ճանաչել փորձող անհատներ են, որոնց գոյությունը դատապարտելի է բոլոր ժամանակներում և բոլոր պայմաններում, առավել դատապարտելի է արյունոտ այդ օրերին: Ասատուրյանը հայ ժողովրդի ապագան կապում է ազգային, մարդկային դիմագծերն անխաթար պահած հայ մարդկանց հետ, որոնք կոտորածի արյունոտ ծովից փրկվում են հրաշքով, որ սերունդներին փոխանցեն մարդասիրության, լավատեսության իրենց սերող հիշողությունը, առանց որի հողը հայրենիք չի դառնում: Հայի հայրենիքը Հայաստանն է՝ անկախ այս կամ այն քաղաքական, կուսակցական պարտադրված սկզբունքներից, իսկ «սոսկալի հայ» (Ասատուրյանի հերոսի բնորոշումն է) կարելի է մկրտվել միայն հայրենիքի քար ու հողով:

2005 թվականին լրացավ Եղեռնի 90-րդ տարին: Ասատուրյանի «Հովակիմի թռնները» վեպը լրացնում է կատարված ողբերգության պատկերը և մեր օրերում արժևորվում է և՛ որպես գեղարվեստական վավերագիր, ակնառեսի վկայություն, և՛ որպես հիշեցում մարդուն ու մարդկությանը, որ չի կարելի մոռացության տալ մեր պատմության արյունոտ այդ էջը հանուն աշխարհի բոլոր ժողովուրդների:

Հ. Ասատուրյանի ստեղծագործության գրեթե յուրաքանչյուր տողում զգացվում է այն մտավախությունը, որ հայը ծուլվում է օտարին, և շատ քչերին է հաջողվում դուրս պրծնել այդ միջավայրից: Քաղաքակիրթ

աշխարհի բազմամարդ ու օտար քաղաքում (խոսքը Նյու Յորքի մասին է՝ Ս.Բ.) մարդիկ դառնում են յուրատեսակ ձիեր՝ կթած «անբաղձալի բեռան» ծանրության տակ: Բացառություն էր 1915 –ի արյունոտ հիշողությունները հոգու խորքում փայփայող հայերի սերունդը, որի ազգասիրության «ուժեղ տենդով» «վարակվեց» ամերիկահայերի գաղութը: Կյանքն ունի իր հրամայականը, ու «առաւօտ չունեցող երազներու ետեւէն» վազելով ապրած հայ մարդիկ հիմա պարտավոր են արթնանալ երազներից ու ապրել օտար աշխարհի նոր օրերներով:

«Հովակիմի թոռնորդները» վեպում (1982) Ասատուրյանը ներկայացնում է հայ երիտասարդության նահանջը օտար միջավայրում՝ շարունակելով «Հովակիմի թոռներուն» (1965) արժարժած խնդիրները: Ամերիկյան միջավայրը նման է հմայիչ և առիթնող հրաբխային ծովի, որն իր գիրկն է կանչում հայ երիտասարդներին, իսկ նրանք, չլացած այդ միջավայրի արտաքին փայլով, օրեցօր նոստենում են ծովման վտանգավոր սահմանագծին: «Իրիկնային լոյսերու հրաբխային ծով լայնատարած: Քսաներոդոս նիւթապաշտ դարու ընդերքէն ժայթքած՝ երկաթակոյտի դաժան գեղեցկութիւն:

Սլացիկ խիտ շէնքերու իր համայնապատկերովը՝ Չըտսըն Գետի ջուրերն ինկած նա՛ւ երերուն:

Նիւ Եորք:

Ազդարար ջահերու կարմիր աղեղներովը՝ հորիզոնին գիրկը խրած՝ հրափունջ անտա՛ռ երկնաքերձ շէնքերու:

Գիշերային քաղաք:

Փողոցի բազմահազար լամբարներով ու լուսաւոր պատուհաններով աստեղազարդ երկինքը մթագնող՝ երկրային ամբարտաւան սովեստութիւն»:

Վեպն սկսվում է Նյու Յորքի նկարագրությամբ, որի սառն ու անհրապույր գրկում հանգրվանել են հայ գաղթականները: Վեպի գլխավոր հերոսը՝ Լևոնը, 1915 թ. եղեռնից մազապուրծ, հանգրվան է գտել ամերիկյան

հողում՝ մի օր հայրենիք վերադառնալու հույսը հոգում անթեղած: Վեպի սկզբում Լևոնը երևում է իր սենյակում առանձնացած, ներամփոփ: Նա ընկղմվել է գրքի ընթերցանության մեջ, որը կաշեկազմ ձեռագիր մատյան է. «Հատորին տեսքէն ու կազմէն իսկ կարծես դարերու իմաստութիւնը կ'արտաշնչէր»: Նա խորասուզված ընթերցում է Ն. Շնորհալու «Ընծայական» մատյանը: Որհորանշական է այն, որ տեսիլքի պես նրա առջև հայտնվում է Շնորհալին և խորհուրդ տալիս գերի չգնալ սառը մետաղին՝ հրապուրիչ ոսկուն, անաղարտ պահել հոգիները, հա՛յ հոգիները:

Լևոն վերապրում է իր ապրած մանկությունը՝ տարիների հեռվից հայացք գցելով դեպի հետ. «Հրթիռ մըն էր հազիւ, որ առաւօտին կոկոնը իր մէջ դեռ հազիւ պայթած, չարաշուք օրը, յա՛նկարծ, գրկեց նետեց զինք դեպի ցու՛րտ գիտակցութիւն: Մանկութիւնը չբոլորած ու տակաւին պատանի չդարձած, մարդացա՛ւ արդէն ու գտաւ թէ՛ մանկութիւն ու պատանութիւն միասին, իրենց թերթիկները հազի՛ւ դեռ բացած, թառամեր էին ծղօտին վրայ»:

Նա վերստին հիշում է հարազատ գյուղն ու համագյուղացիներին՝ աշխատանքին նվիրված, քրտինքով հաց վաստակող: Անցյալի այս հիշատակներին հակադրվում է ամերիկյան սառն ու անհրապույր միջավայրը, ուր մարդիկ մրջյունների պես անխոնջ աշխատում են՝ «վերածուած մարդամեքենաներու եւ թիւերու, գրեթէ միաձուլված երկաթէ անհոգի մեքենաներուն հետ»: Լևոնն իրեն զգում է վանդակում պահվող դեղձանիկի նման, որը երազում է ազատություն: Ներկան դառն ու ցավալի է, իսկ անցյալը չնայած շատ է քաղցր, բայց մնացել է հետևում՝ դառնալով անհաս երազ: «Հակառակ որ գաղթի տարին ինք հազիվ ութ տարեկան կ'ըլլար, սակայն իր միտքը, այդ տարիքին յատուկ անջնջելի տպաւորութիւններով դրոշմուած, եւ խճողուած կայքերու անվարժ՝ մնացեր էին հոն, գիրկը իրենց հայ-

րենական սարերուն»:

Լևոնը փորձում է ամեն կերպ պահել կապը ազգային արմատների հետ: Նա տասը տարի անընդմեջ մասնակցում է կազմակերպվող ժողովներին՝ վերստին հայրենի եզերք վերադառնալու հույսով: Դա հայ ոգու պայքարն է հանուն ինքնության, հանուն մեծ երազի: Նա ամուսնանում է հայ աղջկա՝ Ազնեսի հետ՝ ցանկանալով վառ պահել հայ օջախի ծուխը: Տարիների ընթացքում նրա համար պարզ է դառնում մի դառը ճշմարտություն. այն, ինչ թանկ էր իր սերնդի համար, ինչ ցանկանում են փրկել իրենք, արդեն անհնարին է փրկել: Նրանց զավակները նոր սերնդի ներկայացուցիչներ են, մեծանում և դաստիարակվում են ամերիկյան միջավայրում, ապրում են ամերիկացու հոգեբանությամբ: Լևոնը խոր ցավ և հիասթափություն է ապրում, երբ որդին վերադառնում է դպրոցից՝ մի նամակ ձեռքին: Ուսուցչուհին խնդրում էր ծնողներին տանն «օտար» (այսինքն՝ հայոց) լեզվով չխոսել, քանի որ դա շատ է խանգարում անգլերենի յուրացմանը: Լևոնի հոգում փուլ է գալիս մի ողջ աշխարհ: Ազնեսը փորձում է բացատրել, որ դա արվում է իրենց որդու օգտին. չէ՞որ իրենք ցանկանում են՝ նա շարունակի կրթությունը բարձրագույն հաստատությունում և ստանա այն, ինչ չունեն իրենք: Լևոնը լուռ համաձայնում է և ցավով հաշտվում դառն իրականության հետ:

Լևոնն ու Ազնեսը ձգտում են զավակներին անպայման ՅԱՅ մեծացնել, բայց համոզվում են, որ որդիները չեն կարող լինել «ուղիղ պատճենը» իրենց հոգու: Ամերիկյան իրականության մեջ մարդիկ չունեն «տոհմային ինքնություն», իսկ հայերի գաղութը նման է խրտվիլակի... Շ.Շահնուրի հնչեցրած նահանջի տագնապը օվկիանոսի այս ափին դարձել է պահանջ՝ ազգայինից կտրվելու, մոռանալու պահանջ, իսկ հայերենը հայի տանը օտար լեզու է: Այս ամենը կատարվում է ազատության, ամերիկյան ազատության պայմաններում, և ամերիկահայի

կյանքը «սիրով ու գուրգուրանքով», «ազատ կամքով ու սիրայօժար գործակցութեամբ» կամաց-կամաց դիմազրկվում է, չորանում է ազգայինին կապող արմատը: Կատարվող ողբերգության պատկերը Յ. Ասատուրյանն ամփոփում է այսպես. «Տարբեր է այս երկիրին ազատութիւնը: Մեղը ու շաքարով կը կաշառէր անոր քիմքը, ոսկի թելերով կը կապէր անոր լեզուն, յետոյ բերնին մէջ, աստիճանաբար անպիտանացնելով անոր մայրենի բարբառը՝ կը յաջողէր վերջապէս տունէն դուրս նետել տալ զայն, իբրև այլևս ժանգոտած սրբանօթ»:

Գլորվում են տարիները, և գրողը վեպում քայլ առ քայլ ներկայացնում է հայ երիտասարդների նահանջը: Հայ ոգին իր մեջ վառ պահող Լևոնը, որը վիճում է իր ազգանունը փոխել ցանկացող ուսուցչի հետ, որը ամբողջ շաբաթվա իր երթևեկի փողով կարող է հայերեն գիրք գնել, որը կարող է Անդրանիկի կռիվներից ոգևորված՝ մասնակցել հանգանակությանը, փորձում է կառնած մնալ հայրենի հողին, վիճում է հարազատ որդու հետ, որը ցանկանում է ամուսնանալ օտարի հետ: Յ. Ասատուրյանը վեպում ներկայացրել է որդիների և հայրերի բախումը: Հայրեր, որոնք ամուր են կանգնած հայրենի հողին և աշխատում են զերծ մնալ ամերիկյան մթնոլորտից, որդիներ, որոնք արդեն հասել են այդ սահմանագծին: Նրա որդին՝ Հայկը, ընթուստանում է հոր այն խոսքի դեմ, որ «հայումը տունը կը կազմուի միայն հայ աղջիկով»: Նա որդուն համոզելու համար հիշատակում է մարդու սրտի վիրահատության օրինակը. օրգանիզմը չի ընդունում օտարի պատվաստված սիրտը և կարող է գոյատևել միայն մի քանի տարի. «Մարմինը կը մերժէ օտարը, կը մեռնէ զայն եւ կը մեռնի ինք ալ»: Փլվում են Լևոնի բոլոր հույսերը, որ նա կապում էր ապագայի հետ, կոտրվում է նա՝ տեսնելով, թե ինչպես իր որդին էլ շատերի նման արդեն ծուլման սահմանագծին է:

«Այս մեծ երկրին կիզող արեւին ձիւն չի դիմանար երկար», - սա է ճշմարտութիւնը,

բայց ամերիկահայերի նոր սերունդը կարող է դիմանալ, կապվել «մեր ազգային իղձերու կառքին», եթե կանգնի «իրապաշտ հայրենասիրութեան մը նոր պատուանդանին»։ Այս դեպքում միայն Հայաստանը կդառնա բոլոր հայերի հայրենիքը, որին տալիք ունեն բոլոր հայերը՝ անկախ բնակության վայրից։ Օտարը, ապազգայինը, Հ. Ասատուրյանի վեպում՝ Ամերիկան՝ «մարդասեր ու մարդակուլ իր սիրոյ ցանցով, ջերմ սիրով», զայթակղում ու հմայում է, բայց այսօր էլ հայ երիտասարդության «ընտիր կորիզ» է ձևավորվել և կարող է դիմակայել օտար հովերին, եթե ամուր կապ ունենա հայրենիքի հետ։ Ամեն գաղութ ունի իր նվիրյալ զավենները՝ հայ կյանքի յուրահատուկ օազիսները, որոնց հասնում են ճանապարհորդները, բայց քանիսն են մնում ճանապարհի կեսին ու չեն հասնում փրկության ափ։

Ազգային ծեսերն էլ են փոխվում, որպեսզի հայի սերունդների միջև անանցանելի խրամատ չառաքանա։ Գիտակցված զիջումների ու արդիական պահանջներին հարմարվելու գնով միայն կարելի է պահպանել աներազ աշխարհում ազգային մեծ երազանքով ապրելու իրավունքը։ Ապացույց՝ հայկականի ու արդիական ոճի համադրությամբ կառուցված եկեղեցին, որ ամերիկյան իրականության նման «անդիմագիծ խառնուրդ է»։ Ճիշտ է, դժվար է այս ամենին հաշտվել, բայց ընտրություն չկա։ Սա է իրական պատկերը։

Հեղինակը լավատեսորեն է ավարտում վեպը՝ սրտում անթեղած լուսավոր ապա-

զայի հույսը։ Բացվում է առավոտը, արևը բարձրանում է՝ բոցավառելով հորիզոնը, իսկ «Լևոնին երկնաքեր իղձերն ալ կը սկսեին ողողուիլ նոր լույսով ու նոր յոյսերով»։

Լևոնը բացում է պատուհանը և ազատ արձակում դեղձանիկին «իր կապույտ երազներուն հետ...»։

Անցած տասնամյակները մեզ չեն կտրել Մեծ եղեռնի հիշողությունից։ Այսօր ականատեսների ամեն մի վկայություն յուրովի է արժևորվում, իսկ գեղարվեստական ստեղծագործությունները դառնում են յուրատեսակ վավերագրեր։ Այս առումով Հ. Ասատուրյանի ողջ ստեղծագործությունը, իսկ «Հովակիմի թռռներն» ու «Հովակիմի թռռնորդները»՝ հատկապես, թանկ են որպես վկայություններ ու ազգային կյանքի, մեր ժողովրդի առաջ ծառացած դժվար խնդիրների արծարծման փորձ։ Հիշողություն են դարձել պատմական հայրենիքը, հարազատ եզերքը, բայց կյանքի հարյուրամյակը բոլորած հայ մարդը՝ Հ. Ասատուրյանը, դեռ ապրում ու հիշում է, հիշում ու արդար հատուցում է պահանջում մարդկությունից։

Այո, այսօր Ասատուրյանն այն երջանիկ մարդկանցից է, որոնք հատում են 100-ամյակի սահմանը։ Գրողի հորեղյանը նշվել է և՛ Սփյուռքում, և՛ Հայաստանում։ Նա մի քանի անգամ եղել է հայրենիքում և տարբեր առիթներով հայտնել հիացմունքը համայն հայության բնօրրանի նկատմամբ, դեպի ուր ուղղված են մաս գրողի հայրենակարոտ հետոսների հայացքները։

HAKOB ASATURYAN: LIFE HISTORY

SIRANUSH BAKUNTS

Summary

S. Bakunts's article is dedicated to the evaluation of the art sections of Hakob Asaturyan's work which is the detection of the historic truth - of the reality of the Diaspora Armenian writer who witnessed the Genocide.

ՎԱՆՅԱՆ ԵՂԻՍՋԱՐՅԱՆ

ԵՊՄՀ զարգացման և կիրառական
հոգնաբանության ամբիոնի հայցորդ

Որպես անհատ և անձնավորություն, որպես գործունեության և անհատականության սուբյեկտ՝ մարդն իրացնում է իրեն իր գոյության որոշակի պայմաններում:

Մարդկային հասարակության պատմությունն անընդհատ զարգացման գործ ընթաց է, ուստի մարդկային անհատականության առաջընթաց:

Ավանդության մշակույթի զարգացման համար բնութագրական է դանդաղ, աստիճանական փոփոխությունը, որն անկատ է, քանզի շարժումն օրինաչափ է, բնական: Կյանքը կառուցված է «պապերի օրինակով»՝ ավանդույթների, հասարակական ստանդարտների հիման վրա: Անհատական ընտրությունը և հնարավորությունները սահմանափակ են, քանի որ ժամանակի խնդիրները փոխվում են. սոցիալական դերերի և գործունեության տեսակների ավանդության օրենքներով ապրել հնարավոր չէ: Սոցիալական և մշակութային ժամանակները այնպես են փոխվում, որ անցյալը ոչ միայն կորցնում է իր դեմքը, այլև հնարավոր չէ նույնիսկ զուգահեռ անցկացնել նորի և հին միջև:

«Հայրերի օրինակով» դեռ կարելի է ապրել, որովհետև մշակույթի՝ մեծերից փոքրերին, երկրորդ սերնդից երրորդին անցման օրինաչափությունն ավելի պարզ է, բախումները՝ ավելի ընդգծուն:

Բնականաբար, դեռևս պահպանվող կախվածությունը ծնողների պատկանելությունից և անձի՝ իր որոշակի սոցիալական շերտի պատկանելը որոշելու են մարդու սուբյեկտը: Եթե անձն ունի նոր կադապր՝ ավանդության սահմաններից դուրս, նա այլևս չի հարմարվի հինին, և հայրերի ու որ-

ՄԱՐԴԸ՝ ԿՅԱՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ: ՀԱՅՐԵՐ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ

դիների դասական հակամարտությունը կշարունակվի, այսինքն՝ զարգացման ընթացքը կրճատում է ժամանակը:

Մշակութային ավանդական նորմերի փլուզումը կատարվում է տարբեր սոցիալական շերտերի ընդգծմամբ, արտաքինով պայմանավորված ներքինի փոփոխության արագությամբ:

Սոցիալական ես-ը իմացական գործընթացներում ունենում է աղճատումներ: Անձը, մերժելով ավանդության անմիջական հերթափոխը, հայր-որդի դերափոխության հոգեբանական մթնոլորտում մերժում է իր նախկին սոցիալական ես-ը ...

Որդի-հոր նույնացման մթնոլորտում հայր-որդին ընդունում է հորը մերժած իր կողմնորոշման թերությունները, քանզի կատարվել է վերագնահատում վերաբերման, որը որդին մերժել է սոցիալական այլ կարգավիճակում:

Հայրերի և որդիների գաղափարական բախումը Տուրգենևի «Հայրեր և որդիներ» վեպում հաստատում է իրադրային գործոնը: Նրա հերոսը՝ Բազարովը, ժխտում է սերը, սակայն այն դառնում է իրենից հզոր.

«Մենք գործում ենք այն ուժով, որը համարում ենք օգտակար. այս ժամանակներում օգտակարը ժխտումն է», - ասում է Բազարով «որդին»:

Եթե «ճանաչողությունը մարդու միջոցով բնության արտացոլումն է», ապա մարդ-բնության ճանաչողությունը հանգում է այն մտքին, որ անձը, որպես պատմության զարգացման օբյեկտ, սոցիալական երևույթ է: Անձնավորության՝ զարգացման որոշակի աստիճանի հանգած անհատ կադապրը պատկերացում է տալիս նրա սոցիալական կյանքի ներքին կողմերի մասին՝ հաշվի առ-

2) Դրսկվորվում են վարքում և մասնակցում նորմաձևավորմանը:

Իր նպատակներն ընտրելիս անձն իր գործոնությունը կազմակերպում է այն սոցիալական խմբին համապատասխան, որին ներանցված է: մթի ստանդարտները՝ սոցիալական նորմերը, կարող են ազդել մարդու վարքի վրա ոչ միայն այն իմաստով, որ դա մեծամասնության կողմնորոշումն է, այլև այն համապատասխանում է մշակույթի իր կադապարին նորին:

Արժեքային կողմնորոշիչներից վարքի նորմերը, որքան էլ որ վերակառուցվեն, մնում են հիմնակարգի մեջ կամ, այսպես ասած, ավանդության են, իսկ իդեալները և բարիքներն ունեն սոցիալականացման ընթացքի համապատասխան վերաբերում: դրանք փոփոխական են: Ուստի խումբը չի կարող ունենալ միանման իդեալներ, կամ բարիքի ընկալումը չի կարող խմբային լինել:

Կենսական կամ սոցիալական անհրաժեշտությունը, որքան էլ քիչ է սահմանափակված, որքան այն դիմամիկ է, արագ փոփոխվողը դառնում է արտաքին իրադրություն, այնքան մեծ չափով է մարդը հայտնվում իր ընդունած որոշման առջև, իր սեփական ընտրության առջև: Իր ընտրության մեջ նա ունենում է նաև անբավարարվածություն և իր իրացումը տեսնում է ազատ դիրքորոշման միջոցով: Մարդու վարքը մակորոշող (դետերմինավորող) արտաքին իրադրությունը հակազդում է փոփոխությունների ձգտող ներքին պահանջմունքներին:

Արժեքների բախումը հանգեցնում է խնդրահարույց իրավիճակի:

Աշխարհայացքի կառույցը դնում է անհատադեղիության հարցը, որն արտաքին բախումը մակորոշում է (դետերմինավորում է) որպես վերահսկողության մեխանիզմներով ղեկավարվող զարգացում:

Երկու տարբեր և նման անձինք՝ երկու աշխարհայացքի կրողներ՝ հայրեր և որդիներ, ունեն տարբեր պահանջմունքներ, ուս-

տի նրանց միջև հավասարա կշռվածության վիճակ չկա: Բնականաբար, ծագում են այնպիսի ուժեր, որոնք ուղղված են դեպի հավասարակշռության հաստատում: Եթե փոփոխությունները հնարավոր չեն, անհավասարակշռությունը պահպանվում է: Սակայն անհավասարակշռությունը չի ենթադրում պահպանողական վիճակ: Ծագած դրդիչները սահմանված կանոնների խախտման արդյունք են: Այդ խախտումներն առաջացնում են խզում հայրերի և որդիների միջև և խախտում իրավահաջորդության կարգը: Սերող (ծագումնաբանական) կողմ անձի դիրքորոշման սահմանում ավելի քիչ տեղեկություն է տալիս ես-ին: Որպեսզի փորձենք հասկանալ ուրիշի վարքը, օրինակ՝ ինչու հայրը նախատեց որդուն, կարող ենք մեր մտքում ստեղծել երկու հատկանիշներից մեկը: Կարող ենք ստեղծել ներքին հատկանիշ՝ որոշելով, որ հոր վարքի պատճառը նրա հակվածությունն է մի բանի. անձի մեջ՝ խառնվածքում, այդպիսի բացատրությունը վարքը վերագրում է ներքին պատճառներին: Օրինակ՝ կարելի է որոշել, որ հայրը չի ընկալում ժամանակի պահանջները և իր վարքում կիրառում է մանկավարժական ոչ պիտանի մեթոդներ՝ պատժում է որդուն իր աշխարհայացքի պատճառով:

Եվ հակառակը, կարելի է պատկերացնել արտաքին հատկանիշը, եթե որոշենք, որ վարքի պատճառը իրադրային է: Արտաքին հատկանիշը ենթադրում է, որ մարդկանց մեծամասնությունը նույն իրավիճակում կվարվեր նույն ձևով:

Հատկանիշի հիմնային սխալը ենթադրում է գերազնահատելու այն աստիճանի միտում, որում մարդու վարքը կախված է ներքին հակվածության ազդակներից և իրադրային ազդակների դերի թերազնահատումից:

Փորձելով ապացուցել, որ մարդու վարքը մեծ չափով կախված է սոցիալական միջավայրից, հոգեբանները կանգնում են դժվարհաղթահարելի պատմելի առջև: Այդ

պատմեցը հատկանիշի հիմնային սխալն է՝ մեր իսկ սեփական վարքը և ուրիշ մարդկանց վարքը հիմնականում անձնային հատկանիշներով բացատրելու միտումը՝ այդպիսով թերագնահատելով սոցիալական ուժի ազդեցությունը:

Կ. Դյուբուայի «ավանդությանկիր (մոդալ) անձնավորություն» հայեցակետի անվան տակ առնված մեծաքանակ տիպը ենթադրում է, որ նույն ցեղին (էթնոսին) պատկանում են մի շարք տիպեր: Օրինակ՝ հայկական ցեղում կան հայեր, որոնք ավանդությանի մշակույթի հետևորդներ են կամ «մոդալ անձնավորություն» տիպի մեջ մտնող մեծաքանակություն:

Որպես ավանդությանի երկրի՝ հայկական տարածքի հոգեբանական մթնոլորտում հայրերի և որդիների միջև բախումներ չեն լինում. շատ դեպքերում նույնիսկ գործում է պապերի օրենքը:

Իրականում կյանքի շարժիչը հենց այդ բախումն է, որն առաջ է մղում կյանքը, իսկ մերժված գաղափարը վերափոխված ձևով մտնում է որդիների մշակույթ, դառնում արժեք և մտնում վարքականոնի համակարգի մեջ նոր կաղապարի ձևով: Թեև Արիստո-

տելն ասում է. «Դիալեկտիկան ոչ միայն մատերիայից գիտակցության անցումն է, այլև զգացմունքներից մտքերին անցումը». «Աշխարհն իմ զգացողությունն է», - հայտարարում է Չերնիշևսկին: Սակայն օգտակարը (բարիքը) որոշվում է ոչ զգացողությամբ, այլ գիտակցորեն: Թերևս կարելի է ձևակերպել այսպես. հայրերն ապրում են զգացողությամբ, որդիները՝ գիտակցությամբ:

Թեև չի կարելի բացարձակացնել երկուսն էլ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Э. Аронсон, Т. Уилсон, Р. Эйкерт Социальная психология
2. Психология, под редакцией А. А. Крылова, Москва. 2005
3. А. Г. Маклаков
4. Ա. Նալչաջյան, էթնիկական հոգեբանություն, Երևան, 2001 Общая психология, С-Петербург, 2006
4. А. В. Петровский, В. В. Шпалинский, Социальная психология коллектива, Москва 1978 г.
5. Ա. Նալչաջյան, էթնիկական հոգեբանություն, Երևան, 2001

HUMAN BEING AS LIFE'S SUBJECT. FATHERS AND SONS.

VALYA EGHIAZARYAN

Summary

This issue has always been in focus of attention of philosophers, psychologists, artists. The author advances the hypothesis that fathers live by sensation and sons by consciousness.

ՄԱՐՈ ՔՈՉԱՐՅԱՆ

ԵրՊԼՀ անգլերենի ամբիոնի դասախոս

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՂԱՉԱՅՆ
ՀՆՉՈՒՅԹՆԵՐԻ ՇԱՐՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐ

Լեզուն մարդկային հաղորդակցության ամենակարևոր և կատարյալ միջոցն է: Լինելով չափազանց ճկուն համակարգ՝ այն կարող է իրականացնել բազմաթիվ գործառնություններ: Յուրաքանչյուր լեզու բնութագրվում է ըստ իր ուրույն կառուցվածքի, որի գոյությունը ապահովում է լեզվի գործառնությունը հաղորդակցության գործընթացում:

Օտար լեզվի դասավանդումը հիմնված է օտար և մայրենի լեզուների տիպաբանական հիմնական հատկանիշների գիտականորեն հիմնավոր ուսումնասիրության և նկարագրության վրա: Բազմաթիվ փորձարկումներ ապացուցել են, որ սովորողների կողմից թույլ տրվող սխալների և բարդությունների հիմնական աղբյուրը լեզուների կառուցվածքային տարբերությունն է, որը պետք է հաղթահարվի օտար լեզվի դասավանդման գործընթացում:

Վերոհիշյալ կառուցվածքային տարբերությունների բացահայտումը հնարավոր է իրականացնել համեմատական տիպաբանության հիման վրա, որը համեմատում է լեզուները՝ նպատակ հետապնդելով ի հայտ բերել դրանց ընդհանուր և առանձնահատուկ հատկանիշները:

Հաղորդակցության ընթացքում հրնչույթի գործառնությունը արտացոլված է երկու շատ կարևոր գործառնությունների իրականացմամբ. 1. Հիմնական գործառնություն այն է, որ հնչույթները ներկայացնում են կառուցողական նյութ այլ մակարդակների միավորների համար /առանց հնչույթների ոչ ձևույթները և ոչ էլ բառերը չեն կարող գոյություն ունենալ/.

2. Տարբերակիչ գործառնությոն ներառում է տարբերակում բառերի և բառային ձևերի միջև:

Խոսքի հնչյունները կարող են իրականացնել տարբերակիչ գործառնությոն միայն դրանց՝ միմյանց հակադրվելու կամ որևէ հնչյունի բացակայությամբ հակադրվելու դեպքում. օրինակ՝ sit-set-sat անգլերեն բառերի քերականական ձևերը տարբերակվում են միմյանցից [i],[e],[ə] ձայնավոր հնչյուններով, որոնք հանդիպում են նույն դիրքում: Հայերեն կար-կիր-կեր բառերը միմյանցից տարբերակվում են [ա], [ի], [է] ձայնավոր հնչյուններով, որոնք հանդիպում են նույն դիրքում: Այդուհանդերձ այս տարբեր ձայնավոր հնչյունները տարբեր հրնչույթներ են ներկայացնում անգլերենում և հայերենում: Անգլերեն bad-add և հայերեն ակ-բակ զույգերում [b] բաղաձայնը հակադրված չէ որևէ հնչյունի նույն դիրքում՝ այդպիսով տարբերակելով երկու բառեր:

[t] և [d] բաղաձայն հնչյունները կարող են տարբերակել միևնույն բառի քերականական ձևեր. ներկա/անորոշ ձև՝ send, և անցյալ/անցյալ դերբայի ձև՝ sent.

Այդուհանդերձ [t] և [d] բաղաձայնները տարբեր հնչույթներ են ներկայացնում:

Ակնհայտ է, որ հնչութաբանական մակարդակում համեմատական տիպաբանության խնդիրը ուսումնասիրվող լեզուների հնչույթների համեմատությունն է:

Տարբեր լեզուների հնչյունների համեմատական վերլուծությունը կարող է իրականացվել և համակարգային մակարդակով, և խոսքում դրանց գործառնությոն տեսանկյունից: Այս առումով անհրաժեշտ է առանձնացնել հնչութաբանական վերլուծության հետևյալ հայեցակետերը՝

ա/ հնչույթների ու հնչութային համակարգի նկարագրությունը՝ դրանց տարբերակիչ հատկանիշների հիման վրա.

բ/ հնչյունաբանական շարութաբանությունը՝

այսինքն՝

1. հնչյունների տարածման հաճախականությունը,

2. հնչյունների համատեղելիությունը. գ/ հնչյունային հերթագայություն՝ բառակազմության և ձևակազմության գործընթացում հնչյունային մեկ հատկանիշի փոխարինումը ուրիշներով:

Հայերեն և անգլերեն բաղաձայնային համակարգերի համեմատական ուսումնասիրությունը հնարավոր է իրականացնել ըստ հետևյալ հարաչափերի՝

ա/ բաղաձայնային համակարգերի քանակական հատկանիշներ.

բ/ ուսումնասիրվող լեզուների ենթահամակարգերի քանակական հարաբերակցություն.

գ/ համեմատվող լեզուների բաղաձայններին բնորոշ հատկանիշներ.

դ/ հնչյունային հակադրությունների և փոխկապվածությունների քանակ ու որակ.

ե/ հնչյունների տարբերակիչ հատկանիշների քանակ ու որակ.

զ/ հնչյունների բաշխում.

է/ հնչյունների համատեղելիություն:

Անգլերենի և հայերենի բաղաձայնների համակարգի վերլուծությունը ենթադրում է ուսումնասիրվող երկուսների շարութաբանական ուսումնասիրություն: Այն առնչվում է բաղաձայնների բաշխվածության, ինչպես նաև դրանց համատեղելիության հետ: Բաշխվածություն ասելով հասկանում ենք հնչյունի գործածության բոլոր հնարավոր դեպքերը և դրանց համատեղելիության հնարավորությունները: Անգլերենի բաղաձայնների մեծ մասը կարող է հանդիպել ցանկացած դիրքում, սակայն գոյություն ունեն որոշ սահմանափակումներ.

ա/ անգլերեն /h/ հնչյունը կարող է հանդիպել միայն ձայնավորից առաջ՝ բառասկզբում կամ բառամիջում, և այդ դեպքերում այն միշտ վանկասկիզբ միավոր է. օրինակ՝ [hɜv] have [Yd hiY] adhere

[bi heiv] behave

բ/ /w/ հնչյունը կարող է հանդիպել միայն բառասկզբում կամ բառավերջում՝ /t, d, k, g, ʔ, s/ բաղաձայններից հետո, և միջձայնային դիրքում /երկրորդ դեպքում՝ միայն վանկի

սկզբում/ օրինակ՝

twice thwart

dwell sweet

/w/ -ն երբեք չի հանդիպում բառավերջում կամ վանկի վերջում.

գ/ /r/ -ի բաշխվածությունը նման է /w/ -ի բաշխվածությանը. այն կարող է հանդիպել միայն բառասկզբում կամ բառավերջում՝ որոշ բաղաձայններից հետո՝ /p, b, t, d, k, g, ʔ, f, /, և միջձայնային դիրքում /եթ դրան չի նախորդում կարճ շեշտված ձայնավոր, ապա միշտ հանդիպում է վանկի սկզբում / օրինակ՝ price, free, try, dry.

/r/ հնչյունը երբեք չի հանդիպում բառավերջում՝ բաղաձայնից առաջ.

դ/ /j/ հնչյունի բաշխվածությունը նման է /w, r/ հնչյունների բաշխվածությանը. այն կարող է հանդիպել բառասկզբում կամ բառամիջում՝ որոշ բաղաձայններից հետո՝ /p, b, t, d, k, g, f, v, ʔ, s, z, h, m, n, l/, և միջձայնային դիրքում /երկրորդ դեպքում այն միշտ հանդիպում է վանկի սկզբում / օրինակ՝ pew, few, beauty, thews.

ե/ /K/ հնչյունը երբեք չի հանդիպում սկզբնական դիրքերում. այն կարող է միայն հանդիպել միջձայնային և վերջին դիրքերում. օրինակ՝ bank, song, sing:

Հայերենի բաղաձայն հնչյունները կարող են գործածվել ցանկացած դիրքում, սակայն /ʃ/, /h/, /j/ և /r/ հնչյունների գործածությունը որոշ չափով սահմանափակ է.

ա/ /ʃ/ հնչյունի գործածությունը սկզբնական դիրքերում բավականին սահմանափակ է, քանի որ այն հանդիպում է փոխառյալ բառերում. օրինակ՝ ֆաունա, ֆոսֆոր, ֆրեյդիզմ և այլն.

/ʃ/ հնչյունով սկսվող հայերեն բառերի շարքում կրկնվող վանկերով շատ բառեր կան. օրինակ՝ ֆռֆռալ ֆշֆշալ, ֆսֆսալ.

բառավերջում այն նույնպես հազվադեպ է դրսևորվում (հիմնականում ձայնարկություններում՝ հաֆ-հաֆ, օֆ, ոֆ).

բ/ /h/ հնչյունը շատ հաճախ հանդիպում է սկզբնական դիրքում. օրինակ՝ հայ, հանել, հավաք ևն.

հետին դիրքի մասին խոսելիս հարկ է նշել, որ /h/ հնչյունը կարող է հանդիպել վանկի վերջում, սակայն այն շատ հազվադեպ է

հանդիպում բառավերջում, քանի որ այն հետին դիրքում գործածվում է միայն միավանկ բառերում (պահ, մահ, գահ). օրինակ՝

պահպանել, բայց՝ ճանապարհ
սահնակ աշխարհ
դահիճ շնորհ

զ/ /j/ հնչյունը գործածվում է սկզբնական դիրքում, սակայն /j/ հնչյունով սկսվող բառերի քանակը մեծ չէ. այն հաճախ գործածվում է որպես վանկի սկիզբ հանդիսացող բաղաձայնային խմբավորման երկրորդ տարր. օրինակ՝

յոթ բյուրեղ
[t] լք փյունիկ
[t] յս դյուրին

ինչ վերաբերում է հետին դիրքին, հարկ է նշել, որ /j/ հնչյունին կարելի է հանդիպել վանկի վերջում միայնակ՝ որպես բաղաձայնային խմբավորման առաջին տարր, սակայն այն ավելի հաճախ հանդիպում է միավանկ բառերի վերջում. օրինակ՝ խոյ, գոյ, թեյ

ր/ / r/-հնչյունը շատ հազվադեպ է հանդիպում սկզբնական դիրքում՝ միայն մի քանի բառերում, որոնց մեծ մասը փոխառություն է. օրինակ՝ ռոպե, ռաբբի, ռոդին.

ինչ վերաբերում է հետին դիրքին, հարկ է նշել, որ / r/ հնչյունի բաշխվածության ոչ մի սահմանափակում չկա. օրինակ՝ պար, սար, դար:

Համեմատությունը բացահայտում է, որ բաղաձայնների բաշխվածության տեսակետից անգլերեն և հայերեն բաղաձայների միջև գոյություն ունի տիպաբանական տարբերություն. անգլերենի որոշ բաղաձայններին բնորոշ է սահմանափակ գործածությունը, մինչդեռ հայերենում գործնականորեն որևէ սահմանափակում գոյություն չունի:

Գ. Տորսունն առանձնացնում է 52 երկբաղաձայնային կուտակումներ, որոնցից 7-ը միայն փոխառումներում են հանդիպում: Գ. Ջահուկյանն առանձնացնում է հայերենում 10 երկբաղաձայնային կուտակումներ. սպ, ստ, սկ, սփ, սթ, սր, շպ, շտ, զբ, սզ՝ սկզբնական դիրքում, որոնց առաջին տարրը /ս/- հնչյունն է: Կան նաև մի քանի երկ-

բաղաձայնային խմբավորումներ, որոնց երկրորդ տարրը / յ /-հնչյունն է. բյ, փյ, տյ, թյ, կյ, գյ, քյ, մյ, նյ և այլն:

Բացի այդ՝ մի քանի երկբաղաձայնային կուտակումներ հանդիպում են որոշ հնացած բառերում, բարբառային և փոխառված բառերում՝ պր, բր, տր, կլ, ֆլ, ֆտ, տթ, սֆ, ժյ. օրինակ՝

ֆլեյտա սֆինքս տրիլիոն
ֆտոր կլարնետ ժյուրի

Սկզբնական երկբաղաձայնային կուտակումներում հանդիպող բաղաձայնները կարող են բաժանվել 3 խմբի՝ ըստ աղմուկի արտաբերման ձևի՝ T պայթական բաղաձայն, S շփական բաղաձայն, R ձայնորդներ:

RS, RT, TS խմբերը չեն հանդիպում միևնույն լեզուներում. [pt] և [p+] խմբավորումները կարող են անտեսվել, քանի որ [pt]-ն հանդիպում է միայն երկու փոխառված բառերում՝ pterodactyl [pt̪erodakt̪ɪl] և pterosaur [pt̪erɔˈsɔːr], և [p+] -ն հանդիպում է միայն pshaw [p+ˈoː] ձայնարկության մեջ:

SS խումբը ծայրահեղ հազվադեպ է և՛ անգլերենում, և՛ հայերենում:

ST խումբը հայերենում համադրությունների ավելի մեծ քանակով է ներկայանում, որն ավելի է հեշտացնում այս տիպի անգլերեն կուտակումների արտաբերումը:

RR խումբը ներկայանում է անգլերենում և հայերենում նույն կուտակումներով: [mɒ] կուտակումը կարող է անտեսվել, քանի որ այն հանդիպում է միայն մեկ փոխառված բառում՝ mnemosyne [niː [mniː ˈfɒmɒzɪni], որն ունի մեկ այլ տարբերակ՝ առանց խմբավորման՝ [niːmɒzɪni]:

Ամենաբազմազան խմբերը երկու լեզուներում էլ այն կուտակումներն են, որոնցում դիտարկվում են աղմուկ պարունակող բաղաձայն + ձայնորդ՝ ներկայացված SR և TR կառուցվածքներով, որտեղ անգլերենը բնութագրվում է սկզբնական կուտակումների մեծ քանակով:

Անգլերենի և հայերենի եռաբաղաձայն կուտակումների տարբերությունը շատ ավելի մեծ է: Հայերենի եռաբաղաձայն կուտակումները միայն մի քանի բառերում են գործածվում, և կարելի է համարել, որ

հայերենը խուսափում է սկզբնական դիրքում այս տիպի կուտակումներից. օրինակ՝

սփյուռք ստվեր
սկյուռ ստրուկ

Այս կուտակումներում առաջին տարրը /ս/ հնչյունն է, երկրորդը՝ խուլ պայթական, երրորդը՝ որպես կանոն շփական ձայնորդ:

Անգլերենը շատ ավելի հարուստ է եռաբաղաձայն սկզբնային կուտակումներով, քան հայերենը:

Կուտակումների այս խմբի ամենաարդյունավետ կառուցվածքները երկու տիպի են՝ [s] + խուլ պայթական + շփական ձայնորդ ([j] որպես կանոն),

[s] + շփական ձայնորդ (բացի [ռ]) + հպական ձայնորդ ([j] որպես կանոն):

slj, soj կուտակումները, ինչպես նաև սկզբնական պայթականներով կուտակումները շատ հազվադեպ են, քանի որ դրանք միայն մի քանի բառերում են հանդիպում:

Սովորաբար բառավերջի դիրքի կուտակումները շատ ավելի հաճախակի են, քան սկզբնական դիրքինը: Գ. Տորսուն անգլերենում առանձնացնում է մոտ 100 բառավերջի երկբաղաձայնային կուտակումներ¹ (երկու անգամ շատ քան սկզբնական դիրքում): Ինչ վերաբերում է հայերենում հետին կուտակմանը, ապա հարկ է նշել, որ մոտ 80 կուտակումներ են առանձնացվել:

Անգլերենի բառավերջի կուտակումների դասակարգումը սերտորեն կապված է վանկային կառուցվածքի հետ, քանի որ բառավերջի կամ վանկի վերջի ձայնորդները կարող են վանկեր կազմել նախորդող բաղաձայնի հետ:

Այսպիսով՝ SR, RR և TR վանկային կառուցվածքները անհրաժեշտ է խմբավորել որպես առանձին վանկեր կազմող կուտակումներ, մինչդեռ մնացած կառուցվածքները (SS, ST, RT, TS և TT) կարող են սահմանվել որպես իրական՝ բառավերջի կուտակումներ:

Երկբաղաձայնային կուտակումների համեմատությունն ակնհայտ է դարձնում, որ այս տեսակի բառավերջի կուտակումներն ավելի հատուկ են հայերենին /125/, քան

անգլերենին /100/, որոնցից 40-ը իսկական կուտակումներ չեն: Անգլերենի և հայերենի կուտակումները կազմում են հետևյալ հաջորդականությունը՝ ըստ դրանց արդյունավետության.

Անգլերեն՝ SR TR (17), RS RT (16), ST (9), TS(8), RR (7), TT(6), SS(4):

Հայերեն՝ RT (45), ST (26), RS (17), RR TT (2), SS (5), SR ST (4):

Երկուսից ավել բաղաձայններից բաղկացած կուտակումների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ հայերենին բնորոշ են միայն մի քանի հետին եռաբաղաձայն կուտակումներ.

կուր[ց]ք երկայնք
անցք պար[թ]ք

Այս խմբավորումներին բնորոշ է RT-ք կառուցվածքը: Երեքից ավել բաղաձայններից բաղկացած հետին կուտակումներ չեն հանդիպում հայերենում:

Անգլերենում, ընդհակառակը, բառավերջի դիրքը շատ հարմար է երկուսից ավել բաղաձայններից բաղկացած կուտակումների համար: Այս դիրքում դիտվում են ավելի քան 200 եռաբաղաձայն, մոտ 130 քառաբաղաձայն, 38՝ հինգ բաղաձայնից բաղկացած և 7՝ վեց բաղաձայնից բաղկացած կուտակումներ:

Անգլերենում հետին եռաբաղաձայն կուտակումները [s], [z], [t] և [d] վերջին տարրերով ամենաշատ գործածվողներն են. սա բացատրվում է այն փաստով, որ այս հընչյունները կազմում են գոյականի հոգնակի թվի վերջավորությունները, անորոշ ներկայի եզակի III դեմքը, անցյալ կատարյալը և վաղակատար դերբայը:

[s], [z], [t] և [d] բաղաձայններից բացի՝ այլ բաղաձայններով ավարտվող կուտակումները բառակազմության արդյունք են /մոտ 60 կուտակումներ/. օրինակ՝

[ndʹl] angel

[lpl] scalpel

Չորս, հինգ, վեց բաղաձայններից բաղկացած կուտակումները հիմնականում բացատրվում են ձևակազմական վերջավորություններով, որոնցից միայն 40 կուտակումներն են բառակազմության արդյունք /հատկապես քառաբաղաձայն կուտակումներ/:

րում/ օրինակ՝

[bsns] absence

[ltns] exultance

Քառաբաղաձայն կուտակումները ներառում են հետևյալ 28 կառուցվածքները.

SRRS: [snlz] arsenals	RTRR: [Kgrl] mongrel
SRRT: [frnt] different	RTST: [mpts] glimpsed
SRTS: [+nts] patients	RTRT: [mbld] ramble
SRTS: [fldz] scaffolds	RTTS: [Kkts] adjuncts
STRS: [sklz] rascals	TSSS: [ksTs] sixths
STRR: [strl] pastoral	TSTS: [ksts] texts
STRT: [st+nd] questioned	TSRS: [pslz] topsails
RSRS: [nslz] pencils	TSRT: [ksld] axled
RSRT: [KRnd] lengthened	TSTR: [kstin] sexton
RSRR: [k+nl] frictional	TRST: [dnts] evidenced
RRRS: [mrllz] numerals	TRRT: [brnt] exuberant
RRRT: [mrnt] cormorant	TRRS: [knlz] cracknels
RRTS: [rldz] heralds	TRTS: [pnts] serpents
RTRS: [lplz] scalpels	TRTR: [bltn] subaltern

Հինգ բաղաձայններից բաղկացած կուտակումները ներառում են հետևյալ 13 կառուցվածքները.

STRRS: [strlz] pastorals
 RTRRS: [mbrlz] tumbrels
 STRTS: [stnts] assistants
 TSRTS: [RTRTS: [ltnts] resultants
 RSRTS: [n(nts) tangents
 TSTSS: [kstgs] tangents
 RRRTS: [mrnts] cormorants
 TSTRS: [kstin] sextons
 RTSRS: [mp+nz] presumptions
 TRRRS: [dmrlz] admirals
 RTSRT: [K kRnd] lengthened
 TRRTS: [grnts] emigrants

Վեց բաղաձայններից բաղկացած կուտակումները ներառում են ընդամենը վեց դեպք.

RSTRRS: [nstrlz] minstrels
 RTRRTS: [ntrnts] entrants
 RSTRTS: [nstnts] constants
 RTRTRS: [mpltnz] simpletons
 RSTRRT: [nstrnt] remonstrant
 TSTRTS: [kstnts] sextants

Այսպիսով՝ երեքից ավել բաղաձայններից բաղկացած կուտակումների մեծ մասը ներառում է 1-3 ձայնորդներ՝ բացառությամբ մի քանի կառուցվածքների՝ TSSS, TSTS, TSTSS:

Չնայած բառավերջի կուտակումն ավելի բնորոշ է անգլերենին /մոտ 500 կուտակումներ/, քան հայերենին /մոտ 115 կուտակում-

ներ/, հարկ է նշել, որ երկբաղաձայնային կուտակումներն ավելի հաճախ հանդիպում են հայերենում /մոտ 100/, քան անգլերենում /մոտ 80/, որը պատճառաբանվում է հայերենում բաղաձայնների ավելի մեծ թվով:

Անգլերեն և հայերեն բաղաձայն հնչյունների շարութաբանական ուսումնասիրությունից հանգում ենք այն եզրակացության, որ անգլերենի բաղաձայնների մեծ մասը կարող է հանդիպել ցանկացած դիրքում: Անգլերենի յուրահատկությունը պայմանավորված է /h/, /w/, /l/, /r/ և /n/ հնչյունների սահմանափակ բաշխվածությամբ:

Ինչ վերաբերում է հայերենի բաղաձայններին, ապա հարկ է նշել, որ /h/, / ֆ/, /յ / և /ր/ հնչյունների գործածությունը հարաբերականորեն սահմանափակ է. դրանք կամ հազվադեպ են գործածվում (/ֆ/), կամ հազվադեպ են հանդիպում որոշակի դիրքերում (/ h, j, r/):

Իսկ ինչ մնում է բաղաձայնների համատեղելիությանը, ապա անգլերենում և հայերենում սկզբնական և հետին կուտակումների վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ անգլերենում սկզբնային բաղաձայնական կուտակումների թիվն ավելի մեծ է, քան հայերենում. անգլերենում սկզբնային դիրքում հանդիպում են երկու, երեք բաղաձայններից բաղկացած կուտակումներ, մինչդեռ հայերենում սկզբնային կուտակումներում բաղաձայնների քանակը չի գերազանցում երկուսը /ընդամենը մի քանի բառ կա սկզբնային եռաբաղաձայն կուտակումներով/. անգլերենում սկզբնային կուտակումները զգալի դժվարություն են ներկայացնում անգլերեն սովորող հայալեզու ուսանողների համար:

Իրականացված վերլուծության գործնական նշանակության տեսակետից հարկ է նշել, որ, չնայած հայերենի երկբաղաձայն խմբավորումների մեծ քանակին, անգլերենի սկզբնական երկբաղաձայն կուտակումները այնուամենայնիվ անգլերենն ուսումնասիրող հայալեզու ուսանողների համար զգալի դժվարություն են ներկայացնում, քանի որ ուսումնասիրվող լեզուներում համընկող կուտակումների թիվը շատ փոքր է, և անգլերենի հնչյունաբանության դասա-

վանդման գործընթացում սկզբնական թյան արտաբերման խնդրին հարկավոր է կուտակումների պատշաճ արտասանու- հատուկ ուշադրություն դարձնել:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Abercrombie D. (1991) Fifty Years in Phonetics. Edinburgh University Press. Chapter 9
2. Giegerich H.J. 1992. English Phonology. Cambridge: Cambridge University Press.
3. Vassilyev V.A. English phonetics (a theoretical course) Moscow, 1970.
4. Widdowson H.G. Linguistics, Oxford, 1998.
5. Гак В. Г. Сравнительная типология французского и русского языков. – М., 1989.
6. Торсуев Г.П. Вопросы фонетической структуры слова (на материале английского языка), - М., - Л., 1962.
7. Тошьян С.Б. Консонантные группы в русском и армянском языках. Русский язык в армянской школе. – Ер., 1983.
8. Ջահուկյան Գ.Բ. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974թ.

"Some concepts on syntax peculiarities studies of the
English and Armenian consonant sounds"

M. Khocharyan

Summary

The article reveals the typological peculiarities of the syntax combinations of the English and Armenian phonemes.

Изучение коррупции ведется достаточно давно. В настоящий момент уже сложились определенные направления по изучению коррупционного поведения в ряде сфер – политике, милиции, таможенных и налоговых органах, здравоохранении и др., однако проблемы коррупции в сфере образования стали объектом исследования совершенно недавно [Larmour, 2001; Bouza, 2001; Kotkin, 2002; Gupta, 2000; Theobald, 1990; Fjeldstad, 2003].

Несмотря на то, что исследования коррупционного поведения в сфере образования ведутся в большинстве стран мира, пока не существует однозначно принимаемого научной общественностью определения образовательной коррупции, так как коррупция в сфере образования принимает разнообразные формы и пронизывает все уровни системы. Обзор научных публикаций по данной тематике позволяет выделить несколько форм коррупции в системе образования:

1. Хайнеман в обзоре форм проявлений коррупции в высшем образовании выделил следующие типы: плата за поступление в образовательное учреждение, подкуп за получение аккредитации, злоупотребления при приобретении товаров и услуг со стороны администрации учебного заведения, покровительство профессионально некомпетентных лиц, и нецелевое использование имущества и других средств, а также уклонение от налогов [Heuneman, 2001].

2. Классификация форм коррупционного поведения Чэпмэна построена по совершенно другому принципу. В отличие от Хайнемана, Чэпмэн не только попытался описать формы коррупционного поведения, но и выделил уровни, на которых возможна образовательная коррупция. Исследователю удалось выделить следующую иерархическую структуру: минис-

терство образования, региональная и/или районная администрация, уполномоченная контролировать и регулировать образовательные учреждения, образовательные институты (у Чэпмэна выделена только школа), обучающий – обучаемый (у Чэпмэна данный уровень называется “учитель – ученик”), международные агентства по образованию. Коррупция на выделенных Чэпмэном уровнях принимает различные формы, основные из которых: покровительство (фаворитизм) во время закупок товаров/услуг, покровительство при назначении на определенные должности, наличие “мертвых душ” – как среди учеников и студентов, так и преподавателей. Продажа места в классе/ аудитории и оценок, репетиторство и уклонение от налогов [Chapman, 2003].

3. В своей классификации Альтбах разделил коррупционные отношения на две группы: “преподавательскую” и “экзаменационную”. В первую группу входят фаворитизм при найме и продвижении преподавателей, а во вторую – плата за хорошие оценки на различных экзаменах – вступительных и текущих [Altbach, 2004].

4. Джанашия описывает коррупцию на постсоветском пространстве, основываясь на данных полученных в различных исследованиях проведенных в Грузии, выделяя 3 формы коррупции – коррупция при поступлении, при текущем обучении во время экзаменов и репетиторство. [Janashia, 2004].

Если попытаться реконструировать определения коррупции на основе приведенных типологий, то можно увидеть, что авторы, либо руководствовались определениями, имеющими достаточно узкую сферу применения, либо наоборот – настолько общими, что они, практически, ничего не объясняют.

Обзор основных, но, безусловно не всех работ, посвященных попыткам типологизации, выявляет наличие как минимум двух

проблем: проблема отсутствия определения и проблема выделения такой основы для построения типологической модели, которая позволит определить является ли коррупция в сфере образования специфичной формой коррупционного поведения, или же ее нужно рассматривать как подтип коррупции в сфере общественного сервиса. Кроме того, большинство научных работ касающихся проблемы коррупции в образовательной системе, в том числе и в вышеупомянутых, приводятся достаточно объемные рекомендации по борьбе с коррупцией. Однако, очевидно, что все эти выводы достаточно преждевременны и обманчивы, по той причине, что первично понимание структуры коррупции, на которой будет возможно построить определенные теоретические постулаты и только после этого можно рассуждать о средствах противодействия и редукции.

В данной статье мы стараемся представить новую типологию коррупционных отношений, основанных на ряде качественных исследований, проведенных как среди административных работников, лаборантов, преподавателей, деканов и проректоров, так и студентов 1-го, 4-го курса бакалавриата, 2-го курса магистратуры, а также аспирантов, различных по статусу вузов Армении, так как по нашему мнению ответы на поставленные вопросы можно найти лишь при условии наличия определенного, структурированного, типологизированного представления о коррупции¹.

При использовании термина “типологизация” мы столкнулись с достаточно сложной проблемой, так как дефиниция этого понятия в специальной литературе не позволяет ставить конкретные задачи по построению типологических моделей². При всем при этом, из социологического определения можно сделать достаточно важный вывод - вводя термин “типологический анализ”, мы получаем возможность обозначить некоторое направление, в рамках которого типологизация может служить одновременно двум целям: описанию и объяснению.

Следовательно, из большинства определений “типологического” анализа, для нашего анализа более приемлема дефиниция типологического анализа Г. Татаровой: типологический анализ - совокупность методов изучения социальных объектов (или явлений), позволяющих выделить социально значимые, внутренне однородные, качественно отличные друг от друга группы объектов (или явлений),

характеризующиеся типобразующими признаками, природа которых различна, и интерпретируемых как носители различных типов явлений [Татарова 1993, 14]³.

Преимущество определения Татаровой состоит в том, что, во-первых, оно не содержит понятия “устойчивое сочетание свойств”, которое используется при трактовке типологизации в наиболее распространенных определениях — оно (устойчивое сочетание свойств) сведено на более низкий уровень операциональной схемы. Во-вторых, определение отнесено только к способу реализации типологического метода как метода познания социальных явлений. В-третьих, данное определение можно считать операциональным для понятия “типологический анализ”.


Понятие “тип”, “типология” настолько взаимосвязаны, что не существуют друг без друга, особенно в эмпирической социологии. Поэтому выделим несколько важных для наших целей положений.

1. Каждый объект изучаемой совокупности объектов (или явлений) является носителем типа, а возможно, и нескольких типов.
2. Типологический анализ как исследовательская стратегия реализуется для проверки гипотезы о существовании типов объектов на основе конструирования (построения, выделения) классов (подмножеств, групп) объектов.
3. При создании мысленной конструкции понятия “тип” необходимо иметь в виду его познавательные возможности, обусловленные целью, ради достижения которой “ищется” знание о нем.

Непосредственно до представления результатов типологического анализа, считаем необходимым процитировать классика социологии М. Вебера - “чем резче и однозначнее сконструированы идеальные типы, чем они, следовательно, в этом смысле чужды миру, тем лучше они выполняют свое назначение — как в терминологическом и классификационном, так и в эвристическом отношении” [Вебер, 15]

Кроме этого приведем рабочее определение “коррупции”. Для этого объединим идеи Ньи о том, что коррупция это нарушение законно установленных границ между общественным положением и частной выгодой [Nye, 1967] и Джэйн о том, что коррупция это обмен власти на деньги, при условии, что власть коренится в общественном положении [Jain, 2001].

Структурно коррупция в образовательном учреждении выглядит следующим образом



(схема 1.)

Мы выделили 2 подгруппы коррупционных отношений в сфере высшего образования: первая группа состоит из коррупционных отношений, в которые в качестве агентов непосредственно вовлечены “обучаемые” (студенты, школьники) и, которые непосредственно влияют на “обучаемых”, вторая группа, которая состоит из таких коррупционных отношений, результаты которых не имеют прямого влияния на “обучаемых”, исключают их из взаимодействия⁴.

В фокусе нашего анализа будет именно первая группа, как специфичное проявление коррупции.

Рассмотрим содержание выделенных таксонов:

1. Обучаемый / Обучающий - в данный таксон попадают все те формы коррупционной деятельности, которые возникают между преподавателями (учителями) и студентами (школьниками) вокруг процессов поступления в образовательное учреждение, экзаменов, промежуточного контроля уровня знаний и т.д. В данном случае в качестве объектов обмена выступают с одной стороны деньги, услуги, ювелирные украшения, парфюмерия и т.д., а с другой стороны оценки либо другие преимущества в учебном процессе. Коррупционные отношения в данном таксоне могут быть инициированы как студентами и школьниками (либо их представителями), так и лицами непосредственно вовлеченными в процесс обучения.

2. Обучаемый / Штатные сотрудники — в данный таксон попадают все те формы коррупционной деятельности, которые возникают в процессе предоставления услуг, прямо либо косвенно связанных с получением образования. В данном случае за определенную “плату” обучаемый получает место в общежитии, в спортивной секции, считающейся более престижной (напр. секция плавания в ГИУА), книги не выдаваемые из читального зала, путевки в места отдыха, материальную помощь и т.д. Как и в предыдущем случае инициатором коррупционного поведения может быть как первая, так и вторая сторона.

3. Обучаемый / Администрация — коррупционные отношения, включенные в данный таксон, могут корениться в двух сферах — сфере предоставления услуг, связанных с получением образования и, непосредственно, в сфере образовательных процессов. Администрация различных уровней в той или иной мере имеет формальную возможность влияния на обе сферы. Возможности влияния администрации на ту или иную сферу обусловлены административным иерархически - функциональным устройством образовательного учреждения. В данном таксоне также инициатором коррупционного поведения может быть как первая так и вторая сторона.

В качестве типа требующего отдельного рассмотрения, мы выделяем коррупцию связанную с управлением образовательным учреждением. Главным качественным отличием

этого типа от коррупции, связанной с образовательным процессом, является форма влияния на обучаемых (студентов либо школьников). В первом случае мы имеем косвенное влияние на студентов, а во втором случае обучаемые, вовлекаясь в коррупционные отношения в качестве агентов, непосредственно подвержены прямому влиянию.

В целом, как уже было сказано, есть два общих негативных последствия: первое — растрата, присвоение или нецелевое использование материальных ресурсов (общая форма коррупционного поведения) — с этой точки зрения отличия от коррупции в других сферах нет, и второе — насаждение ценностей, которые в дальнейшем будут способствовать воспроизведению коррупционного поведения и неравномерному распределению общественных благ, как следствия нарушения доступности качественного образования для различных слоев общества, дисфункции отбора достойных для поддержки элиты — специфической общественной прослойки.

Подводя итог проделанного анализа, хочется отметить, что выделенные на основе двух критериев — тип участников вовлеченных в отношения обмена и сферы, в которых коренятся коррупционные отношения — таксоны помогают деконструировать запутанную систему коррупционных отношений в образовательных учреждениях и могут играть роль ориентиров для разработки методических и теоретических основ комплексного изучения коррупционных отношений.

¹ Исследования проводились при финансовом содействии Кавказского Центра Исследовательских Ресурсов гранта номер C05-7107, благотворительного фонда Международного Совета Церквей и др.

² Напр. см «Рабочая книга социолога. М., 1983» стр. 439. Понятие типологизация определяется как процедура «поиска устойчивых сочетаний свойств социальных объектов (или явлений) в целостной системе переменных, относящихся к этому объекту

(или явлению)». Однако ни в данном источнике ни где-либо не дается однозначной интерпретации терминам «целостность», «свойство», «устойчивость», от которых зависит итоговое понимание «типологизации». До сих пор данная проблема находится в фокусе научных дискуссий.

³ Татарова Г. «Типологический анализ в социологии», М., «Наука», 1993; стр. 14

⁴ Коррупционные отношения, опосредованные третьим лицом, так же рассматриваются в контексте первой группы

СПИСОК ЦИТИРУЕМОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Татарова Г. «Типологический анализ в социологии», М., «Наука», 1993.
2. Вебер М. «Исследования по методологии науки». М., «Наука», 1980. Ч. 1.
3. Altbach, P. «The question of corruption in academe». International Higher Education, 34, 2004.
4. Bouza A. «Police unbound: Corruption, abuse, and heroism by the boys in blue». Amherst, Prometheus Books. 2001.
5. Chapman D. «The sectoral dimensions of corruption: Education». в Spector B. «Fighting corruption in developing countries». Bloomfield, Kumarian, 2003.
6. Fjeldstad O. «Decentralization and corruption. A review of the literature». По материалам www.u4.no/document/researchreports.cfm
7. Gupta S. «Corruption and the provision of health care and educational services» По материалам www.imf.org/external/pubs/ft/wp/2000/wp00116.pdf
8. Jain A. «Controlling power and politics». в Jain A. «The political economy of corruption», London: Routledge, 2001.
9. Janashia N. «Corruption and higher education in Georgia». International Higher Education, 34, 2004.
10. Kotkin S. «Political corruption in transition: A skeptic's handbook». New York, 2002
11. Larmour P. «Corruption and anti-corruption». Australia, Asia Pacific Press, 2001.
12. Nye J. «Corruption and political development: A cost-benefit analysis». American Political Science Review, 61, 1967
13. Theobald R. «Corruption, development and underdevelopment». London, Macmillan. 1990

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱԳՐԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ամփոփում

Հոդվածը նվիրված է կրթական կառույցներում կոռուպցիոն հարաբերությունների տիպաբանությանը: Տիպաբանական վերլուծության հիմքում դրվում է երկու չափանիշ՝ կոռուպցիոն հարաբերություններում ներգրավված սուբյեկտների տեսակները և ոլորտները, որտեղ իրագործվում են կոռուպցիոն հարաբերությունները: Կառուցված տիպաբանությունը հնարավորություն է ընձեռում նախ՝ ավելի հստակ գործառնացնել «կոռուպցիա» հասկացությունը կրթական հաստատություններում, ապա՝ համակարգային պատկերացում ստանալ այդ երևույթի մասին:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

Ն. ԳՅՈՒԼԲԱՆԳՅԱՆ

Երևանի Խ. Աբովյանի անվան պետական
համալսարանի
կուլտուրայի ֆակուլտետի հայցորդ

ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը ծնունդ է գեղարվեստական դաստիարակության մեթոդների՝ մանկավարժական ներգործության ընդհանուր մեթոդների հետ ունեցած փոխազդեցության խնդիր: Երեխայի վրա գեղագիտական ներգործությունը գործնականորեն սկսվում է նրա ծնվելու պահից: Նրա վրա վճռական դաստիարակչական ներգործություններ են ունենում առավել ուժեղ տպավորությունները: Վաղ մանկության շրջանում դա ընթանում է տարերայնորեն: Այն ընտանիքում, որտեղ հետաքրքրվում են արվեստով, երեխաների մեջ ձևավորվում է գեղարվեստական ճաշակ, զարգանում է նրանց գեղագիտական ընկալումը: Այն ընտանիքներում, որտեղ արվեստը բավարար չափով հարգի չէ, գեղարվեստական ճաշակի ձևավորումը շատ հաճախ կախված է լինում իրերի պատահական բերումից:

Որոշ երեխաների գեղագիտական զարգացման և գեղարվեստական ճաշակի ոչ բարձր մակարդակը բացատրվում է նրանով, որ նրանց փոքրիշատե կազմակերպված, մանկավարժորեն նպատակաուղղված գեղարվեստական դաստիարակությունն սկսվում է մանկապարտեզից, և պատահում է այնպես, որ տարիքային որոշ ժամանակաշրջաններում գոյանում է ճեղքվածք երեխայի գեղագիտական դաստիարակվածության մեջ, որը հաճախ լրացվում է ցածրարժեք գեղարվեստական տպավորություններով: Վերջիններս ձևավորում են ցածր գեղարվեստական ճաշակ, որը ոչ միայն կա-

սեցնում է երեխաների ընդհանուր և գեղագիտական զարգացումը, այլև թուլացնում է նրանց գաղափարա-քաղաքական զարգացումը:

Անձնավորության գեղագիտական ձևավորման մեջ վճռական դեր են խաղում բուն գեղարվեստական դաստիարակության մեթոդները: Բուն գեղարվեստական դաստիարակության մեթոդների թվին, հավանաբար, պետք է դասել երեխաների՝ արվեստի այս կամ այն տեսակի գործնական ուսուցումը: Հայտնի է, որ անցյալի մանկավարժների մեծամասնությունը (Յ. Ա. Կոմենսկի, Ի. Գ. Պեստալոցցի, Ն. Ի. Պիրոգով, Կ. Դ. Ուշինսկի և ուրիշներ) ուսուցումն ընդհանրապես դիտել է որպես դաստիարակության գլխավոր մեթոդ, որն իրագործվում է և այժմ: Երեխան, ձեռք բերելով գիտելիքներ, այսպես թե այնպես դրանք օգտագործում է իր վարքում, իր գործունեության մեջ:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն մաև գործնական ուսուցման մեթոդները երեխայի գեղագիտական դաստիարակության համար: Բանն այն է, որ գործնական ուսուցումը միշտ էլ լուծում է համալիր խնդիր-հմտությունների ձևավորում, ընդունակությունների, հուզական ոլորտի և անհատականության զարգացում, գեղարվեստական ճաշակի դաստիարակություն: Այսպես՝ երգեցողության ուսուցումը տալիս է երգելու հմտություններ, զարգացնում է ձայնային տվյալները և լսողությունը, ընտելացնում է հուզական արտահայտմանը: Նկար-

չության ուսուցումը հնարավորություն է տալիս տիրապետել գեղարվեստական գրարվեստի տեխնիկային, զարգացնում է գույնի և ձևի ընկալումը, հարստացնում է զգացմունքների աշխարհը: Պարի ուսուցումը ձևավորում է որոշակի շարժողական հմտություններ, սահուն ու ճկուն շարժումների ընկալման սրություն, շարժումների օգնությամբ զգացմունքներ արտահայտել է սովորեցնում: Դերասանական վարպետության և գեղարվեստական ընթացանություն արվեստի ուսուցումը շարժման մեջ է դնում բազմազան մտավոր ընդունակություններ: Մարդկային գործունեության ցանկացած բնագավառում վարպետության ուսուցումը, որը իրագործում է «ըստ գեղեցիկի օրենքների», ապահովում է ոչ միայն ինչ-որ հմտությունների ձևավորում և ընդունակությունների զարգացում, այլև գեղագիտական ճաշակի կատարելագործում:

Գործնական ուսուցման ընթացքի վերլուծությունը հանգեցնում է այն հետևության, որ գեղեցիկը տեսնելու, հասկանալու, ստեղծագործելու կարողության ձևավորումը զգալի չափով իրացվում է ուսուցման ժամանակ: Իսկ գեղարվեստական բարձր ճաշակը ուղղակի կախվածության մեջ է ստեղծագործական գործունեության ընթացքում մտավոր ունակությունների զարգացումից, հուզական ոլորտի զարգացումից: Եվ, իհարկե, գեղարվեստական ճաշակը զգալի չափով կախված է նաև գործնական:

Հայտնի է, որ դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում վճռական դեր են խաղում արվեստը և գեղարվեստական ստեղծագործական գործունեությունը:

Իսկական արվեստն անբակտելիորեն կապված է իրականության հետ: Այն ուսումնասիրում և արտացոլում է կյանքի այնպիսի երևույթները, որոնք օժտված են գեղագիտական հատկանիշներով: Լուրջ արվեստի խորքը թափանցելու, այն մինչև վերջ

հասկանալու համար անհրաժեշտ է ունենալ կյանքի իմացության փորձ: Կենսափորձի բացակայության դեպքում երեխան արվեստի՝ իր համար անհասկանալի աշխարհի մտնում, որտեղ նրա ուշադրությունը գրավում են զուտ արտաքին տպավորությունները, որոնց նկատմամբ եղած հետաքրքրությունը շատ շուտով՝ առաջին իսկ ծանոթությունից հետո, անհետանում է: Կենսական գեղագիտական փորձի, գեղարվեստական ինքնագործունեության օգնությամբ գեղեցիկը ստեղծելու փորձի կուտակումը, ինչպես և արվեստի տարբեր տեսակների մեջ արտահայտված հասարակական արժեքների տիրապետումը պետք է իրագործվեն միասնության մեջ՝ ամենավաղ հասակից սկսած: Միայն այդ միասնության հետևանքով երեխաների մեջ կզարգանա իսկական գեղագիտական հարաբերություն իրականության նկատմամբ՝ ընդհանրապես, արվեստի նկատմամբ՝ առանձնապես: Երեխաների ուսումնական և հասարակական հանրօգուտ աշխատանքը՝ այն զարգացնող հնարավորությունների տեսանկյունով, հարկավոր է քննել ոչ թե մեկուսի, այլ արվեստի և մանկական գեղարվեստական ինքնագործունեության դաստիարակչական հնարավորությունների հետ անխզելի միասնության մեջ:

Գեղարվեստական ստեղծագործությունների հետ երեխաների հաղորդակցվելու փաստը ինքնին դեռևս բավական չէ նրանց մեջ դեպի արվեստն իսկական գեղագիտական վերաբերմունք զարգացնելու համար: Հարկավոր է մեծ աշխատանք, որը հատուկ ուղղված լինի դպրոցականների գեղարվեստական ճաշակի ձևավորման նպատակին:

Արվեստի հետ հաղորդակցվելու անհրաժեշտության զգացողությունը երեխաների մեջ առաջանում է աստիճանաբար զարգացող գեղեցիկի պահանջի և լայն ճանաչողական հետաքրքրության հիման վրա: Իրենց կյանքի ընթացքում դպրոցականները գալիս են այն ճշմարտության իմացությանը,

որ արվեստը գիտելիքների անսպառ զան-
ձարան է և կյանքի գեղեցիկ շերտերի
խտացված դրսևորում:

Սովորողների՝ արվեստի յուրացման հիմ-
քում ընկած է այն դիալեկտիկան, որի օգ-
նությամբ կարելի է բացատրել երեխաների
վերաբերմունքը գեղարվեստական երկերի
նկատմամբ՝ ըստ նրանց զարգացման տար-
բեր փուլերի: Այդ ներհակության էությունը
հետևյալն է: Արվեստն իր պատկերային էու-
թյամբ առաջին հայացքից երեխաներին
թվում է իբրև բազմապիսի իրադարձություն-
ների ցուցադրում միայն, իրականության
տարբեր կողմերին ծանոթանալու պարզ
եղանակ:

Ելնելով արվեստի հետ դպրոցականնե-
րի հաղորդակցման վրա կատարած բազ-
մաթիվ դիտումներից՝ կարելի է անել
հետևություն, որ երկի նկատմամբ երեխա-
ների գեղագիտական հարաբերության
սկզբնական առարկան նրա՝ անմիջականո-
րեն ընկալվող բովանդակությունն է: Ընդ
որում ձևը մեկընդմիշտ տրված չէ և անփո-
փոխ չէ: Քանի որ արվեստն արտացոլում է
կյանքը, ապա կյանքի, նրա գաղափարնե-
րի, ընթացքի ու ռիթմի փոփոխությունն իր
հետ օրինաչափորեն կրերի երկի ձևի որոշ-
ակի փոփոխություն:

Առաջավոր ուսուցիչների փորձը ցույց է
տալիս, որ կրտսեր դպրոցականներին ար-
դեն անհրաժեշտ է ծանոթացնել բնության,
զգացմունքների մասին պատմող այնպիսի
բարձր գեղարվեստական երկերի հետ,
որոնք արթնացնում են նման զգացմունք-
ներ մարդու մեջ:

Այն պահից, երբ դեռահասը սկսում է գի-
տակցել իրեն՝ որպես հասարակության ան-
դամի, երբ գիտակցաբար ձգտում է ինքնա-
հաստատվել շրջապատում, նրա մեջ զար-
գանում է նոր վերաբերմունք դեպի արվես-
տի երկերը, բարձրանում են պահանջները
ձևի նկատմամբ: Դպրոցականի կենսական
և գեղագիտական փորձը դառնում է որակա-
պես այլ: Սկզբում երեխան այնքան պա-

հանջկոտ չէր ձևի նկատմամբ, որովհետև
ագահորեն դիտում էր արտաքին իրադար-
ձությունները, կուտակում էր հարաբերու-
թյունների փորձ, տարված էր կյանքի դիմա-
միկայով: Այժմ ավարտված է նախնական
կուտակման շրջանը: Հասել է այն իմաստա-
վորելու և կյանքում իր դիրքը գիտակցելու
շրջանը այդ փորձի հիման վրա: Հայացքն
ուղղվում է ներքին ապրումների, զգա-
ցմունքների, մարդկային հատկանիշների և
հարաբերությունների զարգացման վրա:
Ավագ դեռահասը որոնում է ապրումների
համահնչյունությունը ոչ միայն շրջապա-
տող կյանքի, այլև մարդկանց սրտերի մեջ,
այլև արվեստի երկերում: Այժմ իր սեփա-
կան, ինչ-որ աստիճանի իմաստավորված
փորձի հիման վրա նա նկատում է, թե որքա-
նով ճիշտ է պատկերված հոգեկան այս կամ
այն իրավիճակը, երաժշտական երկը որ-
քան խորն է արտացոլում զգացմունքը, դե-
րասանն ինչքան ստույգ է վերարտադրում
իր հերոսի բնավորության գծերը, բավակա-
նաչափ վառ են գույներն աշնանային օրը
պատկերելու համար:

Բայց այդ շրջանը սոսկ տարիքային
զարգացման հետևանք չէ, և սխալ կլիներ
սպասել, թե այն վրա կհասնի յուրաքանչ-
յուր երեխայի մեջ ինքնիրեն: Հասկանալի է,
որ չի կարելի կրտսեր դպրոցականի հետ
զրուցել՝ գործածելով բարդ, նրանց համար
անհասկանալի տերմիններ, բայց կարելի է
և միանգամայն անհրաժեշտ է հարցերի էու-
թյունը նրանց առաջ բացահայտել մատչելի
ձևով՝ գեղեցիկի մասին նոր հասկացությու-
նը կապակցելով նրա վերաբերյալ երեխա-
ների ունեցած պատկերացումների հետ: Այդ
բոլորը ոչ միայն կընդարձակի դպրոցակա-
նի մտափորձը, այլև կսովորեցնի նրանց
հասկանալ գեղարվեստական գրականու-
թյունը, ավելի լուրջ և խոր վերաբերմունք
ունենալ գրքերի և արվեստի այլ երկերի
նկատմամբ: Երեխաները աստիճանաբար
կընտելանան նրան, որ գրքի, նկարի մեջ
պետք է տեսնել ոչ միայն իրադարձություն-

ների դիմամիական, այլև արվեստագետի վարպետությունը, որը կնպաստի երկերի գաղափարների ավելի խոր ըմբռնմանը և առավելագույն հաճույք պատճառելուն:

Որպեսզի արվեստը երեխաների համար դառնա գեղագիտական հարաբերության իրական օբյեկտ, կարևոր է, որ սովորողների՝ դպրոցում կազմակերպվող գեղագիտական լուսավորությունը, որն իրացվում է գեղանկարչության և երաժշտության նախասիրական պարապմունքների, երեկույթների ու զրույցների միջոցով, որքան կարելի է, սերտորեն առնչվի դպրոցականների կյանքի գեղագիտության, նրանց անձնական, կենսական և գեղագիտական փորձի հետ: Այս դեպքում արվեստը դադարում է սոսկ զվարճանքի գործոն լինելուց: Երեխաների գիտակցության մեջ այն վերածվում է կյանքի առավել խոր յուրացման միջոցի, բարոյական հայացքների ու համոզմունքների վրա արգասավոր ներազդող միջոցի:

Բայց երեխաների կյանքում արվեստը միայն ընկալման առարկա չէ: Մանկական կյանքում այն ներկա է նաև որպես ստեղծագործական գործընթաց, որպես գեղարվեստական ինքնագործունեություն, որոնք կազմում են դպրոցականների գեղագիտական փորձի զգալի մասը: Մանկական գեղարվեստական ինքնագործունեության ո՞ր կողմերն են երեխաների մեջ առաջացնում գեղագիտական վերաբերմունք իրենց նկատմամբ:

Նախ՝ երեխաների գեղարվեստական ինքնագործունեությունը նրանց ինքնահաստատման կարևորագույն և հիմնական միջոցներից մեկն է: Մանկական բնության առանձնահատկությունը ոչ միայն այն է, որ երեխան ձգտում է կյանքի և ուսման ընթացքում հարստացնել իր փորձը: Դրանից բացի՝ նրան հատուկ է նաև իրեն արտահայտելու, իր եռանդը որոշակի գործունեության մեջ դրսևորելու ձգտումը:

Երկրորդ՝ ինքնագործունեությունը դառնում է կենսական ու գեղագիտական փորձի

ընդարձակման գործուն միջոց, որը յուրահատուկ կամուրջ է արվեստի, լուրջ գեղարվեստական ստեղծագործության առավել խոր ճանաչողության անցնելու համար: Այն բովանդակությունը, որի վրա կենտրոնացած է գեղարվեստական ինքնագործունեությունը, մշտապես դառնում է կամ անմիջական կյանքի գեղեցկություն, կամ արվեստի երկերի մեջ համակերտորոնացված գեղեցկություն: Այսպես՝ երեխաները նկարում են այն, ինչ իրենք անմիջապես դիտել են կյանքում, լուսանկարում են բնությունը, սովորում են բանաստեղծություններ, բեմադրում են զանազան պիեսներ: Ինչպես երևում է, դպրոցի աշխատանքի ինքնագործունեությունն անխզելիորեն կապված է իսկական արվեստի և գեղագիտական լուսավորության հետ: Հենց ի հաշիվ այդ կապի իրագործվում է կյանքի առավել արդյունավետ ճանաչողությունը, դպրոցականների կենսական ու էսթետիկական փորձի ընդարձակումը:

Եվ երրորդ, ինքնագործունեությունը երեխաներին ծանոթացնում է գեղարվեստական ստեղծագործության բուն պրոցեսի հետ, զարգացնում է նրանց ընդունակությունները, ձևավորում և ամրապնդում նրանց հմտությունները, հնարավորություն է տալիս ստեղծագործական աշխատանքի պրոցեսում, արվեստի մեջ հաճույք զգալու:

Եվ այսպես, մանկական գեղարվեստական ինքնագործունեությունը գիտակցական և ինքնատիպ էսթետիկական ստեղծագործություն է, որն իրագործվում է կյանքի ու արվեստի գեղեցիկի ճանաչողության անձնական փորձի հիման վրա և պայմաններ է ստեղծում ինքնաարտահայտման և հաստատման, կենսական ու էսթետիկական փորձի հարստացման, ընդունակությունների զարգացման, ստեղծագործության գաղտնիքներն ու բերկրանքն ընկալելու համար: Որպեսզի վերջնականապես պարզ լինի ինքնագործունեության դաստիարակչական էությունը, կարևոր է բացահայտել

այն ներքին զսպանակները, որոնք ստեղծագործության բերկրանքից բացի պայմանավորում է երեխայի ակտիվությունն ինքնագործունեության մեջ:

Մանկական ինքնագործունեությունը, այդ թվում նաև գեղարվեստականը, դպրոցականին էսթետիկական զարգացման և զվարճանքի պարզ միջոց չէ, այլ մանկավարժական գործունեության մի կարևորագույն ոլորտ, որտեղ վերանում է դիալեկտիկական կենսական հակասությունը, երեխան նախապատրաստվում է սոցիալապես նշանակալից դերի կատարմանը և մանկավարժորեն նպատակահարմար ձևով կազմակերպում է նրանց այսօրվա կյանքը:

Այժմ կանգ առնենք դպրոցական գեղարվեստական ինքնագործունեության այն կողմերի վերլուծության վրա, որոնք պատճառ են դառնում սովորողների մոտ էսթետիկական վերաբերմունքի առաջացման: Վերապահությանը ասենք, որ ինքնագործունեության էսթետիկորեն ընկալելի կողմերի մասնատումը թուլատրվում է սոսկ գիտական վերլուծության նպատակով և որ իրականում գեղարվեստական ինքնագործունեության էսթետիկական ներգործության արդյունավետությունը պայմանավորված է և ձեռք է բերվում հատկապես նրա էսթետիկական բոլոր հատկությունների միասնությամբ:

Վերջապես, փոքրիկ երեխաներն արագորեն և հաճույքով սերտում են բանաստեղծությունները և պատրաստ են անխափան ցուցադրելու արտասանելու իրենց ունակությունները: Մի խոսքով, փոքրիկ երեխաներն արդեն արտահայտում են գեղեցիկի իրենց վերապրումը և ըմբռնումը կոնկրետ գործողություններով, ստեղծագործական էսթետիկական ակտիվությամբ: Հատկապես ինքնարատահայտման պրոցեսում է երեխան ճաշակում բերկրանքը, էսթետիկական հաճույք: Դա էլ հենց էսթետիկական հարաբերությունն է իր գործունեության նկատմամբ: Բայց, եթե նախադպրոցականի

համար տեսած գեղեցիկի արտահայտման, էսթետիկական հարաբերության դրսևորման միջոցներ կարող են լինել գործնականորեն նրան մատչելի գեղարվեստական ինքնագործունեության բոլոր տեսակները, ապա կրտսեր դպրոցական տարիքում, փորձի ընդարձակման և ընդունակությունների զարգացման հետ կապված, տեղի է ունենում որոշ տարբերակում: Երեխաների մի մասը ավելի է հակվում դեպի նկարչությունը, մյուսները՝ դեպի երգը, երորդները՝ դեպի պարը՝ պահպանելով արտահայտման բազմապիսի ձևերի նկատմամբ ընդհանուր միտումը, և միայն դեռահասության տարիքի վերջում և պատանեկության սկզբում դպրոցականները դառնում են զուսպ, քիչ են ձգտում իրենց ապրումների զուրտ արտաքին դրսևորմանը և իրենց ուշադրությունը կենտրոնացնում են ինքնագործունեության որևէ մեկ տեսակի՝ իբրև ինքնաարտահայտման միջոցի վրա: Դա տեղի է ունենում ինքնաճանաչողության պրոցեսի, իր սոցիալական էության ըմբռնման, իր ընդունակությունների և հնարավորությունների փոքրիշատե իրական գնահատման հետ կապված: Ինքնագործունեության առանձնահատկությունն նրա ներկայացրած հնարավորությունն է մշտապես ստեղծագործորեն արտահայտելու կուտակված էսթետիկական մտապատկերները՝ էսթետիկական բերկրանքի ուղեկցությամբ: Ինքնագործունեությունն երեխաներին հնարավորություն է տալիս արտահայտելու իրենց պատկերացումը գեղեցիկի վերաբերյալ, իրենց սեփական գեղեցկությունը, այն ցույց տալու ուրիշ մարդկանց:

Հասարակական կյանքին մասնակցելը, սոցիալական պատասխանատու դերի կատարումը դպրոցականների համար գեղեցիկ փորձ է:

Կյանքին, հասարակական հարգանքին ու բերկրանքին մասնակցություն ունենալու ձգտումն երեխաների մոտ իր ելքն է գտնում ինքնագործունեության ձգտման, ինչպես և

նրա կազմակերպման հետ կապված զանազան գործերի մեջ: Ինքնագործունեության գեղեցիկ կողմը, որը նպաստում է նրա նկատմամբ սովորողների էսթետիկական հարաբերությունների արթնացմանը, դա նրա տված հնարավորությունն է կատարելու լուրջ սոցիալական դերեր՝ կապված մարդկանց հոգևոր կյանքի կարևորագույն բնագավառի՝ արվեստի հետ:

Դպրոցներում, որպես կանոն, կազմակերպվում են երեխաների ամենաբազմազան գործունեություն, որն ուղղված է նրանց կյանքի նախապատրաստելու, հասարակական հարաբերությունների ձևավորման և յուրաքանչյուր առանձին անձնավորության վորակների ու ընդունակությունների զարգացման նպատակին: Գործունեության մնացած տեսակների շարքում, որոնք նպաստում են անձնավորության անհատականության դրսևորմանն ու ինքնահաստատմանը կոլեկտիվում, կարևոր տեղ է գրավում գեղարվեստական գործունեությունը: Որոշ աշակերտներ կոլեկտիվում հաջողությամբ կատարելով որևէ հասարակական ֆունկցիա, ինքնագործունեությամբ զբաղվում են ի միջի այլոց: Ուրիշների համար ինքնագործունեությունն իր անհատականությունը դրսևորելու հիմնական ձևն է: Դա աշակերտների որոշմասի մոտ հենց այն է որի համար նրանց հարկում ու գնահատում են այն կենկրետ գործունեությունն է, որի շնորհիվ և որի միջոցով անձնավորությունը մտնում է կոլեկտիվի մեջ և զարգացնում է իր շփումը նրա անդամների հետ:

Դաստիարակչական կոլեկտիվի ձևավորման կարևոր պայմանը նրա՝ անձնավորության անհատականությունը տեսնելու, բացահայտելու, նրա գործունեությունն կազմակերպելու ընդունակությունն է, գործունեություն, որի մեջ դրսևորում և զարգանում է այդ անհատականությունը: Այդ պայմանը և՛ սուբյեկտիվորեն, և՛ օբյեկտիվորեն գեղեցիկ է, որովհետև ապահովում

է անձնավորության համակողմանի զարգացումը: Երեխան ձգտում է իր անհատականությունը դրսևորել ոչ միայն նրա համար, որպեսզի իր տեղը գտնի ուրիշների շարքում, հաստատվի կոլեկտիվում: Նա ձգտում է արտահայտել իր ներաշխարհը մասն հաղորդակցման համար, նրա համար, որպեսզի ինչ-որ բան հաղորդի շրջապատող մարդկանց, ինչ-որ բան ստանա նրանցից:

Գեղարվեստական ինքնագործունեությունը երեխաների մոտ առաջանում ու զարգացնում է էսթետիկական հարաբերություն իրականության նկատմամբ, ներկայացնում է գեղեցիկի նկատմամբ իրար հետ հաղորդակցվելու հնարավորություն, առաջ է բերում հասարակական հավանություն:

Մանկական գեղարվեստական ինքնագործունեության քննարկված բոլոր կողմերը չի կարելի մեկուսացնել մեկը մյուսից: Հենց դրանց միասնությունն է երեխաների մեջ ծնում և ամրապնդում էսթետիկական հարաբերություն դեպի ինքնագործունեությունը և այն դարձնում մանկան ողջ կյանքի էսթետիկական կազմակերպման կարևոր տարրը: Դրանից բացի գեղարվեստական ինքնագործունեությունը, զարգացնելով ու խորացնելով երեխաների էսթետիկական հարաբերությունն իրականության նկատմամբ, հող է նախապատրաստում արվեստի ավելի նուրբ ըմբռնման, նրա մեջ մարմնավորված գաղափարների առավել հուզական վերապրման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гончаров Н. Ф. Эстетическое воспитание школьников средствами искусства и действительности - М. Педагогика, 1986г.
2. Алексеев В. В. Эстетическое и художественное воспитание. М. Педагогика, 1989г.
3. А. П. Валицкая. О природе эстетического знания, М. 1987г.
4. Бален А. А. Теория эстетического воспи-

- мания, Ереван "Манкаварж", 1990 չ.
5. Բաղդասարյան Գ. Ս. Արվեստի արահետներում. Երևան «Սովետական գրող» 1987թ. Միքայելյան Մ. Ս. Արվեստի լույսը, «Արևիկ» հրատարակչություն, Երևան 1990թ.
6. Ներսիսյան Լ. Ս. Դպրոցականների գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության համակարգի տեսական հիմնավորումը: «Գեղարվեստական միտք», «Զանգակ - 97» Երևան, 2003թ.

N. GYULBANGYAN

Summary

Art and reality means are equally valuable in aesthetic education, It penetrates in all effects of social life and must be realized by all educational methods.

Н. ГЮЛБАНГЯН

Резюме

В эстетическом воспитании равнозначны ценные средства искусства и действительности. Оно (проликает) во все явления общественной жизни и должно осуществиться всеми педагогическими средствами.

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ն. Դ.

*Ն. Աթուկյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի «Ինֆորմատիկայի,
հաշվողական տեխնիկայի և դրանց դասավանդման
մեթոդիկայի» ամբիոնի դասախոս*

ՍՏՈՐԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ժամանակակից աշխարհում կրթական իրավիճակը բարդ է և հակասական: Մի կողմից՝ XX դարում կրթությունը դարձել է մարդկության գործունեության կարևորագույն ոլորտներից մեկը և հսկայական ձեռքբերումներն այդ ոլորտում ընկած են խոշոր սոցիալ և գիտատեխնոլոգիական ձևափոխությունների հիմքում, որոնք անցած դարի բնութագրիչներն են, մյուս կողմից՝ կրթության ոլորտի ընդլայնումը և նրա կարգավիճակի փոփոխությունը ուղեկցվում է այդ ոլորտի խնդիրների սրացմամբ, որոնք վկայում են կրթության ճգնաժամի մասին: Վերջապես վերջին տաս տարիներին ընթացքում կրթության ճգնաժամի հաղթահարման ուղիների փնտրման գործում տեղի են ունենում ռադիկալ փոփոխություններ և նոր կրթական համակարգի ձևավորում:

Ինֆորմացիոն հեղաշրջումը և ինֆորմացիոն հասարակության ձևավորումը հիմնովին փոփոխում է ինֆորմացիայի և գիտելիքների դերը սոցիալ և տնտեսական զարգացման մեջ: Եթե ագրարային հասարակության մեջ տնտեսական գործունեությունը առաջին հերթին կապված է սննդի արդյունաբերության հետ, իսկ ինդուստրիալ հասարակության մեջ տնտեսական ապրանքների արտադրության հետ, ապա հետինդուստրիալ ինֆորմացիոն հասարակության մեջ ինֆորմացիայի արտադրությունը և ամբողջ տնտեսության արդյունավետ աշխատանքի մեջ նրա կիրառումը առանձնահատուկ կարևորվում է:

Համապատասխանաբար, եթե ագրարային հասարակության մեջ արտադրությունը սահմանափակող հիմնական գործոնն էր

հողը, իսկ ինդուստրիալ հասարակության մեջ՝ կապիտալը, ապա տեղեկատվական հասարակության մեջ այդպիսի գործոն է դառնում գիտելիքը [1]:

Ուսանողների գնահատումը այս պայմաններում յուրահատուկ կարևորություն ունի, որովհետև չափանիշներ չմշակելը, գնահատման ճշգրիտ չափանիշներ չունենալը կարող է խաթարել ուսուցման բնական ընթացքը, ուսանողների մեջ առաջացնել հուսախափություն, անվստահություն սեփական ուժերի նկատմամբ և հիասթափություն ուսումնից:

Այս հոդվածի գլխավոր նպատակն է առաջարկել գիտելիքների գնահատման դժվարին գործընթացում կիրառել Սաաթիի ստորակարգությունների վերլուծության մեթոդը:

Մեթոդի կիրառության ցուցակը բազմազան է. հեռակառավարման տեխնոլոգիայով ուսանողի ճանաչողական գործունեության ղեկավարման մաթեմատիկական մոդելի ստեղծում, ուղղակի մասնագիտությունների պահանջի գնահատական, շուկայագիտական հետազոտությունների տարբեր ձևեր, քաղաքի զարգացման հեռանկարների որոշում, տարատեսակ առևտրային հնարավոր վտանգների գնահատում, Սուդանի տրանսպորտի ուսումնասիրություն, Մեքսիկայի գարեջրի արտադրություն, անշարժ գույքի գնահատում, պլանավորման խնդիրները չնախատեսված հանգամանքներում [2], զարգացող երկրի՝ Սուդանի այլընտրանքների կառուցման խնդիրներ [3], ահաբեկչության դեմ պայքար [4], էներգիային բաշխում [5] և այլն:

Ստորակարգությունը հիմնական միջոցն է, որի օգնությամբ հետազոտողը կարող է ուսումնասիրվող տվյալների ամբողջությունը դաստիարակել ըստ կլաստերների և ենթակլաստերների: Ստորակարգությունների վերլուծության մեթոդի /Սաաթիի մեթոդ/ հիմնական խնդիրը ստորակարգության բարձրագույն մակարդակների գնահատումն է՝ ելնելով ոչ թե այդ մակարդակներում տարրերի անմիջական կախվածությունից, այլ տարբեր մակարդակների փոխազդեցությունից: Ստորակարգությունների վերլուծության մեթոդի օգտագործումը ուսումնական գործունեության արդյունքի վրա, արդիական դեկավարող ներգործությունների ազդեցության որոշումը վերջնական արդյունքի վրա թույլ կտան բարձրացնել ուսանողների պատրաստման մակարդակը: Հիմնական խնդիրը ուսումնասիրվող դեկավարող ներգործությունների կարևորության գնահատականն է:

Որպես արդիական դեկավարող ներգործություններ ուսումնական գործունեության արդյունքի վրա անհրաժեշտ է կրթության ցանկացած ոլորտում վերցնել հե՛նց այդ ոլորտում կարևոր դեր խաղացող մի քանի չափանիշ:

Քննենք Սաաթիի մեթոդի կիրառությունը: Մեթոդի էությունը հետազոտվող բնութագրերի՝ զույգերով համեմատության հիման վրա ամենամեծ սեփական նշանակություն ունեցող սեփական վեկտորի որոշումն է: Ուսումնասիրվող բնութագրերի զույգերով համեմատության վրա կառուցված մատրիցի սեփական վեկտորի նշանակությունների վերլուծությունը ապահովում է գնահատվող բնութագրերի առաջնայնությունների կարգավորումը բնութագրերի ուսումնասիրման խմբում:

Սաաթիի մեթոդը կիրառելու համար օգտվենք նորմավորված գնահատման սանդղակից հետևյալ մոտեցմանը համապատասխան զույգերով համեմատություններ կատարելու նպատակով: Սովորաբար

թվային նախապատվությունների կառուցման ժամանակ անհրաժեշտ է լուծել երկու խնդիր. զույգերով համեմատվող առարկաներից ո՞րն է ավելի կարևոր, և որքա՞ն մեծ է տարբերությունը ուսումնասիրվող առարկաների կարևորության միջև, եթե օգտվենք տրված որոշակի սանդղակից:

Դիտարկենք Սաաթիի կողմից առաջարկված խնդրի մաթեմատիկական դրվածքը, որը մենք առաջարկում ենք կիրառել մեր ուսումնասիրություններում: Դիցուք, $C_1, C_2, \dots, C_n$ առարկաների (ինարավոր գործողությունների, չափանիշների և այլն) միագումարն է: Առարկաների (C_i, C_j) զույգերի մասին քանակական դատողությունները ներկայացվում են ո՞րն չափսի մատրիցով՝ $A=(a_{ij})$, ($i, j = 1, 2, \dots, n$): $\{a_{ij}\}$ մատրիցի տարրերը որոշվել են հետևյալ կանոններով. եթե $a_{ij}=a$, ապա $a_{ji}=1/a$ պայմանով, որ a -ն հավասար չէ 0-ի: Եթե դատողությունները այնպիսին են, որ C_i C_j առարկաները հարաբերականորեն հավասար կարևորություն ունեն, ապա դատողությունների մատրիցի գործակիցները $a_{ii}=1$ /գտնվում են գլխավոր անկյունագծի վրա/: (C_i, C_j) զույգերի մասին a_{ij} -ի միջոցով թվային արտահայտությամբ քանակական դատողություններ կառուցելուց հետո խնդիրը հանգում է կշռային գործակիցների ստացմանը, որոնք կհամապատասխանեն փորձագետների ամրագրած դատողություններին: Տարբեր դատողությունների կարևորությունը ուսումնասիրելու ժամանակ ստորակարգությունների վերլուծության մեթոդով քանակական ցուցանիշները վեր հանելու համար առաջարկվում է առարկաների կարևորության սանդղակ:

Հետո անհրաժեշտ է հաշվարկել առաջնայնությունները յուրաքանչյուր սյունակի տարրերը գումարելու և յուրաքանչյուր տարր սյունակի ընդհանուր գումարի վրա բաժանելու ճանապարհով: Հաջորդ գործողությունը արդյունքում ստացած մատրիցի միջինայնացումն է տողերով: Հենց այդպես

էլ կստանանք առաջնայնությունների վեկտորը: Այս ձևով կարող են հաշվարկվել այլընտրանքների հարաբերական առաջնայնությունները ամեն չափանիշի համար: Հետո անհրաժեշտ է որոշել յուրաքանչյուր չափանիշի հարաբերական կարևորությունը: Սա արվում է նույն ճանապարհով, ինչպես մենք հենց նոր որոշեցինք այլընտրանքների հարաբերական կարևորությունը, այսինքն՝ բոլոր չափանիշները համեմատում ենք զույգերով, որոշում ենք, թե որ չափանիշն է ավելի կարևոր և որքանով է կարևոր, մատրից ենք կազմում և հաշվարկում յուրաքանչյուր չափանիշի կարևորությունը: Լրիվ առաջնայնությունները որոշվում են գծային ֆունկցիայի օգնությամբ, որում այլընտրանքի համար հարաբերական առաջնայնությունները բազմապատկված են համա-

պատասխան չափանիշների կարևորությամբ և գումարված են բոլոր չափանիշներով: Հետո ընտրվում է ամենամեծ լրիվ առաջնայնությամբ նախագիծը: Այսպիսով ամենամեծ լրիվ առաջնություն հավաքած ուսանողը կհավաքի ամենաշատ միավորները:

Վերն ասվածի հիման վրա պետք է կատարել անհրաժեշտ հաշվարկները, հետո՝ մշակել տվյալները:

Ուսանողին գնահատելու համար անհրաժեշտ է օգտվել հետևյալ աղյուսակից: Տեղադրում ենք n -ի փոխարեն ուսանողների քանակը, որից հետո նայում ենք թե յուրաքանչյուր ուսանող, ըստ իր վաստակած ամենամեծ առաջնայնության որ գնահատականի է արժանի:

Հավաքած միավորներ	Գնահատական
1-ից մինչև $n/4$	2
$n/4$ -ից մինչև $n/2$	3
$n/2$ -ից մինչև $3n/4$	4
$3n/4$ -ից մինչև n	5

Այս մեթոդը արդեն կիրառվել է համակարգչային դիզայնի ոլորտում ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացում: Որպես արդիական ղեկավարող ներգործություններ ուսումնական գործունեության արդյունքի վրա վերցված են եղել գաղափարական մտահաղացումը, մասնագիտական մակարդակը և ուսանողի կատարած աշխատանքի աշխատատարությունը:

Այսպիսով, իրական հնարավորություն կստանանք ոչ թե հասարակ ներընթերցման, այլ մաթեմատիկական հաշվարկների միջոցով գնահատել ուսանողի գիտելիքները:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Управление современным образованием, А. Н. Тихонов, А. Е. Абрамешин, Т. П. Воронина, А. Д. Иванников, О. П. Молчанова, 1998 г.
2. Saaty, Thomas L.: "An Eigenvalue Allocation Model for Prioritization and Planning," Energy Management and Policy Center, University of Pennsylvania, 1972.
1977b. See also "Facing Tomorrow's Terrorist Incident Today," U.S. Department of Justice, LEAA, Wash.d.c.20531, 28-31, 1977.

3. *Scott, Dana*: Measurement Structures and Linear Inequalities, J.Math. Psychology, vol. 1, pp. 233-247, 1964
4. *Shepard, R. N*: Hierarcies, Reciprocal Matrics, and Ratio Scales, Modules in Applied Mathematics, Cornell University, The Mathematical Association of America, 1976 a
5. *Shepard, R. N*: Theory of Measurement of Impacts and International in Systems, Proceedings of the International Conference on Applied General Systems Research: Recent Developmebts and Trends, Binghamton, New York, 1977a.

ИСПОЛЬЗОВАНИЕ МЕТОДА АНАЛИЗА ИЕРАРХИЙ В СИСТЕМЕ ОЦЕНКИ ЗНАНИЙ

ГРИГОРЯН Н.

Резюме

Целью данной статьи является применение метода анализа иерархий Саати в области оценки знаний студентов. Данный метод уже был применен автором данной статьи при оценке знаний студентов в области компьютерного дизайна и дал хороший результат. Таким образом, получим реальную возможность на основе математических вычислений, а не на основе простой интуиции, произвести оценку знаний студентов.

Это очень важно, так как от состояния образовательной системы, ее способности удовлетворять потребности личности и общества в высококачественных образовательных услугах принципиально зависят перспективы общественного развития.

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Մ. Արեղյանի անվան
գրականության ինստիտուտի ասպիրանտ*

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Հայ գրականության մեծերից մեկի՝ Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությանը բազմաթիվ աշխատություններ են նվիրվել: Թումանյանի կյանքի երեսուն տարիների՝ 1869-1899 թթ. մանրակրկիտ բնութագիրը կարելի է տեսնել Արամ Ինճիկյանի «Հովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմությունը» մենագրության մեջ (1969): Այս աշխատությունը գրողի ստեղծագործական ուղուն զուգահեռ հանգամանորեն ներկայացնում է նաև նրա կենսագրականը: Սակայն, ցավոք, աշխատությունը չի ընդգրկում Թումանյանի կյանքի և ստեղծագործության հաջորդ տարիները:

Թումանյանագիտության մեծ երախտավորներից է Էդվարդ Ջրբաշյանը: Նրա «Թումանյան. ստեղծագործության պրոբլեմներ» գիտական աշխատությունը (1988) բացահայտում է մեծ գրողի գրական ժառանգության պատմական նշանակությունը: Հեղինակը ներկայացնում է բանաստեղծի չորս տասնամյակ տևած գրական ստեղծագործական ուղին. «Վաղուց հասունացել է Թումանյանի ստեղծագործական ուղին իր ամբողջության մեջ և ներքին դինամիկայով, իր տարբեր փուլերով և անցումներով բազմակողմանիորեն քննելու անհրաժեշտությունը: Առանց դրա հնարավոր չէ նաև գրողի ժառանգության ամբողջական գնահատականը»¹:

Թումանյանի հասարակական գործունեության մի ընդգրկուն շրջան ներկայացված է Լուսիկ Կարապետյանի «Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը» աշխատության մեջ (1992): Հեղինակն

անդրադառնում է բանաստեղծի հասարակական գործունեության ամենաեռուն ու հազեցած տարիներին: Գրքի հիշարժան էջերից են Անդրանիկի և Թումանյանի բարեկամության մասին պատմող էջերը (1917-1919թթ.): Երկու նշանավոր հայերի հոգեհարազատությունն ակնհայտ է. երկուսն էլ հայրենասեր են, և յուրաքանչյուրը յուրովի լրացնում է մյուսին:

Մեր նպատակն է ներկայացնել Հովհ. Թումանյանի հասարակական գործունեությունը 1918 թ. մարտից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածը...

1918 թ. ծնունդը՝ հայրենակցական միությունների ստեղծման նախօրեին, ծանր էր վիճակը թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում: Ամբողջ ճակատով վերսկսելով հարձակումը դեպի Հայաստանի խորքերը՝ թուրքերը գրավել էին Էրզրումը, Վանը, Սարիղամիշը, Երզնկան և առաջ էին շարժվում դեպի Կարսի մարզ: Հանդիպելով համառ դիմադրության՝ նրանք կրում էին մեծ կորուստներ, միևնույն ժամանակ հայերին պատճառում էին մարդկային, տնտեսական ու բարոյական հսկայական վնասներ: Այդ ընթացքում Արևելյան Հայաստանում խորանում էին ազգամիջյան հարաբերությունները, որոնք աստիճանաբար վերածվում էին հայ-թուրքական բախումների: Հայ ժողովրդի վիճակը ծանր էր ու անմխիթար: Ամենուրեք ավեր ու կոտորած էր, թալան ու կողոպուտ, անմեղ մարդկային զոհեր, ու այս ամենն ուղեկցվում էր վայրագ բարբարոսությամբ, հայ ժողովրդի անլուր տառապանքով:

1918 թ. ստեղծվում են հայրենակցական

միություններ, որոնց գործունեության նպատակը մեկն էր: Ստեղծված միությունները կազմակերպում են հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործը՝ միաժամանակ ջանալով պատերազմական իրադրությունը փոխարինել խաղաղ իրավիճակով, այսինքն՝ նպաստել խաղաղության ու հաշտության կարևոր գործին: Թեև Հայրենակցական միություններից յուրաքանչյուրը այս նույն նպատակն էր հետապնդում, բայց, այնուամենայնիվ, առանձին-առանձին գործելով՝ նրանք մեծ հաջողության հասնել չէին կարող: Այդ գործունեության արդյունքն էլ, բնականաբար, բավարար լինել չէր կարող:

Ուստի 1918 թ. մարտի 1-ին Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերության դահլիճում տեղի է ունենում հայրենակցական միությունների ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին Ախալցխայի, Ախալքալաքի, Գանձակի, Լոռու, Հին Նախիջևանի, Ղարաբաղի և Ջանգեզուրի, Ղազախ-Շամշադնի, Նուխվա և Արեշի, Նոր Բայազետի հայրենակցական միությունների ներկայացուցիչները: Ժողովը բացում է Հովհաննես Թումանյանը: Նրա առաջարկությամբ ընտրվում են նախագահ և քարտուղար: Նախագահ է ընտրվում է Հովհաննես Թումանյանը, իսկ քարտուղար՝ Արամ Տեր-Գրիգորյանը: Անցնելով իր պարտականություններին՝ Թումանյանը ելույթ է ունենում և ներկայացնում ժողովի հրավիրման առաջնահերթ նպատակները: Նա գտնում է, որ, ելնելով ստեղծված ծանր պայմաններից ու բացառիկ իրավիճակից, անհրաժեշտ է Թիֆլիսում գործող բոլոր Հայրենակցական միությունների միություն կազմել: Դրանով իսկ կնպաստեն շատ ու շատ կարևորագույն խնդիրների արագ լուծմանը, ինչպես նաև ակնհայտ կլինի դրական արդյունքը: «Հայրենակցությունների ընդհանուր միության նպատակը պարզ է ինքնըստինքյան, - շարունակում է ելույթ ունեցողը, - ամեն կերպ ձգտել հաշտ ու խաղաղ ապրել մեր բոլոր հարևանների հետ և այս պատմական ծանր ժամանակին փո-

կել մեր ժողովրդի կյանքը»²:

Թումանյանի խոսքը ազդեցիկ էր և ունեցավ համապատասխան ներգործություն ներկաների վրա: Հաշվի առնելով նրա ելույթը՝ ժողովը որոշում է բոլոր հայրենակցական միություններից ընդհանուր միություն ստեղծել և յուրաքանչյուրից ընտրել երկու ներկայացուցիչ:

Մի քանի օր անց՝ 1918 թ. մարտի 4-ին, գումարվում է հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի առաջին նիստը, որին ներկա էին հետևյալ հայրենակցությունները՝ իրենց ներկայացուցիչներով՝ Լոռու հայրենակցական միություն՝ Հովհաննես Թումանյան, Նոր Բայազետի՝ Համազասպ Համբարձումյան և Երվանդ Ատովմյան, Ախալքալաքի՝ Դերենիկ Դեմիրճյան և Արամ Տեր-Գրիգորյան, Ագուլիսի՝ բժ. Ար. Ջարգարյան և Հարություն Տեր-Նիկողոսյան, Ախալցխայի՝ Գևորգ Արաբյան և Հովհաննես Քոսյան, Ղազախ-Շամշադնի՝ Ալեքսանդր Տեր-Բարսեղյան և Տիգրան Էդիսյան, Գանձակի՝ Գրիգոր Մարտիրոսյան և Արշակ Միանասարյան, Նոր Նախիջևանի՝ Արտաշես Աբեղյան և Միսակ Սահակյան: Նիստին ներկա չէին Նուխիի և Շուշվա ներկայացուցիչները³:

Այդ նիստում քննարկվում են քաղաքական կարևոր խնդիրներ: Շամշադնից եկած պատգամավորը տեղեկացնում է, որ այնտեղ հավաքվել են 2500 դարաբաղցիներ և գանձակցիներ, որոնք ուզում են անցնել իրենց երկիրը, սակայն մահմեդականներն առաջարկում են անցնել զինաթափ լինելուց հետո միայն: Պատգամավորն ավելացնում է նաև, որ խումբը կարող է անցնել ուժով, բայց աշխատում է խուսափել միջադեպից և պատգամավոր է ուղարկել Ազգային խորհուրդ և կառավարություն: Սակայն նրանցից ստացվել է անորոշ պատասխան: Իրավիճակը շտկելու, ինչպես նաև այդ հարցին վերջնական լուծում տալու համար պատգամավորը խնդրում է հայրենակցական միությունների կենտրոնական խորհր-

դին «աջակցություն ցույց տալ և ելք գտնել»⁴:

Այս հարցը լուծելու համար խորհուրդը հանձնարարում է Թումանյանին և Արամ Տեր-Գրիգորյանին դիմել Ազգային խորհրդին և կառավարությանը: Այս խնդրի քննարկումից հետո անդրադառնում են նաև հարևանների հետ հաշտության բանակցություններ վարելու խնդրին: Նորի գործնական լուծումը հետաձգվում է:

Մարտի 6-ին գումարվում է ՀՄ կենտրոնական խորհրդի երկրորդ նիստը, որտեղ առաջին հերթին անդրադառնում են նախորդ նիստում քննարկված հարցին: Թումանյանը զեկուցում է, որ անհրաժեշտ քայլերն արդեն արված են, և սպասում են, թե Ազգային խորհուրդը երբ պետք է պատգամավորների գրությունը պաշտոնապես ուղարկի կառավարությանը:

Ժողովի հետագա ընթացքում ընթերցվում է կենտրոնական խորհրդի հրահանգի նախագիծը, որը ընդունվում է: Որոշվում է, որ կենտրոնական խորհուրդն իր գործունեության համար պետք է ունենա որոշակի նյութական միջոցներ: Այդ միջոցները կստեղծվեն հայրենակցական միություններից ստացվող 5%-ի վճարումներով: Լուծվում է նաև նախագահի, փոխնախագահի, քարտուղարի և գանձապահի պաշտոնակատարների ընտրության հարցը: Նախագահ է ընտրվում Թումանյանը, քարտուղար՝ Հ. Համբարձումյանը:

Հաջորդ օրը՝ մարտի 7-ին, տեղի է ունենում հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի երրորդ նիստը: Այս նիստում նախագահ Թումանյանը քննության է դնում հայ-թրքական հարաբերությունների խնդիրը, ինչպես նաև կարևորում է երկու հարևան ազգությունների միջև հաշտության հարցին շուտափույթ լուծում տալը⁵:

Նախագահի ելույթից կարելի է եզրակացնել, որ այդ ուղղություններով որոշ սկզբնական բանակցություններ արդեն

սկսված են: Ստեղծված ծանր պայմաններում հայ ժողովրդի խաղաղ կյանքի ապահովումը շատ կարևոր հարց էր. ժողովն առանձնակի ուշադրությամբ քննության է առնում հաշտության բանակցություններ սկսելու խնդիրը և որոշում ամեն տեսակի անհրաժեշտ միջոցներ գործադրել հաշտության գործը հաջողելու, ինչպես նաև շարունակելու և վերջնական ավարտին հասցնելու համար: Նպատակահարմար է գտնում այդ գործի համար զավառներ ուղարկել հաշտության գործիչներ, որոնք պետք է ամեն ջանք ու եռանդ գործադրեն և այդ մարդասիրական գաղափարները քարոզեն ժողովրդական լայն զանգվածների մեջ: Հարկ եղած դեպքում իրենց գաղափարներն արծարծեն մամուլի մեջ և ժողովրդականացնեն հաշտության գաղափարը:

Ժողովն անդրադառնում է նաև նախորդ նիստերից մեկում արդեն լսված այն հայտարարությանը, որ արել էր Ղազախ-Շամշադնից եկած պատգամավորը: Թեպետ այդ հարցը, որ վերաբերում էր 2500 զինվորներին, որոնք հայրենիք վերադառնալու հնարավորություն չունեին, քննվում է ևս մեկ անգամ, բայց ոչ մի որոշում չի ընդունվում:

Այնուհետև ժողովն անդրադառնում է մի քանի ընթացիկ հարցերի, որոնք ներկայացնում է նախագահը: Նա առաջարկում է խորհրդի հետագա գործունեության համար առանձին բնակարան վարձել, որտեղ ամեն օր՝ օրվա որոշակի ժամերի, պետք է ներկա գտնվի փոխնախագահներից մեկը քարտուղարի հետ: Այս առաջարկը Թումանյանը հիմնավորում է նրանով, որ գործի հետագա առաջխաղացումը շատ հարցերով կապված է նաև դրա հետ⁶: Թումանյանի այս առաջարկը ընդունվում է, սակայն խորհուրդն այդպես էլ հնարավորություն չի ունենում լուծելու առանձին բնակարան վարձելու հարցը:

Այս մի քանի նիստերի արձանագրություններից կարելի է ենթադրել, թե ինչպիսի հայրենամկեր գործունեություն է ծավալել

ՀՄՄ-ն Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ: Այդ շրջանում Թումանյանն ամբողջությամբ նվիրվել էր հայրենակցական միությանը, ամեն գնով աշխատում էր նպաստել հաշտության և խաղաղության մարդասիրական գործին: Մեծ բանաստեղծի համար ժողովրդի խաղաղ կյանքն ու բարեկեցությունը ապահովելը շատ կարևոր ու կենսական հարց էր: Այս է պատճառը, որ հետագա նիստերի ընթացքում պարբերաբար անդրադառնում էին և քննության առնում հաշտության գործի իրագործման սկզբնական քայլերը:

Մարտի 9-ի հերթական նիստի ժամանակ արդեն որոշակիորեն ուրվագծվում են այդ ուղղությամբ կատարված առաջին քայլերը: Այն է՝ հաշտության գաղափարը արծարծելու համար պետք է մշակվի համապատասխան կոչ և հրահանգ: Սա անհրաժեշտ է հատկապես հաշտության գործիչներին, որոնք պետք է մեկնեն գավառ և այնտեղ քարոզեն: Այս մարդկանց քաջալերելու և խրախուսելու համար նշանակվում են խրախուսիչ պարգևներ: Պարգևատրվելու էին հատկապես այն անձինք, ովքեր աչքի կընկնեն պատերազմող երկու ժողովուրդներին հաշտեցնելու իրենց հայրենամկեր գործերով: Այդ գործընթացն արագացնելու համար հարկավոր էր հաշտության գործիչներին շուտափույթ ուղարկել գավառները: Այս բոլոր կետերը ձևակերպված էին Թումանյանի առաջարկում⁷:

Քննելով նախագահի առաջարկը՝ խորհուրդը որոշում է կազմել հաշտության ֆոնդ և այդ մասին մամուլում անել համապատասխան կոչ: Ֆոնդի գործադրության խնդիրը մնում է անորոշ վիճակում: Որոշեցին գումարել խառը ժողով, որին պետք է մասնակցեին հայ և թուրք ազգի ներկայացուցիչները: Այդ նպատակով խորհուրդը նախագահությանը հանձնարարում է մշակել համապատասխան կոչ և տպագրել մամուլում: Թումանյանին հանձնարարվում է բանակցություններ սկսել հարևան ժողովրդի

հետ՝ խառը ժողով գումարելու համար: առը ժողովին են վերապահում հաշտության կոչի և հրահանգի մշակումը, ինչպես նաև հաշտության ֆոնդի գործադրությունը:

Մարտի 11-ի նիստում որոշվում է մարտի 15-ին՝ հինգշաբթի օրը, գումարել հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողով: Պահպանված արձանագրությունից երևում է, որ այդ օրվա նիստում ոչ մի ուրիշ կարևոր որոշում չի ընդունվել՝ բացի այն կետից, երբ անդամներից մեկի առաջարկությամբ ընդունելի են համարում հայրենակցական միությունների «զինական մարմինների միացումը»⁸:

Մարտի 12-ին Հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը Թումանյանի ստորագրությամբ դիմում է Հայոց ազգային խորհրդին, որպեսզի միջնորդի լուծարման ենթարկվող հիմնարկություններից մեկ կամ երկու ավտոմոբիլ տրամադրել Նոր Բայազետի ինքնակառավարությանը: Այս քայլն անհրաժեշտ էր կանոնավորելու համար Նոր Բայազետի և Դիլիջանի միջև իրականացվող երթևեկությունը: Տեղի ազգաբնակչությունը խորապես զգում էր սրա կարիքը թե՛ ինքնապաշտպանության և թե՛ պարենավորման գործի համար: Այս տեսակի խնդիրներ են քննվում նաև մարտի 13-ի նիստում, որի նախագահն էր Ս. Տ. Մալխասյանը: Նախագահի առաջարկությամբ քննում են հայրենակցական միությունների ռազմամթերքի և մտավորական ուժերը գավառ ուղարկելու խնդիրը: Նպատակահարմար են գտնում այս հարցի մանրամասն քննությունը թողնել առաջիկա ընդհանուր ժողովի օրակարգում:

Քննարկվող խնդիրներն ավելի ճշգրիտ պատկերացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այդ ժամանակաշրջանի պատմական համառոտ նկարագրին: Բանն այն է, որ 1918 թ. սկզբներին Հայաստանը գտնվում էր տնտեսական ծանր կացության մեջ: Մի կողմից՝ Համաշխարհային պատերազմի հասցրած ավերիչ հետևանքները,

մյուս կողմից՝ թրքական արշավանքներն ու բռնազավթումները քայքայել ու հյուծել էին հայ ժողովրդին թե՛ ֆիզիկապես, թե՛ տնտեսապես և թե՛ բարոյապես: Փակ էին գործարանները, խղճուկ վիճակում էր տրանսպորտը, տնտեսությունը կազմալուծված էր: Այս ամենին զումարվեց սովը, որն ուղեկցվում էր զանազան հիվանդություններով:

Միանգամայն բնական է, որ ՀՄՄ-ն չէր սահմանափակվում միայն «հաշտարարի դերով»։ Նաև ընդարձակում էր իր գործունեության շրջանակները և զբաղվում տնտեսական ու սոցիալական խնդիրներով: Ժողովրդին տրանսպորտային միջոցներով ապահովելը, սննդամթերքի հարցերը լուծելը պակաս կարևոր չէին: Հայրենակցական միությունների գործունեության նպատակն էր ամեն կերպ աջակցել և օգնության ձեռք մեկնել տառապող հայ ժողովրդին: Բնականաբար այս գործում ամենամեծ պատասխանատվությունը դրված էր «Ամենայն հայոց բանաստեղծի» ուսերին:

Թումանյանն այդ նիստերի ոգին էր, ուժ ու եռանդ հաղորդողը. բոլոր խճճված խնդիրները լուծվում էին Թումանյանի անմիջական մասնակցությամբ ու գլխավորությամբ: Իր հուշերում Սիմեոն Հովվյանն այսպես է ներկայացնում Թումանյանին. «Եվ ամեն անգամ, երբ Հովհաննեսն այս կամ այն պատճառով չէր կարողանում գալ այդ խորհրդի նիստին, մենք զգում էինք նրա բացակայությունը: Նրա ներկայությամբ մենք, ինչպես ասում են, մեր տանն էինք զգում մեզ և առանց դժվարության ընթացք էինք տալիս խնդիրների լուծմանը: Իսկ այդ լուծումների մեջ մեծ դեր էր կատարում Հովհաննեսը ոչ միայն իր հեղինակությամբ և ընդունակությամբ, այլև այն ջերմ սիրով ու հավատով, որ տածում էր նա դեպի տվյալ գործը»⁹:

Հետաքրքիր է նաև, թե Թումանյանն ինչ կարծիք է ունեցել հայրենակցական միությունում իր կատարած աշխատանքների մասին: Այս առիթով տեղին է հիշատակել

Թումանյանի խոսքը. «Համազասկ, - ասում էր հաճախ Թումանյանը, - մենք երկուսս կարծես պետություն ենք պետության մեջ: Մեր ժողովուրդների հասարակական ու կուլտուրական կյանքին վերաբերող որևէ հարց կա՞րողյոք, որը մեր իրավասության տակ չմտնի: Ճիշտ են ասում, չկարծես կատակ է: Իսկ ի՞նչ բան է պետությունը, եթե ոչ հենց այնպիսի ֆունկցիա, որ մշտապես կատարում ենք մենք երկուսս»¹⁰:

Հայրենակցական միությունների վարչությունների ընդհանուր ժողովը տեղի է ունենում մարտի 15-ին: Այս ժողովին ներկա էին թվով 48 մարդ, նախագահում էր Հ. Թումանյանը: Այդ օրվա ժողովի օրակարգում դրված էին մի շարք կարևոր խնդիրներ, այդ թվում նաև հաշտության ֆոնդի և նրա գործադրության մասին պատրաստված հայտարարությունը, որ պետք է աներ խորհրդի նախագահ Թումանյանը:

Ժողովը միաձայն ընդունում է խորհրդի մշակած կանոնադրության համառոտ նախագիծը: Քննարկման է դրվում ռազմամթերքի և մտավորականներին գավառ տեղափոխելու հարցը: Ռազմամթերքի տեղափոխության համար որոշվում է, որ եթե այն հանդիպի արգելքի և անհնարին դառնա, ապա կարելի է կենտրոնացնել Երևան քաղաքում:

Դերենիկ Դեմիրճյանը, որն Ախալքալաքի հայրենակցականի ներկայացուցիչն էր, խոսելով մտավորական ուժերին գավառ ուղարկելու մասին, առաջարկում է տեղերում փակել ազգային դպրոցները: «Այս դեպքում թվով շատ ուսուցիչներ կմեկնեն գավառները և կգործեն ժողովրդի մեջ, մանավանդ որ ստեղծված պայմաններում դպրոցական գործը արդյունավետ չէ», - իր տեսակետն է հիմնավորում Դեմիրճյանը¹¹:

Նրա առաջարկությունն արժանանում է ժողովականների հավանությանը, և վճռում են դիմել Ազգային խորհրդին, որպեսզի հրաման տա՝ փակել դպրոցները և ուսուցիչներին հնարավորություն ընձեռվի մեկ-

նել գավառ՝ ծավալելու աշխատանքային լայն գործունեություն:

Մարտի 15-ի այդ նիստում թուվանյանը մի քանի առաջարկություններ է անում.

«Ապահովել թիֆլիս-Բաքու, թիֆլիս-Ջուլֆա երկաթուղագծի երթևեկությունը.

Գավառ ուղարկել մշտական հաշտարար պատգամավորներ այն պայմանով, որ նրանք տեղերում կազմակերպեն ու ստեղծեն հաշտության մշտական մարմիններ՝ բաղկացած ժողովրդի հեղինակավոր ու պատասխանատու ներկայացուցիչներից.

Խիստ քննություն նշանակել մինչև օրս տեղի ունեցած ավերածությունների ու կոտորածների մասին և ամեն միջոց գործադրել, որպեսզի թալանը հետ տրվի ըստ պատկանելույն, տուժողը վարձատրվի, իսկ հանցավորներն ու խռովարարները խստորեն պատժվեն»¹²:

Այս առաջարկները քննարկելուց հետո ժողովը լիազորում է նախագահությանը կովկասյան իշխանությանը ներկայացնել համապատասխան հայտարարություն, որ պետք է տպագրվեր մամուլում:

Մարտի 22-ի նիստում, որի նախագահը Զ. Թումանյանն էր, պատգամավոր Ալլահվերդի Տեր-Սարգսյանը զեկուցում է Ղազախի և Բորչալուի վերջին դեպքերի մասին, այնուհետև մեկ այլ պատգամավոր (անունը չի հիշատակվում) ներկայացնում է Գանձակի դեպքերը և տեղի ընդհանուր դրությունը:

Այդ օրվա նիստը կարևոր է նաև նրանով, որ Թումանյանն ընթերցում է Ազգային խորհրդի հայտարարությունը ՀՍՄ-ի մասին և այն, թե «որքան է օրինավոր ու հնարավոր վերջինի գոյությունը Հայոց ազգային խորհրդի հանդեպ»¹³:

Ազգային խորհուրդը, որն իրեն 1917 թ. դեկտեմբերին հայտարարել էր բոլոր հայերի համար կառավարման գերագույն մարմին, չէր հանդուրժում Թումանյանի և նրա գլխավորած ՀՍՄ-ի գործունեությունը քաղաքական ասպարեզում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ իր գործունեության այդ

կարճ ժամկետում հայրենակցական միության աշխատանքները տվել են իրենց ցանկալի արդյունքը, որը Ազգային խորհուրդը չի հանդուրժել:

Ժողովն Ազգային խորհրդի հայտարարությանը տալիս է հակահարված՝ ասելով. «Հայրենակցական միությունների միությունը, ինչպես այդ երևում է նրա ծրագրից, ո՛չ իր գործունեությամբ, ո՛չ փաստորեն և ո՛չ իրավաբանորեն չի խանգարում Ազգային խորհրդի գործունեությանը, ինչպես նաև որևէ կերպ մրցում չի ստեղծում իր և Ազգային խորհրդի միջև»¹⁴: Խնդրի այսպիսի որոշմանը դեմ արտահայտվեց Դերենիկ Դեմիրճյանը:

Կարծում ենք՝ որոշ պարզաբանումների հարկ կա. հավանական է, որ Ազգային խորհրդի կատարած այդ հայտարարության հիմքում եղել են հենց Թումանյանի խոսքերը: Ստեփան Զորյանը Թումանյանի մասին հուշերում գրում է. «Չնայած այդ ժամանակ տակավին թիֆլիսում էր գտնվում Հայոց ազգային խորհուրդը, այսինքն՝ նորակազմ Հայաստանի կառավարությունը, որը և պարտավոր էր կատարել ամեն տեսակի դիվանագիտական հարաբերություն, այնուհանդերձ, Թումանյանը գտնում էր, որ Հայրենակցական միությունների միությունը իր անելիքներն ունի և կարող է գործել անկախ. բայց այդ հանգամանքը ոմանք բացատրում էին նրանով, թե Թումանյանն ուզում է «հակաթոռ» լինել Ազգային խորհրդին»¹⁵:

Հայրենակցական միության գործերով Թումանյանը մի քանի անգամ այցելում է գերմանական միսիայի պետ Ֆոն Կոնսին և այդ հանդիպումների տպավորության տակ ժողովում հայտարարում է. «Եվ ասավ, թե հայ ժողովրդի իսկական ներկայացուցիչները դուք եք՝ ՀՍՄ-ն, և ոչ թե Ազգային խորհուրդը, որովհետև Ձեր միությունը ավելի ժողովրդական կազմակերպություն է, բոլոր գավառները նրա մեջ իրենց ներկայացուցիչներն ունեն»¹⁶:

Մարտի 22-ի նիստից պահպանվել է ևս մեկ արձանագրություն, որտեղ խոսվում է Թիֆլիսում ստեղծված սոցիալիստական բլոկի հետ համագործակցության մասին: Նախագահ Թումանյանը քննության է դնում Թիֆլիսում ստեղծված սոցիալիստական բլոկի՝ հայ-թուրքական հաշտությանը նվիրված գործունեությունը: Պատգամավորներից մեկը որոշ տեղեկություններ է հայտնել այդ բլոկի գործունեության մասին, իսկ Պողոս Աբելյանը և Արամ Տեր-Գրիգորյանը առաջարկել են մշակել քաղաքական ծրագիր, որով հանդես պետք է գան սոցիալիստական բլոկի առջև: Կարծիքներ փոխանակելուց հետո (խոսքը վերաբերում է Աթանես Սարգսյանի և Դեմիրճյանի ելույթներին, որոնք գտնում էին, որ հաշտության գործը կարելի է հաջողեցնել նաև առանց քաղաքական ծրագրի) ժողովը ընդունում է մի բանաձև, ըստ որի՝ պետք է կապ հաստատելիս և համագործակցելիս սոցիալիստական միջազգային բլոկի հետ:

ՀՍՄ-ն ներկայացուցիչների միջոցով մասնակցելու էր բյուրոյի հաշտարար գործունեությանը՝ «առաջարկելով նորան միությունների միության կոմիսարիատին ներկայացրած հայտարարության կոնկրետ ծրագիրը»¹⁷:

Ազիզ Շարիֆը Թումանյանի մասին հուշերում խոսում է մի պատմական փաստի մասին, որին, սակայն, մենք չենք հանդիպում նիստերի արձանագրություններում, առավել ևս Համազասպ Համբարձումյանի հուշերում, որը ներկայացրել է Թումանյանի գործունեությունը ՀՍՄ-ում: Ազիզ Շարիֆի հուշերում կարդում ենք. «1918 թ. մարտի 23-ի կազմակերպչական ժողովում ստեղծվեց Անդրկովկասյան հայ-մուսուլմանական սոցիալիստական բլոկ և ընտրվեց տասը մարդուց կազմված հատուկ բյուրո: Բյուրոյի նախագահներ ընտրվեցին հայերի կողմից Գևորգ Ղարաջյանը, իսկ մուսուլմանների կողմից Սամեդ-աղա Աղամալի-օղլին: Հովհաննես Թումանյանը ընտրվեց բյուրոյի

անդամ և նախագահի տեղակալ»¹⁸:

Հարց է ծագում, թե ինչպես կարող էր վերոհիշյալ աղբյուրներում (նիստերի արձանագրության և Համազասպ Համբարձումյանի հուշերում) տեղ չգտնել այդքան կարևոր մի տեղեկություն, ըստ որի՝ Թումանյանը ընտրվել է սոցիալիստական բլոկի նախագահի տեղակալ: Մեր ձեռքի տակ այլ տվյալներ չկան, որոնք կարող են հաստատել հուշագրի իրավացիությունը, մնում է ենթադրել, թե նա չփոթել է Թումանյանի ներկայացուցչության փաստը նախագահի տեղակալ ընտրվելու հետ: Սա, համեմայն դեպս, վիճարկելի տեսակետ է:

Մարտ ամսվա վերջին նիստը կայացել է 29-ին, որը նախագահել է Հովհաննես Թումանյանը: Նա առաջարկել է հայրենակցական միությունների կազմի մեջ ընդունել պարսկահայերի հայրենակցական միությունը:

Անդրադառնալով նախորդ նիստում քննարկված հարցին՝ Արամ Տեր-Գրիգորյանը առաջարկում է, որ եթե միությունների միությունը մասնակցի հաշտության գործում սոցիալիստական բլոկի գործունեությանը, ապա պետք է միանա վերջինիս նաև միջոցների խնդրում և օժանդակի նրան հնարավորության սահմաններում: Ժողովը կարևոր է համարում հատկապես այն խնդիրը, թե հաշտության գաղափարը ժողովրդական զանգվածների մեջ տարածելու համար ինչ քայլերի պետք է դիմել: Ոմանք գտնում են (այդ թվում՝ նաև Դեմիրճյանը), որ ճիշտ կլիներ դիմել Ազգային խորհրդին, որպեսզի միջամտի հայ-թուրքական հաշտության գործին: Սակայն ընդունվում է որոշում, ըստ որի՝ հաշտության գաղափարի տարածումն ու ժողովրդականացումը պետք է արվի մամուլում: Ըստ այդմ էլ որոշում են միությունների միության անունից կոչ անել մամուլին ու նրա ներկայացուցիչներին, որպեսզի հաշտության գաղափարի շուրջ ստեղծվի համապատասխան հասարակական կարծիք: Այս կոչը ձևակերպելն ու մամուլին

հանձնելը դրվում է Դեմիրճյանի, Ղարաբեգյանի և Մարգար Ավետիսյանի վրա: Թումանյանին, Արամ Տեր-Գրիգորյանին, Դեմիրճյանին և այլոց հանձնարարվում է գրել հոդվածներ և տպագրել մամուլում:

Թումանյանը գրում է հայտնի «Հանգցրեք հրդեհը» հոդվածը, որը տպագրվում է մամուլում¹⁹: Այստեղ նա անխնա դատապարտում է ազգամիջյան ընդհարումները հրահրողներին և կոչ է անում միացյալ ուժերով հանգցնել հրդեհը:

Այդ օրվա նիստի վերջում Թումանյանը Լոռու հայրենակցական միության կողմից վճարում է որոշված միանվագ 200 ռուբլին և խնդրում, որ այդ փաստը արձանագրվի: Պետք է ասել, որ Թումանյանը խորհրդի բոլոր նիստերին մասնակցում է իբրև Լոռու հայրենակցական միության ներկայացուցիչ:

Սրանով ավարտվում են ՀՄՄ-ի մարտ ամսվա կենտրոնական խորհրդի նիստերը: Հայտնի է, որ հետագա նիստերին Թումանյանն այլևս չի մասնակցում. մեկնում է Լոռի, որտեղ ծավալում է բուռն քաղաքական գործունեություն: Նրա բացակայության ժամանակ Թիֆլիսում ՀՄՄ-ն շարունակում է գործունեությունը՝ կորցնելով առաջվա ուժն ու եռանդը: Այդ շրջանում տեղի ունեցած նիստերի արձանագրությունները ասվածի խոսում վկայությունն են:

Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել միայն 1918 թ. ապրիլի 5-ի նիստը, որը նախագահել է Ստեփանոս Մալխասյանցը: Ժողովին ներկա էին Ղարաբաղի, Ախալցխայի, Ախալքալաքի, Նոր Բայազետի, Ղազախի, Նախիջևանի, Գանձակի հայրենակցական միությունների վարչության անդամները: Ժողովը, որ հայտարարվել է խորհրդակցական, կրկին քննել է ՀՄՄ-ի նպատակը և ելնելով ինքնապաշտպանության գործի ու հայ-թրքական հարաբերությունների հարցի կարևորությունից՝ որոշել է հանձնարարել խորհրդին կազմել ինքնապաշտպանության և հաշտարար գործունե-

ության որոշ ծրագիր:

Սոցիալիստական բլոկը ՀՄՄ-ին առաջարկել է բլոկի կազմում ունենալ մի ներկայացուցիչ այն պայմանով, որ սոցիալիստ լինի: Մինչդեռ միության կողմից ներկայացուցիչ է ընտրվում անկուսակցական Թումանյանը, իսկ նրա բացակայության ժամանակ՝ Արամ Տեր-Գրիգորյանը:

Ժողովը քննում է նաև Ազգային խորհրդում ներկայացուցիչ ունենալու հարցը, որը, սակայն, չի լուծվում:

Ինչպես արդեն ասվեց, 1918 թ. մարտի 25-ին Թումանյանը մեկնում է Լոռի՝ Անդրկովկասի կառավարական մարմինների հանձնարարությամբ, նաև Ղազախ-Բորչալուի գավառների բնակչության հրավերով²⁰:

Պահպանվել է Ստեփանոս Մալխասյանցի նամակը Թումանյանին, որտեղ Հայրենակցական միության փոխնախագահը հետաքրքրվում է, թե Թումանյանը երբ է մեկնելու Լոռի՝ խաղաղություն հաստատելու նպատակով, և արդյոք նրա հետ գնալու է թուրք հաշտարար՝ թուրքերից հայերի գույքը հետ ստանալու համար:²¹ Այս նամակի պատասխանը Թումանյանը գրել է 1918 թ. մարտի 23-ին. «Սիրելի՛ Ստեփան, նոր վճռվեց: Կիրակի օրն ենք գնում: Գնում են նահանգական կոմիսարի հետ: Ես կարծում եմ՝ տուժած հայերը կարող են և պետք է գան ու հայտնեն իրենց կորուստն ու պահանջը»:

Մինչ այդ Լոռուց և Բորչալուից ահազանգեր էին հասնում Թիֆլիս տեղի թուրքերի բարբարոսությունների մասին. կողոպտում էին ոչ միայն խեղճ, անօգնական գյուղացիներին, այլև հարուստներին, քանդում էին գործարանները, ավերում տները: Դեռևս փետրվար ամսին Թումանյանը ստանձնել էր Լոռու, Փամբակի, Ղազախի, Շամշադնի և Բորչալուի ընդհանուր լիազորի պաշտոնը, հետևաբար կարելի էր պատկերացնել, թե ինչպիսի գերլարված գործունեություն էր ծավալվել նա:

Ընտանիքի անդամների մի մասի հետ Թումանյանը ապաստանում էր Լոռում: Նա

անդադար բանակցությունների մեջ էր հայ և այլազգի գործիչների հետ: Ժամանակակիցների վկայությամբ՝ նրան կարելի էր հանդիպել և՛ Դսեղում, և՛ Ղարաքիլիսայում, և՛ այլուր, որտեղ զգացվում էր նրա ներկայության կարիքը: Իրավիճակը հատկապես սրվում է այն ժամանակ, երբ թուրքերը մայիսին գրավում են Ալեքսանդրապոլը, այնուհետև՝ Ղարաքիլիսան: Սակայն այդ հերոսամարտերի ժամանակ թուրքերը հանդիպում էին հայերի համառ դիմադրությանը՝ կրելով հսկայական կորուստներ: Եվ զուր չէ, որ թուրք հրամանատարներից մեկը հայտարարել է. «Հայերը Ղարաքիլիսայի մոտ մարտով ցույց տվեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»²²:

1918 թ. մայիսի 28-ին հռչակվում է Հայաստանի Հանրապետությունը, և Հայոց ազգային խորհուրդը ժամանակավորապես իր վրա է վերցնում կառավարման գործառնությունները հայկական գավառների նկատմամբ:

1918 թ. հունիսին այն բոլոր շրջանները, որտեղ գործում էր Հ. Թումանյանը, գրավված էին տաճկական զորքերից, հետևաբար բանաստեղծի ներկայությունն այնտեղ այլևս անհնար էր: Պահպանված փաստերի համաձայն՝ հունիսի 22-23-ին Թումանյանը վերադառնում է Թիֆլիս²³:

Թիֆլիսում Թումանյանը հարցազրույց է ունենում «Հորիզոնի» աշխատակցի հետ և մանրամասն տեղեկություններ է հաղորդում Լոռու և Ղարաքիլիսայի ողբերգական իրադրության, ինչպես նաև տեղի բնակչությանը վրա հասած աղետների մասին: Ըստ Թումանյանի տեղեկության՝ մարդիկ տանջահար էին, քաղցած ու մերկ, տարածված էր ծաղիկ հիվանդությունը, որը խլում էր բազմաթիվ մարդկային կյանքեր:

Թիֆլիսում նույնպես Թումանյանի հոգսերը շատ էին: Նա մտահոգված էր գրավված շրջանների բնակչության անմխիթար վիճակով: Հունիսի 1-ին Ազգային խորհրդի որոշմամբ Թումանյանը մի պատգամավո-

րության հետ մեկնում է Բաթում, որի նպատակը թուրքական զորքերի տեղափոխումն էր, Հայաստանի սահմանների հարցը, գաղթականության վերադարձը: Հունիսի 5-ին պատգամավորությունը ձեռնունայն վերադառնում է՝ չլուծելով և ոչ մի խնդիր²⁴:

Ահա այս պայմաններում 1918 թ. հունիսի 11-ին Թումանյանը կրկին վերադառնում է ՀՍՄ-ի իր պարտականություններին և նախագահում նույն օրվա նիստը: Թումանյանի ներկայությունը աշխուժություն է հաղորդում հայրենակցական միության նիստերին, ինչպես նաև բեկում է մտցնում միության հետագա գործունեության մեջ: Թումանյանի անմիջական մասնակցությամբ, ինչպես նաև նրա նախաձեռնությամբ քննարկման են դրվում կարևորագույն հարցեր, լուծվում են այնպիսի խնդիրներ, որոնք առաջնություն անլուծելի էին կամ բարձիթողի: Ասվածի վկայությունն է հունիսի 11-ի նիստը:

Ժողովի օրակարգում դրված էին մի շարք հարցեր, ինչպես օրինակ՝ Համբարձում Առաքելյանի սպանությունը, համերաշխության գործի արժարժույթը մամուլում, միության միջոցները, վերակազմության խնդիրը, Ազգային խորհրդի և միության համախորհրդակցության հարցը, փախստականների վերադարձը իրենց բնակության վայրերը և հայրենակցությունների վերաբերմունքը Ազգային խորհրդի գործունեության նկատմամբ: Այս քննարկված հարցերից որոշում ընդունվեց միայն առաջին երկու կետերի վերաբերյալ: Հոտնկայս հարգեցին Հ. Առաքելյանի ողբերգական մահը և որոշեցին հրապարակայնորեն բողոքել «գրչի մարդու» նկատմամբ կատարված բռնարարի դեմ և զայրույթ հայտնել²⁵:

Թումանյանը հայտնում է, որ անհրաժեշտություն կա ժողովուրդների համերաշխության գաղափարը արժարժել մամուլի մեջ՝ համաձայն միության նախկին որոշման, ըստ որի՝ պետք է նյութական վարձատրությամբ խրախուսել այդ ուղղությամբ գործող հրապարակախոսներին և հողավածագիրնե-

րին: Թուճանյանը խոստանում է այդ նպատակի համար յուրաքանչյուր շաբաթ ձեռք բերել 1,000-2,000 ռուբլի: 26 Արժե հիշատակել, որ Թուճանյանի բացակայության օրերին Հայրենակցական միությունների միության ստորագրությամբ «Հորիզոն» օրաթերթում տպագրվում է մի կոչ՝ «Հայ ժողովրդին» վերնագրով: Այդ այն ժամանակ էր, երբ տաճկական զորքերը վտանգ էին սպառնում ոչ միայն Ղարաքիլիսային, այլև Թիֆլիսին: Կոչը գրված էր խուճապի և դասալքության դեմ, համոզում էր չընկճվել, քարոզում էր տարբեր ազգերի համագործակցություն՝ անհրաժեշտության դեպքում տաճկական զորքերին դիմագրավելու համար²⁷:

Հուլիսի 15-ին Թուճանյանը նախագահում է հայրենակցական միությունների վարչության հերթական նիստը: Փախստականական գլխավոր խորհրդի ներկայացուցիչներ Արշակ Թադևոսյանը և Հայրապետ Հովհաննիսյանը զեկուցում են Թիֆլիսում եղած գաղթականների վիճակի, նրանց տեղափոխության մասին: Այս խնդրի մասին որոշվում է խնդրել Լոռու, Բորչալուի, Ղազախի և Ախալքալաքի միությունների վարչություններին տալ գաղթականական գլխավոր խորհրդին երկու ներկայացուցիչներ՝ մասնակցելու Թիֆլիսի գաղթականների էվակուացիայի ծրագիրը մշակող խորհրդակցությանը: Ցանկալի է համարվում գաղթականների կանոնավոր տեղափոխությունը Ղազախի և Բորչալուի գավառները, ինչպես նաև գաղթականական գլխավոր խորհրդին գաղթականների տեղափոխության համար անհրաժեշտ համապատասխան տեղեկություններ տալը:

Օրակարգում էր նաև միությունների միության վերակազմության խնդիրը: Երկար քննարկումից հետո ժողովը որոշում է վերակազմել միությունների միության ընդհանուր ժողովը՝ ընդունելով, որ այսուհետև յուրաքանչյուր հայրենակցական վարչությունից ընդհանուր ժողովի նիստին կարող

են վճռական ձայնով մասնակցել միայն երեք ներկայացուցիչներ, իսկ վարչության մյուս անդամները կարող են ներկա լինել խորհրդակցական ձայնով: Վերակազմված ընդհանուր ժողովը պետք է ընտրի գործադիր մարմին, որը իրագործելու է ընդհանուր ժողովի որոշումները²⁸:

Քարտուղար Համազասպ Համբարձումյանին հանձնարարվում է կազմել ընդհանուր ժողովի մի նախագիծ, որով սահմանվելու էին միությունների միության և հայրենակցությունների փոխհարաբերությունները: Ընդհանուր ժողովը նշանակվում է ուրբաթ՝ հուլիսի 19-ին: Այդ օրը տեղի է ունենում ՀՄ վարչությունների ընդհանուր ժողովը՝ բաղկացած երեքական ներկայացուցից. նախագահում է Հ. Թուճանյանը: Նախորդ նիստում քննարկվել էր միությունների միության վերակազմության խնդիրը, եւ ժողովը որոշում է մինչև այդ գործող միությունների վարչությունների ընդհանուր ժողովների փոխարեն ընտրել ՀՄ կենտրոնական խորհուրդ, որը, բաղկացած լինելով երեքական ներկայացուցիչներից, լինելու է ՀՄՄ բարձրագույն մարմինը: Կենտրոնական խորհուրդը իր կազմից պետք է ընտրեր յոթ հոգուց կազմված մի գործադիր մարմին, որն իրագործելու էր կենտրոնական խորհրդի որոշումները: Գործադիր մարմինն էլ իր անդամների ներսում ընտրելու էր նախագահություն, որը միևնույն պաշտոնը վարելու էր նաև կենտրոնական խորհրդում: Այստեղից երևում է, որ գործադիր մարմնի նախագահը և կենտրոնական խորհրդի նախագահը լինելու էր միևնույն անձը: Տվյալ դեպքում այդ պաշտոնը դրված էր Թուճանյանի հոգսաշատ ուսերին:

Գործադիր մարմնի անդամների ընտրության հարցը լուծվում է 1918 թ. հուլիս 23-ի ՀՄ կենտրոնական խորհրդի նիստում՝ գաղտնի քվեարկությամբ: 29 Առաջադրված 11 թեկնածուներից գործադիր մարմնի անդամներ են ընտրվում Հ. Թուճանյանը (17 ձայնով), Միան- սարյանը (15 ձայնով), Հ.

Համբարձումյանը (15 ձայնով), Հ. Արդու-
թյանը (13 ձայնով), Մ. Ավետիսյանը (13 ձայ-
նով), Ա. Տեր-Գրիգորյանը (10 ձայնով), Դար-
բինյանը (9 ձայնով):

Ընտրություններից հետո Թումանյանի
առաջարկությամբ տեղի է ունենում բաց
քվեարկություն, որով նախագահության ան-
դամներ են ընտրվում Հովհաննես Թուման-
յանը՝ իբրև նախագահ, Հ. Արդության և Մ.
Ավետիսյան՝ իբրև փոխնախագահներ, Սի-
անսարյան՝ իբրև գանձապահ, Հ. Համբար-
ձումյան՝ իբրև քարտուղար:

Նույն օրը նիստը լսում է նաև ՀՀԴ ուսա-
նողական միության Թիֆլիսի կոմիտեի
գրությունները: Ուսանողական միության
կոմիտեն ցանկանում է փախստականական
մարմին ստեղծել և առաջարկում է ՀՄՄ-ին
ուղարկել ներկայացուցիչ: Սակայն խոր-
հուրդը կոմիտեին հայտնում է, որ միություն-
ների միությունը անհրաժեշտ է համարում
օժանդակել գոյություն ունեցող գաղթակա-
նական խորհրդին, առավել ևս ցանկալի չի
համարում փախստականների գործերը
տնօրինող նոր կազմակերպության ստեղծ-
վելը:

Նախագահ Թումանյանի առաջարկու-
թյամբ խորհուրդը որոշում է միությունների
միության անունից դիմել աշխարհի բոլոր
ժողովուրդներին ու պետություններին և
խնդրել բարոյական, նյութական օգնու-
թյուն: 30 Այս առաջարկն ընդունվում է և գոր-
ծադիր մարմնին հանձնարարվում է երեք
օրվա մեջ կազմել դիմումը և ուղարկել: Այ-
նուհետև խորհուրդն անդրադառնում է ըն-
թացիկ հարցերին:

Հուլիսի 30-ին՝ երեքշաբթի օրը, կայա-
նում է կենտրոնական խորհրդի նիստը՝
Թումանյանի նախագահությամբ: Քարտու-
ղար Համբարձումյանը ներկայացնում է կա-
նոնադրության նախագիծը, որի վերաբեր-
յալ առաջարկվում է գործադիր կոմիտեին
քննել ու մշակել այն և ենթարկել յուրա-
քանչյուր հայրենակցության քննարկմանը,
որից հետո նորից դնել խորհրդի քննարկ-

մանը: Այս հանգամանքը ցույց է տալիս, թե
որքան մանրակրկիտ ու հանգամանալից է
ուսումնասիրվել հայրենակցական միու-
թյունների խորհրդում յուրաքանչյուր
կարևոր որոշում:

Ժողովը հավանություն է տալիս աշխար-
հի պետություններին և ժողովուրդներին
ուղղված դիմումի խմբագրությանը:

1918 թ. օգոստոսի 3-ին դուրս է գալիս
Հայրենակցական միությունների միության
կոչը, որը ձևակերպված էր այսպես՝ (այս-
տեղ ներկայացվում է ուկրաինական ժո-
ղովրդին ուղղված կոչի տարբերակը. 31
նմանատիպ կոչեր հղվել են աշխարհի մի
շարք պետություններին). **“Народам у госу-
дарствам всего мира! Связи с тем, что
на авказском фронте льется кровь и
гибнет ни в чем не повинный народ, Союз
Союзов в лице Туманяна обращается к
великому Украинскому народу в лице его
правительства и просит о посильной ма-
териальной и моральной помощи гибну-
щему народу”.**

Պետք է նշել, որ Վրաստանին, Պարս-
կաստանին, Թուրքիային և Ադրբեջանին հղ-
վող կոչերի բովանդակությունը շարադրել է
Թումանյանը: Սակայն, ցավոք, այդ կոչերի
բնագրերը մեզ չեն հասել: Պահպանվել է
Անգլիայի կառավարությանը և ժողովրդին
ուղղված կոչի ռուսերեն բնագիրը: Միաժա-
մանակ հայտնի է նաև, որ Հայրենակցական
միությունների միության նախագահ Թու-
մանյանը այցելել է գերմանական պատգա-
մավորության գլխավոր գեներալ Ֆոն Կռե-
սին և խնդրել նրան գերմանական կառա-
վարությանը հանձնել հիշյալ կոչը:

Եիշտ է, մեծ բանաստեղծը եռանդուն
գործունեություն էր ծավալել, ջանում էր օգ-
նել իր ժողովրդին՝ դիմելով աշխարհի ժողո-
վուրդների «խղճին ու սրտին», բայց այդ
ձեռնարկումները չէին տալիս շոշափելի
օգուտ: Հայրենակցական միությունների մի-
ության կոչը մնաց անպատասխան:

Այն օրերին, երբ Թիֆլիսում պարբերա-

բար տեղի էին ունենում ՀՄ կենտրոնական խորհրդի նիստերը, Հայաստանը գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ: Վրա հասած սովը խլում էր բազմաթիվ մարդկային կյանքեր: Սովյալների թիվը կես միլիոնից ավել էր, որոնց մեծ մասը գաղթականներ էին: Սովի անխուսափելի ուղեկիցներն էին վարակիչ հիվանդությունները՝ տիֆը և խոլերան: Վեց ամսվա ընթացքում սովը և հիվանդությունները խլեցին շուրջ 180,000 մարդու կյանք: Ստեղծված վիճակից դուրս գալու, ինչպես նաև ժողովրդի գոյապահպանության համար անհրաժեշտ էր դիմել վճռական քայլերի:

Բնականաբար, այս ստեղծված ծանր իրավիճակը գտնվում էր նաև Թիֆլիսի ՀՄՄ-ի ուշադրության կենտրոնում, որը փորձում էր իր հնարավորության սահմաններում օգնել տարաբախտ ժողովրդին: Հենց այս հարցն է քննարկվել 1918 թ. օգոստոսի 8-ի նիստում, որը նախագահել է Հ. Թումանյանը:

Բաքուրիանի շրջանի հայ փախստականների ներկայացուցիչ Տեր-Ղուկասյանը ներկայացրել է իրենց շրջանում փախստականների ծանր վիճակը: Համատարած սով է, և օրեցօր մեռնում են մարդիկ (օրը՝ մոտ 50 հոգի): Սովամահ է եղել մոտ 2,000 հոգի: Նրանք իրենց փրկությունը տեսնում են միայն զավառ վերադառնալու մեջ. եթե շուտափույթ օգնություն չհասնի, ապա բոլորն էլ սովամահ կլինեն: Լրացուցիչ տեղեկության համաձայն՝ փախստականների թիվը Բաքուրիանում 20,000 է, իսկ Ծաղկարում՝ 40,000: Սկիզբ են առել վարակիչ հիվանդությունները՝ տիֆը:

Գործադիր մարմինը որոշում է գերմանական, ավստրո-հունգարական և տաճկական կուսակցությունների ներկայացուցիչներին հանձնել իր մշակած ծրագիրը և միաժամանակ բանավոր խնդրում է նրանց արագացնել փախստականների՝ հայրենիք վերադառնալու հարցի լուծումը:

Ժողովի օրակարգում դրված էր վիրահայ

ազգային խորհրդին մասնակցելու հարցը: Այս խնդրի շուրջ վերջնական որոշում կայացվում է օգոստոսի 20-ի նիստում: Քարտուղար Համբարձումյանն առաջարկում է ընդունել, որ Վրաստանի Հայոց ազգային խորհրդի կազմակերպությունը միանգամայն անկանոն է՝ «հակառակ թե՛ օրենքին, թե՛ ժողովրդի իրավահայեցողության էական սկզբունքներին»³², որի համար էլ միությունների միությունը չպետք է մասնակցի դրան և բողոքի ձայն բարձրացնի: Այս առաջարկի դեմ առարկել են Գ. Սահակյանը, Աբելյանը, Արդուբյանը, Ավետիսյանը: Նախագահ Թումանյանը իր ելույթում նշում է, որ Վրաստանի հայոց ազգային խորհրդի կազմակերպության մասին ասված Համբարձումյանի խոսքերն իրավացի են և հիմնովին, սակայն «ներկա պայմաններում այլ կերպ վարվել հնարավոր չէ»³³: Համբարձումյանի արժարժած հարցի շուրջ ձայների մեծամասնությամբ ընդունվում է բանաձև՝ ըստ որի՝ ժողովը, լսելով Համբարձումյանի բողոքը Վրաստանի Հայոց ազգային խորհրդի անիրավականության դեմ՝ իբրև ոչ ժողովրդական անմիջական ներկայացուցիչներից կազմված մի հիմնարկության, հաշտվում է խորհրդի գոյության հետ ներկա պայմաններում:

Այնուհետև ժողովը որոշում է ընդունում, որ Վրաստանի ազգային խորհրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ուղարկել ութ ներկայացուցիչ: Սակայն ներկայացուցիչների ընտրության հարցը որոշում են հետաձգել մինչև Ազգային խորհրդի բացման պահը:

Պետք է ասել, որ Հայրենակցական միությունների միությունը իր ընդունած որոշման մասին Վրաստանի Հայոց ազգային խորհրդին տեղյակ պահեց միայն սեպտեմբերի 13-ին գրված մի պաշտոնական գրությամբ: Այստեղ մասնավորապես ասվում էր, որ ՀՄՄ-ն կմասնակցի Հայոց ազգային խորհրդին և կուղարկի իր կողմից ութ ներկայացուցիչ, ուստի և «խնդրում ենք ընդու-

նել միությունների միության ներկայացուցչությունը»³⁴: Այս գործի համար լրացուցիչ տեղեկություններ պետք է հաղորդեր Աբելյանը: Ուղարկված գրությունը ստորագրել էր Յ. Թումանյանը: Այսպիսով՝ թեև միությունն իր անդամների ներսում դեմ էր խորհրդին մասնակցելուն և միաժամանակ այդ Ազգային խորհուրդը դիտում էր իբրև «ուզուրպատ, անկանոն և անընդունելի», այնուամենայնիվ ստիպված էր գնալ փոխզիջումների: Թումանյանն այն կարծիքին էր, որ ՀՄՄ-ն Ազգային խորհրդում ունեցած իր ներկայացուցչությամբ կարող էր լրացնել այդ խորհրդի թերի ու միակողմանի լինելը:

Պահպանված արձանագրություններից երևում է, որ օգոստոս ամսվա մեջ պարբերաբար գումարվել են նիստեր, որոնց բոլորին ներկա է եղել և եռանդուն մասնակցել է նախագահ Թումանյանը: Այդ նիստերում քննարկման հիմնական առարկան եղել է համերաշխության սկզբունքի իրագործումը և նրա արժարժունը ժողովրդական լայն խավերի մեջ, որի մասին բազմիցս արդեն խոսվել է նախընթաց ժողովների ժամանակ, և նպատակահարմար չենք գտնում դրանց մանրամասն քննությունն այստեղ:

Ուշադրության է արժանի սեպտեմբերի 3-ին գումարված ընդհանուր ժողովը՝ Թումանյանի նախագահությամբ: Նա ներկայացրել է Գերմանիայից և Ավստրիայից վերադարձած հայ գերիների տխուր և անմխիթար վիճակը. նրանք անտուն են, քաղցած ու մերկ: Թումանյանն առաջարկել է. «Հայրենակցական միությունների միության անունից հոգուտ գաղթականների կատարել միանվագ հանգանակություն»³⁵:

Թումանյանի այս առաջարկը նիստի անդամներն ընդունեցին տարբեր կերպ: Ոմանք՝ Դավթյանը, Համբարձումյանը, Արդուբյանը և Ավետիսյանը, պաշտպանում էին Թումանյանի տեսակետը, այսինքն՝ միանվագ հանգանակության հնարավորությունն ու կարևորությունը, մինչդեռ մյուսներ-

ըր՝ Աբելյանը, Ամատունին, նպատակահարմար էին գտնում մոտ ապագայում կազմակերպել ավելի հեղինակավոր մարմին՝ գաղթականությունը պահելու նպատակով: Այս հարցը լուծվեց քվեարկությամբ, և որոշվեց կատարել միանվագ հանգանակություն՝ հոգուտ գաղթականների: Գործադիր կոմիտեին հանձնարարվեց մշակել հանգանակության ձևը:

Մեկ անգամ ևս անդրադառնալով գաղթականության հարցին՝ Ախալքալաքի հայրենակցական միության ներկայացուցիչ Աբելյանը առաջարկում է այդ հարցը քննել ամբողջ ծավալով և, եթե անհրաժեշտ է, գումարել խորհրդակցություն, որի մեջ պետք է լինեն ՀՄՄ-ն, Վրաստանի ազգային խորհուրդը և փախստականական գլխավոր խորհուրդը: Ընդունվեց Արդուբյանի առաջարկությունը, ըստ որի՝ միությունների միության անունից պետք է դիմում տրվի Վրաստանի Հայոց ազգային խորհրդին՝ գումարելու խորհրդակցություն: Այդպես էլ վարվում են, և սեպտեմբերի 4-ի նիստի արձանագրությունից երևում է, որ ՀՄ կենտրոնական խորհրդի նախագահ Թումանյանը հղել է գրություններ Ազգային խորհրդին գաղթականության խնդիրների կարգավորման և ընդհանուր խորհրդակցություն գումարելու մասին: Թումանյանի գրած պաշտոնական գրության բովանդակությունը հետևյալն է. «ՀՄՄ-ն իր՝ սույն թվի սեպտեմբերի 3-ի նիստում քննարկել է գաղթականական հարցի ներկա դրությունը և եկել այն եզրակացության, որ անհրաժեշտ է Վրաստանի Հայոց ազգային խորհրդի, փախստականական գլխավոր խորհրդի, ՀՄՄ-ի մասնակցությամբ գումարել մի խորհրդակցություն՝ այդ հարցին վերջնական լուծում տալու համար»³⁶:

Սակայն որքան էլ հրատապ էր գաղթականների անմխիթար վիճակը բարելավելու խնդիրը և նրանց պետական մասշտաբով օգնություն ցույց տալը, այնուամենայնիվ ազգային խորհուրդը չհրավիրեց այդքան

անհրաժեշտ խորհրդակցությունը, այլ միայն ոչինչ չպարտավորեցնող խոստումներ տվեց: Այդ մասին է վկայում 1918 թ. հոկտեմբերի 2-ին գրված նախագահ թումանյանի դիմումը Վրաստանի ազգային խորհրդին, որտեղ վերջինս ՀՍՄ-ի անունից մեկ անգամ ևս շեշտում է գաղթականական խորհրդակցություն հրավիրելու անհրաժեշտությունը: Թումանյանը կրկին հիշեցում է անում և խնդրում տալ պատասխան:

Այսպիսով՝ 1918 թ. մարտ-սեպտեմբեր ամիսներին Հովհ. Թումանյանը ծավալում է հասարակական լայն գործունեություն՝ դառնալով ոչ միայն Հայրենակցական միությունների միության գլխավոր դեմքերից մեկը (եթե ոչ գլխավորը), այլև հայության բարոյական նեցուկը: Ժողովրդի հարազատ զավակը երբեք չհուսահատվեց ու միշտ մնաց փրկության փարոս բնօրրանից զրկված հազարավոր հայերի համար:

Էդ. Ջրբաշյան, Թումանյան. ստեղծագործության պրոբլեմներ, Երևան, 1988, էջ 11:

² ԹԹ, ՓԲ, N 379

³ ԹԹ, ՓԲ, N 380

⁴ ԹԹ, ՓԲ, N 380

⁵ ԹԹ, ՓԲ, N 382

⁶ ԹԹ, ՓԲ, N 382

⁷ ԹԹ, ՓԲ, N 383

⁸ ԹԹ, ՓԲ, N 384

⁹ ԹԺՀ, էջ 266

¹⁰ ԹԺՀ, էջ 700

¹¹ ԹԹ, ՓԲ, N 386

¹² ԹԹ, ՓԲ, N 386

¹³ ԹԹ, ՓԲ, N 387

¹⁴ Նույն տեղում

¹⁵ ԹԺՀ, էջ 116

¹⁶ ԹԺՀ, էջ 116

¹⁷ ԹԹ, ՓԲ, N 387

¹⁸ ԹԺՀ, էջ 735

¹⁹ «ԽՈՉՍՈՋՐՍՏԱԿ ԽՍՉՏ» 1918 չ. N 70, «Մշակ», 1918 թ., N 66

²⁰ «Հորիզոն», 1918, N 83

²¹ ԳԱԹ, ԹՖ

²² ՀԺՊ, հ. 7, Երևան, 1967

²³ Լ. Կարապետյան «Հովհ. Թումանյանի հասարակական գործունեությունը», Երևան, 1922 թ. էջ 213:

²⁴ Նույն տեղում, էջ 217:

²⁵ ԹԹ, ՓԲ, N 389

²⁶ Նույն տեղում:

²⁷ «Հորիզոն», 1918 թ. N 98

²⁸ ԹԹ, ՓԲ, N 390

²⁹ ԹԹ, ՓԲ, N 392

³⁰ ԹԹ, ՓԲ, N 392

³¹ ՊԿՊԱ, ֆ. 244, ց. 1, գ. 12, 14:

³² ԹԹ, ՓԲ, N 396

³³ Նույն տեղում:

³⁴ ԹԹ, ՓԲ, N 474

³⁵ ԹԹ, ՓԲ, N 398

³⁶ ԹԹ, ՓԲ, N 473

"Tumanyan and Union of Compatriot Alliances"

A. Hovhannissyan

Summary

The research includes a short but fatal period of the great Armenian poet's activities. It shows what an invaluable role Tumanyan's presence played in the unfavourable period of time in the history of the Armenian nation, during March-September of 1918.

2006

3-4

For The Same Of
JUSTICE

119

Հայ սփյուռքը մեծ դեր է խաղում Հայաստանի պետականաշինության պատասխանատու գործում: Հայաստանի անկախացմամբ հայրենիք-սփյուռք համագործակցության ընդլայնման և խորացման համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին: Սփյուռքը մեծ դերակատարում ունեցավ աշխարհի տարբեր երկրների հետ նորակախ Հայաստանի հարաբերությունների հաստատման և զարգացման գործում:

Չնայած իր փոքրաթիվ լինելուն՝ բրիտանահայ սփյուռքը նույնպես իր պատկառելի ավանդն է բերել (և բերում է) Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման և հայ ժողովրդի հիմնախնդիրների լուծման գործում: Իր հայրենամեղ պատգործունեությունը բրիտանահայ համայնքն իրականացրել և իրականացնում է հիմնականում հետևյալ ուղիներով. ուղիղ մարդասիրական օգնության տրամադրում Հայաստանին և մարդասիրական այլ ծրագրերի իրականացում, գործարար ներդրումներ և ներգրավվում Հայաստանի և Արցախի տնտեսական զարգացման ծրագրերում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ համահայկական միջոցառումների շրջանակներում, հայության հիմնախնդիրների (արցախյան հիմնահարց և Հայոց Ցեղասպանության ճանաչում) հայանպաստ լուծման ուղղությամբ լոբբինգի և քարոզչության իրականացում բրիտանական իշխանությունների և հասարակայնության շրջանում, աջակցություն և գործուն մասնակցություն ամենատարբեր ոլորտներում հայ-բրիտանական համագործակցության կայացման և զարգացման գործընթացին:

Մեծ Բրիտանիայում հայ համայնքը հիմնել են Կ. Պոլսից, Իզմիրից և Տրապիզոնից Անգլիա գաղթած և այստեղ իրենց

առևտրական ընկերությունները հիմնած հայ վաճառականները 19-րդ դարի 30-ական թթ. [15, էջ 15] (ըստ Հր. Աճառյանի, դեռ 17-րդ դարից սկսած հարուստ հնդկահայերը գալիս էին Անգլիա՝ ոմանք կրթություն ստանալու, ոմանք «իրենց միլիոնները վայելելու այս ճոխ երկիրին մեջ» [14, էջ 746]): Օսմանահպատակ հայ վաճառականների՝ Մեծ Բրիտանիայում առևտրական գործունեության ծավալումն ընթացել է Թուրքիայի և Անգլիայի միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, ինչին նպաստել է հատկապես 1838թ. երկու երկրների միջև կնքված առևտրային պայմանագիրը [18, էջ 142]: Առաջին այս վաճառականների հաջող գործունեությունից ոգևորված՝ շուտով Վանից, Տիգրանակերտից, Կարինից, Հնդկաստանից, Պարսկաստանից և Հեռավոր Արևելքից վաճառականների նոր խմբեր են գալիս հաստատվում այստեղ՝ հիմնականում Մանչեստր, Լիվերպուլ, Լոնդոն և Սաութհորթ քաղաքներում [15, էջ 15]: 19-րդ դարի վերջին հայերի կողմից հիմնված առևտրական գրասենյակների ու գործակալությունների թիվը հասել է 50-ի [10, էջ 98]: Հայ վաճառականները Անգլիայից Կ. Պոլիս, Միջին Արևելքի և այլ երկրներ էին արտահանում մեծ քանակությամբ երկաթ, կերպասեղեն և այլ զանազան իրեր, փոխարենը այնտեղից Անգլիա էին ներմուծում ծխախոտ, մրգեր, գորգեր և այլն: Մանչեստրում և Լոնդոնում նրանք ունեին ծխախոտի, կերպասեղենի գործարաններ, գորգ նորոգելու և մաքրելու հաստատություններ [15, էջ 15]: 1870թ. Մանչեստրում կառուցվել է առաջին հայկական Սուրբ Երրորդություն եկեղեցին, իսկ 1922թ. Լոնդոնում՝ Սուրբ Սարգիս եկեղեցին

[16, էջ 392-393]: Հայերի հոսքը Մեծ Բրիտանիա ավելացել է առաջին աշխարհամարտից հետո, երբ այստեղ են հաստատվել Թուրքիայից, Իրանից, Կովկասից, Հնդկաստանից գաղթած հայեր: Հայերի ներգաղթը Մեծ Բրիտանիա, հատկապես Լոնդոն, ուժեղացել է 20-րդ դարի 2-րդ կեսին, ինչը պայմանավորված էր Եգիպտոսում, Լիբանանում, Իրանում և այլ երկրներում ստեղծված անկայուն քաղաքական կացությամբ (1946թ. հայերի թիվը Մեծ Բրիտանիայում կազմել է 2 հազար, 1960-ականներին՝ 4 հազար, 1977թ.՝ 7 հազար, 1981թ.՝ 12 հազար և 1996թ.՝ շուրջ 15 հազար): 2003թ. տվյալներով Մեծ Բրիտանիայում հայերի թիվը կազմել է շուրջ 16 հազար [16, էջ 393]: Հայերը հիմնականում մտավորականներ են, բարձրակարգ մասնագետներ, բժիշկներ, իրավագետներ, դասախոսներ, կան նաև ձեռնարկատերեր, բանկային ոլորտում աշխատողներ և այլն:

Ամերիկացի լրագրող Թոմի Հելֆինը 1993թ. ասել է, որ ուրիշ ավելի մեծ հայ համայնքների համար բրիտանահայ համայնքից ուսանելու շատ բան կա. անգլահայ համայնքը կարողացել է միասնական աշխույժ գործելու վառ օրինակ ծառայել [20]: Իսկապես, բրիտանահայ համայնքի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս նրա բացառիկ կամքն ու նպատակաուղղվածությունը՝ միասնաբար և եռանդուն գործելու հանուն Մայր Հայաստանի բարօրության և հայ ժողովրդի դարավոր իղծերի իրագործման: Քաղաքական տարբեր հայացքներ դավանելը, հայ ավանդական երեք կուսակցությունների ներկայությունը Բրիտանիայում չհանգեցրեց համայնքի խիստ պառակտվածության, ինչպես օրինակ, հունահայերի պարագայում էր (հունահայ համայնքի պառակտվածության դրսևորումների մասին մանրամասն տես [17, էջ 55, 59-61]):

Հաշվի առնելով Մեծ Բրիտանիայի ծանրակշիռ դերակատարությունը միջազգային

հարաբերություններում՝ նորանկախ Հայաստանի իշխանությունները երկրի պետականաշինության, սոցիալ-տնտեսական զարգացման գործում մեծ տեղ էին տալիս այդ պետության հետ Հայաստանի Հանրապետության երկկողմ հարաբերությունների հաստատմանն ու արագ զարգացմանը, ամենատարբեր ոլորտներում հայ-բրիտանական համագործակցության կայացմանը: Այդ է վկայում մասնավորապես այն փաստը, որ Եվրոպայում ՀՀ առաջին դեսպանությունը բացվեց հենց Մեծ Բրիտանիայում 1992թ. ապրիլի 14-ին [2, էջ 113]: Բրիտանահայ համայնքը մեծ դեր խաղաց Հայաստանի և Մեծ Բրիտանիայի միջև քաղաքական երկխոսության կայացման և ընդհանրապես հայ-բրիտանական հարաբերությունների զարգացման հարցում: Այդ առնչությամբ առաջին խոշոր ձեռքբերումը Լոնդոնում Հայաստանի դեսպանության հիմնումն էր, ինչն անհնար կլիներ իրականացնել առանց համայնքի ակտիվ աջակցության. դեսպանությանը շենքի տրամադրումը, համայնքի միջոցներից գումարների հատկացումը այն հիմնամորոգելու, ինչպես նաև երկու տարվա ընթացքում դեսպանատան աշխատակազմի ծախսերը հոգալու նպատակով [30], հիրավի մեծ աջակցություն էր հայ-բրիտանական հարաբերությունների կայացմանն ու զարգացմանը: Մեծ Բրիտանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանության բացվելուն պես՝ տեղի հայ համայնքի շատ անդամներ սիրահոժար ներգրավվեցին դեսպանության աշխատանքներում. ըստ դեսպանության կողմից տրամադրված տեղեկությունների, 1992թ. աշնան դրությամբ դեսպանատան անձնակազմի (և դիվանագիտական, և վարչատեխնիկական, և սպասարկող) 27 անդամներից 17-ը, այդ թվում հաշվապահը և բուժական անձնակազմը, կամավորության հիմունքներով էին աշխատում [6, էջ 23], իսկ մինչև նույն թվականի օգոստոս ամիսը դիվանագիտական ներկայացուցչության ողջ անձ-

նակազմը, ներառյալ գործերի ժամանակավոր հավատարմատար Արմեն Սարգսյանը, աշխատել է առանց վարձատրման՝ կամավորության հիմունքներով [6, էջ 1-2]: Դեսպանատան շենքի վարձակալման դիմաց դեսպանությունը «Հայ Տուն» կազմակերպությանը վճարել է խորհրդանշական մի գումար, իսկ դեսպանի սենյակի կահույքն ու մեքենան մվիրաբերել են Պետրոս Բազանյանն ու Ջորջ Զյուրքչյանը [6, էջ 2-3]: Բրիտանահայերը ակտիվորեն աջակցում էին նաև դեսպան Սարգսյանի դիվանագիտական գործունեությանը. «Ազգի» հաղորդմամբ, նրա 42 խորհրդատու-օգնականները ամեն օր որոշակի տեղեկություններ էին հաղորդում իրենց մասնագիտացած բնագավառների (օրենսդրություն, բանկային համակարգ, տնտեսություն, էներգետիկա, մշակույթ, հողագործություն և այլն) վերաբերյալ [20]: Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպանությունը յուրահատուկ կապող օղակ է հանդիսանում բրիտանահայ համայնքի և Հայաստանի միջև: Իր գործունեության սկզբից ևեթ դեսպանությունը անց է կացրել մշտական հանդիպումներ տարբեր կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև բրիֆինգներ համայնքի համար՝ մվիրված Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությանը [4, էջ 129-130]: Դեսպանության միջնորդության արդյունքում է, որ բրիտանահայ համայնքը միշտ հնարավորություն է ունեցել և շարունակում է ունենալ հանդիպելու Մեծ Բրիտանիա ժամանած հայ բարձրաստիճան պաշտոնյաների, հասարակական, մշակութային գործիչների և գործարարների հետ: Նման հանդիպումները հանգեցնում են բրիտանահայ համայնքի՝ Հայաստանում կատարվող իրադարձությունների վերաբերյալ իրազեկվածության խորացմանը: Լոնդոնում Հայաստանի դեսպանությունը նաև աշխատանքներ էր տանում բրիտանահայ գործարարների և նրանց բրիտանացի և այլազգի գործընկեր-

ների՝ Հայաստան կատարվող այցերի կազմակերպման գործում: Հարկ է նշել, որ բրիտանական իշխանությունները բարյացակամ են վերաբերվել դեսպանության և բրիտանահայ համայնքի միջև սերտ համագործակցությանը. Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների կարգավորման հարցը մտել է նաև հայ-բրիտանական պաշտոնական շփումների օրակարգը. այդ փոխհարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունն, օրինակ, քննարկվել է 1995թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 5-ը Հայաստան այցելած Մեծ Բրիտանիայի ԱԳՆ Արևելյան վարչության պետ Ռիչարդ Ուիլքինսոնի և ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի միջև կայացած հանդիպմանը [5, էջ 112]:

Իր հերթին բրիտանահայ համայնքը մեծ ավանդ է ունեցել հայ-բրիտանական տնտեսական գործակցության կայացման և ամրապնդման գործում: Դեռ Հայաստանի առաջին հանրապետության շրջանում՝ 1918թ. վերջին, Լոնդոնի Առևտրի պալատի կազմում ստեղծվել էր «Հայ-բրիտանական տնտեսական ընկերակցությունը», որի գործունեությունն ուղղված էր մասնավորապես Լոնդոնի առևտրական և ֆինանսական ծանրակշիռ շրջանակների ներգրավումը Հայաստանի տնտեսական զարգացման գործընթացում [18, էջ 147]: 1920թ. ապրիլի 27-ին Լոնդոնում հիմնադրվում է նոր տնտեսական կազմակերպություն՝ «Բրիտանահայկական առևտրի պալատը»՝ նպատակ հետապնդելով հայ-բրիտանական տնտեսական կապերի զարգացումը [18, էջ 147]: Հայ-բրիտանական տնտեսական գործակցությունը շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի տնտեսության զարգացման գործում (նշենք, որ Մեծ Բրիտանիան ինչպես ներդրումների, այնպես էլ ապրանքաշրջանառության առումով 1996թ. ի վեր Հայաստանի թիվ մեկ գործընկեր երկրների շարքին է դասվում): Հայ-բրիտանական տնտեսական գործակցությունը, նամանա-

վանդ 1990-ականների առաջին կեսին, կարևորվում էր նաև Հայաստանի հանդեպ բրիտանական քաղաքականության հավասարակշռման առումով (Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպանությունն իր 1993թ. գործունեության վերաբերյալ հաշվետվության մեջ մասնավորապես նշել է, որ Հայ-բրիտանական հարաբերությունները զգալի կախվածություն ունենին Ադրբեյջանի հետ Մեծ Բրիտանիայի տնտեսական հարաբերություններից. Ադրբեյջանի նավթահանքերի շահագործման ոլորտում ակտիվորեն ներգրավված «Բրիթիշ Փեթրոլեում» ընկերությունը զգալի ազդեցություն ուներ բրիտանական քաղաքական դիրքորոշումների վրա [4, էջ 123]): Հայ-բրիտանական տնտեսական հարաբերություններում բրիտանահայերի դերը դիտարկվում է երկու պրիզմայով. բրիտանահայ գործարարների կողմից ուղղակի ներդրումների իրականացում Հայաստանում և Հայաստանի ներկայացում բրիտանական գործարար շրջանակներին. Հայաստանյան իշխանությունները վերջին համաժամանքը համարել են տնտեսական համագործակցության զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը [8, էջ 7]: Մեծ Բրիտանիայի հայ գործարարները, որոնց թիվը ցավոք ստվար չէ, իրենց հնարավորության սահմաններում Հայաստանի հետ համագործակցության քայլեր են կատարել. դրանց արդյունքն է այնպիսի ձեռնարկությունների գործունեությունը Հայաստանում, ինչպիսիք են օրինակ՝ «Անգլո-Արմենիան», «Ռիմաթեք-Արմենիա», «Արևիկ-բրիջ», «ՀակՁոր», «Խեչո և Որդիներ» և այլն: Հայաստանի հետ համագործակցելու պատրաստակամություն հայտնած բրիտանական առաջին ձեռնարկություններից էր համակարգչի արտադրությամբ զբաղվող «Վիզլեն» ընկերությունը. Մեծ Բրիտանիայում բավականին համբավ վայելող այս ընկերության տնօրեն Վիգեն Բոյաջյանը Լոնդոնում գտնվող ՀՀ վարչապետ Յ. Բազարտյանի հետ քննարկել է այդ համագործակ-

ցության հնարավորությունը (1993թ. մայիս) [23], ինչի մասին ցավոք հետագայում տեղեկություններ չենք ստացել: Հայաստանում բրիտանական ներդրումների ներգրավմանը, ի թիվս այլ գործոնների, խթանում էին բրիտանահայ համայնքի ակտիվ անդամների կողմից բրիտանական գործարար շրջանակներին փոխանցած տեղեկատվությունը Հայաստանում բիզնես ծավալելու հնարավոր ոլորտների վերաբերյալ: Այսպես, Լոնդոնում ՀՀ դեսպանության աջակցությամբ, 1993թ. սեպտեմբերի 17-ից 24-ը Հայաստան այցելած բրիտանահայ ճանաչված գործարար Պետրոս Քազանջյանը և «Քընեդիան Իմփերիալ Բանկ»-ի ներկայացուցիչ Իրինա Լայները հանդիպումներ ունեցան Հայաստանի իշխանությունների հետ, այցելեցին մի շարք խոշոր ձեռնարկություններ («Մարս» միավորում, «Զվարթնոց» օդանավակայան և այլն)՝ հետաքրքրություն հայտնելով Հայաստանի ֆինանսական համակարգի վիճակի, Երևանի գինու և կոնյակի գործարանների, ինչպես նաև ծխախոտի գործարանի արտադրության, «Զվարթնոց» օդանավակայանի տեխնիկական հնարավորությունների շուրջ: Առաջարկություններ արվեցին համագործակցության հնարավոր ոլորտների վերաբերյալ, մասնավորապես Քասաճյանը խոստացավ Հայաստան ուղարկել «GPT» ավիաընկերության մասնագետների՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և օդաչուների համար դասընթացներ կազմակերպելու նպատակով: Առաջարկություններ արվեցին նաև ֆինանսաբանկային կապեր ստեղծել Պարսից ծոցի երկրների հետ [4, էջ 174]:

1994թ. մարտի 4-ից 10-ը ճապոնական «Միցուի» ընկերության Լոնդոնի մասնաճյուղի ներկայացուցիչներ Ք. Յամազակին և հայազգի Ֆ. Հայրապետը Հայաստան կատարած այցի շրջանակներում ՀՀ իշխանությունների և մի քանի խոշոր ձեռնարկությունների տնօրենների հետ պայմանավոր-

վածություններ ձեռք բերեցին հիդրոէլեկտրակայանների, պղնձի, մոլիբդենի, ոսկու, պերլիտի վերամշակման գործարանների համատեղ շահագործման, հայ-հունա-ամերիկյան «Դեպ» նավթի և գազի հետազոտման համատեղ ծրագրերին մասնակցության շուրջ [2, էջ 97]:

ՀՀ արտգործնախարարությունում բրիտանացի բանկիրների հետ հանդիպման ժամանակ (1995թ. հունիսի 22) բրիտանական «Միդլենդ» բանկի տնօրեն Մայքլ Յեյզանը շեշտել է Հայաստանում բանկի մասնաճյուղի հիմնադրման գործընթացին բրիտանահայերի բերած աջակցությունը [25]: Հիշեցնենք, որ 1995թ. հունիսի 20-ին ՀՀ Կենտրոնական Բանկը արտոնագիր էր տվել «Միդլենդ Արմենիա» բանկի հիմնադիրներին [12, էջ 22]. 1996թ. մարտի 16-ից «Միդլենդ Արմենիա» բանկը պաշտոնապես սկսեց գործել [12, էջ 23]. այն հանդիսանում է Հայաստանում առաջին արտասահմանյան բանկի մասնաճյուղը՝ մտնելով Հոնկոնգ-Շանհայ բանկային խմբի մեջ: Վկայակոչելով բրիտանահայերի հայրենասիրական զգացումները և նրանց հնարավորությունները՝ Հայաստանի տնտեսությունում բրիտանացի գործարարների ներգրավման առումով՝ Յեյզանն ասել է, որ մասնաճյուղի հիմնադրման որոշումը կայացնելու հարցում մեծ դեր է խաղացել իր գործընկեր Վալեն Մանուկյանը [25]: Նշենք, որ բանկի հիմնումը (որը հետագայում վերանվանվեց «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան») մեծ ձեռքբերում էր Հայաստանի բանկային համակարգի զարգացման համար: Վալեն Մանուկյանի մեկ այլ գործընկեր՝ գործարար Ռամզի Սանբարը, 1995թ. հունիսի 19-ից 21-ը երևանում գտնվելիս, ՀՀ պետնախարար Գագիկ Շահբազյանի հետ քննարկել էր երևանի ծխախոտի գործարանի հետ համագործակցության հնարավոր ուղիների հետ կապված մի շարք հարցեր: Ձեռք բերված համաձայնության արդյունքում մի քանի օր անց Լոնդոնից մասնագետ էր գոր-

ծուղվել Երևան՝ ծանոթանալով գործարանի աշխատանքներին և հանգամանալից քննարկումներ անցկացնելով ղեկավարության հետ [1, էջ 2]: Հայաստանում 1991-2005թթ. ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայից կատարվել է մոտ 61 մլն ԱՄՆ դոլարի ուղղակի ներդրում [13], դրանց մի զգալի մասը կատարվել է բրիտանահայ գործարարների կողմից, նաև նրանց միջնորդական ջանքերի արդյունքում (2005թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված են բրիտանական կապիտալի մասնակցությամբ 63 ձեռնարկություններ [13]):

Բրիտանահայերն իրենց ներդրումը բերեցին նաև Հայաստանի անկախացման գործընթացի, անկախության առաջին տարիներին գրանցված սոցիալ-տնտեսական աղետալի իրավիճակը մեղմացնելու, հումանիտար աղետների հետևանքները վերացնելու գործում: Համայնքը ոչ միայն իր և առանձին հայ բարերարների միջոցներով էր օգնության հասնում Հայաստանին, այլև հումանիտար օգնության գործընթացում ներգրավում էր բրիտանացի բարեգործների և բարեգործական կազմակերպությունների: Այս փաստն, ինչ խոսք, իր դրական ազդեցությունն էր ունենալու հայ-բրիտանական հարաբերությունների հետագա զարգացման ընթացքի վրա: 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո համայնքի ակտիվի ջանքերով ստեղծվեց «Օգնություն Հայաստանին» կազմակերպությունը, որի հանգամանակած միջոցներով Վանաձորում կառուցվեց «Ս. Նարեկ» մանկական հիվանդանոցը [16, էջ 393], [3, էջ 67]: Հիվանդանոցի բացման արարողությանն (1992թ. ապրիլի 25) իր մասնակցությունը բերեց նաև ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի առաջին դեսպան սըր Ռոդրիք Բրեյթուեյթը: Հատկանշական է, որ հիվանդանոցի կառուցման համար «Օգնություն Հայաստանին» կազմակերպությանը գումարներ էին հատկացրել նաև Մեծ Բրիտանիայի կառա-

վարությունն ու այդ երկրի մի շարք բարեգործական և կրոնական կազմակերպություններ [22]: Երկրաշարժի հետևանքների վերացմանը առավել ակտիվ մասնակցություն են ցուցաբերել տասնյակից ավելի հայ և բրիտանացի անհատներ (Վաչե և Թամար Մանուկյան ամուսիններ, Ջոն և Ջորջ Քյուրբջյան եղբայրներ, Ռուբեն Գալչյան, Ռոզա տրյան, Ջուլի Գալստյան, Պետո Եղիայան, Վարդուկ Գյուլբենկյան, Գևորգ Յուպայան, Տեր Եղիշե Արքեպիսկոպոս Կիզիրյան, Բժ. Անուշ Մեյջոր, Բժ. Պերճ Ազատյան, Փոլ Բըրնս, Դեյվիդ Դոել, Ալֆրեդ Բուլմ և այլք), ինչպես նաև բրիտանահայ և բրիտանական հետևյալ կազմակերպությունները. «Ս. Սարգիս», «Թյուրոր», «Էմ ընդ Էյ Էսսեֆիան», «Չերիթի Նոու Յաու», Յայ Ընդհանուր Օգնության Միության Լոնդոնի մասնաճյուղը, «Սուանսի Սիթի Թենվիլը», «Միացյալ Թագավորության արտակարգ իրավիճակների օգնության կոմիտե», «Մեծ Բրիտանիայի Յայկական Բժշկական Միություն», «Անահիտ Ընկերակցություն» և այլն [7, էջ 106-107]: Համայնքի ակտիվ մասնակցությամբ, «Յայաստան» Համահայկական Հիմնադրամի Մեծ Բրիտանիայի մասնաճյուղի կողմից հանգանակված գումարների շնորհիվ 1999-2006թթ. իրականացվեցին Սպիտակի «Եռանկյունի» թաղամասի 10 շենքերի կառուցման ծրագրերը՝ մոտ 1 մլն 225 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ [30]: Այս գործում արժանին պետք է մատուցել հատկապես բարերարներ Տիգրան և Սեդա Ուզունյաններին, Պարզև Գասարջյանին:

Բրիտանահայ համայնքը ներգրավվել է նաև «Յայաստան» Համահայկական Հիմնադրամի կողմից ձեռնարկված հումանիտար և զարգացման մի շարք այլ ծրագրերում՝ Հիմնադրամի մասնաճյուղի միջոցով հովանավորելով Յայաստանում առողջապահության համակարգի զարգացման, ինչպես նաև սոցիալապես անապահով խմբերին և հաշմանդամներին օժանդակման ծրագրեր՝ ընդհանուր առմամբ մոտ 500 հա-

զար դոլար արժողությամբ [30]: Իսկ Հիմնադրամի մշակույթի զարգացման ծրագրերի հետ կապված նշենք, որ Լոնդոնի «Վաչե Մանուկյան» հիմնադրամի, ինչպես նաև մի շարք հայաստանցի և սփյուռքահայ բարերարների կողմից 1997-2000 թթ. հովանավորվել են պետական երաժշտական ու թատերական կոլեկտիվներ, վաստակաշատ մտավորականներ՝ ավելի քան 700 հոգի (ծրագրի արժեքը կազմել է մոտ 1 մլն 144 հազար ԱՄՆ դոլար) [30]: Նշենք նաև, որ համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով չենք անդրադառնում Հիմնադրամի կողմից կազմակերպված հեռուստամարաթոնների արդյունքում Յայաստանի և Արցախի զարգացման ծրագրերին բրիտանահայերի ցուցաբերած օժանդակությամբ:

Առանձնակի ուշադրության է արժանի բրիտանահայ համայնքի՝ Յայոց Ցեղասպանության ճանաչմանն ուղղված գործունեությունն արդի շրջանում: Այս հարցը կարևորվում է ինչպես պատմական անարդարության դեմ հայ ժողովրդի մի փոքր հատվածի՝ բրիտանահայության պայքարի, այնպես էլ Յայաստանի և Մեծ Բրիտանիայի միջև հարաբերությունների տեսանկյունից: Ցեղասպանության ճանաչման խնդիրը հաճախ է ընդգրկվել հայ-բրիտանական պաշտոնական շփումների օրակարգում: Համայնքի գործունեության արդյունքում բրիտանական հասարակայնությունը գնալով ավելի է իրազեկվում, ինչը կարող է հանգեցնել խնդրի շուրջ հայ-բրիտանական պաշտոնական դիրքորոշումների մերձեցմանը:

Բրիտանահայ համայնքի հայանապատ գործունեությունը, մասնավորապես Մեծ Բրիտանիայում Ցեղասպանության ճանաչման գործընթացն առաջ մղելու ուղղությամբ, խիստ հետաքրքրության է արժանացել նույնիսկ Թուրքիայի քաղաքական և գիտական շրջանակներում. Անկարայի Եվրասիայի ռազմավարական հետազոտություն-

ների կենտրոնի («ԱՍԱՄ») Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի աշխատակից դր. Սեդաթ Լաչինը բավականին ընդարձակ մի հոդվածով է անդրադարձել այս խնդրին: «Հայկական ուսումնասիրություններ» ամսագրում գետեղված իր «Հայ սփյուռքը Բրիտանիայում և Հայկական հարցը» աշխատության մեջ Լաչինը, ներկայացնելով Ցեղասպանության ճանաչմանն ուղղված բրիտանահայերի գործունեությունից որոշ դրվագներ, եզրակացնում է, որ համայնքը կարողանում է լուրջ ազդեցություն ունենալ Բրիտանիայում հասարակական կարծիքի ձևավորման վրա [19]: Նաև վկայակոչելով իբր բրիտանահայ որոշ կազմակերպությունների կապը «Հայկական ահաբեկչական ցանցի» հետ՝ կարծում ենք, հոդվածագիրը նպատակ է հետապնդել բրիտանական հասարակությանը և իր հաղորդմամբ 300 հազարանոց թուրք համայնքին դրդել՝ դիմակայելու բրիտանահայերի գործունեությանը:

Հայաստանի անկախացումից հետո ավելի է ակտիվանում բրիտանահայ համայնքային կառույցների գործունեությունը՝ ուղղված Հայոց Ցեղասպանության վերաբերյալ բրիտանական հասարակության և քաղաքական շրջանների իրազեկմանը և վերջին հաշվով իշխանությունների կողմից այն ճանաչելուն: Նշված կառույցներից առավել ակտիվ են Մեծ Բրիտանիայի Հայ համայնքային և եկեղեցական խորհուրդը՝ իր կողմից ստեղծված «Հայ Տուն» կառույցով հանդերձ, ինչպես նաև «Հայ Տան» Տիկնանց հանձնախումբը, ՌԱԿ, ՍԴՀԿ և ՀՀԴ Հայ Դատի պաշտպան հանձնախմբերը [15, էջ 40]: Ըստ Մեծ Բրիտանիայում ՀՀ ներկայիս դեսպան Վահե Գաբրիելյանի, Լոնդոնում գործում է նաև Հայոց Ցեղասպանության ճանաչման կոմիտե, որը բավականաչափ աշխատանք է տարել՝ հարցը հասցնելով մինչև վարչապետի գրասենյակ [24]: Բրիտանահայ վերոնշյալ կառույցները ամեն տարի Մեծ Եղեռնի ոգեկոչման հան-

դիսություններ են կազմակերպել՝ բրիտանական հասարակությանը լսելի դարձնելով իրենց բողոքի ձայնն ընդդեմ պատմական անարդարության. այդ ձայնն առավել զիլ հնչեց 1995թ. ապրիլի 24-ին, երբ Լոնդոնահայերը բողոքի ցույց կատարեցին Թուրքիայի դեսպանատան առջև՝ թուրքական իշխանություններից պահանջելով ճանաչել Հայոց Ցեղասպանությունը [21]: Ցեղասպանության ճանաչմանն ուղղված իրենց պայքարում բրիտանահայերն ակտիվորեն համագործակցում էին Մեծ Բրիտանիայի խորհրդարանի բրիտանա-հայկական համակուսակցական խորհրդարանական խմբի (Կոմս Շենոն, Լորդ Էյվերի, Բարոնուհի Քոքս, Ջեյն Գրիֆ-Ֆիթս, և այլոք) հետ: Այս գործակցությունը լավագույնս դրսևորվեց 2000թ. հուլիսի 26-ին, երբ խորհրդարանական խմբի ներկայացուցիչներն ու հայ համայնքի անդամները վարչապետ Թոնի Բլեյրին հանձնեցին 3000 հանրագիր, պահանջելով կառավարության կողմից ճանաչել Հայոց Ցեղասպանությունը [9, էջ 33]: Հանրագրերի ստորագրումը կազմակերպվել էր Հայ համայնքային և եկեղեցական խորհրդի Հայոց Ցեղասպանության ճանաչման հանձնախմբի և վերոնշյալ պատգամավորական խմբի սերտ համագործակցությամբ. դրանց հանձնման արարողությանը հրավիրվել էին բրիտանական և օտարերկրյա լրատվական գործակալությունների և ազդեցիկ թերթերի ներկայացուցիչները [9, էջ 27]: Հանրագրերի 2/3-ը ստորագրվել էր հայ համայնքի անդամների, 1/3-ը՝ բրիտանական խորհրդարանի 57 անդամների, բրիտանական հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների կողմից. ստորագրողների շարքում է եղել նաև Լոնդոնի քաղաքապետ Քեն Լիվինգսթոնը [9, էջ 27, 33-36]: Այս իրադարձությունն իր ազդեցությունը թողեց գործընթացի հետագա ընթացքի վրա՝ քննարկումների տեղիք տալով նաև հայ-բրիտանական պաշտոնական շփումների շրջանակում: Այսպես, Մեծ Բրի-

տանհայի ԱԳՆ Անդրկովկասի երկրների պատասխանատու Ռիչարդ Վուդը անուղղակի հարցադրմամբ ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Արմեն Լիլոյանից փորձել է պարզել, թե ինչ դեր են ունեցել հայ պաշտոնական շրջանակները վերոհիշյալ ակցիայի կազմակերպման գործում [9, էջ 81]: Մեծ Բրիտանիայի ներքին գործերի նախարարության աշխատակից Դեյվիդ Ջոնսոնը Լոնդոնում Հայաստանի դեսպանության աշխատակցին հայտնել է, որ նախարարությունը խորհուրդ է տվել ԲիԲիՍի լրատվական գործակալությանը՝ 2001թ. հունվարի 27-ին կայանալիք «Ողջակիզման զոհերի հիշատակի օրվա» նվիրված միջոցառումն ուղիղ եթեր հեռարձակմանը հաջորդող կարճ վավերագրական կինոժապավենը (որը լուսաբանելու էր Կամբոջայի, Ռուանդայի, Բալկանների վերջին պատերազմների ոճրագործությունները) պատմական ավելի լայն ժամանակահատված ընդգրկի՝ ակնարկելով, որ չի բացառվում Հայոց Եղեռնի հիշատակումը: Ըստ Ջոնսոնի, ՆԳ նախարարությունը այդ քայլին գնացել է՝ հաշվի առնելով հայ և այլազգի համայնքներից ստացված բողոքները [9, էջ 94]: Ի պատասխան վերը նշված հանրագրերի, Մեծ Բրիտանիայի փոխարտգործնախարար Քիթ Վազը 2000թ. նոյեմբերի 27-ին պաշտոնական գրությամբ ուղարկեց բրիտանա-հայկական համակուսակցական խորհրդարանական խմբի փոխնախագահ Բարոնուհի Քոքսին՝ վերահաստատելով բրիտանական իշխանությունների դիրքորոշումը Հայոց Ցեղասպանության հարցում: Գրության մեջ մասնավորապես ասված էր, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը, նախորդ կառավարությունների նման, չի գտնում, որ առկա են բավարար հիմքեր՝ 1915-16թթ. ջարդերը որակելու որպես ցեղասպանություն [9, էջ 93], [11, էջ 5-6]: Հայ համայնքը մեծ աշխատանքներ տարավ նաև, որպեսզի «Ողջակիզման զոհերի հիշատակի օրվա» միջոցառմանը հարգվի նաև

Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը: Այդուհանդերձ բրիտանական իշխանությունները մերժեցին հայերի դիմումը. ՆԳ նախարարությունը պաշտոնապես հայտարարեց, որ այդ օրը հիշատակվելու են միայն նացիզմի զոհերը [26, 23.11.2000]: Այս հայտարարությունը, սակայն, ի դերև չհանեց հայ համայնքի գործունեությունը. շուտով բրիտանական հեղինակավոր լրատվամիջոցները մեծապես իրազեկեցին հասարակությանը Հայոց Եղեռնի մասին: Թե ցեղասպանության պատմությանը, թե Եղեռնի զոհերի հիշատակումը «Ողջակիզման զոհերի հիշատակի օրվա» միջոցառումների ցանկում չընդգրկելու հետ կապված իրադարձությունները հանգամանակից կորպով լուսաբանեցին «Ինդիփենդենթը» [26], «Ըբզերվըրը» [27], «Դեյլի թեյեգրաֆը» [28], «Գարդիանը» [29] և այլ թերթեր:

Այսպիսով, բրիտանահայության հայանպաստ գործունեությունն ուղղված Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի շահերի սպասարկմանը, զուգահեռաբար նպաստեց նաև տարբեր ոլորտներում հայ բրիտանական համագործակցության կայացմանն ու զարգացմանը: Հայ-բրիտանական հարաբերությունների զարգացումը բխում է թե Հայաստանի Հանրապետության, թե Մեծ Բրիտանիայի, և թե բրիտանահայ համայնքի շահերից: Եթե բուն բրիտանացի գործարարները, հիմնականում օբյեկտիվ պատճառներից ելնելով (արցախյան հիմնախնդրի չկարգավորված լինելու հանգամանք, տարածաշրջանային համագործակցության գրեթե բացակայություն և ընդհանուր անկայունություն, ներպետական և տարածաշրջանային կոմունիկացիոն-տրանսպորտային ենթակառուցվածքների վատ վիճակ, կոռուպցիոն մեծ ռիսկերի գոյություն, Հայաստանում կապիտալի զարգացած շուկայի բացակայություն և այլն), վերապահումներ ունեին Հայաստանում ներդրումներ կատարելու հետ կապված, ապա բրիտանահայ գործարարներն առա-

շինը ներգրավվեցին այս ռիսկային գործընթացում, շատ դեպքերում ուղի հարթելով նաև իրենց բրիտանացի գործընկերների համար: Ինչպես Հայաստանի և հայ համայնք ունեցող այլ պետությունների միջև հարաբերությունների պարագայում, այնպես էլ այս դեպքում, բրիտանահայ համայնքը նաև հայ-բրիտանական քաղաքական շահերի որոշ հակասական դրսևորումների մեղմացման գործին հանդիսացավ: Իսկ Հայաստանի Հանրապետություն-Միացյալ Թագավորություն-բրիտանահայ համայնք եռակողմ հարաբերությունների մեխանիզմի հետագա անխափան և արդյունավետ գործելու հարցում, ինչպես տեսանք, անհրաժեշտ պայման է դեսպանության հետևողական և խելամիտ գործունեությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ (այսուհետ՝ ՊԴԱ), ցուցակ 1, գործ 93
2. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 1, գործ 174
3. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 1, գործ 175
4. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 2, գործ 51
5. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 2, գործ 52
6. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 2, գործ 422
7. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 3, գործ 194
8. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 5, գործ 16
9. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 6, գործ 21
10. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 7, գործ 25
11. ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ցուցակ 7, գործ 27
12. «Հայ-բրիտանական հարաբերությունները ժամանակագրական կարգով», ՀՀ ԱԳՆ եվրոպայի վարչության ընթացիկ արխիվ, տվյալների էլեկտրոնային բազա
13. Համառոտ տեղեկանք Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի ներդրումային համագործակցության վերաբերյալ, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ներդրումների վարչության ընթացիկ արխիվ, Երևան, 2005թ.
14. *Հրաչյա Աճառյան*, Հայ զաղթականության պատմություն, Երևան, 2002թ.

15. Տիգրան Տիգրանեան, Անգլիան և հայերը, Երևան, 1994թ.
16. «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003թ.
17. *Աշոտ Կարապետյան*, Հայ-հունական հարաբերությունները 1991-98թթ.-ին, «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2003թ.
18. *Р. Х. Егиазарян*, “Из истории армянского колониума в Англии”, «Բանբեր Երևանի Համալսարանի», թիվ 3 (108), 2002թ.
19. *Dr. Sedat Lachiner*, Armenian Diaspora in Britain and the Armenian Question // Armenian Studies, Issue 3, September-October-November, 2001, www.iksaren.org/index.php?Page=Dergilcerik&IcerikNo=184
20. Անգլահայերի զարթոնքի ժամն է, «Ազգ», 19.01.1994
21. Լոնդոնահայերի ցույց Թուրքիայի դեսպանության մոտ, «Ազգ», 26.04.1995
22. «Հայաստանի Հանրապետություն», 28.04.1992
23. «Հանդիպումներ Լոնդոնում», Հայաստանի Հանրապետություն, 02.06.1993
24. Մերոնք Անգլիայում, հարցազրույց դեսպան Գաբրիելյանի հետ, «Հայոց Աշխարհ», 15.11.2003
25. “В детстве он равнялся на армян”, Песчуб-лука Армения, 23.06.1995
26. *Robert Fisk*, Britain excludes Armenians from memorial day, “The Independent”, 23.11.2000, Robert Fisk, Why the Armenian Holocaust must not be airbrushed from History?, “The Independent”, 27.11.2000, Athens and Ankara at odds over genocide, “The Independent”, 13.02.2001, The shocking pictures that Turkey is trying to stop us from seeing, “The Independent”, 12.03.2001, Nouritza Matossian, Survivor of 20th Century's First Holocaust, “The Independent”, 27.01.2001
27. *Will Hutton*, We all have blood on our hands, “The Observer”, 21.01.2001
28. *Philip Johnston*, Why we continue to deny that this was Genocide; Anger over the forgot-

- ten massacre; Home Office runs the Show for BBC, "Daily Telegraph", 11.01.2001
29. *David Cesarani*, Myth and Memory, "The Guardian", 24.01.2001
30. «Հայաստան» Համահայկական

Հիմնադրամի վեբկայքի Մեծ Բրիտանիայի մասնաճյուղի կայքէջ՝
www.himnadram.org/arm/?go=LC#//GreatBritain

ROLE OF ARMENIAN COMMUNITY OF GREAT
 BRITAIN IN ARMENIAN-BRITISH RELATIONS
 IN
 1991-2001

MENUA SOGHOMONYAN

Summary

Like many other parts of Armenian Diaspora world-wide, Armeian Community in Great Britain had also been involved in the process of statehood building of newly independent Armenia. This article highlights activities of Armenian Community in Britain towards resolution of socio-economic and political problems of the Republic of Armenia (as well as of the Armenian nation), that seriously affected the formation and development of Armenian-British economic cooperation and political dialogue.

РОЛЬ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ
 ВЕЛИКОБРИТАНИИ В АРМЯНО-
 БРИТАНСКИХ ОТНОШЕНИЯХ В
 1991-2001гг.

МЕНУА СОГОМОНЯН

Резюме

Как и многие другие части армянской диаспоры в разных странах мира, армянская община Великобритании также включилась в процесс государственного строительства обретшей независимость Армении в начале 1990-ых. В данной статье рассматриваются некоторые сферы и направления деятельности армянской общины Британии в плане содействия разрешения социально-экономических и политических проблем Республики Армения (а также всего армянского народа). В статье делается попытка обосновать тезис о том, что деятельность армянской общины Великобритании серьезным образом повлияла на становление и развитие армяно-британского экономического сотрудничества и политического диалога.

ՍՏԵՓԱՆ ՉԱՓԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱՎ պատմության ինստիտուտի ասպիրանտ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1990-2003 թթ.)

Երբ 1991 թ. Հայաստանը դարձավ անկախ պետություն, հայկական գիտությունը ևս հնարավորություն ստացավ «անկախանալու»: Եթե նախկինում հայկական գիտությունը սպասարկում էր որոշակի Միությանը և կատարում խորհրդային գիտության առջև դրված խնդիրները, ապա այժմ գիտությունն ինքնուրույն զարգացման հնարավորություն էր ստացել և պետք է սպասարկեր միայն հայրենի երկրի պահանջները: Հայաստանում խորհրդային կարգերի անկումը և դրա հետ միաժամանակ անցումը նոր՝ բուրժուական հարաբերություններին բերեց մի շարք արմատական փոփոխությունների երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում, որը բնականաբար փոխում էր նաև գիտության առջև դրված խնդիրների բնույթը: Այսինքն՝ հայկական գիտության առջև նախ և առաջ դրված էր մի կարևոր խնդիր՝ փոխել գիտության զարգացման ուղղությունն այնպես, որ այն համապատասխանի հանրապետության պահանջներին:

Չնայած որ բնական գիտությունների զարգացման գործում այնքան էլ մեծ փոփոխությունների կարիք չէր զգացվում, որքան հասարակական գիտություններում, բայցևայնպես այն ևս պետք էր մաքրել քաղաքականությունից, որովհետև հին կրթական համակարգը ծայրահեղ քաղաքականացված էր: Իսկ դա նշանակում էր փոխել կրթական ծրագրերը, փակել հին, այլևս պահանջարկ չունեցող մասնագիտություն-

ները և բացել նորերը, մշակել ուսումնական պլաններ, ծրագրեր: Եվ, որ կարևոր է, հարկ էր, գիտության համակարգի աշխատողներն ու բուհերի դասախոսները ձերբազատվեին նախկին համակարգին բնորոշ պատկերացումներից: Բացի այդ՝ մի քանի մասնագիտությունների գծով մասնագետների կատարելագործման անհրաժեշտություն կար:

Անկախության հռչակումը բերեց նրան, որ հայ մասնագետները հնարավորություն ստացան ձերբազատվել բոլոր այն սահմանափակումներից, որոնք խոչընդոտում էին գիտության զարգացում: Այս ամենը նոր հնարավորություններ էր բացում հայ մասնագետների առջև՝ բնական, մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բնագավառում նորովի մոտեցում ցուցաբերելու համար:

Ինչպես նախկինում, այնպես էլ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայկական գիտության նվաճումներն առավել ցայտուն դրսևորվեցին հատկապես բնական և մաթեմատիկական գիտություններում:

Հաղթահարելով նորանկախ հանրապետության առջև ծառացած բազմաթիվ դժվարությունները՝ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունները 1990-ական թվականներին կարողացան ոչ միայն նորովի վերագտնել իրենց, վերագնահատել իրենց հնարավորությունները, այլև իրենց առջև դրեցին նորագույն խնդիրներ և ձեռնամուխ եղան այդ խնդիրների իրականացմանը:

1990-ական թթ. ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների մասնագետները ոչինչ չէին խնայում՝ զարգացնելու գիտությունը: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների զարգացման հիմնախնդիրներով էին զբաղվում համապատասխան մի շարք գիտահետազոտական հիմնարկներում՝ ՀՀ ԳԱԱ համապատասխան բաժանմունքում, ինստիտուտներում, առանձին գիտահետազոտական ինստիտուտներում, բուհերի ամբիոններում և այլ գիտական հաստատություններում:

Անկախության վերականգնումից հետո անհրաժեշտություն էր առաջացել վերանայել ինչպես ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և բաժինների, այնպես էլ բուհերի ամբիոնների ու մասնագիտությունների ցանկը, քանզի երկրում փոխվել էին հասարակական հարաբերությունները, փոխվել էր երկրի զարգացման ուղղվածությունը, որոնք նոր պահանջներ էին առաջադրում գիտության առջև:

Մի շարք փոփոխություններ տեղի ունեցան առաջին հերթին Գիտությունների ակադեմիայում: Մինչև 1993 թ. ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական գիտություններն ընդգրկված էին հետևյալ ստորաբաժանումներում՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բաժանմունք (ֆիզիկական հետազոտությունների, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտները, Բյուրականի աստղադիտարանը, Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը, մաթեմատիկայի ինստիտուտ, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ՀԿՏԲ-ն), մեխանիկայի, ինֆորմատիկայի և տեխնիկական գիտությունների բաժանմունք (Մեխանիկայի, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, հատուկ փորձակոնստրուկտորական տեխնոլոգիական ինստիտուտները, ճարտարագիտական կենտրոնը, կոմպոզիցիոն նյութերի ՀԿՏԲ-ն և հիդրոմեխանիկայի ու վիբրոտեխնիկայի բաժինը)¹:

1993 թ. վերը նշված բաժանմունքների

միավորման հետևանքով ձևավորվեց ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքը: 1995 թ. բաժանմունքն իր կազմում ընդգրկում էր ֆիզիկական հետազոտությունների, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտները, Բյուրականի աստղաֆիզիկական դիտարանը, մաթեմատիկայի, մեխանիկայի ինստիտուտը, հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժինը, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, հատուկ փորձակոնստրուկտորական տեխնոլոգիական ինստիտուտը, «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնը, երկրաբանական գիտությունների ինստիտուտը, երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտը, Գառնու երկրաֆիզիկական դիտարանը²:

Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների շարքում գիտական զգալի նվաճումներով հատկապես աչքի ընկավ ինֆորմատիկայի, կիրառական մաթեմատիկայի և հաշվողական տեխնիկայի բնագավառը:

Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բնագավառում հետազոտությունները կատարվում էին ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, ինչպես նաև այլ գիտահետազոտական ինստիտուտներում և բուհերի ամբիոններում: Ձևավորվելով հայկական մաթեմատիկական դպրոցի և ՍՀՄ մաթեմատիկական կիբեռնետիկայի առաջավոր գիտական դպրոցների ազդեցության ներքո՝ Հայաստանում ինֆորմատիկայի բնագավառում զարգացող գիտական ուղղությունների մեծ մա-

սը ձևավորվելուց հետո դարձավ ինքնուրույն բնույթ և ինքնուրույն դեմք ունեցող մի-մի գիտական դպրոց: ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում (ԻԱՊԻ), որը հիմնադրվել էր դեռ 1957 թ., զարգացան հետևյալ հիմնական ուղղությունները՝ համակարգչային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, կիբեռնետիկայի և հաշվողական տեխնիկայի մաթեմատիկական խնդիրներ, ավտոմատացման համակարգերի մաթեմատիկական ապահովում և գիտական հետազոտությունների ավտոմատացում³: ԻԱՊԻ գիտնականները մեծ ավանդ են ունեցել Հայաստանում տեսական և կիրառական համակարգչագիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառներում գիտական հետազոտությունների բարձր որակի ապահովման գործում, իսկ որոշ ուղղությունների գծով արժանացել են միջազգային ճանաչման:

Անկախության հռչակումից հետո Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում (ԵրՄՄԳՀԻ) իր գիտատեխնիկական ներուժն ուղղեց հանրապետության համար կարևոր խնդիրների լուծմանը: Ինստիտուտը կուտակել է կառավարման և իրազեկային համակարգերի նախագծման ու ներդրման մեծ փորձ: Այսօր ինստիտուտում աշխատում են հաշվողական համակարգերի, մաթեմատիկական ապահովության, ինչպես նաև էլեկտրոնիկայի բնագավառների բարձր որակավորմամբ մասնագետներ:

Այս տարիներին Գ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ իրագործվել կամ իրագործման փուլում են մի շարք կարևորագույն, այդ թվում՝ հատուկ նշանակության «Պարեկ-ՎԱ» (1994-2000 թթ.), (իրազեկային-վերլուծական) «ԻՆՅԱ» (սկսած 1995 թ.), էլեկտրասպառման հաշվառման, հսկման և կառավարման «Ուրարտու» (1995-2002 թթ.) համակարգերը, ինչպես նաև ռադիոէլեկտրոնային տեխնիկայի արդիականացման և

գաղտնագրման սարքավորումների և համակարգերի մշակումները:

Ա. Քուչուկյանի ղեկավարությամբ USAID, TASIC, ՀԲ և այլ կազմակերպությունների օժանդակությամբ մշակվել և մշակվում են հանրապետական նշանակության իրազեկային և կառավարման մի շարք համակարգեր, որոնք ունեն բազմաստիճան (շրջան, մարզ, կենտրոն) կառուցվածք և ժամանակակից ծրագրային միջոցներով իրացված են անհատական համակարգիչներում: Դրանց թվում են կենսաթոշակառուների գրանցման, կենսաթոշակների նշանակման և վճարման, ինչպես նաև գործատուների մոնիթինգի հաշվառման ավտոմատացված «Արաքս» (1994-99 թթ.), ընտանիքների կարիքավորության որոշման և աղքատության ընտանեկան պետական նպաստների բաշխման «Փարոս» (1994-2001 թթ.), զբաղվածության հաշվառման և վերլուծության «Սևան» (1997-2001), բուժ-հիմնարկների տվյալների մշակման և վերլուծության Midas (2001-2002 թթ.), քաղաքացիական կացության ակտերի գրանցման ավտոմատացման Osiris (2002 թ. սկսած), անհատական կենսաթոշակային ապահովագրության Parnas (2002 թ. սկսած) համակարգերը և այլն⁴:

Այս բնագավառում կարևոր նշանակություն ունեին նաև կառավարման ավտոմատացված համակարգերի (ԿԱՀ) ստեղծման աշխատանքները, որոնք սկսվել էին դեռևս 1960-ական թթ. վերջերից: 1992 թ. ԿԱՀ-երի մշակմամբ զբաղվող ստորաբաժանումների հիման վրա ԵրՄՄԳՀԻ-ից առանձնացվեց ԵրԱԿՀԳՀԻ-ն, որը շարունակում է ստեղծված համակարգերի և համալիրների ուղեկցման և կատարելագործման աշխատանքները: Հիմնականում պահպանելով իր գիտահետազոտական ներուժը՝ ԵրԱԿՀԳՀԻ-ն սկսել և արդեն մշակել է քաղաքացիական և հատուկ նշանակության ԿԱՀ-եր ժամանակակից ապարատածրագրային հիմքի վրա⁵:

Ինֆորմատիկայի բնագավառում, որը առանձնապես կարևոր է նոր տնտեսական հարաբերություններին անցումային ժամանակաշրջանում, երբ իրազեկությունն ու դրա մշակումը հասարակության զարգացման կարևոր միջոց են համարվում, զարգացումը պետք է տեղի ունենա տեսական համակարգչագիտության և իրազեկային տեխնոլոգիաների ներմուծման և մշակման ուղիքով:

Ինֆորմատիկայի տեսական և կիրառական բնույթի գիտական հետազոտությունները կատարվել են ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում (ԻԱՊԻ), ԵՊՀ-ում և ՀՊՃՀ-ում: ԻԱՊԻ-ում կատարվող հիմնական հետազոտությունները վերաբերել են կիբեռնետիկայի և հաշվողական տեխնիկայի մաթեմատիկական խնդիրներին, ավտոմատացման համակարգերի մաթեմատիկական ապահովմանը և գիտական հետազոտությունների ավտոմատացմանը:

Ինֆորմատիկայի զարգացման բնագավառում կարևոր նվաճումներ էին զրանցվում նաև Երևանի պետական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում, որը ստեղծվել էր դեռ 1971 թ.: Իսկ 1990 թ. հոկտեմբերին ԵՊՀ գիտխորհուրդն ընդունեց որոշում, համաձայն որի՝ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը տրոհվեց երկու՝ ինֆորմատիկայի և հաշվողական մաթեմատիկայի ֆակուլտետների: 1996 թ. ԵՊՀ գիտխորհրդի նոր որոշմամբ ֆակուլտետները վերամիավորվեցին: Ֆակուլտետում գիտական հետազոտությունները ընթանում էին հետևյալ ամբիոններում՝ ալգորիթմական լեզուների (1991 թ.), համակարգչային ծրագրավորման (1996 թ.), դիսկրետ մաթեմատիկայի (1996 թ.), ինֆորմատիկայի հանրահաշվատրամաբանական մեթոդների (1996 թ.), մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման (1996 թ.) և կիրառական անալիզի (1996 թ.)⁶:

ԻԱՊԻ-ում հետազոտությունները հիմնականում ընթանում էին հետևյալ բնագավառներում՝ կոդավորման հանրահաշվական տեսություն (Ռ. Վարշամով, Գ. աչատրյան և ուրիշներ), ավտոմատների տեսություն (Յու. Շուքուրյան և ուրիշներ), մաթեմատիկական տրամաբանության տեսություն (Ի. Ջաւալսկի և ուրիշներ), ընթացակարգերի տեսություն (Հ. Մարանջյան և ուրիշներ), դիսկրետ մաթեմատիկա (Լ. Ասլանյան և ուրիշներ), արհեստական բանականության և իմացաբանական տիպարների բնագավառ (Է. Պողոսյան և ուրիշներ), պատկերների ճանաչում և վերամշակում (Հ. Սարուխանյան և ուրիշներ), իրազեկության տեսություն և վիճակագրություն (Ե. Հարությունյան և ուրիշներ), թվային մեթոդներ (Ա. Թունիս և ուրիշներ), էլեկտրոնային սարքերի և համակարգերի տեստավորում (Ս. Շուքուրյան) և այլն⁷:

ՀՀ ԳԱԱ-ում վերջին տասնամյակում նոր փուլ է սկսվել ծրագրային մշակումների և իրազեկային տեխնոլոգիաների բնագավառում: Ստեղծվել են մեծ քանակությամբ ծրագրային համակարգեր ԷՀՄ-ների մաթեմատիկական ապահովման համար, այդ թվում՝ մաթեմատիկական սպասարկման ինչպես համակարգային, այնպես էլ կիրառական ծրագրային փաթեթները: Ժամանակակից սպասարկման և հաղորդակցման տեխնոլոգիաների հիման վրա 1990-ական թթ. կատարվեցին աշխատանքներ ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանցի ստեղծման ուղղությամբ (Ֆ. Սարգսյան, Յու. Շուքուրյան, Վ. Սահակյան և ուրիշներ): Ցանցում ընդգրկված են Ակադեմիայի համակարգի բոլոր ինստիտուտները: Ցանցը իրազեկային շրջափակման դժվարին տարիներին եղավ միակ կապուղին, որը մեր գիտնականներին հնարավորություն տվեց՝ հաղորդակցվելու աշխարհի գիտական կենտրոնների հետ:

Սկսվեցին հետազոտություններ՝ կապված բաշխված հաշվարկների տեսական

խնդիրների և գործնական համակարգերի մշակման հետ (Վ. Սահակյան, Ա. Նանասյան և ուրիշներ): Բաշխված հաշվողական միջավայրերի մոդելների բնագավառում հետազոտվել և զարգացվել է Intel (միավորման գործընթացների) մասնագետների կողմից առաջարկված հնաավոր ֆաբրիկայի օբյեկտներին կողմնորոշված մոդելը: Այդ մոդելի համար սահմանվել են հաշվողական գործընթացների նոր տիպեր և դրանց (ինաստորոշումը), Intel-ի մասնագետների հետ համատեղ մշակվել են նշված գործընթացների նախագծման և ստուգման ալգորիթմներ և դրանք իրացնող ծրագրային համակարգ (Ս. Շուքուրյան և ուրիշներ):

Վերջին տարիներին լայն գործակցություն է հաստատվել համակարգչային գիտության միջազգային կենտրոնների հետ: Իրականացվել են մի շարք միջազգային նախագծեր: Սկսվել են աշխատանքները ակադեմիական ցանցի հիման վրա բարձր արտադրողականության համակարգչային հատկացումների ստեղծման ուղղությամբ: Այն նախատեսված է՝ ապահովելու ժամանակակից միջավայր՝ հաշվարկների և տվյալների հիմքերի կառուցման համար:

ԻԱՊԻ-ում կատարվել են աշխատանքներ հայերենի համակարգչային ապահովման և համապատասխան հիմնօրինակի ստեղծման ուղղությամբ:

ՀՀ ԳԱԱ գիտնականների կողմից 1993-2002 թթ. համակարգչային գիտությունների և իրազեկային տեխնոլոգիաների բնագավառում ստացվել են 30-ից համաշխարհային համբավվոր կազմակերպությունների դրամաշնորհներ: 1997 թ. սկսած՝ Հայաստանում անց են կացվում միջազգային գիտաժողովներ «համակարգչագիտության և իրազեկային տեխնոլոգիաներ» թեմայով, որոնք նպաստում են Հայաստանում ինֆորմատիկայի ժամանակակից բնագառների զարգացմանը:

Պետության կողմից գիտական հաշվողական համակարգի ստեղծման համար

կատարված կարևոր քայլերից էր 2003 թ. հաստատված պետական նպատակային չորս ծրագրերի շարքում «ՀՀ պետական հաշվողական համակարգի ստեղծում» ծրագրի ընդգրկումը: Նախագծի հիմնական նպատակն է՝ ստեղծել հաշվողական տեղեկատվական ցանցային միջավայր, որը թույլ կտա իրականացնել բարձր կատարողականությամբ՝ հաշվարկներ գիտական հետազոտությունների արդյունավետ կենսագործման համար: Ծրագիրը իրականացվում է երեք ուղղություններով՝

- ա) ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ, ՀԴՃ հաշվողական կլաստերների միջավայրում ցանցային համագործակցության ապահովում, գրիդային փորձնական հատվածի իրականացում և ծրագրային ապահովման մշակում,
- բ) հայոց լեզվի համակարգչային ապահովման մշակում,
- գ) տեսական հետազոտությունների իրականացում կիրառական ծրագրերի մշակման համար:

«ՀՀ պետական հաշվողական համակարգի ստեղծում» պետական նպատակային ծրագիրը իրականացվում է ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում: Կատարողների խմբում ընդգրկված են նաև ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, բանասիրական ֆակուլտետի, ՀԴՃ և ԳԱԱ լեզվի և ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտների գիտաշխատողները: Ծրագրի ընդհանուր համակարգողն է ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Շուքուրյանը:

Ընդհանուր առմամբ Հայաստանի Երրորդ Հանրապետության գոյության առաջին մեկուկես տասնամյակում լուրջ նվաճումներ ձեռք բերվեցին ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բնագավառում, որը փաստորեն կարող է այն հիմքը հանդի-

սանալ, որի վրա կկառուցվի գիտության սույն ճյուղի զարգացումը հետագա տասնամյակներում:

- ¹ ՀՀ ԳԱԱ, Հաշվետվություն ՀՀ ԳԱԱ-ի 1993 թ. գիտական և գիտակազմական գործունեության հիմնական արդյունքների մասին, Երևան, 1994, էջ 72-76:
- ² ՀՀ ԳԱԱ արխիվ, ֆ.1, ց.1, գ.124, էջ 72:
- ³ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երևան, 2002, էջ 18:

- ⁴ ՀՀ ԳԱԱ-ն 60 տարում, Երևան, 2003, էջ 73-74:
- ⁵ Նույն տեղում, էջ 76:
- ⁶ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները, Երևան, 2003, էջ 24:
- ⁷ ՀՀ ԳԱԱ 1990-2005 թթ. գիտական և գիտակազմական գործունեության հիմնական արդյունքներ, Հաշվետվություն, Երևան, 1990-2006:
- ⁸ ՀՀ ԳԱԱ-ն 60 տարում, Երևան, 2003, էջ 80:
- ⁹ ՀՀ ԳԱԱ 2005թ. գիտական և գիտակազմական գործունեության հիմնական արդյունքներ, Հաշվետվություն, Երևան, 2006, էջ 18:

TRENDS OF THE DEVELOPMENT OF
COMPUTER SCIENCE AND CALCULATION
TECHNOLOGIES
(1990)

STEPAN CHAPARYAN

Summary

During the first one and a half decade of the existence of Armenian third republic serious achievements were gained in the sphere of phisico-mathematical and technical sciences. During this period Armenian scientists made considerable success in these spheres in the National Academy of Sciences of RA and in the chairs of higher educational institution. These all will serve as a basis for the future development of Armenian scientific technological intellect.

ТЕНДЕНЦЫ РАЗВИТИЯ ИНФОРМАТИКИ И
ВЫЧИСЛИТЕЛЬНОЙ ТЕХНИКИ В
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
(1990-ух ГОДАХ)

СТЕПАН ЧАПАРЯН

Резюме

За первые полтора десятилетия существования Третьей Республики Армения страна достигла серьезных достижений в области физико-математических и технических наук. Особенно значимыми были достижения в области информатики и вычислительной техники. В этот период в ряде НИИ и на кафедрах вузов РА армянские ученые достигли заметных успехов в этой области. Все это послужило основой дальнейшего развития научно-технической мысли в Армении.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Հոդվածների ընդունման կարգը

«Վասն արդարության» հանդեսում տպագրության համար ներկայացվող գիտական հոդվածները՝

1. խմբագրությանը հանձնվում են էլ. փոստի միջոցով կամ պնակիտով (floppy disk).
2. ունենում են համապատասխան ամփոփումներ.
3. պարունակում են գրականության ցանկ.
4. բովանդակում են անհրաժեշտ հղում-ծանոթագրություններ.
5. խմբագրությանն են ներկայացվում՝ հնարավորինս զերծ համակարգչային մուտքագրման սխալներից.
6. ռուսերեն հոդվածները համակարգիչ մուտքագրված են լինում ռուսական տառատեսակով (font) (չօգտագործել Times New Roman, Arial, Courier և այլ բազմալեզու տառատեսակներ).
7. գրաֆիկական ֆայլերը (նկարներ, գրաֆիկական օբյեկտներ և այլն) ունենում են նվազագույնը 300 dpi կետային խտություն.
8. «և» կցագիրը ներկայացվում է մեկ գրանիշով՝ & (եւ-ի փոխարեն).
9. հոդվածները կից ունենում են անհրաժեշտ տվյալներ հեղինակ(ներ)ի մասին (այդ թվում՝ հեռախոսահամար):

Հոդվածների ընտրության կարգը

«Վասն արդարության» հանդեսի խմբագրությունում ստացված հոդվածների նախնական ընտրությունը կատարում է հանդեսի գլխավոր խմբագիրը, այնուհետև հոդվածը հնարավոր միջոցներով ուղարկվում է հանդեսի գիտական խմբագրական խորհրդի համապատասխան անդամ(ներ)ին՝ գրախոսության:

Տպագրվում են դրական գրախոսության արժանացած հոդվածները:

Գրախոսության համար խմբագրությունը կարող է դիմել նաև այլ՝ ոչ խմբագրական խորհրդի անդամ մասնագետի: Ընդունելի են նաև հոդվածի հեղինակի ուղարկած՝ իր հոդվածին վերաբերող գրախոսություններ, եթե վերջիններիս հեղինակը գիտությունների դոկտոր կամ թեկնածու է:

Գիտությունների դոկտորների և թեկնածուների հոդվածները կարող են չգրախոսվել: